

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlib.am/>

E-mail: info@artsakhlib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhelibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>


ԱԳՐԲԵՉԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՂԱՐԱԲԱՂԻ ԺՈՂՈՎՐԴԻ

ԱԳՐԵՍԻԱՅԻ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ
ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ
ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԻ ՎՐԱ

ԱՂԱՋԱՆՅԱՆ Մ., ԱՍԱՏՐՅԱՆ Է., ՄԻՆԱՍՅԱՆ Ս.

ԱԴՐԲԵՋԱՆՆ
ԸՆԴԴԵՄ ԴԱՐԱԲԱՂԻ ԺՈՂՈՎՐԴԻ.
ԱԳՐԵՍԻԱՅԻ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ
ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ
ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԻ ՎՐԱ

ԵՐԵՎԱՆ
«ՆԱԻՐԻ»
2007



Աղաջանյան Մ. և ուրիշներ

Ա 458 Աղբբեջանն ընդդեմ Ղարաբաղի ժողովրդի, ագրեսիայի իրավաբաղաբական հետևանքները և դրանց ազդեցությունը տարածաշրջանային անվտանգության հեռանկարների վրա.— Եր.: 2007, 292 էջ:

Մույն աշխատությունը նախատեսված է ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի, ՆԱՏՕ-ի, ԱՊՀ-ի, ԵՄ-ի տարբեր կառույցներում Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման գործընթացում ներգրավված մասնագետների համար: Այն նաև համդիսանում է օգտակար ձեռնարկ դարաբաղյան խնդրով զբաղվող փորձագետների, քաղաքական գործիչների համար:

Այս ձեռնարկի հրատարակմանը աջակցել են հայ բարերարներ Տիգրանուհի Ռուհինյանը և Էդմոնդ Ռուհինյանը:

Աշխատության հայերենով հրատարակմանն աջակցել է նաև գործարար, ծագումով շահումյանցի Գրիգոր Ղուբայանը:

Աշխատությունը հրատարակվել է «Ռրակի համընդհանուր դեկալարմանն աջակցության» հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ:

0803010413
Ա _____ 2007
705(01)2007

ԳՄԴ 66.3(2Հ)

ISBN 978-5-550-01492-9

© «Ռրակի համընդհանուր դեկալարմանն աջակցության» հասարակական կազմակերպություն, 2007

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Ղարաբաղյան հիմնահարցը 1988 թվականի փետրվարից ի վեր միջազգային հանրության կողմից դիտարկվել է բացառապես հայ-ադրբեջանական հարաբերությունների համատեքստում: Ղարաբաղյան խնդրի զարգացման ժամանակակից փուլի սկզբնավորման պահին դեռևս գոյություն ուներ Խորհրդային Միությունը և երկրի կոմունիստական ղեկավարությունն աշխատեց անել այնպես, որպեսզի դիմակայության մեջ ներգրավված բոլոր կողմերը հավասարապես մեղավոր հանդես գային: Այդ տարիների Կրեմլի իշխանությունների ներկայացուցիչների հայտարարություններն այն մասին, որ այս հարցում չպետք է լինեն հաղթողներ և պարտվողներ, զարմանալիորեն համահունչ են այն միջազգային և եվրոպական չինովնիկների համանման հայտարարությունների հետ, որոնք, այսօր, այս կամ այլ կերպ առնչվում են հակամարտության հիմնախնդրի հետ: Մույնով, ինքնին, հիմնովին բացառվում է հակամարտության արդարացի լուծման հնարավորությունը և փոխարինվում է ամեն գնով Աղբբեջանը, Լեռնային Ղարաբաղը և Հայաստանը կապող հաղորդակցությունների վերագործարկման անհրաժեշտության գաղափարով՝ դեպի Թուրքիա հետագա ելքով: Նման մոտեցումը կարելի է բնութագրել որպես կարճաժամկետ կամային քաղաքական որոշման տարբերակ, որը առնչություն չունի կոնֆլիկտային իրավիճակի իրական և երկարաժամկետ խաղաղ կարգավորման հետ, իրավիճակ՝ որի անմիջական պատանդներ են դարձել երկու հարևան ժողովուրդներ և երեք պետություններ (Աղբբեջան, Հայաստան և ԼՂՀ): Միջնորդներն ասում են՝ թող երկու ժողովուրդների ղեկավարները պայմանավորվեն փոխհարաբերությունները կարգավորելու սկզբունքների շուրջ, իսկ միջազգային հանրությունը անհրաժեշտ աջակցություն կցուցաբերի խաղաղ կյանքը կարգավորելու և պատերազմի հետևանք

քները վերացնելու հարցերում: Միջնորդներն առաջարկում են մաև կարգավորման այնպիսի մոդելներ, որոնք, իրենց հիմքում չունենալով հակամարտության բոլոր կողմերի համար կիրառելի համընդհանուր իրավական մոտեցումներ, ավելի են խորացնում իրավիճակի անելանելիության զգացումը: Դիմակայության մեջ անմիջականորեն ներքաշված պետությունների և ժողովուրդների իրավունքների նկատմամբ անհամաչափ վերաբերմունքը, հատկապես հակամարտության ընթացքում առավելագույնս տուժած տարբեր կատեգորիաների անձանց նկատմամբ ազգային պատկանելությամբ կիրառվող խտրականությունը, ստեղծում է հակամարտությունը սառեցնելու կամ այն բացառապես ուժային մեթոդներով լուծելու բոլոր մախաղոյալները: Իրավիճակը, երբ «բոլոր մասնակիցները մեղավոր են», կողմերին ոչ մի շանս չի տալիս, առավել ևս այն դեպքում, երբ կան հենց այսպիսի գնահատականով հետաքրքրված բավականին ազդեցիկ միջազգային խաղացողներ:

Ղարաբաղի խնդրի պատմությունը իր ներկա կոնֆիգուրացիայով պայմանականորեն կարելի է բաժանել երկու մեծ ժամանակաշրջանի: Առաջին շրջանը ընդգրկում է խնդրի ծագման պահը և նրա կոնսերվացման հաջորդ տասնամյակը՝ խորհրդային իշխանության օրոք: Խնդիրն իր ներկայիս արտաքին կերպարը ստացել է այն բանից հետո, երբ բոլշևիկյան Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի փոխադարձ պայմանավորվածությամբ Առաջին Հայկական Հանրապետությունը (1918-1920թթ.) դադարեցրեց իր գոյությունը, իսկ իր տարածքի նշանակալից մասը անեքսիայի ենթարկվեց ի օգուտ Թուրքիայի (Ղարսի մարզ և Մուրմարուի գավառ) և Ադրբեջանի (Նախիջևանը դարձավ Ադրբեջանական ԽՍՀ ենթամանրատային տարածք՝ առանց այլ պետության փոխանցելու իրավունքի): Իսկ Ղարաբաղը՝ ավելի քան 95%-ով բնակեցված լիներով հայերով և այն պահին ունենալով միջազգային փաստաթղթերով ամրագրված միջազգայնորեն ճանաչված վիճելի տարածքի կարգավիճակ, ամբողջությամբ փոխանցվեց Ադրբեջանին՝ այնտեղ հայկական ինքնավարություն ստեղծելու պայմանով, որը, չնայած նախնական որոշման, հետագայում

կազմավորվեց միայն Ղարաբաղի լեռնային մասում: Այս հարցերով պայմանավորվածությունները վերջնականապես ձևակերպվել են Մոսկվայի ճնշմամբ Կարսի բազմակողմ պայմանագրում (1921թ.), որից հետո Ղարաբաղի և մի շարք այլ հարցեր Խորհրդային Հայաստանի համար ԽՍՀՄ-ի շրջանակներում «դադարեցին գոյություն ունենալուց»:

Երկրորդ շրջանը սկսվեց խորհրդային պետության մայրամուտին, երբ 1988թ. Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի բարձրագույն ներկայացուցչական մարմինը դիմեց ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմից Հայկական ԽՍՀ-ի կազմ փոխանցելու մասին համապատասխան միջնորդությամբ, ինչին ի պատասխան, ադրբեջանական իշխանությունները դիմեցին հայերի համընդհանուր էթնիկ գտումների և զանգվածային սպանությունների, իսկ այնուհետև սանձազերծեցին լայնածավալ ռազմական գործողություններ՝ ռազմական ավիացիայի, ծանր տեխնիկայի և հրետանու կիրառմամբ:

Այստեղ հարկ է ընդգծել, որ ցանկացած դեպքում, ներպետական հակամարտությունը՝ լինի դա խաղաղ, թե զինված, հանդիսանում է իշխանությունների անգործունակության վկայությունը:

Ղարաբաղյան հարցը բացառություն չդարձավ: Ադրբեջանի իշխանությունները իրենց համար լավագույն սցենար համարեցին հայ ազգաբնակչության վտարումը կամ ոչնչացումը: Ադրբեջանի կողմից ուժի կիրառման յուրաքանչյուր գործողությամբ ոչ միայն նվազում և զրոյի էին ձգտում խնդրի խաղաղ կարգավորման միջոցներ գտնելու հնարավորությունները, այլև արմատապես փոխվում էր հակամարտության ֆիզիկական պատկերը, քանի որ շուրջ 500 հազար հայեր վտարվեցին Ադրբեջանից և դարձան փախստականներ և մոտավորապես մույնքան ադրբեջանցիներ դարձան ներքին տեղաշարժի ենթարկված անձինք: Երկու կողմերից տասնյակ հազարավոր մարդիկ զոհվեցին ռազմական գործողությունների ընթացքում և շարունակում են զոհվել առ այսօր՝ զինադադարի պայմաններում: Ի դեպ, ադրբեջանցի ներքին տեղաշարժի ենթարկված անձինք չեն ենթարկվել տեղահանման կամ էթնիկ գտումների,

նրանք քել են իրենց տներն արդեն ռազմական գործողությունների ընթացքում՝ աղբբեջանական գործերի նահանջի ժամանակ: Ռազմական գործողությունների արդյունքում փոխվեց նաև կողմերի կողմից վերահսկվող տարածքների կոնֆիգուրացիան:

Մարզը Հայաստանի կազմին փոխանցելու մասին ԼՂԻՄ Մարզխորհրդի դիմումը նախաձեռնվել էր աղբբեջանական իշխանությունների կողմից կիրառվող մշտական ճնշումների և խտրականության հետևանքով:

Խորհրդային և հետխորհրդային ժամանակաշրջանում հակամարտության զարգացումը կարելի է նկարագրել հետևյալ փուլերի համապատասխան.

- I. 1921-1988թթ.՝ ժամանակաշրջան, որի ընթացքում աղբբեջանական իշխանությունների կողմից իրականացվող ճնշումները և խտրականությունը հանգեցրեցին ԼՂԻՄ Մարզխորհրդի հայտնի որոշման ընդունմանը,
- II. 1988-1990թթ.՝ ԼՂԻՄ Մարզխորհրդի առ 20.02.88թ. դիմումը ձևական պատճառ հանդիսացավ հայերի նկատմամբ համընդհանուր էթնիկ զտումների քաղաքականությունը սկսելու համար Աղբբեջանի այն շրջաններում, որտեղ հայերը փոքրամասնություն էին կազմում՝ անկարող ինքնապաշտպանություն կազմակերպելու: Աղբբեջանի այդ գործողությունները խրախուսվեցին ԽՄԿԿ ԿԿ 1988 թվականի փետրվարի 21-ի որոշմամբ, որտեղ դարաբաղյան հայերի դիմումը գնահատվեց որպես ծայրահեղականության դրսևորում,
- III. 1991թ-ի առաջին կես՝ Աղբբեջանի իշխանությունները ձեռնարկեցին հայերի զանգվածային տեղահանումը Ղարաբաղի իրենց կոնսակտ բնակության շրջաններից: Հայերի փտարման օպերացիան ստացավ «Օղակ» («Кольцо») անվանումը: Օպերացիային մասնակցեցին Աղբբեջանում տեղակայված խորհրդային 7-րդ բանակի զորամասերը: Չնայած ցուցաբերած դիմադրությանը, հյուսիսային և հարավային Ղարաբաղի տասնյակ հայկական գյուղերի բնակիչներ բռնի տեղահանվեցին,

IV. 25.09.1991թ. առ այսօր՝ ԼՂՀ մայրաքաղաքի և հայկական այլ բնակավայրերի ոսթակոծության սկիզբը: Առաջին ոսթակոծությունն իրականացվեց 1991 թվականի սեպտեմբերի 25-ին: Այս ամսաթիվը կարելի է համարել ԼՂՀ ժողովրդի դեմ Աղբբեջանի ռազմական ագրեսիայի սկիզբը:

Հակամարտության զարգացման յուրաքանչյուր հաջորդ փուլը բարդացնում էր խաղաղ լուծումների որոնումները, այդ պատճառով, եթե Ղարաբաղի հայերը 1988 թվականին դեռևս կարող էին քննարկել իրենց ինքնավարության կարգավիճակի՝ մինչև ինքնավար հանրապետության մակարդակի բարձրացման հարցը, ապա 1994 թվականին, զինադադարի կնքման պահին, ոչ ոք Ղարաբաղում արդեն իսկ չէր կարող մտածել անգամ Աղբբեջանի շրջանակներում որևէ ինքնավար կարգավիճակի մասին: Բացի այդ, 21.09.91թ-ին Հայաստանի դուրս գալը ԽՄՀՄ կազմից Ղարաբաղի համար մեծապես նախանշեց սեփական ինքնիշխան պետություն կառուցելու ճանապարհը: Աղբբեջանական իշխանությունների՝ ուժի դիրքերից հարցը լուծելու յուրաքանչյուր նոր փորձը ԼՂՀ առջև դնում էր ժողովրդի անվտանգության պատշաճ մակարդակի ապահովման անհրաժեշտության և այդպիսի մակարդակի պահպանման երաշխիքների ստեղծման հարցը, իսկ մյուս կողմից, ինչ էլ խոսվի այն մասին, որ այսօր դժվար է պարզել, թե ո՞վ էր արդար, իսկ ո՞վ՝ մեղավոր, այնուհանդերձ միանգամայն ակնհայտ է, որ Ղարաբաղի հարկադրված քաղաքական պահանջների լուծումները աղբբեջանական իշխանությունները չորոնեցին քաղաքական հարթության մեջ, այլ փորձեցին ուժով լուծել հարցը, ինչի համար աղբբեջանական պետությունը պետք է համարժեք պատիժ կրի և ճանաչի իր պատասխանատվությունը հարյուր հազարավոր մարդկանց պատճառած տառապանքների, ինչպես նաև մասնավոր անձանց և ԼՂՀ պետությանը նյութական վնասներ պատճառելու համար:

Հաշտեցմանը տանող ճանապարհի սկիզբ կարող է դառնալ Աղբբեջանի կողմից ԼՂՀ անկախության ճանաչումը: Աղբբեջանը պետք է հստակորեն արտահայտվի հայ փախստականների և պատճառած նյութական և բարոյական վնասների

**ԷԹՆԻԿ ՉՏՈՒՄՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ
ԻՐԱՎԱՀԱՋՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԱԴՐՔԵՉԱՆԻ
ՉԻՆԱՆՈՑՈՒՄ**

Նախկին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը (ԼՂԻՄ) Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմում չէր հանդիսանում միակ ինքնավար կազմավորումը: Համաձայն Խորհրդային Միության սահմանադրական-իրավական համապիտրեմական նորմերի առավել բարձր ինքնավար կարգավիճակի տիրապետում էր Նախիջևանի ԻԽՍՀ: Խորհրդային հանրապետության կազմում գտնվող ինքնավար մարզն ուներ փոքր իրավատարրություններ և, համապատասխանաբար, իր պետաիրավական կարգավիճակով ավելի ցածր էր գտնվում միութենական և ինքնավար հանրապետություններից: Ադրբեջանական ԽՍՀ-ի պետաիրավական գործունեության խտրական բնույթը դրսևորվել է նաև տվյալ կարգավիճակային ասպեկտում: Խորհրդային պետության ազգային քաղաքականությունը կառուցվում էր (գոնե ձևականորեն) ինտերնացիոնալիզմի սկզբունքների վրա, որոնք, այնուհանդերձ, հաշվի էին առնում ինքնավար կազմավորումների ազգային կազմի օբյեկտիվ էթնիկ և ժողովրդագրական ցուցանիշները: Հարց է առաջանում այդ ո՞ր օբյեկտիվ ցուցանիշների հիման վրա է Նախիջևանը Ադրբ. ԽՍՀ-ի կազմում ինքնավար հանրապետության կարգավիճակի տիրապետել³, որտեղ ԽՍՀՄ վերջին Սահմանադրու-

³ Համաձայն 1977ր. ԽՍՀՄ Սահմանադրության 82-րդ Հոդվածի, ինքնավար մարզերն ունեին իրենց Սահմանադրությունը, որը պետք է համապատասխաներ ԽՍՀՄ Սահմանադրությանը և միութենական հանրապետության Սահմանադրությանը ու հաշվի առներ ինքնավար հանրապետության առանձնահատկությունները: Համաձայն Սահմանադրության նույն հոդվածի՝ մախառեսպաժ էր, որ «ինքնավարությունը Խորհրդային Միության և խորհրդային հանրապետության իրավասու-

փոխհատուցման վճարման հարցի կապակցությամբ: Ադրբեջանի իշխանությունները համապատասխան փոխհատուցումներ պետք է վճարեն նաև սեփական ղեկավարների կամքով ներքին տեղաշարժի ենթարկված անձինք դարձած ադրբեջանցիներին: Այսօրվա դրությամբ, ԼՂՀ Պաշտպանության բանակի կողմից վերահսկվող որոշ տարածքներ առավելապես անվտանգության գոտու դեր են կատարում, սակայն, եթե ադրբեջանական կողմը խելամիտ ժամկետներում չձեռնարկի թվարկված գործողությունները, ապա վերոհիշյալ տարածքները, անվտանգության գոտու ֆունկցիա կատարելուց բացի, կարող են դառնալ նաև հայ փախստականների նյութական վնասները փոխհատուցելու ռեսուրս, ինչպես նաև վայր՝ նրանց օրինաչափ վերաբնակեցման համար, քանի որ նրանք՝ որպես նախկին Ադրբեջանական ԽՍՀ քաղաքացիներ, իրավունք ունեն բնակվել նրա տարածքի այն մասում, որտեղ իրենք կգերադասեն և որտեղ կերաշխավորվեն և կապահովվեն իրենց իրավունքները՝ առաջին հերթին ապրելու իրավունքը:

Վերադարձ դեպի անցյալն անհնարին է և դրա հետ պետք է հաշվի նստեն ինչպես հակամարտության կողմերը, այնպես էլ միջազգային միջնորդները: Ուժի կիրառումը, ինչպես նաև ուժի կիրառման մասին շարունակվող սպառնալիքները, հակամարտության ռազմական լուծման կոչերը և սպառազինությունների մրցավազքի խթանումը պետք է դատապարտվի և պատժվի, քանի որ առանց դրա անհնար է ոչ միայն Ադրբեջանի կամ 'Ղարաբաղի' այլև, ընդհանուր առմամբ վերցրած, ողջ տարածաշրջանի լիարժեք զարգացումը:

ԱՐՄԱՆ ՄԵԼԻՔՅԱՆ

թյան ընդունման ժամանակաշրջանում (1977թ.) աղքեղացանական ազգային տարրն արդեն քանակային ճնշող մեծամասնություն էր կազմում, իսկ Լեռնային Ղարաբաղը, որտեղ, ընդհանուր առմամբ վերցրած Աղբբ. ԽՍՀ-ում, երկրորդ պետականաստեղծ ազգը գտնվում էր նույնպիսի թվային ճնշող մեծամասնության մեջ, պետք է բավարարվեր միայն ինքնավար մարզի կարգավիճակով:

Այսպիսի իրադրության հնարավոր իրավաբանական փաստարկը, ամենայն հավանականությամբ, հիմնված էր այն բանի վրա, որ Նախիջևանի կարգավիճակը որոշվել է համաձայն բազմակողմ միջազգային պայմանագրի՝ կնքված 1921 թվականի հոկտեմբերի 13-ին (Կարսի պայմանագիր): Առ այսօր գործող այս պայմանագրի Հոդված 5-ում ասվում է. «Թուրքական կառավարությունը և Աղբբջանի ու Հայաստանի Խորհրդային Կառավարությունները համաձայնվում են, որ սույն պայմանագրի Հավելված 3-ում նշված սահմաններով Նախիջևանի մարզը կազմավորում է ինքնավար տարածք՝ Աղբբջանի հովանավորության ներքո»: Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը Աղբբ. ԽՍՀ-ի կազմում սահմանվել է բոլշևիկյան կուսակցական մարմնի՝ Կովբյուրոյի 1921թ. հուլիսի 5-ի հայտնի որոշմամբ: Շեղվելով՝ իրավական տեսանկյունից հիմնավորված ներկայիս Աղբբջանական Հանրապետության՝ (ԱՀ) Աղբբ. ԽՍՀ իրավահաջորդը չհանդիսանալու հանգամանքից, որի կազմի մեջ էր ընդգրկվել Նախիջևանի ինքնավարությունը, ինչպես նաև ներկայիս անկախ պետությունների (և, առաջին հերթին՝ ԼՂՀ) համար կուսակցական մարմնի 1921 թ. հուլիսի 5-ի⁴ որոշման անօրինականությունից բխող իրավական չհիմնավորվածությունից, մենք ուշադրությունը կենտրոնացնում ենք հարցի մարդասիրական կողմի վրա:

թյունների սահմաններից դուրս ինքնուրույն որոշում է այն հարցերը, որոնք վերաբերում են իր վարույթին»:

⁴ Այն պահին դեռևս չկար միացյալ ԽՍՀՄ և, համապատասխանաբար, չնայած Խորհրդային հանրապետությունների «գաղափարախոսական» մոտիկությանը, միջազգային-իրավական տեսանկյունից նրանք հանդիսանում էին միջազգային իրավունքի ինքնուրույն սուբյեկտներ՝ այդ վիճակից բխող բոլոր նետևանքներով:

Առաջին համաշխարհային պատերազմի սկզբից մինչև 1921թ. ընկած ժամանակահատվածում (այսինքն՝ սկսած Թուրքիայի հայ ազգաբնակչության Եղեռնից և զանգվածային բռնի տեղահանումից, 1918 և 1920թթ. Հայաստանի Հանրապետության տարածք թուրքական երկու ներխուժումներից և ընդհուպ մինչև Կարսի պայմանագրի կնքման պահը) Նախիջևանում հայկական ազգաբնակչությունը գերակշռող էր հանդիսանում: 1914 թվականին Երևանի մահանգի Նախիջևանի գավառի 102,7 հազարանոց բնակչության 52%-ը կամ 53,3 հզ մարդ կազմում էին հայերը, իսկ մահմեդականները՝ 48%-ը կամ 49,3 հզ մարդ: Ընդ որում, հարկավոր է նշել, որ ոչ բոլոր մահմեդականներն էին հանդիսանում թուրքեր կամ կովկասյան թաթարներ (այսինքն՝ ներկայիս աղբբջանցիներ), քանի որ մարզում ապրում էին նաև մեծ քանակությամբ պարսիկներ և քրդեր: Աղբբ. ԽՍՀ-ի կազմում Նախիջևանի ինքնավարության կազմավորման պահին (1924թ.) բնակչության թվաքանակը կազմում էր շուրջ 90 հզ մարդ: 1926թ. Համամիութենական մարդահամարի տվյալներով արդեն Նախիջևանի ԻԽՍՀ հայկական ազգաբնակչությունը կազմում էր 11,3 հզ մարդ կամ 11,0% (ինքնավար մարզի բնակչության ընդհանուր թիվը կազմում էր 104,9 հզ մարդ)⁵: Նախիջևանի ԻԽՍՀ-ի հայերի քանակության այսքան կտրուկ անկումը պայմանավորված էր այստեղ թուրքական գործերի կողմից իրականացրած ցեղասպանությամբ, որի արդյունքում ոչնչացվեցին Նախիջևանի շուրջ 40 հզ հայեր: Այսպիսով, Հայաստանի Հանրապետության (որի կազմի մեջ 1918-1920թթ. մտնում էր Նախիջևանը) անկումից և բոլշևիկացումից ու Խորհրդային Աղբբջանի կազմում Նախիջևանի ԻԽՍՀ-ի կազմավորումից հետո հայ ազգաբնակչության թվաքանակն այս հանրապետությունում շեշտակիորեն սկսեց նվազել⁶: Անդրկովկասյան Խորհրդային Դաշնային Հանրապետության գոյության ժա-

⁵ Мамедов К.В., Демографическое развитие Азербайджанской ССР. Баку, 1980, с. 32.

⁶ Арутюнян В., События в Нагорном Карабахе: Хроника. Ереван, 1990, с. 25.

մանակահատվածում Նախիջևանի ԻԽՍՀ-ի հայկական ազգաբնակչության թվաքանակը աճեց և 1939թ. կազմեց 18,8 հզ մարդ կամ ողջ բնակչության 14,9%-ը⁷: Բայց, արդեն 1959թ. Համամիութենական մարդահամարի համաձայն, Նախիջևանի ԻԽՍՀ-ի բնակչության թվի մեջ հայերի բաժնեմասն իջավ մինչև 6,8% կամ 9, 5 հզ մարդ: Իսկ 1970թ. մարդահամարով, Նախիջևանի ԻԽՍՀ-ի աղբբեջանցիներն արդեն կազմում էին 190 հզ, հայերը՝ 6 հզ, ռուսները՝ 4 հզ մարդ⁸: ԽՍՀՄ Վիճակագրության պետական կոմիտեի տվյալներով Նախիջևանի ԻԽՍՀ-ի բնակչության թվաքանակը 1989թ. կազմել է մոտավորապես 295 հզ մարդ, որից 96%-ը բաժին էր ընկնում աղբբեջանցիներին (ռուսները 1,3% էին կազմում, քրդերը՝ 1%, իսկ «այլ ազգությունները»՝ 1,75%)⁹: Այսպիսով, ոչ լրիվ 75 տարվա ընթացքում (սկսած 1915թ.) հայերը, իրենց պատմական բնակեցման տարածքում գերակշռող էթնոսից վերածվեցին «այլ ազգությունների», լուծվեցին Աղբբեջանի հովանավորությանը տրված Նախիջևանի ինքնավար տարածքի 2%-ից էլ պակաս բնակչության մեջ: Վիճակագրական-քանակական տվյալները ակնհայտորեն խոսում են հայ ազգաբնակչության՝ իր բուն, թվապես գերակայող և խիտ բնակեցման վայրերից դուրս մղման մեթոդի նմանակեցման փաստի մասին՝ որպես պանթուրքական քաղաքականության պետաիրավական պրակտիկայի միջոց, Թուրքիայից դեպի Աղբբեջանական Դեմոկրատական Հանրապետություն (ԱԴՀ, 1918-1920թթ.), իսկ հետո՝ Ադրբ. ԽՍՀ և այժմ արդեն՝ ԱՀ: Օսմանյան կայսրության, քեմալական Թուրքիայի, ներկայիս Թուրքական Հանրապետության և ԱԴՀ-ի, Ադրբ. ԽՍՀ-ի և ներկայիս ԱՀ-ի իրավահաջորդությունը տվյալ հարցում ակնհայտ է: Այդ պատճառով կարելի է խոսել բոլոր այս երեք թուրքական և երեք աղբբեջանական պետական կազմավորումների՝ բնիկ հայ ազգաբնակչության

դուրս մղման հարցում «բացասական իրավահաջորդության մասին»:

Այնատու են բացահայտ պատմական զուգահեռները Նախիջևանի հայ ազգաբնակչության մարդասիրական աղետի, որն արտահայտվում է այնտեղից բնիկ էթնիկ տարրի կատարյալ արտաքսման ձևով, և ԼՂԻՄ-ը Ադրբ. ԽՍՀ-ի կազմում գտնվելու բոլոր տարիների ընթացքում իրականացվող նույնանման բնույթի քաղաքականության միջև¹⁰: Ադրբ. ԽՍՀ-ի տարածքից արտաքսվեց Խորհրդային Աղբբեջանի պետություն կազմավորող ազգը: Հայերը կովկասյան թաթարների¹¹ հետ հավասարապես հանդիսանում էին Խորհրդային Աղբբեջանի պետություն կազմավորող ազգություն: Ինքը՝ հանրապետությունը, մտահղացվել և իր գոյության սկզբնական շրջանում ընկալվում էր որպես հայերի և մահմեդականների (կովկասյան թաթարների) միություն: Ավելին, Աղբբեջանական ԽՍՀ կազմավորվել էր այն տարածքի վրա, որտեղ կովկասյան թաթարները կազմում էին ազգաբնակչության կեսից մի փոքր ավելի: Համաձայն 1924թ. առաջին մարդահամարի, նրանց թվաքանակը կազմում էր 994,1 հզ մարդ կամ Խորհրդային Աղբբեջանի ողջ բնակչության ընդամենը մոտ 56%-ը¹²: 1930-ական թվականներին կովկասյան թաթարները աստիճանաբար ընդունեցին մինչ այդ գոյություն չունեցող «աղբբեջանցիներ» էթնոնիմը, սույնով, մեխանիկորեն և ավտոմատ կերպով, դառնալով այս հանրապետության տիտղոսային ազգությունը: Ընդ որում, սա այն դեպքում, երբ դեռևս 1926թ. Համամիութենական մարդահամարի տվյալներով նրանք հանդես են գալիս «կովկասյան թաթարներ» անվան տակ: Համեմատության համար, 1979թ. մարդահամարի համաձայն Ադրբ. ԽՍՀ-ի աղբբեջանցիների թվա-

¹⁰ Տե՛ս մանրամասները՝ Некоторые вопросы демографического и социально-экономического развития НКАО // Нагорный Карабах: историческая справка / Под ред. Галояна Г.А., Худавердяна К.С. Ереван, 1988.

¹¹ «Кавказские татары» - до 1930-х гг. общепризнанное название нынешних азербайджанцев.

¹² Гулиев Дж.Б., Борьба Коммунистической партии за осуществление ленинской национальной политики в Азербайджане. Баку, 1970, с. 573-574.

⁷ Нахичеванская АССР // Большая Советская Энциклопедия, т. 41. М., 1939, с. 335.

⁸ Большая Советская Энциклопедия, Т.24, М., 1977, с. 527.

⁹ Арутюнян В., նշված աշխատությունը, էջ 25:

քանակը կազմել է 4708,8 հզ մարդ, այսինքն՝ 1924թ-ից այն աճել է 4,7 անգամ, այդ այն դեպքում, երբ Խորհրդային Ադրբեջանի բոլոր «մյուս ազգությունների և ազգերի» թվաքանակը 1921թ-ից աճել է միայն 69%-ով, ինչի արդյունքում նրանց տեսակարար կշիռը հանրապետության բնակչության թվաքանակի մեջ 44%-ից իջել էր մինչև 22%¹³:

Կարսի պայմանագիրը կնքելու ժամանակ արդեն կար Կովքյուրոյի 1921թ-ի հուլիսի 5-ի որոշումը Խորհրդային Ադրբեջանի կազմում Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի (ԼՂԻՄ) ստեղծման մասին: Այսպիսով, Ադրբեջանի հայերը Կարսի պայմանագիրը կնքելու պահին արդեն ունեին փաստաթղթերով անրազրված Ադրբ. ԽՍՀ-ի պետություն կազմավորող երկրորդ ազգության կարգավիճակ, քանի որ բացի ամեն ինչից, պետք է ստանային լայն ինքնավար իրավունքներ իրենց պատմական, խիտ և քանակապես գերակայող բնակեցման տարածքներում: Սակայն, հետագայում, Ադրբ. ԽՍՀ-ի ղեկավարության հակաիրավական քաղաքականությունը, սկսած 1923թ-ից, երբ կազմավորվեց ԼՂԻՄ-ը, ընդհուպ մինչև 1991թ., երբ հռչակվեց Ադրբեջանական Հանրապետությունը, մշտապես սահմանափակել է պետություն կազմավորող երկրորդ ազգության քաղաքական, սոցիալ-տնտեսական իրավունքների ողջ համալիրը: Այս ամենը հանգեցրեց պատմական Արցախից դուրս տարածքների վրա հայկական ազգաբնակչության «վերացմանը» և, համապատասխանաբար, ԱՀ կազմավորվեց արդեն Ադրբեջանական ԽՍՀ պետություն կազմավորող այլ ազգության՝ նախկին կովկասյան թաթարների (ներկայիս ադրբեջանական թուրքերի) խիտ և քանակապես գերակայող բնակեցման սահմաններում: Այն տարածքից, որտեղ այսօր կազմավորվել է ներկայիս ԱՀ-ը, Ադրբ. ԽՍՀ պետականաստեղծ երկրորդ ազգության վերացումը արդյունք էր լայնածավալ, բռնի էթնիկ գտումների, միջազգային հանցագործության՝ ցեղասպանության իրականացման փաստերով,

¹³ Мирзоян Б.С., Нагорный Карабах (размышления над статистикой) // Правда о Нагорном Карабахе (материалы и документы). Ереван, 1989, с. 11-12.

որի հետևանքով վտարվեցին մոտ կեսմիլիոն նախկին Ադրբ. ԽՍՀ-ի հայ քաղաքացիներ:

Այս ամենից բացի, Ադրբ. ԽՍՀ-ի տարածքում հայության նկատմամբ խտրական վերաբերմունքի ցուցանիշ է հանդիսանում նաև խորհրդային հանրապետության՝ պետություն կազմավորող երկրորդ ազգության հողի և գույքային իրավունքների հարցը: Մինչ 1918թ. թուրքական ինտերվենցիան, Նախիջևանում հայերը, հանդիսանալով գերակշռող ազգային միավոր, տվյալ տարածքում ենթարկվել են զանգվածային վտարման: Նախիջևանում, որն իր նոր կարգավիճակով արդեն գտնվում էր Ադրբ. ԽՍՀ-ի կազմում¹⁴, համեմատաբար խաղաղ պայմաններ հաստատվելուց հետո, վտարված հայերը 1926թ. որոշեցին վերադառնալ իրենց հայրենիք, սակայն մերժում ստացան¹⁵: Հայրենիք վերադառնալու մերժում ստացած հայ փախստականների անորոշ իրավական կարգավիճակը, աղետալի նյութական վիճակը հանդիսացան այն գործոններից մեկը, որը նպաստեց Ռուս և հայ փախստականների իրավական վիճակի մասին Համաձայնագրի ստորագրմանը (1928թ. հունիսի 30)՝ ուղղված փախստականների, այդ թվում նաև Նախիջևանի, ծանր վիճակի վերացմանը: Համաձայնագիրը ստորագրվել էր այն կառավարությունների ներկայացուցիչների կողմից, որոնք մասնակցել էին Ժնևում Ազգերի Լիգայի փախստականների հարցերով Գերագույն Հանձնակատարի կողմից հրավիրված (1928թ. հունիսի 28) Ռուս և հայ փախստականների հարցերով համաժողովին: Համաձայնա-

¹⁴ 1923 թվականի փետրվարին Սովետների «Համաճախիջևանյան» 3-րդ համագումարի որոշման իրման վրա հռչակվեց Նախիջևանի ինքնավար երկրամասը՝ Ադրբ. ԽՍՀ կազմում, որը 1924 թվականի փետրվարի 9-ին վերակազմավորվեց Նախիջևանի ԽՍՀ: 1926 թվականի ապրիլի 18-ին ընդունվեց Նախիջևանի ԽՍՀ առաջին Մահմանադրությունը:

¹⁵ «Պատճառարանություն էր Նախիջևանի սակավահողություն: Ադրբ. ԿԳԿ որոշման մեջ, հակառակ փաստերի, նշվում էր. «...նկատի ունենալով Նախիջևանի ԽՍՀ սակավահողությունը», չնայած Նախիջևանում մեկ շնչին բաժին ընկնող հողը ավելի էր, քան Անդրկովկասի այլ շրջաններում: Թուրքական ինտերվենցիայի շրջանում ամայացած հայկական բնակչայրերը երկար տարիներ մնում էին անարդարբնակ»: Մեջբերում՝ *Минасян А., Карабахский конфликт: ключевые понятия и хроника*. Ереван, 2005, с. 114.

գիրը նպատակ էր հետապնդում «հատակորեն սահմանելու ռուս և հայ փախստականների իրավական կարգավիճակը»¹⁶:

Նախիջևանի և Ադրբ. ԽՍՀ-ի ղեկավարության կողմից վերադարձի մերժում ստացած հայերի մեծ մասը բնակեցվեց Խորհրդային Ադրբեջանի այլ տարածքներում: Չստանալով փոխհատուցում կորսված հողի և գույքի համար՝ մարդիկ սկսեցին «գրոյից» ստեղծել իրենց բարեկեցությունը Ադրբ. ԽՍՀ-ի այլ տարածքներում (հատկապես այնպիսի խոշոր արդյունաբերական կենտրոններում, ինչպիսիք էին Բաքուն և Կիլովաբադը), որտեղից ԽՍՀՄ գոյության վերջին տարիներին արդեն նրանց երեխաները և թոռները իրենց հերթին նույնպես ենթարկվեցին զանգվածային արտաքսումների¹⁷ նույնամանի իրավաքաղաքական և սոցիալ-տնտեսական արդյունքով, շատերի մոտ առ այսօր անդուշ իրավական կարգավիճակ և ողջ կամ գործնականում ողջ գույքի կորուստ՝ առանց փոխհատուցման:

Համաձայն ԽՍՀՄ 1977թ. Սահմանադրության. «Պետական սեփականությունը ողջ խորհրդային ժողովրդի ընդհանուր սեփականությունն է: Պետության բացառիկ սեփականությունն են հանդիսանում հողը, նրա ընդերքը, ջուրը, անտառները» (Հոդված 11-րդ): ԽՍՀՄ Սահմանադրության Հոդված 13-րդը ամրագրել է դրույթ, համաձայն որի՝ ԽՍՀՄ քաղաքացիների անձնական սեփականություն կարող էին հանդիսանալ, մասնավորապես, առօրյա, անձնական գործածության իրերը, բնակելի սուները, ինչպես նաև, բայց արդեն միայն օգտագործման իրավունքով, կարող էին գտնվել օրենքով սահմանված կարգով տրամադրված հողակտորներ: ԽՍՀՄ Սահմանադրության 76-րդ Հոդվածի համաձայն՝ խորհրդային հանրապե-

տությունը պետության համամիութենական մարմինների իրավասության սահմաններից դուրս իր տարածքի վրա ինքնուրույն էր իրականացնում պետական իշխանությունը:

Հողային հարաբերությունները չէին վերաբերում համամիութենական մարմինների բացառիկ իրավասություններին և յուրաքանչյուր միութենական հանրապետություն իրականացնում էր հողային հարաբերությունների իրավական կարգավորումը՝ հիմնվելով համամիութենական օրենսդրության դրույթների վրա¹⁸: Երբ հողը գտնվում էր պետության բացառիկ սեփականության ներքո, քաղաքներում և քաղաքատիպ ավաններում հողակտորները տրամադրվում էին քաղաքացիներին անժամկետ օգտագործման՝ անհատական շինարարություն իրականացնելու համար: Այդպիսի հողակտորները չէին հանդիսանում քաղաքացիական իրավունքի ինքնուրույն օբյեկտներ և ծառայողական դեր էին կատարում կառուցված շինությանը կից: Քաղաքացիները իրավունք չունեին այն օգտագործել շինությունից առանձնացված, վերջինիս օտարման ժամանակ դրանք հետևում էին շինության ճակատագրին, այսինքն՝ անցնում էին նոր սեփականատիրոջը: Հողակտորի կախյալ դերի մասին դրույթն ընդգրկված էր 1991թ. Հողային օրենսգրքում, որով նախատեսված էր, որ շենքի, շինության նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցման ժամանակ այդ օբյեկտների հետ միասին փոխանցվում է նաև հողակտորից օգտվելու իրավունքը: Պետական սուբյեկտն՝ ի դեմս միութենական հանրապետության (Ադրբ. ԽՍՀ), հողային հարաբերություններում հանդես է եկել ԽՍՀՄ-ում հողի միակ սեփականատիրոջ՝ պետության անունից և իրականացրել է տեղային յուրահատկություններին համապատասխանող հողային

¹⁶ www.unhcr.ru/doc/liga-2.doc.

¹⁷ Տե՛ս մանրամասները՝ Сумгаит... геноцид... гласность? Ереван, 1989, 1990; Чобанян С., Государственная и национальная политика Азербайджана. Ереван, 1993; Бальян Г., Нагорный Карабах: Рабочий документ, представленный в комиссию по правам человека экономического и социального совета ООН. Ереван, 1994; Мосесова И., Армяне в Баку: Бытие и исход. Ереван, 1996; Cox C. Ethnic Clearing in Progress: War in Nagorno Karabakh. Institute for Religious Minorities in the Islamic World. London, 1993.

¹⁸ Այսպես, օրինակ, հողահատկացումը, որի տակ հասկացվում էր կողպեբաստիվ կամ հասարակական կազմակերպություններին կամ առանձին անձանց օգտագործման համար հող հատկացնելու մասին պետական լիազոր մարմնի որոշումը, իրականացվում էր միութենական կամ ինքնավար հանրապետությունների Նախարարների խորհուրդների, Ժողովրդական պատգամավորների մարզային, քաղաքային, շրջանային, ավանային և գյուղական խորհուրդների կողմից:

հարաբերությունների անմիջական հանրապետական իրավա-
կան կարգավորում:

Այստեղից էլ՝ հողային և դրա հետ կապված քաղաքացիա-
կան իրավահարաբերությունների, տվյալ բնագավառում քա-
ղաքացիների իրավունքների պաշտպանության և նրանց
խախտված իրավունքների վերականգնման մասով համա-
միութենական օրենսդրությանը համապատասխանող կարգա-
վորման համար պատասխանատվությունն ընկնում էր պետա-
կան իշխանության հանրապետական մարմինների վրա: Հայ
ազգաբնակչության լիակատար վտարման իրավաբանական
փաստը Ադրբ. ԽՍՀ-ի այն տարածքներից, որտեղ հետագա-
յում հռչակվեց և, իր կողմից փաստացի վերահսկվող տարած-
քային սահմաններում ձևավորվեց ներկայիս Ադրբեջանական
Հանրապետությունը, հողագույքային տեսանկյունից նախա-
նշում են հետևյալ իրավական հետևանքները: Վտարված հա-
յերը ոչ միայն հայտնվեցին անորոշ իրավական վիճակում,
այլև կորցրեցին իրենց գույքը (իր առավել էական՝ անշարժ
մասով), ինչպես նաև գրկվեցին իրենց հայրենիք վերադառնա-
լու հնարավորությունից: Եթե պատկերացնենք ներկայիս ԱՀ-ի
և ԼՂՀ-ի խաղաղ իրավաքաղաքական, քաղաքակիրթ, միջազ-
գային-իրավական «ապահարգանի» իրավիճակ 1988-91թթ-ին,
այլ ոչ թե ԱՀ-ի բացառապես ազրեսիվ և, հետագայում, ռևո-
լյուսիոնական դիրքորոշումը Ադրբ. ԽՍՀ-ի հայ ժողովրդի նկատ-
մամբ, Ադրբ. ԽՍՀ-ի հայ քաղաքացիների ինտելեկտուալ, ԼՂՀ-ի
սահմաններից դուրս, նոր ադրբեջանական պետակա-
նության քաղաքացիական հասարակության մեջ, ապա
«փախստական» և «ներքին տեղաշարժված անձինք» հասկա-
ցությունները դարաբաղյան հակամարտության համատեքս-
տում հավանականորեն ընդհանրապես գոյություն չէին ունե-
նա: Հայ փախստականները և բռնի տեղահանվածները կդառ-
նային ԱՀ-ի լիարժեք քաղաքացիներ՝ ունենալով անձնական,
քաղաքական և սոցիալ-տնտեսական իրավունքների և ազա-
տությունների այդ հանրապետությունում ճանաչված և երաշ-
խավորված համալիրը: Սակայն, ամեն ինչ տեղի ունեցավ
ճիշտ հակառակ կերպ:

Հայերի վտարումը տեղի է ունեցել խորհրդային ժամանա-
կաշրջանում (հայերի կազմակերպված արտաքսման վերջին
ալիքը Ադրբ. ԽՍՀ-ում սկսվել է 1988թ-ի փետրվարին) և կա-
տարվել է այս միութենական հանրապետության առնվազն
անգործության պայմաններում: Եթե նույնիսկ ԱՀ-ի ներկայիս
իշխանությունները հրաժարվում են Ադրբ. ԽՍՀ-ի իրավական
ժառանգորդությունից, ապա ամեն դեպքում հռչակելով ժողո-
վրդավարական պետություն և մարդու իրավունքների ու ազա-
տությունների պաշտպանության բնագավառում իրենց վրա
վերցնելով միջազգային-իրավական պարտավորություններ,
նրանք չեն կարող օրինականորեն խույս տալ ինչպես ֆիզի-
կական և բարոյական վնասի (իրավաբանական փաստ՝ բռնի
արտաքսում՝ միջազգայնորեն պատժելի առավել ծանր հան-
ցագործությունների կատարմամբ), այնպես էլ գույքային վնա-
սի փոխհատուցումից այն անձանց, որոնք ենթարկվել են էթ-
նիկ գտումների (իրավաբանական փաստ՝ ուրիշի գույքի ապօ-
րինի¹⁹ յուրացում՝ առանց համապատասխան նյութական
փոխհատուցման):

ԱՀ-ի կողմից հայ փախստականների և բռնի տեղահան-
վածների վնասի փոխհատուցումից շարունակվող խուսափու-
մը հիմք է տալիս ԼՂՀ-ի՝ որպես նախկին Ադրբ. ԽՍՀ-ի տա-
րածքում այս հարցում իրավասու միակ պետական սուբյեկտի
իշխանություններին՝ ստանձնելու հակամարտությունից առա-
վելագույնս տուժած անձանց իրավունքների վերականգնման
պատասխանատվությունը և գործողություններ ձեռնարկելու
վերոնշյալ անձանց գույքային վնասների փոխհատուցման
ուղղությամբ: Այս համատեքստում, Լեռնային Ղարաբաղի
կողմից տարածքների ներկայիս վերահսկողությունը և ԼՂՀ-ի
պետաիրավական ինքնիշխանության գործողությունն այն-
տեղ, պետք է ընկալվեն որպես Ադրբ. ԽՍՀ-ի հայության կող-
մից կրած գույքային վնասների փոխհատուցման ապահով-

¹⁹ Հայերի վերջնական վտարման պահին գործող խորհրդային օրենսդրության
նորմերի համաձայն, չնայած դրա շրջակա գաղափարախոսական անհանդուրժ-
րականությանը, այնուհանդերձ, ճանաչվում և պաշտպանվում էր քաղաքացիների
գույքի անձեռնմխելիությունը:

ման հարցում անհրաժեշտ իրավաքաղաքական տարրեր: Հայրենիքի և գույքի կորուստը Նախիջևանում, Հայրենիքի և գույքի կորուստը Ադրբ. ԽՍՀ-ում պետք է հանգեցնեն նրան, որ ԼՂՀ-ի ուժերի կողմից Դաշտային Ղարաբաղին ներկայիս տիրապետումը զնահատվի՝ որպես այն կորուստների մասնակի նյութական համարժեք, որոնք Ադրբ. ԽՍՀ-ի տարածքային շրջանակներում պատճառվել են հայերին²⁰:

Ներկայիս Ադրբեջանական Հանրապետությունը պետք է իր վրա վերցնի ինչպես Ադրբ. ԽՍՀ-ում 1988-1990թթ. էթնիկ զտումների արդյունքում, այնպես էլ հակամարտության հետագա ռազմական փուլում, որի հետևանքով գոյացավ փախստականների և ներքին տեղաշարժի ենթարկված (ՆՏԱ) անձանց նոր ալիք ԼՂՀ-ից և հարակից շրջաններից, տուժած բոլոր մարդկանց կրած նյութական և բարոյական վնասների փոխհատուցման պատասխանատվությունը: Հենց Ադրբեջանը, որպես այս գործողությունների նախաձեռնող, պետք է պատասխանատվություն կրի այն մարդկանց առջև, որոնք տուժել են այս իրադարձությունների ընթացքում, այդ թվում ադրբեջանական ազգության իր այն քաղաքացիների նկատմամբ, որոնք ռազմական գործողությունների հետևանքով լքեցին այն տարածքները, որոնց վրա ներկայումս տարածվում է ԼՂՀ-ի ինքնիշխանությունը:

Իր պատասխանատվության ժխտման և վնասի փոխհատուցումից խուսափելու հարցերում Ադրբեջանը բացառություն չի կազմում: Նմանօրինակ դիրք է գրավում նաև ներկայիս Թուրքական Հանրապետությունը, որը չի ցանկանում ճանաչել և կրել իր իրավական, բարոյական և նյութական պատասխանատվությունը Օսմանյան Թուրքիայի կողմից 1915-1920թթ. Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի տարբեր մասերում հայերի ցեղասպանության իրականացման փաստի համար: ԵՄ անդամակցությանը հավակնող և եվրոպական բոլոր ար-

ժեքների, ստանդարտների և նորմերի, այդ թվում մարդու իրավունքների և ազատությունների մասով իր՝ համապատասխանության մասին հայտարարելու իրեն իրավունք վերապահող երկիրը չի ցանկանում իր վրա վերցնել պատասխանատվություն XX դարի առաջին ցեղասպանության ընթացքում մարդկության նկատմամբ իրականացրած սարսափելի հանցագործության և հիմնարար իրավունքների և ազատությունների զանգվածային ոտնահարումների համար, որի զոհ դարձավ շուրջ 2 մլն մարդ, իսկ վերադարձ և ողջ աշխարհով մեկ սփռված արևմտահայերի սերունդներն, առ այսօր, Թուրքիայի կառավարության կողմից չեն ստացել ոչ մի փոխհատուցում իրենց կորցված գույքի համար: Բայց չէ որ կա ուղղակի, կարելի է ասել, հայելային զուգադրություն Օսմանյան Թուրքիայում 1915-1920թթ. հայերի ցեղասպանության և տեղահանման ընթացքի և հետևանքների ու 1988-1992թթ. Ադրբ. ԽՍՀ-ում հայերի ցեղասպանության և էթնիկ զտումների միջև:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, հաշվի առնելով իր սեփական բարոյական պատասխանատվությունը տվյալ կատեգորիայի անձանց նկատմամբ, առնվազն պետք է ճանաչի առավել պարզեցված կարգով ԼՂՀ-ի քաղաքացիություն ստանալու նրանց իրավունքը: Ընդ որում, տվյալ կատեգորիայի անձանց ԼՂՀ-ն կարող է հնարավորություն տրամադրել բնակեցվելու իր կողմից վերահսկվող տարածքներում, ելնելով այն բանից, որ նշված անձինք, նախ, առավելագույնս են տուժել տվյալ հակամարտությունից ինչպես բարոյական, այնպես էլ նյութական առումով, և երկրորդը, որ մինչ իրենց բռնի արտաքսման պահը, որն ունեցել է ցեղասպանության և էթնիկ զտումների բնորոշ հատկանիշներ, նրանք հանդիսացել են Ադրբեջանական ԽՍՀ-ի և ԽՍՀՄ-ի քաղաքացիներ²¹: Այսինքն՝ մինչ իրենց վտարման պահը, նրանք հաստատուն

²⁰ Տե՛ս մանրամասները՝ Մինասյան Ս., Աղաջանյան Մ., Ասատրյան Է., Ղարաբաղյան հակամարտություն. Փախստականներ, տարածքներ, անվտանգություն: Երևան, 2005:

²¹ Համաձայն 1977թ. ԽՍՀՄ Սահմանադրության Հոդված 33-րդի. «ԽՍՀՄ-ում սահմանված է միացյալ միութենական քաղաքացիություն: Միութենական հանրապետության յուրաքանչյուր քաղաքացի հանդիսանում է ԽՍՀՄ քաղաքացի: Խորհրդային քաղաքացիություն ձեռք բերելու և այն կորցնելու հիմքերը և կարգը սահմանվում է ԽՍՀՄ քաղաքացիության մասին օրենքով»:

իրավաքաղաքական կապի մեջ են գտնվել սկզբից Ադրբ. ԽՍՀ-ի, իսկ արդեն նրա միջոցով նաև միացյալ Խորհրդային Միության հետ: Այդ իսկ պատճառով նրանք իրավունք ունեն բնակչություն հաստատելու նախկին Ադրբ. ԽՍՀ-ի տարածքի վրա, քանի որ տվյալ պահին նրանք ունեն փախստականի կարգավիճակ, որն իր հերթին կրում է ժամանակավոր բնույթ և, սույնով, նախատեսում է տվյալ անձանց՝ իրենց վերջին քաղաքացիության վայրերը վերադառնալու հնարավորություն: Այդպիսի վայրեր են հանդիսանում ներկայում ԼՂՀ կողմից վերահսկվող Դաշտային Ղարաբաղի տարածքները, որտեղ, տվյալ պահին, նրանց համար ԼՂՀ-ի ուժերով կարող է ապահովվել անվտանգ կյանք և լիարժեք զարգացում: Դա կապված է նաև այն քանի հետ, որ ի տարբերություն ԼՂՀ-ի իրավասիրություն գտնվող այլ տարածքների, Դաշտային Ղարաբաղը առավել մեծ հնարավորություններ ունի տվյալ կատեգորիայի մարդկանց տեղաբաշխման և նորմալ կենսագործունեություն ապահովելու համար, քան հանրապետության այն շրջանները, որոնք խորհրդային ժամանակաշրջանում բռնի կերպով սահմանափակվել էին նախկին ԼՂԽՄ-ի շրջանակներում: Համեմատության համար անհրաժեշտ է նշել, որ խորհրդային իշխանության տարիներին ծագումով ԼՂԽՄ-ից հայերի քանակությունը, որոնք ապրում էին Ադրբ. ԽՍՀ-ի այլ շրջաններում, 5-6 անգամ գերազանցում էր բուն ԼՂԽՄ-ի հայ ազգաբնակչությունը (թեև դրան նպաստել էին ոչ միայն օբյեկտիվ սոցիալ-տնտեսական պատճառները և բնական ու նյութական ռեսուրսների սահմանափակությունը, այլև Խորհրդային Ադրբեջանի իշխանությունների կողմից վարվող ԼՂԽՄ-ի հայերի վտարմանն ուղղված պետական բացահայտ քաղաքականությունը, որի արդյունքում մինչև 1980-ական թվականների վերջը ինքնավարությունը լքել է նրա բնակչության ավելի քան 80 %-ը)²²: Սակայն Դաշտային Ղարաբաղի տվյալ տարածքներն, այնուհանդերձ, բավարար նյութական փոխհատուցում չեն

հանդիսանում Ադրբ. ԽՍՀ-ի նախկին այն քաղաքացիների համար, որոնք լքեցին այդ հանրապետությունը 1988-1990թթ. զանգվածային հետապնդումների և ցեղասպանության արդյունքում: Բաքվում, Կիրովաբադում, Սումգայիթում և այլ քաղաքներում ապրող նախկին Ադրբ. ԽՍՀ-ի հայ քաղաքացիների ունեցած անշարժ գույքի որակական համադրումը ցույց է տալիս, որ խոսքը գնում է մոտավորապես 100-110 հազար բնակարանների և սեփական տների մասին, որոնք թողնվել են նրանց կողմից արտաքսման և էթնիկ զտումների արդյունքում: Հաշվի առնելով այն փաստը, որ Ադրբ. ԽՍՀ-ի հայերը՝ ունենալով յուրահատուկ մասնագիտական ցեղ (մասնավորապես, նրանք ավանդորեն կազմել են Խորհրդային Ադրբեջանի նավթարդյունաբերության առաջատար մասնագետների մեծ մասը և այլն) և բարձրագույն կրթական մակարդակ և որ գտնվել են ավելի լավ նյութական վիճակում, քան նախկին Ադրբ. ԽՍՀ-ի մնացած բնակչությունը (այդ թվում նաև 1980-ական թվականների վերջին ադրբեջանցիներով բնակեցված Դաշտային Ղարաբաղի բնակչությունը) և որ նրանցից ոմանք ունեին 2-3 բնակարաններ և այլն, ակնհայտ է, որ Դաշտային Ղարաբաղի տարածքները չեն կարող լինել բավարար երաշխիք և փոխհատուցում նրանց կորուստների դիմաց:

Միաժամանակ, խոսք չի կարող գնալ այն մասին, որ նրանք կարող են վերադառնալ իրենց նախկին բնակության վայրերը՝ հաշվի առնելով անցյալ դարի ողջ ընթացքում Ադրբեջանի բոլոր տեսակի իշխանությունների կողմից հայ ազգաբնակչության նկատմամբ կիրառվող մեծ և փոքր ցեղասպանությունների քաղաքականությունը: Եթե անգամ խորհրդային ժամանակաշրջանում, երբ կենտրոնական ուժային իշխանության առկայությունը, որը մեծապես վերահսկում էր իշխանությունը բոլոր ուղղահայացներում, չկարողացավ կանխարգելել հայերի նկատմամբ մշտական ճնշումների և խտրականությունների դրսևորումը, ինչը, վերջ ի վերջո, հանգեցրեց հայերի հանդեպ ցեղասպանության գործողությունների 1988թ-ին՝ Սումգայիթում, 1990թ-ին՝ Բաքվում, ինչպես նաև Ադրբեջանի մնացած մյուս հայաբնակ շրջաններում, ապա ինչպես կարող է ներկա-

²² Տե՛ս մանրամասները՝ Правда о Нагорном Карабахе: Материалы и документы. Ереван, 1989.

յիս Ադրբեջանը, որտեղ հայաստյացությունը և հայավախութ-
յունը բարձրացված են պետական քաղաքականության աստի-
ճանի, ապահովել Ադրբ. ԽՍՀ-ի նախկին քաղաքացիների
անվտանգությունն ու նորմալ կենսագործունեությունը: Առան-
ձին լուրջ խնդիր պետք է համարել նաև հայ-ադրբեջանական
խառնամուսնական զույգերի հարցը: Նմանօրինակ ընտանիք-
ների նշանակալից մասը (թերևս տասնյակ հազարներ), ընտա-
նեկան կապերը պահպանելու համար ստիպված եղավ լքել
Ադրբեջանը և ամեն ինչ սկսել զրոյից՝ հիմնականում Ռուսաս-
տանում և ԱՊՀ-ի այլ երկրներում: Հարկավոր է ընդգծել, որ
նրանց պարտադրված էլքը Ադրբեջանից նույնպես հետևանք
էր ադրբեջանական պետության և հասարակության կողմից
նրանց նկատմամբ կիրառվող նպատակաուղղված ճնշման:
ԼՂՀ-ն կարող է իր վրա վերցնել նաև դարաբաղյան հասարա-
կության մեջ այդ ընտանիքների ինտեգրման հոգածությունը:
Կարծում ենք, որ ելքն այս իրավիճակից կարող է լինել միջպե-
տական սահմանագտումը, իսկ բոլոր նկատառումներով ամե-
նահարմար տարածքները ԼՂՀ-ի իրավատիրություն գտնվող
Դաշտային Ղարաբաղի շրջաններն են՝ որտեղ կարող է ան-
վտանգ բնակության հնարավորություն տրամադրվել նախկին
Ադրբ. ԽՍՀ-ի բռնաճնշումների ենթարկված քաղաքացիներին:

Դրա հետ մեկտեղ, արդեն ելնելով այն հանգամանքից, որ
ԼՂՀ-ն կարող է նրանց տրամադրել անվտանգության որոշակի
երաշխիքներ և, համապատասխանաբար, տվյալ կատեգո-
րիաների անձանց վերցնել իր անմիջական պետական պաշտ-
պանության ներքո, առաջանում է նշված անձանց և ԼՂՀ-ի մի-
ջև իրավաքաղաքական կապի ձևակերպման անհրաժեշտու-
թյուն՝ վերջինիս քաղաքացիության ձևով:

«ԱԳՐԵՍԻԱ» ՀԱՄԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ, ԱԳՐԵՍԻԱՅԻ
ԱՐՏԱԸԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՉԱՓՈՒՄՆԵՐԸ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ
(ՆԱԽԿԻՆ ԱԴՐԲ. ԽՍՀ ԵՎ ՆԵՐՎԱՅԻՍ ԱՀ ՕՐԻՆԱԿՈՎ)

Պատերազմի դիմելու իրավունքը սահմանափակված էր
Ազգերի Լիգայի 1919թ. Կանոնադրությամբ, իսկ այնուհետև
պատերազմն արգելվեց 1928թ. Փարիզյան պակտով («Բրիան-
Կելլոգի պակտ»)՝ ստորագրված այն ժամանակվա առաջա-
տար պետությունների կողմից և ՄԱԿ-ի 1945թ. Կանոնադրու-
թյամբ: Փարիզյան պակտով, այն ստորագրած պետություննե-
րը հայտարարեցին, որ դատապարտում են պատերազմը որ-
պես միջազգային վեճերը կարգավորելու միջոց և հրաժարվում
են այն որպես ազգային քաղաքականության գործիք կիրառե-
լուց: ՄԱԿ-ի կանոնադրությունը արգելում է ուժի դիմել միջազ-
գային հարաբերություններում, բացառությամբ կոլեկտիվ հար-
կադրական գործողությունների և օրինական անհատական
կամ կոլեկտիվ ինքնապաշտպանության իրավունքի իրակա-
նացման դեպքերի: Միջազգային հարաբերություններում ուժ
կիրառելու կամ ուժով սպառնալու արգելքը անիրականանալի
կլիներ, եթե տարբերություն չդրվեր ագրեսորի և զոհի միջև:
Ժամանակակից միջազգային իրավունքը կատարում է նման
տարբերակում և այն արտահայտվում է այնպիսի կատեգո-
րիաներով, ինչպես «անհատական կամ կոլեկտիվ ինքնա-
պաշտպանության օրինական իրավունքը», «հարկադրական
բնույթի կոլեկտիվ միջոցառումների կիրառում՝ համապատաս-
խան ՄԱԿ-ի Կանոնադրության Գլուխ VII», «հարաբերու-
թյուններ երրորդ երկրների հետ», «ռեպարացիաներ (պատե-
րազմական տուգանքներ) ռազմական գործողությունների
ավարտից հետո»: Բացի դրանից, նախատեսվում է այն ան-
ձանց քրեական հետապնդում, որոնք մասնակցել են ագրեսիվ

պատերազմի նախապատրաստմանը, սանձազերծմանը և դրա ղեկավարմանը:

Ազրեսիան, որպես միջազգային իրավունքի տեսանկյունից անօրինական գործողություն, առաջացնում է իրավական հետևանքներ, որոնց թվում, բացի վերոհիշյալներից, կարելի է նշել հետևյալները՝ սպառնալիքների միջոցով կամ ուժի կիրառմամբ պարտադրված պայմանագրերի անվավերություն, «խտրական վերաբերմունք» երրորդ պետությունների կողմից: Ո՛չ 1928թ-ի Փարիզյան պակտը, ո՛չ էլ ՄԱԿ-ի Կանոնադրությունը չեն պարունակում ազրեսիայի սահմանումներ: Գոյություն ունի ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1974թ. դեկտեմբերի 14-ի 3314 (XXIX) որոշումը, որը հենց այդպես էլ կոչվում է՝ «Ազրեսիայի սահմանումը»: Տվյալ որոշման տեքստից երևում է, որ «ազրեսիա» հասկացությունը ունի խիստ միջպետական բնույթ և իրենից ներկայացնում է «պետության կողմից զինված ուժի կիրառում այլ պետության ինքնիշխանության, տարածքային անձեռնմխելիության կամ քաղաքական անկախության դեմ» (հոդված 1) և պետք է առկա լինի զինված ուժի կիրառման հերթականության չափանիշը՝ որպես ազրեսիայի ակտի վկայություն» («ի խախտումն ՄԱԿ-ի Կանոնադրության պետության կողմից առաջինը զինված ուժի կիրառումը հանդիսանում է prima facie (լատ.՝ «առաջին հայացքից»)՝ *հեղինակների ծանոթությունը*) (հոդված 2)): Որոշման նշված հոդվածները պարունակում են ազրեսիայի միջպետական բնույթի հնարավոր շեղումների ձևակերպումներ (հոդված 1-ում նշված է, որ. «Մույն սահմանման մեջ «պետություն» տերմինը կիրառվում է չկանխորոշելով ճանաչման հարցը կամ հարցն այն մասին, թե հանդիսանո՞ւմ է արդյոք պետությունը ՄԱԿ-ի անդամ») և ուժի կիրառման առաջնահերթության չափանիշի պարտադիր լինելը (որոշման հոդված 2-ում նշված է, որ. «Անվտանգության Խորհուրդը համաձայն Կանոնադրության կարող է հետևություն անել, որ սահմանումն այն մասին, որ ազրեսիայի գործողությունը կատարվել է, արդարացված չի լինի այլ համապատասխան հանգամանքների լույսի ներքո, ներառյալ

այն փաստը, որ համապատասխան գործողությունները կամ դրանց հետևանքները չեն կրում բավարար լուրջ բնույթ»):

Մասնագետները նշում են ազրեսիայի իրական սահմանման հետ ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 3314 որոշման անբավարար համապատասխանությունը. «Եթե չհաշվենք ազգային-ազատագրական պատերազմները²³, որոշումն, ըստ էության, ուշադրությունը ուղղել է սուբյեկտիվ տարրի՝ զինված ուժի կիրառման պատճառի վրա, ինչն անհամատեղելի է իրական սահմանման հետ, քանի որ սահմանումը, որը կարող է ունենալ իրավական հետևանքներ, պետք է հիմնվի օբյեկտիվ և ստուգման ենթակա տարրերի վրա»²⁴:

Ներկայումս պետությունների գործողություններում ազրեսիայի առկայության իրավաքաղաքական գնահատականը տալու իրավասությունը պատկանում է բացառապես ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդին: Գլխավոր Ասամբլեայի որոշումը ՄԱԿ-ի անդամ-երկրների համար կրում է հանձնարարական բնույթ և այդ պատճառով «չկան Անվտանգության Խորհուրդը կաշկանդող իրավաբանական չափանիշներ և նրա որոշումը մնում է որպես քաղաքական ակտ»²⁵:

Ազգային-ազատագրական պատերազմների ժամանակ ժողովրդի կողմից սեփական պետականություն ստեղծելու իր օրինական իրավունքը իրականացնելու ընթացքում կարող է առաջանալ մի իրավիճակ, երբ տվյալ իրավունքի իրականացումը ուժեղ հակազդեցության է հանդիպում փլուզման փուլում գտնվող պետական կազմավորման կողմից: Վերջինիս նմանօրինակ գործողությունները՝ սեփական պետականություն ստեղծելու որոշում կայացրած բնակչության ժողովրդավարական կամաարտահայտմանը խոչընդոտելու ուղղությամբ, կա-

²³ «Ոչինչ տվյալ սահմանման մեջ...չի կարող որևէ կերպ վնաս պատճառել Կանոնադրությունից (ՄԱԿ-ի-*հեղինակների ծանոթությունը*) բխող այն ժողովուրդների ինքնորոշման, ազատության և անկախության իրավունքին, որոնք բռնի կերպով զրկվել են այդ իրավունքից...» (որոշման հոդված 7):

²⁴ Бюньон Ф., Справедливая война, агрессивная война и международное гуманитарное право//Международный журнал Красного Креста. Сборник статей. 2002, с. 219.

²⁵ Бюньон Ф., նշված ստեղծագործությունը, էջ 220:

րեյի է գնահատել որպես «ագրեսիա ներսում», առավել ևս, եթե այդպիսի ընկալման համար գոյություն ունեն անհրաժեշտ բոլոր փաստացի հանգամանքները:

Աղբրեջանական ԽՍՀ-ն ստեղծվել է բուլշևիկյան Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի ջանքերով 1920-ական թվականներին՝ որպես բազմազգ պետական կազմավորում (մի կողմ թողնելով տվյալ պետաիրավական կազմավորման պատմաքաղաքական և իրավական օրինականության հարցը), որտեղ որպես պետություն կազմավորող ազգություններ էին հանդես գալիս քյուրք-մահմեդականները կամ կովկասյան թաթարները (ներկայիս աղբրեջանցիները) և հայերը (վերջիններս, հանրապետության այլ ազգություններից միակն էին, որ ստացան իրենց ինքնավար կազմավորումը Աղբր. ԽՍՀ-ի կազմում): ԽՍՀՄ-ի համընդհանուր փլուզման ժամանակաշրջանում Խորհրդային Աղբրեջանի քյուրքերը ընտրեցին սեփական ազգային պետություն, միջազգային հարաբերությունների և միջազգային իրավունքի անկախ սուբյեկտ կառուցելու ճանապարհը:

Սրան նախորդող իրադարձությունները, որոնք ծավալվում էին ներկայիս Աղբրեջանական Հանրապետության տարածքում, սակայն տեղի էին ունենում այդ պահին փաստացի և իրավաբանորեն (դե ֆակտո և դե յուրե) դեռևս գոյություն ունեցող միացյալ Խորհրդային Միության ժամանակ (1988-1990թթ.), բացառիկ ակներևությամբ ցույց տվեցին կրկին ծնվող քյուրք-աղբրեջանական պետականության՝ ի դեմս Աղբր. ԽՍՀ պետություն կազմավորող ազգություններից մեկի (աղբրեջանցիների) «խաղաղ ապահարգանի» և վերացվող Աղբր. ԽՍՀ պետություն կազմավորող այլ ազգության (հայերի) հետ էթնիկ սահմանազատմանը գնալու անկարողությունը: Չնավորվող աղբրեջանական նոր պետության ազգայնական-շովինիստական բնույթի քաղաքական ուժերը, որոնք հետագայում կանգնեցին ԱՀ-ի իշխանության ղեկին, հրահրեցին, հովանավորեցին և անմիջականորեն իրականացրեցին առավել զանգվածային կարգի բռնի գործողություններ հանրապետության հայ բնակչության ներկայացուցիչների նկատմամբ:

Գլխավոր նպատակն էր վերաստեղծվող ԱՀ-ի իրավաքաղաքական տարածությունից ֆիզիկապես վերացնել պետություն կազմավորող հայկական տարրը: Ներքին ագրեսիան ուղղված էր քանակով և պետական կազմավորման ուժով երկրորդ ազգության նկատմամբ և իր դրսևորումը գտավ զանգվածային բռնի տեղահանումների գործողություններում՝ մարդկության դեմ ամենածանր հանցագործությունների ուղեկցությամբ, իսկ հայերի՝ առավել խիտ և քաղաքական նշանակության բնակչության որոշակի վայրերում, իրականացվեցին մեծապես իշխանությունների կողմից հրահրված և ծրագրված ցեղասպանության գործողություններ: Ցանկացած պետական կազմավորման ներսում ցեղասպանության գործողությունների իրականացումը տվյալ կազմավորման ցանկացած ազգային, էթնիկ, ռասայական կամ կրոնական խմբի նկատմամբ հանդիսանում է պետական իշխանության ագրեսիվության ակնհայտ հատկանիշ՝ դրսևորված «իր իսկ ներսում», դուրս չգալով իր սահմանների շրջանակներից: Այս ամենից բացի, եթե տվյալ գործողությունները իրականացվել են կոնկրետ ազգային խմբի նկատմամբ, որը հանդիսանում է տվյալ «ներսում ագրեսիա իրականացնող պետության» պետություն կազմավորող ազգային տարր և ստեղծվող քաղաքական անկախության պետական սահմաններից «զոհ-ազգի» ֆիզիկական հեռացման կոնկրետ իրավաքաղաքական նպատակներ են հետապնդում, ապա ակնհայտ է, որ մարտնչող ազգայնամոլության ագրեսիվ ուղղվածությունը պետք է բերի կամ «զոհ-ազգի» ֆիզիկական լիակատար դուրսնդման (ոչնչացման) կամ «զոհ-ազգի կողմից ագրեսոր երկրի որոշակի մասում սեփական քաղաքական անկախության կազմավորման» իր քաղաքական կարգավիճակի հետագա ինքնուրույն ընտրությամբ: Մեփական քաղաքական անկախությունը՝ առանձին պետական կազմավորման ձևով, կարող է ստեղծվել այնտեղ, որտեղ «զոհ-ազգը» արդեն ունեցել է պետական իշխանության, թեկուզ և սիմվոլիկ, իշխանության որոշակի ատրիբուտներ (ԼՂԻՄ), որտեղ տվյալ ազգն իրեն անվտանգության մեջ կզգա՝ ապահովված դաշնակից պետությունների ու միջազգային հանրության կողմից ընդհան-

քապես և որտեղ տվյալ ազգը կկարողանար կարգավորել իր հետագա խաղաղ կյանքը կենսագործունեության բոլոր ոլորտներում՝ ստեղծելով քաղաքականապես և սոցիալ-տնտեսական առումով կայացած, արդյունավետ ժողովրդավարական պետություն:

Ցեղասպանության գործողությունները հայերի նկատմամբ Ադրբ. ԽՄՀ-ի և ԱՀ-ի տարածքներում, որտեղ հայ ազգաբնակչությունը չուներ օբյեկտիվ անհրաժեշտ նախադրյալներ «դեպի ներս ուղղված ագրեսիայից» ինքնապաշտպանության և իր ինքնորոշման օրինական իրավունքի հետագա իրականացման համար, բացահայտ անդարձելիությամբ ցույց տվեցին նախկին ԼՂԻՄ-ի հայերին սեփական պետություն կառուցելու անհրաժեշտությունը, որն էլ միայն ի գորու կլինի իրենց պաշտպանել ագրեսոր-պետության այլ տարածքներում ապրող հայերին բաժին ընկած ճակատագրից: Ցեղասպանությունը միջազգային հանցագործություն է՝ այդ տերմինի իրավաբանական իմաստավորմամբ: Ցեղասպանության քաղաքական բաղադրիչը ի հայտ է բերում պետության ծրագրված և կոնկրետ նպատակներ ունեցող ագրեսիան, որը ամենազանգվածային և բռնի բնույթի էթնիկ գտումների միջոցով, ազգային փոքրամասնությանը պատկանող և միաժամանակ ագրեսոր-պետության իրավահավասար քաղաքացիներ հանդիսացող կոնկրետ անձանց նկատմամբ ամենածանր քրեական հանցագործություններ իրականացնելով, կորցնում է ցանկացած բարոյական, քաղաքական և, որ կարևոր է, իրավական հիմքերը՝ խոչընդոտելու ցեղասպանության ներազդեցության ենթարկված անձանց իրականացնել ագրեսոր-պետության «հասանելիության» շրջանակներից դուրս առանձին պետականություն ստեղծելու իրենց իրավունքն ու հնարավորությունը:

ՄԱԿ-ի Միջազգային Դատարանն իր՝ 1948թ. Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին կոնվենցիայի վերապահումների մասին հարցով 1951թ. մայիսի 28-ի Կոնսուլտատիվ եզրակացության մեջ ուշադրություն է հրավիրում այս Կոնվենցիայի հատուկ բնույթի վրա. «Այն հայտ է, որ Կոնվենցիան ընդունվել է խիստ մարդասիրա-

կան և քաղաքակրթական նպատակով: Իրապես, դժվար է պատկերացնել այնպիսի մի կոնվենցիա, որի մեջ նմանօրինակ երկակի խնդիրը առավել լավ արտահայտված լինի. քանի որ նրա նպատակն է՝ մի կողմից պահպանել որոշակի մարդկային խմբերի բուն գոյությունը, իսկ մյուս կողմից՝ հաստատել և հավանություն տալ մարդասիրության ամենատարրական սկզբունքներին: Նմանօրինակ կոնվենցիայի մեջ սլայմանավորվողների համար բացակայում են ցանկացած սեփական շահերը. նրանցից յուրաքանչյուրի մոտ առկա է միայն ընդհանուր շահը, այսինքն՝ այն բարձր նպատակի ձեռքբերումը, որը հանդիսանում է կոնվենցիայի *raison d'etre*»²⁶:

Ավելի ուշ, ՄԱԿ-ի Միջազգային Դատարանը «Barcelona Traction»-ի գործով իր՝ 1970թ-ի փետրվարի 5-ի որոշման մեջ նշել է. «Կարևոր է տարբերակում կատարել պետության՝ միջազգային հանրության նկատմամբ ընդհանուր առմամբ ունեցած պարտավորությունների և այն պարտավորությունների միջև, որոնք ծագում են այլ պետության նկատմամբ: Իրենց բնույթով առաջինները վերաբերում են բոլոր պետություններին: Հաշվի առնելով համապատասխան իրավունքների կարևորությունը, կարելի է համարել, որ բոլոր պետությունները ունեն դրանք պաշտպանելու օրինական շահեր. նրանց պարտավորությունները հանդիսանում են *erga omnes* պարտավորություններ: Ժամանակակից միջազգային իրավունքի մեջ այդպիսի պարտավորությունները բխում են, օրինակ, ագրեսիայի և ցեղասպանության գործողություններից, ինչպես նաև այն սկզբունքներից և նորմերից, որոնք վերաբերում են մարդկային անհատի հիմնական իրավունքներին, ներառյալ ստրկությունից և ռասայական խտրականությունից պաշտպանությունը»²⁷:

1948թ. Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին կոնվենցիայի (*Նախնական առար-*

²⁶ Reservations to the Convention on Prevention and Punishment of the Crime of Genocide, Advisory Opinion, ICJ Reports 1951. P.23.

²⁷ Barcelona Traction, Light and Power Company Limited (Belgium v. Spain) op. cit., p. 32 para., 33.

կորսուններ) կիրառման մասին ՄԱԿ-ի Միջազգային Դատա-
րանը 1996թ. հուլիսի 11-ին նշել է. «...այս Կոնվենցիայի հիմ-
քում ընկած սկզբունքները քաղաքակիրթ երկրների կողմից
ճանաչվել են պետությունների համար որպես պարտադիր՝
նույնիսկ առանց որևէ պայմանագրային պարտավորություն-
ների..., ... ինչպես ցեղասպանության դատապարտումը, այն-
պես էլ «մարդկությունը այդ գազրելի աղետից ազատելու»
(Կոնվենցիայի նախաբան) համար անհրաժեշտ համագոր-
ծակցությունը ունեն համընդհանուր բնույթ»²⁸:

Հայաստանի Հանրապետությունը, որպես սեփական ար-
տաքին քաղաքական ուղեգիծ ունեցող ինքնիշխան պետու-
թյուն, միջազգային իրավունքի ինքնուրույն սուբյեկտ, միջազ-
գային հանրության լիիրավ անդամ, համընդհանուր և տարա-
ժաշխանային միջազգային կազմակերպությունների մասնա-
կից, լիարժեք իրավունք ուներ (այլ պետությունների հետ հա-
մագործակցությամբ) դիմելու անհատական և կոլեկտիվ գոր-
ծողությունների՝ կասեցնելու համար Ադրբեջանի կողմից հայ
ժողովրդի նկատմամբ ցեղասպանության քաղաքականություն-
ը: Ադրբ. ԽՍՀ-ի և ԱՀ-ի ղեկավարների կողմից նախաձեռն-
ված, հովանավորված և իրականացված նշված քաղաքակա-
նության կասեցումը, ինչպես նաև, հետագայում, սովյալ քաղա-
քականության հետևանքների վերացումը լիակատար համա-
պատասխանության մեջ էին գտնվում գործող միջազգային
իրավունքի նորմերի հետ: 1948թ. Ցեղասպանության հանցա-
գործությունը կանխարգելելու և պատժելու մասին Կոնվեն-
ցիայի Հոդված VIII ասում է. «Յուրաքանչյուր պայմանավոր-
վող կողմ կարող է դիմել Միավորված Ազգերի Կազմակերպու-
թյան իրավասու մարմիններին՝ Միավորված Ազգերի Կազմա-
կերպության կանոնադրությանը համապատասխան ձեռնար-
կելու այնպիսի գործողություններ, որոնք անհրաժեշտ է համար-
ում ցեղասպանությունը կանխարգելելու և կասեցնելու հա-
մար»: Իր հերթին, ՄԱԿ-ի Կանոնադրությունը պարունակում է

նորմ, որտեղ նշվում է ՄԱԿ-ի յուրաքանչյուր և բոլոր անդամ-
ների «Կազմակերպության հետ համագործակցելով՝ բոլորի
համար մարդու իրավունքները համընդհանուր հարգելու և հի-
մարար ազատությունները պահպանելու մասով նպատակնե-
րին հասնելու համար, համատեղ և ինքնուրույն գործողությու-
ններ ձեռնարկելու» պարտականության մասին (հոդվածներ 55
և 56):

Ցեղասպանությունը միջազգային հանցագործություն է, որը
խախտում է քաղաքակիրթ աշխարհում մարդկայնության
սկզբունքի բուն հիմքերը: Չանգվածային սպանություններով,
բռնաբարություններով ուղեկցվող էթնիկ զտումները, այն ան-
ձանց առողջությանը վնաս պատճառելը, որոնք պատկանում
են որոշակի ազգության, նրանց գույքի զանգվածային թալանը
և ոչնչացումը հանդիսանում է ոչ այլ բան, քան պետության
կողմից ցեղասպանություն իր իսկ սեփական ժողովրդի նկատ-
մամբ: Էթնիկ զտումը կոնկրետ պետության տարածքում որո-
շակի ազգությանը պատկանող անձանց ֆիզիկական բնա-
ջնջման նպատակ ունի: «Ցեղասպանություն իրականացրած
պետությունը հանդես է գալիս ոչ միայն որպես միջազգային-
իրավական նորմերը խախտող սուբյեկտ, այլ նաև որպես ցե-
ղասպանության աղբյուր հանդիսացող և այն անմիջականո-
րեն իրականացնող քաղաքական կազմակերպություն: Որպես
միջազգային հանցագործություն, ցեղասպանություն իրակա-
նացնելու դեպքում, ծագում են պատասխանատվության ունի-
վերսալ իրավահարաբերություններ ոչ միայն տուժողի, այլև
միջազգային հանրության նկատմամբ, ընդհանրապես: Խոսքը
գնում է «ergo omnes» ունիվերսալ պարտավորությունների մա-
սին բոլորի միջև: Նման դեպքում միջազգային իրավունքի յու-
րաքանչյուր սուբյեկտ իրավունք ունի իրավախախտողից պա-
հանջելու դադարեցնել հանցավոր գործողությունները և վե-
րացնել դրանց հետևանքները»²⁹:

²⁸ Application of the Convention on the Prevention and Punishment of the Crime of
Genocide, op. cit., p. 616, para. 31.

²⁹ Мошенская Н.В., Проблемы ответственности за геноцид // www.genocide.ru.
19.09.2004.

Հայտնի է, որ ՄԱԿ-ի Միջազգային Դատարանի 1948թ. Յեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին Կոնվենցիայի վերապահումների մասին հարցով 1951թ. Կոնսուլտատիվ եզրակացությունը, որտեղ Դատարանը պարզ և աներկբա նշել է, որ «սկզբունքները, որոնց վրա հիմնված է Կոնվենցիան, քաղաքակիրթ ազգերի կողմից ճանաչվել են պարտադիր բոլոր պետությունների համար՝ անկախ Կոնվենցիայի հետ ունեցած որևէ կապից»:³⁰ «ՄԱԿ-ի Միջազգային Դատարանի եզրակացությունից հետևում է, որ ցեղասպանությունը իրենից ներկայացնում է այնպիսի հանցագործություն, որի կանխումը, կանխարգելումը և որի համար պատիժը հանդիսացել և հանդիսանում է աշխարհի ցանկացած պետության պարտականությունը, անկախ նրա՝ Կոնվենցիային մասնակցության կամ չմասնակցության փաստից և անկախ նրանից, թե երբ են իրականացվել ցեղասպանության գործողությունները՝ մինչև այն ստորագրելը կամ ստորագրելուց և ուժի մեջ մտնելուց հետո»³¹:

Պետություններին, միջազգային հանցագործությունները կանխարգելելու անհրաժեշտ միջոցների մտահանումում պարտադրող (հենց՝ պարտադրող, քանի որ միջազգային հանցագործությունների իրագործման իրավիճակում, միջազգային հանրությունը կենսականորեն շահագրգռված է միջազգայնորեն հանցավոր բնույթի գործողությունների, որոնք ոսնձգություններ են ergo omnes սկզբունքների նկատմամբ, շուտափույթ բացահայտման և կանխարգելման մեջ) միջազգային-իրավական ունիվերսալ նորմերից, կարելի է նշել 1973թ-ի Ապարտեիդի հանցագործությունն արգելելու և պատժելու մասին միջազգային Կոնվենցիայի հոդված 4-րդը. «Սույն Կոնվենցիայի մասնակից պետությունները պարտավորվում են. (բ) ձեռնարկել օրենսդրական, դատական և վարչական միջոցներ՝

սույն Կոնվենցիայի 2-րդ հոդվածում³² սահմանված գործողությունների համար պատասխանատու կամ մեղավոր անձանց իրենց իրավագործությանը համապատասխան հետապնդելու, դատի տալու և պատժելու համար՝ անկախ այն բանից, թե նման անձինք բնակվում են այն պետության տարածքում, որտեղ կատարվում են այդ գործողությունները, կամ քաղաքացիներն են այդ պետության կամ որևէ այլ պետության, կամ քաղաքացիություն չունեցող անձինք են»:

Արդրեջանի կողմից ԼՂՀ-ի ժողովրդի՝ իր սեփական պետությունը կառուցելու իրավունքը իրականացնելու ուժային հակազդեցության քաղաքականության իրականացման ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետությունը հանդիսանում էր նաև տարածաշրջանային միջազգային համաձայնագրերի և կազմակերպությունների (օրինակ՝ ԵԱՀԿ)³³ մասնակից, սույնով, պարտավորություն էր կրում այլ պետությունների հետ համագործակցությամբ (այդ թվում նաև նրանց հետ, սրոնք անմիջականորեն պաշտպանվում էին արտաքին ագրեսիայից՝ կիրառելով ՄԱԿ-ի կողմից ընձեռած անհատական և կոլեկտիվ ինքնապաշտպանության իրավունքը՝ համաձայն

³² Տվյալ հոդվածում նշված կոնկրետ ակտերից կարելի է առանձնացնել հետևյալը՝ ա) ռասայական խմբի կամ խմբերի անդամին կամ անդամներին կյանքի և անձի ազատության իրավունքից զրկում, բ) ռասայական խմբի կամ խմբերի համար դիտավորյալ այնպիսի կենսական պայմանների ստեղծում, որոնք հաշվարկված են դրա կամ դրանց լիակատար կամ մասնակի փոխկրկնում ոչնչացման համար, գ) օրենսդրական կամ այլ բնույթի ցամաքային միջոցներ, որոնք սղված են խոչընդոտելու ռասայական խմբի կամ խմբերի մասնակցությունը երկրի քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային կյանքին: ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից 1965թ. ընդունված Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիան սահմանել է, որ «ռասայական խտրականություն» հասկացությունը նշանակում է ռասայի, մաշկի գույնի, ցեղային, ազգային կամ էթնիկ ծագման հատկանիշների հիմքով ցանկացած աստիճանի, բացառում, սահմանափակում կամ մտապաշտպանություն, որոնք ունեն քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային կամ հասարակական կյանքի ցանկացած այլ բնագավառում մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները չեղյալ հայտարարելու կամ դրանց ճանաչումը, օգտագործումը կամ իրականացումը սահմանափակելու նպատակ կամ հանգեցնում են նման հետևանքների (հոդված 1):

³³ ԵԱՀԿ՝ 1995թ. հունվարի 1-ից:

³⁰ Reserves a la Convention sur le genocide. Avis consultative. C.I.J. Recueil., 1951. P. 15.

³¹ Барсегов Ю., Геноцид армян – преступление против человечества (о правомерности термина и юридической квалификации). Ереван. 1990, с. 11.

ՄԱԿ-ի Կանոնադրության 51-րդ հոդվածի) սեփական ուժերով տարածաշրջանային խաղաղությունն ու անվտանգությունը պաշտպանելու, ազգության՝ սեփական պետություն ստեղծելու օրինական իրավունքի իրականացման դեմ ուղղված ագրեսիայի հանցավոր գործողությունների կանխման և վերացման համար: Տվյալ համատեքստում հարկավոր է դիտարկել նաև գործող տարածաշրջանային համաձայնագրի՝ 1921թ-ի Կարսի պայմանագրի 5-րդ հոդվածի նորմը՝ Նախիջևանը Ադրբեջանի հովանավորության տակ փոխանցելու մասին, որտեղ պայմանավորվող կողմեր էին հաղիսանում միջազգային իրավունքի երեք սուբյեկտներ՝ արդեն հիշատակված Մովսեսյան Ադրբեջանը, Թուրքիան և Հայաստանը: Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունը, որպես ՀԽՍՀ-ի իրավահաջորդ, համաձայն բազմակողմ միջազգային համաձայնագրի, հանդիսանում է Նախիջևանի ներկայիս կարգավիճակի երաշխավորներից մեկը և, համապատասխանաբար, իրավունք ունի առաջ քաշելու Նախիջևանում խտրականության ենթարկված և այնտեղից բռնի տեղահանված ու Ադրբ. ԽՍՀ-ի այլ տարածքներում վերաբնակեցված հայ ժողովրդի օրինական իրավունքների պաշտպանությանն ուղղված պահանջներ: Ադրբ. ԽՍՀ-ի տարածքում, էթնիկ գտումների շրջանում (1988-1990թթ.) այդ նույն մարդիկ և նրանց անմիջական ժառանգները ստիպված էին երկրորդ անգամ փախչել իրենց հայրենիքից:

Կոնկրետ ազգային փոքրամասնության նկատմամբ պետության ներսում ցեղասպանության գործողությունների իրականացումը հանդիսանում է «դեպի ներս ուղղված» ագրեսիայի իրականացման ակնհայտ հատկանիշ: Ադրբ. ԽՍՀ-ի ներքին ագրեսիան 1988-1990թթ. ժամանակահատվածում, երբ հայ ազգաբնակչությունը ամբողջովին դուրս մղվեց այն տարածքներից, որոնք հետագայում կազմեցին ԱՀ-ի տարածքային հիմքը, իր արտաքին արտահայտությունը ստացավ 1991թ. վերջին և 1992թ. սկզբին, երբ ԼՂՀ-ի հայ ազգաբնակչությունը ենթարկվեց լայնածավալ հարձակման՝ այն պահին ԱՀ-ի տրամադրության տակ գտնվող հարձակողական սպառազի-

նության կիրառմամբ: Սեփական հայ քաղաքացիական ազգաբնակչության նկատմամբ ներքին ագրեսիայի միջազգային-իրավական բաղադրիչի տրանսֆորմացիան արտաքին ագրեսիայի՝ արդեն սեփական պետություն ստեղծած ԼՂՀ-ի հայերի նկատմամբ, ցույց է տալիս հետևյալը. ԱՀ-ն ընդունվել է ՄԱԿ-ի կազմի մեջ հռչակված ԼՂՀ-ի նկատմամբ նրա արտաքին ագրեսիայի առավել ակտիվացման ժամանակաշրջանում:

Համաձայն 1945թ. ՄԱԿ-ի Կանոնադրության 4-րդ հոդվածի. «Միավորված ազգերի կազմակերպության անդամությունը բաց է մյուս բոլոր խաղաղասեր պետությունների համար, որոնք կստանձնեն սույն Կանոնադրությունը բովանդակող պարտավորությունները և կազմակերպության կարծիքով կարող են և կամենում են կատարել այդ պարտականությունները»: «Խաղաղասիրություն» հատկանիշը 1992թ. նմուշի Ադրբեջանի պարագայում բացակայում է, քանի որ ԱՀ-ն ՄԱԿ ընդունման պահին (2 մարտի, 1992թ.) առկա էր իրադարձությունների հետևյալ ընթացքը.

1. 1992թ. հունվարի 6-ին, 1991թ. դեկտեմբերի 10-ի հանրաքվեի արդյունքների հիման վրա ընդունվեց ԼՂՀ-ի Խորհրդարանի Պետական անկախության մասին հռչակագիրը: Նույն թվականի հունվարի 25-26-ին ադրբեջանական զինված ստորաբաժանումները ԱՀ-ի պաշտպանության նախարար Թաջադդին Մեհալեի գլխավորությամբ գրոհեցին Քարին Տակ գյուղի վրա:
2. 1992թ. փետրվարի 19-ին ԼՂՀ-ի Գերագույն Խորհուրդը դիմում է հղում ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեային և ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի մշտական անդամ պետությունների ղեկավարներին՝ կոչ անելով միջոցներ ձեռնարկել ԼՂՀ-ի նկատմամբ ԱՀ-ի զինված ագրեսիան կանխելու և հանրապետության խաղաղ բնակավայրերի հրետանա-հրթիռային զննակոծումը դադարեցնելու համար: Նույն թվականի փետրվարի 25-26-ին Ադրբեջանի Ազգային ճակատի (ԱԱՃ) զինված ստորաբաժանումները, ԱՀ-ի ներքին քաղաքական լարվածությունը սրելու համար, կազմակեր-

պեցին «Խոջալուի սադրանքը»³⁴: ԱԱԾ-ի «խաղաղասեր ուժերը» իշխանության գալու համար Խոջալուի մոտ կազմակերպեցին սեփական բնակչության գնդակոծումը, իսկ հետագայում արդեն, այդ սադրանքի արդյունքում ԱՀ-ի նախագահ Ա. Մութալիբովի պաշտոնանկությունից հետո, որպես Ադրբեջանի առաջատար քաղաքական ուժ, ներկայացրեցին իրենց պետության շահերը ՄԱԿ-ում:

ԱՀ-ի «խաղաղասեր» կեցվածքը պահպանվեց նաև ՄԱԿ ընդունվելուց հետո. 1992թ. մարտի 26-ին ՄԱԿ-ը սահմանեց դարաբաղյան հակամարտության կարգավորման գործում իր մասնակցության ձևը՝ պաշտպանելով ԵԱՀԽ (1995թ-ից՝ ԵԱՀԿ) ջանքերը, իսկ նույն թվականի ապրիլի 10-ին ադրբեջանական բանակը գրավում է Մարտակերտի շրջանի Մարաղա գյուղը և խաղաղ բնակչության սպանդ է իրականացնում³⁵:

«Խաղաղասիրություն» հատկանիշը, այսինքն՝ հակվածությունը միջազգային իրավունքի *ius cogens* սկզբունքին (բոլոր պետությունների համար համընդհանուր պարտադիր-ինպերատիվ նորմին), որը նշված է ՄԱԿ-ի Կանոնադրության 2-րդ հոդվածի 3-րդ մասում³⁶, բնորոշ չէր ներկայիս ԱՀ-ին: 1991թ-ից, ԱՀ-ն իր անկախության հռչակման պահից մինչ այսօր, իրականացնում է այնպիսի գործողություններ, որոնք լիակատար հակադրության մեջ են գտնվում խաղաղասիրության և ՄԱԿ-ի Կանոնադրության 2-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված միջազգային իրավունքի սկզբունքին հավատարիմ լինելու հետ (հաջորդաբար՝ շրջափակում և ռազմական գործողությունների սկիզբ, կրակի դադարեցման մասին պայմանավորվածությունների խախտում, կրակի դադարեցման ռեժիմի հաստա-

տումից հետո «սառը պատերազմի» սկիզբ՝ թշնամական բնույթի քարոզչության բոլոր միջոցների կիրառմամբ):

ՄԱԿ-ի Կանոնադրության 4-րդ հոդվածի համապատասխան, կազմակերպության մեջ նոր պետություն ընդունելու հաջորդ չափանիշները («...կատանձնեն սույն Կանոնադրությունը բովանդակող պարտավորությունները և... կարող են և կամենում են կատարել այդ պարտականությունները») նույնպես բացակայում էին ԱՀ-ի մասով 1992թ-ի պահի դրությամբ և, ըստ էության, շարունակում են բացակայել մինչ այժմ: Այսպես՝ ԱՀ կողմից իր վրա միջազգային պարտավորությունների ստանձնումը և ցանկությունը՝ ՄԱԿ-ի Կանոնադրության համաձայն այդ պարտավորությունները կատարելու հետևյալ սկզբունքների և նորմերի նկատմամբ և՛ այն ժամանակ, և՛ այժմ հիմնավորված կերպով կասկածներ են առաջացնում.

ա) «1. Պահպանել միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը... և խաղաղ միջոցներով, արդարության և միջազգային իրավունքի սկզբունքների հիման վրա հասնելու միջազգային վեճերի կամ խաղաղության համար վտանգավոր իրավիճակների շտկմանը կամ կարգավորմանը», 2. Չարգացնել ազգերի միջև բարեկամական հարաբերություններ՝ հիմնված ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի հարգանքի վրա..., 3. Իրականացնել միջազգային համագործակցություն տնտեսական, սոցիալական, մշակութային կամ մարդասիրական բնույթի միջազգային խնդիրների լուծման, ինչպես նաև բոլորի համար մարդու իրավունքների և հիմնական ազատությունների նկատմամբ հարգանքի տալու մասին և խրախուսման գործում՝ անկախ ռասայից, սեռից, լեզվից կամ դավանանքից (հոդված 1),

բ) ՄԱԿ-ի «բոլոր Անդամները միջազգային հարաբերություններում ձեռնպահ են մնում ուժի գործադրումից կամ դրա սպառնալիքից» (հոդված 2-դ, մաս 4-րդ),

գ) Կազմակերպության բոլոր Անդամները պարտավորվում են 55-րդ հոդվածում նշված նպատակներին հասնելու համար

³⁴ Об ответственности политических сил Азербайджана за трагедию в Ходжалу см. подробнее: Demoyan H., Melik-Shahnazaryan L. Khodzjalu Case: A Special Dossier, Yerevan, 2004.

³⁵ Մարաղա գյուղի ողբերգության մասին մանրամասները տե՛ս Cox C., Eibner J. Ethnic Cleansing in Progress: War in Nagorno-Karabakh. London: Institute for Religious Minorities in the Islamic World, 1993.

³⁶ «Միացյալ Ազգերի Կազմակերպության բոլոր անդամները լուծում են իրենց միջազգային վեճերը խաղաղ միջոցներով այնպես, որպեսզի սպառնալիքի չենթարկեն միջազգային խաղաղությունը և անվտանգությունն ու արդարությունը»:

ձեռնարկել համատեղ և ինքնուրույն գործողություններ՝ կազմակերպության հետ համագործակցելով»³⁷ (հոդված 56):

Վերոնշյալի կապակցությամբ կարելի է կապ ստեղծել Ազգերի Լիգայի 1920թ. 5-րդ Կոմիտեի եզրակացության և ՄԱԿ-ի կազմի մեջ նոր պետություն ընդունելու համար գործող չափանիշների միջև: Այն ժամանակ Լիգայի Կոմիտեն Ազգերի Լիգայի անդամակցության կապակցությամբ կասկած արտահայտեց Ադրբեջանի հնարավորության և ունակության առնչությամբ՝ իր վրա միջազգային պարտավորություններ վերցնելու և երաշխիքներ տալու մասով: Այդ առումով, ներկայիս ԱՀ-ն շատ ավելի լավ վիճակում չի գտնվում: Այն իր հարևան որոշ պետությունների կողմից (օրինակ՝ Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի, Թուրքմենստանի, Իրանի) չի դիտարկվում որպես հուսալի պետություն՝ իր վրա միջազգային-իրավական որոշակի պարտավորություններ վերցնելու և, որ կարևորն է՝ դրանք կատարելու տեսանկյունից: Այլ խոսքով, Ազգերի Լիգայի³⁸ 5-րդ Կոմիտեի 1920 թ. փաստարկումն առ այսօր պահպանել է իր արդիականությունը:

Նախկին Ադրբ. ԽՍՀ-ն խորհրդային հանրապետություններից եղել է միակը, որը, մինչև ԽՍՀՄ-ի կազմավորումը, գործող և կնքված միջազգային բազմակողմ պայմանագրերի ուժով իրավունք չունեի անկախություն ձեռք բերել այն տարածքների վրա, որոնք 1921թ-ին ընդգրկվել են իր սահմանների շրջա-

³⁷ Հետամուտ լինելով բարեկամության ու կայունության պայմանների ստեղծմանը, որոնք անհրաժեշտ են ազգերի միջև խաղաղ ու բարեկամական հարաբերությունների համար՝ հիմնված հավասար իրավունքների և ինքնորոշման սկզբունքի նկատմամբ հարգանքի վրա, Միավորված Ազգերի Կազմակերպությունը նպաստում է՝ ա) կենսասնկարողակի բարձրացմանը, բնակչության լրիվ զբաղվածությանը և տնտեսական ու սոցիալական առաջընթացի ու զարգացման պայմաններին, բ) միջազգային տնտեսական, սոցիալական, առողջապահական և համանման հարցերի լուծմանը, նշակույթի ու կրթության բնագավառներում միջազգային համագործակցությանը, գ) բոլորի համդեպ և բոլորի համար մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների համընդհանուր հարգանքին և պահպանմանը՝ անկախ ոտասանից, սեռից, լեզվից կամ դավանանքից»:

³⁸ «Ադրբեջանը շատ պրոլիբններ ունի իր հարևանների հետ կապված պետական սահմանների անցկացման հետ». League of Nations: Journal № 17 of the First Assembly, Geneva 1920. P.139.

նակում (Նախիջևան և Լեռնային Ղարաբաղ): Համաձայն դեռևս գործող 1921թ. հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրի, Նախիջևանը ընդամենը հանձնվել է Ադրբ. ԽՍՀ-ի հովանավորությանը՝ երրորդ պետությանը այն չփոխանցելու պայմանով: Կարսի պայմանագիրը ստորագրել են Թուրքիան և երեք խորհրդային անդրկովկասյան հանրապետությունները՝ Ադրբեջանական ԽՍՀ, Հայկական ԽՍՀ, Վրացական ԽՍՀ՝ Խորհրդային Ռուսաստանի մասնակցությամբ: Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղին, ապա այն Խորհրդային Ադրբեջանին է փոխանցվել 1921թ. երրորդ կողմի որոշումով՝ ի դեմս Կովբյուրոյի: Միաժամանակ, անհրաժեշտ է նշել, որ Լեռնային Ղարաբաղը դե-ֆակտո դուրս է բերվել Ադրբ. ԽՍՀ-ի ենթակայությունից դեռևս խորհրդային ժամանակներում 1989թ-ին, երբ ԽՍՀՄ-ի կենտրոնական իշխանությունների կողմից ԼՂԻՄ-ը ստացավ Հատուկ կառավարման ձև: ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի որոշմամբ էր, որ ԼՂԻՄ-ում մտցվեց Հատուկ կառավարման ձևը: Մինիստրների Խորհրդի որոշման հիման վրա ԼՂԻՄ-ի բոլոր ձեռնարկությունները, պետական և կուսակցական կազմակերպությունները վերաներարկվեցին Հայկական ԽՍՀ-ին կամ ՌԽՖՍՀ-ին: 1989թ. նոյեմբերին Լեռնային Ղարաբաղում Հատուկ կառավարման ձևը հանվեց, սակայն ԽՍՀՄ-ի փլուզման կապակցությամբ չհասցրեցին անցնել այլ կարգավիճակի և, մինչև ԼՂՀ-ի կազմավորումը, ԼՂԻՄ-ի հատուկ կառավարումը՝ Մոսկվային անմիջական ենթակայությամբ, մարզի՝ վերջին իրավական կարգավիճակն է եղել³⁹:

Ադրբ. ԽՍՀ-ի սահմաններով ՄԱԿ-ի կազմի մեջ ԱՀ-ի մտնելու չափանիշների սխալակամությունը կարելի է ցույց տալ նաև նախկին ԽՍՀՄ-ի վարչական սահմանների ընկալման օրինակով: Միջազգային իրավունքի հարցերով ադրբեջանցի մասնագետները հանդես են գալիս այն դիրքերից, որ «ժամանակակից միջազգային իրավունքում գոյություն ունի ընդհանուր սկզբունք, համաձայն որի նախկին գաղութների, ինչպես

³⁹ Манасян А., Карабахский конфликт: территориальные аспекты проблемы в ее информационном образе//Освобожденная территория Армении и урегулирование Карабахского конфликта / Под ред. Айвазяна А. РАС: Ереван, 2006, с. 72-74.

նաև դաշնային կազմավորումների շրջանակներում գոյություն ունեցող հին վարչական սահմանները դառնում են միջազգային սահմաններ այնպիսի իրավիճակներում, երբ քաղաքական բաժանման արդյունքում կազմավորվում են անկախ պետություններ»⁴⁰։ Ընդ որում, այստեղ աչքաթող է արվում այն, որ վարչական էին սահմանները ոչ միայն խորհրդային հանրապետությունների միջև, այլ, որպես այդպիսիք, հանդես էին գալիս նաև խորհրդային հանրապետության կազմում գտնվող ինքնավար կազմավորումների սահմանները։

ԼՂՀ-ն կազմավորվել է ԼՂԻՄ-ի վարչական սահմանների հետ ոչ մի ընդհանուր բան չունեցող՝ իր սեփական սահմաններում, քանի որ ԱՀ-ի ազդեցիվ գործողությունները, 1992թ. ՄԱԿ-ի կազմի մեջ նրան ընդունելու պահին, ինչպես նաև հաջորդ տարիներին, մինչև զինադադարի ռեժիմի հաստատումը և ժամանակակից փուլում, նրա կողմից իրականացվող «սառը պատերազմը» հիմք չեն տալիս այդ պետությանը վերաբերվելու որպես միջազգային-իրավական պարտավորություններ ընդունող և կատարող գործընկերոջ⁴¹։ ԱՀ-ի նորմատիվ-իրավա-

⁴⁰ *Мусаев Т., Правовые рамки урегулирования вопросов территорий и границ на примере территориальных притязаний Армении к Азербайджану//Центральная Азия и Кавказ, 2003, №2 (26), с. 48.*

⁴¹ Հաստատելու համար ԱՀ-ի կողմից ԼՂՀ ժողովրդի՝ իր սեփական պետությունը կառուցելու գործում խոչընդոտելու միանշանակ ուժային քաղաքականությունը, որպես չեզոք անձի կողմից 1992-1994թթ. իրադարձություններին տրված գնահատական, ներկայացնենք Վ. Կազիմիրովի կարծիքը (ՌԳ արտակարգ և լիազոր դեսպան, 1992թ. հուլիսից՝ ԵԱՀԿ Մինսկի խմբում Ռուսաստանի ներկայացուցիչ, իսկ այնուհետև՝ 1995թ. հունվարից մինչև 1996թ. սեպտեմբերը՝ Մինսկի խմբի ռուսաստանյան համանախագահ), որը տեղեկացված է դարաբարդյան հակամարտության գործընթացի զարգացումներից. 1) Հիմնական շեշտը Ադրբեջանի ղեկավարությունը (և՛ Ա.Էլչիրեյի, և՛ Հ.Ալիևի ժամանակ) դրել է ուժային լուծման և ոչ թե բանակցությունների վրա, 2) Բաքուն եղել է ռազմական գործողությունների թեժ պահին ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի կողմից ընդունված չորս որոշումների առաջին և քաղաքական խախտողը (ապրիլ-նոյեմբեր, 1993թ.), սկսած ամենակարևորից, առանցքայինից՝ կրակի, ռազմական և թշնամական գործողությունների անհապաղ դադարեցումից, 3) Ադրբեջանը դարաբարդյան հակամարտության ուժային լուծման գաղափարի հիմնական կրողն է եղել։ ...Ադրբեջանի համառորեն բողոքարկումներն առ այն, որ կարևոր է կատարել ՄԱԿ-ի ԱԽ-ի որոշումները (իհարկե միայն զբաղյալ տարածքներից դարաբարդյան ուժերի դուրս բերման մասով), ստիպում է մեզ հետ նայել և տեսնել, թե ինչպես է ընթացել այդ պարտադիր որոշումների իրականացումը։

կան ակտերը⁴², ԼՂՀ-ի դեմ իր կողմից սկսած ռազմական գործողությունները, շարունակվող ազդեցիվ-քաղաքական հակահայկական հռետորությունը և ԱՀ-ի բարձրագույն ղեկավարության պարբերական հայտարարությունները, որոնք հակասում են գործող միջազգային իրավունքի հիմնական սկզբունքների ոգուն և բովանդակությանը, ԼՂՀ-ին իրավաբաղադական հիմնավորում տվեցին նպատակահարմար պատմաաշխարհագ-

րը։ Հատկապես, այնպիսի կարևոր հարցում, ինչպիսին՝ կրակի և ռազմական գործողությունների դադարեցումն էր, քանզի այլ պահանջների իրականացումը կամված էր նաև դրանից։ Մենք միշտ դատապարտել ենք զավթումները, զբաղյալ նոր գոտիների ի հայտ գալը, սակայն ռազմական գործողությունները իրենց բնույթով պարունակում են այդ վտանգը։ Իսկ առանց դրանց դադարեցման զավթողական ուժերի դուրս բերումը համարյա անհնարին է։ ...Շարունակվում են թշնամական գործողությունները (չրջափակում և այլն)։ Իսկ գա ՄԱԿ-ի ԱԽ-ի ոչ թե մեկ, այլ չորս որոշումների առաջնային, երկնետային պահանջն էր։ Ժամանակագրությունից երևում է, որ Բաքուն ՄԱԿ-ի ԱԽ-ի որոշումներից հետո շատ անգամ խուսափել է ռազմական գործողությունների սահմանափակումից և դադարեցումից, խախտում էր կրակի դադարեցման մասին Ռուսաստանի միջնորդությամբ ձեռք բերված պայմանավորվածությունները։ Արդեն բոլոր չորս որոշումների առկայությամբ Բաքուն չորս անգամ չի զնացել կրակի դադարեցման (1993 թ. դեկտեմբեր, 1994 թ. փետրվար և մարտ ամիսներ)։ Հենց 1993 թվականի դեկտեմբերին Բաքուն ուժերի գերադրումով իրականացրեց ամենախոշոր հակահարձակումը, որն իրեն ավելի շատ կորուստներ՝ քան հաջողություն բերեց։ Այսինքն՝ Ադրբեջանը, որը ներկայումս վկայակոչում է ՄԱԿ-ի ԱԽ-ի որոշումները, ինքը առաջինը խախտեց դրանց գլխավոր պահանջները և չկատարեց այլ պահանջներից ոչ մեկը՝ տառացիորեն չկատարեց։ Հետտրական է դարձել այն հարցը՝ կարևոր է դա, թե ոչ, կարո՞ղ էր այդպեղ դա հետևանքներ ունենալ։ Ի դեպ, Անվտանգության Խորհրդի համար նույնպես ստեղծվեց անընդունելի իրավիճակ և այն՝ 1993թ. նոյեմբերից այլևս դադարեց որոշումներ կայացրել Դարաբարդի հարցով։ Բաքուն ռազմական գործողությունների դադարեցման գնում էր միայն ժամանակ շահելու, շունչ քաշելու, ուժերի վերադասավորման համար (մեկ անգամ էլ 1993թ. հոկտեմբերի 3-ին՝ նախագահական ընտրությունների համար)։ Ուժի վրա շեշտը դնելը հնարավոր չէ արդարացնել, սակայն, սա որոշ լրացատրություն ունի՝ նոր պետության մեջ իրավիճակի անկայունությունը մեծապես բացատրվում է նաև դարաբարդյան հակամարտության մեջ անհաջողություններով։ Հին ավանդույթներ չունեցող պետականության կայացումը հիվանդագին էր ընթացում, ջրած գումներով, առանց քաղաքական և կառավարման փորձի իշխանության եկած մարդկանց գլուխներում խումարի առկայությամբ։ Տես՝ *В.Казимиров. Кто искал силового решения в Карабахе? // www.regnum.ru, 18.01.2005*։

⁴² «Ադրբեջանական Հանրապետության պետական անկախության մասին» Ասեմանադրական ակտ, 18 հոկտեմբերի, 1991 թ.։ ԱՀ օրենք «Առնային Դարաբարդի Ինքնավար Մարզի լուծարման մասին», 26 նոյեմբերի, 1991 թ.։

րական սահմաններում իր պետականությունը կազմավորելու համար:

Եթե Ադրբեջանը 1923թ. կարող էր արհեստականորեն և ապօրինի սահմանափակել դարաբաղյան ինքնավարության տարածքային շրջանակները, իսկ հետո՝ 1991թ., ընդհանրապես, ձևականորեն «վերացնել» դարաբաղյան ինքնավարությունը և հրաժարվել Ադրբ. ԽՍՀ-ի իրավահաջորդությունից, ապա ԼՂՀ-ն նույնպես կարող է չսահմանափակել իր գործողությունները տարածքային հարցերում, իսկ միջազգային հանրությունը՝ ՄԱԿ-ի կազմում ԱՀ-ին չվերաբերվել որպես նախկին Ադրբ. ԽՍՀ-ի սահմաններում կազմավորված պետության: Բացի այդ, չի կարելի նաև մոռանալ արդարության վերականգնման անհրաժեշտության մասին այն անձանց պարագայում, որոնք առավելագույնս են տուժել դեռևս մինչև Ադրբեջանական Հանրապետության կողմից իրականացրած ագրեսիան, ինչպես նաև դրա ընթացքում՝ էթնիկ գտումների և արտաքսման արդյունքում: Խոսքը գնում է Ադրբեջանական ԽՍՀ նախկին քաղաքացիներ հանդիսացող շուրջ կես միլիոն հայ փախստականների մասին, որոնք հիմնականում գտնվում են անորոշ իրավական կարգավիճակում և ծանր սոցիալատնտեսական պայմաններում: Մարդկանց այս կատեգորիան ունի բոլոր իրավունքները՝ վերաբնակվելու համար նախկին Ադրբ. ԽՍՀ-ի տարածքի ոլորտակի մասի վրա՝ հաշվի առնելով տարբեր գործոններ, այդ թվում՝ նրանց հետագա բնակության անվտանգությունը: Այդպիսի վայր կարող է լինել Դաշտային Ղարաբաղի տարածքը, որը Ադրբեջանի ռազմական ագրեսիայի արդյունքում այսօր գտնվում է ԼՂՀ իրավատիրություն:

ԳԼՈՒԽ III

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ, ՀԻՄՆԱՐԱՐ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԴԱՍԽԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՆՈՐՄԵՐԻ ԽԱՆՏԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Միջազգային-իրավական պատասխանատվության հարցի ուսումնասիրությամբ զբաղվող մասնագետները միշտ ընդգծել են միջազգային հարաբերություններում դրա կարևորությունն ու առաջնահերթությունը: Շատերն այն կարծիքի են, որ պատասխանատվության սկզբունքի ժխտումը «կհանգեցնել միջազգային իրավունքի կործանման»⁴³:

2001թ. դեկտեմբերի 12-ին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան որոշում ընդունեց, որտեղ ընդգծվում է «պետությունների միջև հարաբերություններում պատասխանատվության թեմայի հսկայական նշանակությունը»: Հավելվածի տեսքով որոշումը պարունակում է նաև «Միջազգային-հակաիրավական արարքների համար պետությունների պատասխանատվությունը» փաստաթուղթը:

«Միջազգային պատասխանատվության իրավունքի նպատակները կայանում են հետևյալում՝ ա) զսպել հնարավոր իրավազանցին (կանխարգելիչ/պրեվենտիվ ֆունկցիա), բ) դրդել իրավազանցին՝ պատշաճ կերպով կատարելու իր պարտավորությունները (իրավակարգի ապահովման ֆունկցիա), գ) տրամադրել փոխհատուցում տուժողին՝ պատճառած նյութական և բարոյական վնասների համար (փոխհատուցման ֆունկցիա), դ) ներազդել սուբյեկտների հետագա վարքագծի վրա իրենց պարտականությունների բարեխիղճ կատարման

⁴³ Федросс А., Международное право. М., 1960, с. 353.

նկատառումներով (իրավակարգի պրեվենցիա և պահպանում)»⁴⁴:

Կարելի է միջազգային-իրավական պատասխանատվության սկզբունքը սահմանել որպես մի սկզբունք, ըստ որի միջազգային իրավունքի սուբյեկտի ցանկացած միջազգային-հակաիրավական արարք առաջացնում է դրա միջազգային պատասխանատվությունը: Ինչպես նշում է Ի. Լուկաշուկը. «Այս սկզբունքը հանդիսանում է միջազգային իրավունքի անհրաժեշտ սկզբունքը և, ընդհանուր առմամբ, բխում է դրա իրավական բնույթից: Այդ պատճառով դրա գոյությունը միատող դեպքերը, նույնիսկ անցյալում ծայաստիճան հազվադեպ են հանդիպում: Արդեն 1928թ-ին «Խաժուվե գործարանի մասին գործով»⁴⁵ որոշման մեջ Միջազգային արդարադատության մշտական պալատը պատասխանատվության սկզբունքը որակեց որպես՝ «միջազգային իրավունքի, և, ավելին, իրավունքի ընդհանուր հասկացության սկզբունքներից մեկը»⁴⁶: «Այսօր վստահաբար կարելի է հաստատել, որ այդ սկզբունքը հանդիսանում է համընդհանուր ճանաչված՝ ինչպես միջազգային պրակտիկայում, այնպես էլ՝ դոկտրինում»⁴⁷:

2001թ. ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի որոշմամբ ընդունված վերոհիշյալ «Միջազգային-իրավական արարքների համար պետությունների պատասխանատվությունը» փաստաթղթում (այսուհետ՝ «Պատասխանատվության մասին հողվածներ»), միջազգային պատասխանատվության սկզբունքը ձևակերպված է հողված 1-ում. «Պետության ցանկացած միջազ-

⁴⁴ Лукашук И., Концепция права международной ответственности // Государство и право, 2003, № 4, с. 82.

⁴⁵ Գերմանիայի և Լեհաստանի միջև վեճի մասով Պալատի որոշման մեջ ավում էր. «Միջազգային իրավունքի սկզբունքներից մեկը հանդիսանում է այն, որ պարտականության խախտումը հանգեցնում է համապատասխան ձևով ռեպարացիա տրամադրելու պարտականությանը: Այսպիսով, ռեպարացիաները հանդիսանում են կոնվենցիաների կատարման համար պարտադիր լրացում և անհրաժեշտություն չկա, որպեսզի այդ մասին հատուկ խոսվի բուն կոնվենցիայի մեջ:

⁴⁶ PCIJ, Ser. A, No. 17 (1928), P.29.

⁴⁷ Лукашук И., Указ. соч., с. 83-84.

գային-հակաիրավական արարք առաջացնում է այդ պետության միջազգային պատասխանատվությունը»:

Միջազգային ռազմական տրիբունալի (ՄՌՏ) Կանոնադրությունը (Նյուրնբերգյան միջազգային տրիբունալ), որի տեքստը կցված էր 1945թ. օգոստոսի 8-ի Եվրոպական պետությունների գլխավոր ռազմական հանցագործների քրեական հետապնդման և պատժի մասին լոնդոնյան համաձայնագրին, ագրեսիվ պատերազմը որակավորեց որպես միջազգային հանցագործություն, որը հանգեցնում է այն անձանց քրեական հետապնդման, որոնք պատասխանատու են պատերազմ նախապատրաստելու և սանձազերծելու համար:

Միջազգային ռազմական տրիբունալի 1945թ. Կանոնադրությունը տարբերություն սահմանեց աշխարհի դեմ կատարած հանցագործությունների, այնպիսիք՝ ինչպիսիք են «ագրեսիվ պատերազմի կամ ի խախտումն պայմանագրերի, պարտավորությունների և միջազգային համաձայնագրերի պատերազմների դեկավարումը, նախապատրաստումը, սանձազերծումը և շարունակումը» ու ռազմական հանցագործությունների՝ պատերազմի օրենքների և սովորույթների խախտումների միջև, ինչը նշանակում էր, որ պատերազմի օրենքներին և սովորույթներին համապատասխանող գործողությունների համար դատական կարգով հետապնդում չի կարելի իրականացնել, եթե նույնիսկ դրանք կատարվել են ագրեսիվ պատերազմի ընթացքում⁴⁸:

Ժնևի 1949թ. օգոստոսի 12-ի կոնվենցիաները հաստատեցին պատերազմող կողմերի հավասարության սկզբունքը մարդասիրական իրավունքի կիրառման մասով՝ արգելելով վոխճնշումների/ռեպրեսալիաների կիրառումը այս Կոնվենցիաների (Կոնվենցիա I, հողված 46, Կոնվենցիա II, հողված 47, Կոնվենցիա III, 3-րդ մաս, հողված 13, Կոնվենցիա IV, 3-րդ մաս, հողված 33) պաշտպանության տակ գտնվող անձանց և գույքի նկատմամբ: Բոլոր չորս Կոնվենցիաների համար ընդ-

⁴⁸ ՄՌՏ-ի 6-րդ հողված, 1945թ. օգոստոսի 8-ի Լոնդոնյան համաձայնագրի տեքստը:

հանուր 1-ին հոդվածը ասում է, որ «Բարձր պայմանավորվող կողմերը պարտավորվում են ցանկացած հանգամանքներում պահպանել և ստիպել՝ պահպանելու սույն Կոնվենցիան»:

Տվյալ դրույթն ընդգծում է ԺՆԿ Կոնվենցիաների պարտադիր բնույթը, որոնց կիրառումը չի կարող կախված լինել այն հանգամանքից, թե ինչպես են գնահատել հակամարտության մասնակիցները կամ միջազգային կազմակերպությունը ուժի կիրառման օրինականությունը: ԺՆԿ բոլոր Կոնվենցիաների համար նույնպես ընդհանուր 2-րդ հոդվածը նշում է, որ Կոնվենցիան կիրառվում է. «Երկու կամ մի քանի Բարձր Պայմանավորվող Կողմերի միջև պատերազմ հայտարարելու կամ ցանկացած այլ տեսակի զինված հակամարտության դեպքում»: Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտեի (ԿԽՄԿ) կողմից հրատարակված «ԺՆԿ Կոնվենցիաների մեկնաբանության» մեջ հաստատվում է, որ «Կոնվենցիաների կիրառումը կախված չէ հակամարտության բնույթից՝ պատերազմի «արդարացի» կամ «անարդարացի» լինելուց, ինչպես նաև այն հանգամանքից՝ ազդեսիա է դա, թե դիմակայություն՝ ազդեսիային»⁴⁹:

Միջազգային իրավունքում գոյություն ունեն «իմպերատիվ նորմ», «միջազգային իրավունքի հիմնական սկզբունք (jus cogens)» հասկացություններ: Jus cogens հայեցակարգը նախատեսում է, որ գոյություն ունեն այնպիսի նորմեր, որոնք միջազգային հանրության համար ունեն այնքան կարևոր նշանակություն, որ պետությունները չեն կարող դրանցից հետ կանգնել: ՄԱԿ-ի Միջազգային դատարանը տարբեր համատեքստերում դիտարկել է jus cogens-ի և դրա հետ կապված հասկացությունների, այնպիսիք՝ ինչպիսիք են erga omnes պարտավորությունների (օրինակ՝ մարդու հիմնարար իրավունքների, ուժի սպառնալիքի կամ դրա կիրառման արգելման և ժողովրդի ինքնորոշման հետ կապված) մասին հարցը: Բացի ցեղասպանության վերը նշված հարցից, ՄԱԿ-ի Միջազգային դատարանի պրակտիկան այս ուղղությամբ ներառում է հետևյալ դրույթները. իր՝ Միջուկային զենքով սպառնալիքի

կամ դրա կիրառման օրինականության մասին կոնսուլտատիվ եզրակացության⁵⁰ մեջ Դատարանը նշեց. «...(մարդասիրական իրավունքի) հիմնարար նորմերը պետք է պահպանվեն բոլոր պետությունների կողմից, անկախ այն հանգամանքից վավերացրել են նրանք տվյալ նորմերը պարունակող կոնվենցիաները՝ թե ոչ, քանի որ վերջիններս իրենցից ներկայացնում են միջազգային սովորական իրավունքի անսասան սկզբունքներ»:

ՄԱԿ-ի Միջազգային Դատարանի ամենակարևոր ձեռքբերումներից մեկն էլ հանդիսացել է միջազգային մարդասիրական իրավունքի հիմնարար սկզբունքների առանձնացումը և ճշգրտումը: Դարաբաղյան հակամարտության զինված փուլի հետ անմիջական առնչություն ունեցող այդպիսի սկզբունքներից մեկը կարելի է համարել *կոմբատանտների և ոչ կոմբատանտների* միջև տարբերության անցկացման սկզբունքը (տե՛ս մանրամասները՝ սույն աշխատության Գլուխ V-*հեղինակների ծանոթությունը*): Դատարանի կարծիքով, տվյալ սկզբունքն «ուղղված է քաղաքացիական բնակչության և քաղաքացիական օբյեկտների պաշտպանությանը և սահմանում է տարբերություն կոմբատանտների և ոչ կոմբատանտների միջև. պետությունները, որպես հարձակման օբյեկտ, երբեք չպետք է ընտրեն քաղաքացիական անձանց և, հետևաբար, երբեք չպետք է այնպիսի զինատեսակներ կիրառեն, որոնք հնարավորություն չեն տալիս տարբերակում անցկացնելու քաղաքացիական և ռազմական քիթախների միջև»⁵¹: ՄԱԿ-ի Միջազգային դատարանի կողմից նշված Կոնսուլտատիվ եզրակացությունը ընդունելուց մի քանի ամիս առաջ, Միջազգային տրիբունալի առաջին գրասենյակը նախկին Հարավսլավիայի մասով եկավ այն եզրակացության, որ «Նորմը, որը նախատեսում է, որ քաղաքացիական բնակչությունը՝ որպես այդպիսին և առանձին քաղաքացիական անձինք, չպետք է դառ-

⁵⁰ Op. cit. (ծան. 6), կ. 79. էջ 34:

⁵¹ Միջազգային զենքի և դրա կիրառման սպառնալիքի օրինականության վերաբերյալ կոնսուլտատիվ եզրակացություն: Op. cit. (ծան. 6), կ. 78. էջ 33:

⁴⁹ Commentaire, vol. I, P.28.

նան հարձակման օբյեկտ, հանդիսանում է միջազգային մարդասիրական իրավունքի հիմնարար նորմ՝ կիրառելի բոլոր զինված հակամարտություններում»⁵²: Ունիվերսալ մակարդակի վրա այս սկզբունքն ամրագրվեց 1949թ. Ժնևի Կոնվենցիաների 1977թ. հուլիսի 8-ի երկու Լրացուցիչ արձանագրություններում: 1977թ. Լրացուցիչ արձանագրություն I-ի 48-րդ հոդվածում ասվում է. «Հակամարտության մեջ գտնվող կողմերի քաղաքացիական բնակչությունը և քաղաքացիական օբյեկտները հարգելու և պաշտպանությունն ապահովելու համար միջապետ է տարբերակում կատարվի քաղաքացիական բնակչության և կոմբատանտների միջև, ինչպես նաև քաղաքացիական օբյեկտների և ռազմական օբյեկտների միջև ու, համապատասխանաբար, ուղղորդել գործողությունները միայն ռազմական օբյեկտների դեմ»: Համաձայն Լրացուցիչ արձանագրություն I-ի 57(1) հոդվածի. «Էազմական գործողություններ իրականացնելիս մշտապես հոգ է տարվում, որպեսզի քաղաքացիական բնակչությունը, քաղաքացիական անձինք և քաղաքացիական օբյեկտները խնայվեն»: Երկու արձանագրություններով էլ արգելվում են քաղաքացիական օբյեկտների վրա կանխատեսված հարձակումները, քաղաքացիական բնակչությանը ահաբեկելու նպատակով հարձակումները, ոչ խտրական բնույթ կրող հարձակումները⁵³ (տե՛ս մանրամաս-

⁵² ICTY, case IT-95-II-R 61, 8 March 1996, Prosecutor v. Martić, para. 10. Համարվում է, որ «զինված հակամարտությունը» գոյություն ունի այն ժամանակ, «կերպի ված ուժեր են կիրառվում պետությունների միջև հարաբերություններում կամ երկարատև զինված բռնություն՝ կառավարական ուժերի և կազմակերպված զինված խմբավորումների կամ պետության ներսում այդպիսի խմբավորումների միջև հարաբերություններում (Prosecutor v. Kunarac et al., IT-96-23 / 1-A, Judgement, 12 June 2002, para. 56.

⁵³ «Ընդհանուր հարձակման վերաբերյալ Լրացուցիչ արձանագրություն I-ի 51(4) հոդվածը բերում է երկու կոնկրետ օրինակ. «Ֆանկացած մեթոդներով կամ միջոցներով ռմբակոծության ճանապարհով հարձակումը, որի ժամանակ որպես միակ ռազմական օբյեկտ դիտարկվում է միջանցից հետակայրն հեռու գտնվող և տարբերվող ռազմական օբյեկտների շարքը՝ տեղակայված քաղաքում, գյուղում կամ այլ շրջանում, որտեղ կենտրոնացված են քաղաքացիական անձինք և քաղաքացիական օբյեկտներ, և հարձակումը, որը, ինչպես կարելի է ենթադրել, կարող է միաժամանակ հանգեցնել գոհերի քաղաքացիական բնակչության շրջանում, վիրավորների՝ քաղաքացիական անձանց և վնասների՝ քաղաքացիական օբյեկտների

ները՝ նաև սույն աշխատության Գլուխ IV-*հեղինակների ծանոթությունը*):

Որպեսզի իրավունքի խախտումներն ընկնեն միջպետական նորմերի տակ, այդպիսի խախտումները պետք է պարունակվեն այն գործողություններում, որոնք վերագրվում են պետությանը: Հակառակ դեպքում, իրավունքի խախտումները կարող են առաջացնել անհատական քրեական պատասխանատվություն: Հենց այս երկրորդ հնարավորությունն է, որ տարբերում է միջազգային մարդասիրական իրավունքը միջազգային հանրային իրավունքի այլ հարակից բնագավառներից: Այս համատեքստում պետության միջազգային-իրավական պատասխանատվությունը կտարբերվի այն անձանց անհատական պատասխանատվությունից, որոնք պատասխանատու են միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի խախտման համար նրանով, որ առաջին դեպքում պետությունը ինքն է պատասխանատու, իսկ երկրորդ դեպքում՝ այս կամ այն կերպ (ուղղակի կամ անուղղակի) այն պատասխանատվություն է կրում որոշակի անձանց վարքագծի համար: Չստրանալով սվյալ հարցի միջազգային-իրավական նրբերանգների մեջ, բերենք այդպիսի (պետության հետ որոշակի հարաբերությունների մեջ գտնվող մասնավոր անձանց գործողությունների համար պետության պատասխանատվության) միայն մի քանի դեպք⁵⁴: Պետությունը պատասխանատվություն է կրում՝ իր զինված ուժերի կազմում գնտվող անձանց, դե-ֆակտո ներկայացուցիչների⁵⁵, պաշտոնական իշխանությունների բացակա-

շրջանում, կամ թե մեկը և թե մյուսը՝ միասին, որոնք չափազանց անհամադրելի կլինեն կոնկրետ և ամֆիգական ռազմական առավելության նկատմամբ, որին, այդպիսով, ենթադրվում է հասնել:

⁵⁴ Անհրաժեշտ է նշել այս հարցի բնդհանուր տեսականությունն, ընդհանրապես, ինչի մասին վկայում են սվյալ ոլորտում շատ հարցերի վերաբերյալ մասնագետների տեսակետների բազազանության առկայությունը և միջազգային հանրնդհանուր աճրագրված դրոյթների բացակայությունը:

⁵⁵ «Պատասխանատվության մասին հողվածներում» 8-րդ հոդվածն ասում է. «Անձի կամ անձանց խմբի վարքագիծը միջազգային իրավունքով դիտարկվում է որպես պետության արարք, եթե սվյալ անձը կամ անձանց խումբը նախնորմակ վարքագիծ իրականացնելիս փաստացի գործում է այդ պետության կրահանգով, կամ դեկավարությամբ, կամ վերահսկողությամբ:

յության կամ անգործունակության պայմաններում գտնվող անձանց⁵⁶ ապստամբական շարժումների վարքագծի համար:

«Պատասխանատվության մասին հողվածներում» սահմանվում է, որ վերջին դեպքում (ապստամբական շարժման կապակցությամբ) այդպիսի վարքագիծը կարող է վերագրվել պետությանը, կամ նոր պետությանը, եթե խմբին հաջողվում է ստեղծել նոր պետություն (հողված 10): Մասնագետները նշում են, որ «պետության պատասխանատվությունը կարգավորող նորմերի, ինչպես նաև միջազգային մարդասիրական իրավունքի համար ապստամբության օրինականությունը կամ անօրինականությունը նշանակություն չունի»⁵⁷, ընդ որում, նրանք վկայակոչում են Միջազգային իրավունքի հանձնաժողովի գեկույցի եզրակացությունը. «Ուշադրությունը պետք է սրվի ավյալ կոնկրետ վարքագծի, ինչպես նաև դրա օրինավորության կամ անօրինավորության վրա՝ համաձայն միջազգային իրավունքի կիրառելի նորմերի»⁵⁸: Կարելի է նշել, որ միջազգային մարդասիրական իրավունքը զինված հակամարտության շրջանում ապստամբական շարժման համար, անկախ այն հանգամանքից՝ հասել է այն իր նպատակին, թե՛ ոչ, տրամադրում է ֆունկցիոնալ միջազգային իրավասությունները, որն անհրաժեշտ է միջազգային մարդասիրական իրավունքով սահմանված իրավունքների իրականացման և պարտականությունների կատարման համար:

«Պատասխանատվության մասին հողվածներին» երկրորդ մասում դիտարկվում են այն պարտավորությունները, որոնք

⁵⁶ Տվյալ դեպքում իմաստը կայանում է հետևյալում՝ քաղաքացիական անձինք, որոնք գեներալ վերցնում հակառակորդի ստանձնախն և կանոնավոր ուժերի բացակայության դեպքում ունեն կոմբատանտի կարգավիճակ և ռազմական գործողությունների անմիջականորեն մասնակցելու իրավունք: Այդպիսի անձանց վարքագծի համար պատասխանատվությունը, մասնավորապես, միջազգային մարդասիրական իրավունքի խախտումների մասով, կրում է պետությունը:

⁵⁷ *Cassoli M.*, *Ответственность государства за нарушения международного гуманитарного права // Международный журнал Красного Креста. Сборник статей.* 2002, с. 174.

⁵⁸ Доклад КМП ООН 53-я сессия (2001), op.cit. (прим. 3), с. 108 (п. 11 по статье 10).

ծագում են պատասխանատու պետության համար: Խախտում կատարելու համար պատասխանատու պետությունը պետք է դադարեցնի հակաօրինական գործողությունները և ուրջ ծավալով հատուցի պատճառած բոլոր վնասները, ինչը, ի թիվս ամենի, ներառում է նաև փոխհատուցում:

Լրացուցիչ արձանագրություն I-ի 91-րդ հողվածում սափում է. «Հակամարտության մեջ գտնվող երկիրը, որը խախտում է Կոնվենցիաների (1949թ. Ժնևի Կոնվենցիաները – *հեղինակների ծանոթությունը*) կամ սույն Արձանագրության դրույթները, պետք է փոխհատուցի պատճառած վնասները, եթե դրա համար կան հիմքեր: Այն կրում է պատասխանատվություն բոլոր այն գործողությունների համար, որոնք կատարվել են իր զինված ուժերի կազմի մեջ մտնող անձանց կողմից»: Խոսքը գնում է դրամական փոխհատուցման մասին, սակայն, կարևոր է նշել, որ, քանի որ Լրացուցիչ արձանագրություն I-ի նշված դրույթի համապատասխան, այդպիսի փոխհատուցում պետք է վճարվի միայն՝ «եթե դրա համար կան հիմքեր», ապա այն կարելի է դիտարկել (ինչպես և ընդհանուր միջազգային իրավունքում) որպես խախտող-պետության պատասխանատվության լրացուցիչ միջոց՝ անհրաժեշտ դեպքերում: Միջազգային իրավունքի հանձնաժողովն իր՝ «Պատասխանատվության մասին» Ձեկույցում ընդգծել է, որ այդպիսի պարտավորություններ (փոխհատուցման վճարում) կարող են գոյություն ունենալ նաև անձանց և պետություն չլիսողիսացող միավորումների նկատմամբ, օրինակ՝ «մարդու իրավունքների և միջազգային իրավունքի այլ խախտումների դեպքում, երբ խախտված պարտավորության հիմնական բեռնափոխանակումները չեն»: «Պատասխանատվության մասին հողվածները» չեն դիտարկում այնպիսի իրավունքներ, որոնք կարող են ծագել անմիջականորեն ցանկացած (մասնավոր) անձի նկատմամբ, սակայն ճանաչում են նման հնարավորությունը»⁵⁹:

Ժամանակակից միջազգային իրավունքը և պետությունների պրակտիկան մատնանշում են հետևյալ դրույթները, որոնք

⁵⁹ Доклад КМП ООН, op. cit. (прим. 3), с. 215-216 (п. 3 по статье 28).

կարող են կիրառվել մախկին Այքբ. ԽՍՀ-ի հայ քաղաքացիական ազգաբնակչության փոխհատուցման վճարման հարցում, որին ենթարկվեցին միջազգայնորեն ճանաչված մարդու իրավունքների, միջազգային մարդասիրական իրավունքի բոլոր հնարավոր խախտումները:

Անշուշտ, միջազգային մարդասիրական իրավունքից բխող պարտավորությունները, նախևառաջ, սահմանված են խախտումների գոհերի (գոհի) շահերից ելնելով: Սակայն, երբ խոսքը գնում է միջազգային զինված հակամարտությունների մասին, դրանցից շատերը ձևակերպվում են որպես որոշ պետությունների պարտավորություններ՝ մյուսների նկատմամբ:

Միջազգային մարդասիրական իրավունքում հատատված խախտումների համար փոխհատուցման վճարումը ավանդաբար դիտարկվել է որպես տուժողին փոխհատուցում վճարելու պարտավորություն, այսինքն՝ այն պետությանը, որի քաղաքացիներ են հանդիսանում տուժած անձինք և որին նրանք պետք է հասցեագրեն իրենց բողոքը⁶⁰: Այդպիսի մտացման ավանդականությունը բացի ամենից սահմանվում է նաև «դիվանագիտական պաշտպանություն» հասկացությամբ, համաձայն որի համարվում է, որ պետությունը, որի քաղաքացին է հանդիսանում տուժած անձը, պետք է պահանջ ներկայացնի իր՝ այլ ոչ թե քաղաքացու անունից⁶¹:

Համաձայն «Պատասխանատվության մասին հոդվածների» հոդված 48(1)-ի, ցանկացած պետություն, տուժած պետությունից բացի, իրավունք ունի պատասխանատվության կանչել մեկ այլ պետության, եթե խախտված պարտավորու-

թյունը հանդիսանում է պարտավորություն՝ ընդհանրապես միջազգային հանրության առջև: Ինչպես ցույց տրվեց վերևում, միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը վերաբերում են այնպիսի պարտավորություններին, ինչպիսիք են erga omnes պարտավորությունները: Այդ պատճառով, «Պատասխանատվության մասին հոդվածների» հոդված 48 (2)-րդի համաձայն, միջազգային մարդասիրական իրավունքի խախտումների դեպքում ցանկացած պետություն իրավունք ունի պահանջելու դադարեցնել խախտումները այն պետությունից, որը պատասխանատվություն է կրում դրա համար, ինչպես նաև պահանջել ռեպարացիաներ «ի օգուտ տուժած պետության կամ խախտված պարտավորության բենեֆիցիարինների»: Այդպիսի բենեֆիցիարիներ (պատճառած վնասների փոխհատուցումը պահանջելու օրինական իրավունքը տիրապետողներ) կարող են լինել զինված հակամարտության առանձին գոհերը:

Երեք իրավունքները՝ գոհի տեղեկացված լինելու իրավունքը, գոհի արդարության վերականգնման իրավունքը և գոհի կողմից կրած վնասի փոխհատուցման իրավունքը, հանդիսանում են փոխկապակցված և բխում են մարդու իրավունքների միջազգային պաշտպանության սկզբունքից: Վերոհիշյալ երեք իրավունքները ձևակերպված են «Արդարադատության իրագործումը և ձերբակալված անձանց մարդու իրավունքները, մարդու քաղաքացիական և քաղաքական իրավունքների խախտումների համար մեղավոր անձանց անօրինականության հարցը»⁶² Ամփոփիչ (Վերջնական) գեկույցում:

⁶⁰ Օրինակ, ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդն իր՝ 674 (1990) որոշման 9-րդ կետով առաջարկեց. «Պետություններին հավաքել Իրաքի կողմից ռեստրիկցիաների կամ ֆինանսական փոխհատուցումների նկատմամբ իրենց և իրենց քաղաքացիների ու կորսորդացիների պահանջներին վերաբերող համապատասխան տեղեկատվություն՝ համաձայն այնպիսի գործառնությունների, ինչպիսիք կարող են սահմանված լինել միջազգային իրավունքի համապատասխան»:

⁶¹ Case Concerning the Factory of Chorzow, Claim for Indemnity, Meritz, PCIJ, Series A, No. 17. P.27-28.

⁶² Ժուռնեի գեկույցը: Պատրաստված է համապատասխան ՄԱԿ-ի Ենթահանձնաժողովի 1996/119 որոշման, UN Doc. E / CN.4 / Sub.2 / 1997 / 20, 26 June 1997.

3.1 Մարդու իրավունքների խախտումներից տուժած մարդկանց պատճառած վնասի փոխհատուցման միջազգային պրակտիկան

Միջազգային իրավունքը սահմանում է «վնասի փոխհատուցման իրավունք»⁶³, սույնով պետությունների վրա դնելով իրենց՝ միջազգային պարտավորությունների խախտման համար վնասի փոխհատուցման ապահովման պարտավորություն:

Վերոհիշյալը նշանակում է պետության միջազգային-իրավական պարտավորություններ, որոնք ստանձնվել են նրա կողմից, օրինակ, տարածաշրջանային կամ համընդհանուր միջազգային կազմակերպությունների շրջանակներում մարդու իրավունքների հարցերով տարածաշրջանային կամ ունիվերսալ բազմակողմ պայմանագրերի (կոնվենցիաների) ստորագրմամբ և վավերացմամբ⁶⁴:

Վնասի նյութական փոխհատուցումը կարող է իրականացվել կանխիկ դրամի վճարմամբ կամ դրամական այլ ձևով, օրինակ, վճարելով կրթության, բնակարանի համար կամ էլ ապօրինաբար գրավված գույքի վերադարձմամբ (ռեստիտուցիա): ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հարցերով հանձնաժողովի «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների կոպիտ խախտումների գոհերի համար վնասի փոխհատուցման և վերականգնման իրավունքի մասին» 2002/44 որոշումը (58-րդ նստաշջան, 2002թ-ի ապրիլ) կոչ է անում միջազգային հանրությանը պատշաճ ուշադրություն դարձնել իրավական պաշտպանության միջոցներից օգտվելու իրավունքի, և, մասնավորապես, համապատասխան դեպքերում, մարդու իրա-

⁶³ ժուանի գեկույցը, op. cit. (ծան. 4).

⁶⁴ Ван Бовен Т. Окончательный доклад «Исследование, касающееся права на реституцию, компенсацию и реабилитацию в отношении жертв грубых нарушений прав человека и основных свобод» (8 июля 1993г.) Комиссия по правам человека UN Doc. E/CN.4/Sub.2/1993.

վունքների ոլորտում միջազգային նորմերի խախտումների գոհերի վնասի փոխհատուցման և վերականգնման հարցին⁶⁵:

Գերմանիան 1952-2002թթ. ընթացքում (50 տարի) ավելի քան 600 մյոդ դոլար է վճարել նացիզմի գոհերին և նրանց ընտանիքներին: Բրազիլիայում գինեվորական կտրավարման ավարտից ավելի քան 15 տարի անց կտրավարությունը ռեպարացիայի (պատերազմական տուգանքների) ծրագիր սահմանեց, որի շրջանակներում ավելի քան 100 հազարական դոլար հատկացվեց անհետացած անձանց 135 ընտանիքներից յուրաքանչյուրին: Չիլիում, համարյա 5 հազար մարդ (2002թ. դրությամբ) «թոշակային պլանի» շրջանակներում ամսական 345 դոլարից սկսած գումարի կտրոններ էին ստանում՝ սահմանված 1997թ. այն անձանց ընտանիքների համար, որոնք գոհիլ էլ կամ անհետացել էին ռազմական դիկտատուրայի տարիներին: Արգենտինայում 1994թ. օրենք ընդունվեց անհետացած անձանց ընտանիքներին պատճառած վնասի փոխհատուցման մասին:

Վնասի ոչ նյութական փոխհատուցումը ներառում է մի շարք միջոցառումներ: Դրա կարևորագույն ձևերից մեկը ճշմարտության բացահայտումն է, որը ուղեկցվում է պատասխանատու կառավարության կողմից այդ ճշմարտության և պատճառած տառապանքների ու վնասների համար սեփական պատասխանատվության պաշտոնական (այսինքն՝ պաշտոնապես անբազրված) ճանաչմամբ: Պետության ոչ նյութական պատասխանատվության դրսևորման առումով որոշակի տեսանկյունից հետաքրքիր է Արգենտինայի փորձը: Այս երկրում քաղաքացիական գործերը վարելու համար ստեղծվեց առանձնահատուկ իրավական կարգավիճակ՝ «բռնի կերպով անհետացած անձ», ինչը իրավաբանորեն հավատարեցված էր քաղաքացուն մահացած ճանաչելուն և որը թույլ տվեց կորած

⁶⁵ St'au Gual' Commission on Human Rights Resolution 2005/35 «Basic Principles and Guidelines on the Right to a Remedy and Reparation for Victims of Gross Violations of International Human Rights Law and Serious Violations of International Humanitarian Law» (61st session, 2005).

անձանց (անհետացածների) ընտանիքներին կտակներ ձևակերպել կամ տիրապետել գույքին, սակայն՝ անձին մահացած չհայտարարել: Մինչև այս օրերնքի հայտնվելը, ընտանիքները չէին կարողանում կարգի բերել անհետացած անձի գործերը, քանի դեռ չէին հայտարարում, որ անձը «համարվում է մահացած»: Նմանօրինակ կարգավիճակը չէր բավարարում ընտանիքների անդամներին, քանի որ այն չէր ճանաչում պետության պատասխանատվությունը:

Հանցագործների դատական կարգով հետապնդումը և, հետևաբար, համաներման մասին օրենքներից հրաժարումը չափազանց կարևոր են ոչ միայն, որ գոհի համար արդարադատության հնարավորությունը հավաստի է դառնում, այլև, որովհետև, առանց այդ դատական հետապնդման, գոհերի համար, նույնիսկ միջոցների առկայության դեպքում, ծայրաստիճան բարդ է անհրաժեշտ ապացույցներ ձեռք բերել⁶⁶, որպեսզի խախտող-պետությունից փոխհատուցում ստանալու համար⁶⁷ իրենց գործերը ներկայացնեն դատարան:

Ժամանակակից փուլում միջազգային հանրությունը հստակորեն արտահայտում է իր դիրքորոշումը էթնիկ զտումների, մարդկության նկատմամբ հանցագործությունների հետագա պրակտիկայի անթույլատրելիության և ցեղասպանության գործողությունների կանխարգելման հարցում: 2004թ. ՄԱԿ-ի շրջանակներում պատրաստվեց «սպառնալիքների, մարտահրավերների և փոփոխությունների հարցով» Բարձր մակարդակի խմբի Ձեկույցը: Վերջինիս կետերից մեկում նշվում է. «Սոմալիում, Բոսնիայում և Հերցեգովինայում, Ռուսնդայում և Կոսովոյում տեղի ունեցած մարդասիրական աղետների շարքը

⁶⁶ Միջազգային պրակտիկայում հայտնի են պետության ագրեսիայի հետևանքով անձանց քաղաքացիական իրավունքների պաշտպանության սրբալի միջազգային նորմերը խախտելու փաստեր: Օրինակ, ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդն իր 677 (1990) որոշման մեջ դատապարտեց. «Իլաքի կողմից Բուվեյթի ժողովրդագրական կազմը փոխելու և Բուվեյթի օրինական կառավարության կողմից վարվող քաղաքացիական կացության ակտերի գրառումները ոչնչացնելու փորձերը» (կետ 1):

⁶⁷ Օլսոն Լ. Механизмы, дополняющие судебные преследования // Международ-ный журнал Красного Креста. Сборник статей. 2002.

ու Դարձուրում, Սուդանում⁶⁸ այժմ տեղի ունեցող աղետը ստիպեցին կենտրոնացնելու ուշադրությունը ոչ թե ինքնիշխան կառավարությունների իմունիտետի, այլ նրանց պարտավորությունների վրա՝ ինչպես սեփական ժողովրդի, այնպես էլ՝ միջազգային հանրության առջև, առավել լայն առումով: Գնալով սվեդի լայնորեն է ճանաչվում, որ խոսքը գնում է ոչ թե «(ինչ-որ պետության) իրավունքի, այլ «պաշտպանության համար պատասխանատվության» մասին⁶⁹, որն ընկած է յուրաքանչյուր պետության վրա, երբ խոսքը վերաբերում է այն անձանց, որոնք տուժել են այնպիսի աղետների արդյունքում, որոնցից

⁶⁸ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը իր՝ 1564 (2004) որոշման մեջ. 1) խորհրդի անհամաձայնություն արտահայտեց քաղաքացիական անձանց անվտանգության և պաշտպանության ապահովման, «Ջամբուլի»-ի կազմավորումների զինաթափման, Դարձուրում մայրու իրավունքների և միջազգային մարդասիրական իրավունքի խախտման համար մեղավոր «Ջամբուլի»-ի կազմավորումների դեկավորների բացահայտման, դատական պատասխանատվության ենթարկելու հարցերում առաջընթացի բացակայության առիթով (համեմատիր՝ Բաքվում և Ադրբ.ԽԱՀ-ի այլ խոշոր քաղաքներում և բնակավայրերում հայ ազգաբնակչության էթնիկ զտումների հետ իրականացված «Ադրբեջանի ժողովրդական ճակատ»-ի կիսառավակա կազմավորումների կողմից՝ հեղինակների ծանուցությունը), 2) հիշեցրեց, որ «Սուդանի կառավարությունը կրում է իր տարածքում իր բնակչության մայրու իրավունքների պաշտպանության և կարգուկանոնի պահպանության համար գլխավոր պատասխանատվությունը», 3) ընդգծեց, որ «սուդանյան ապստամբական խմբավորումները, հատկապես Արդարության և հավասարության համար շարժումը և Սուդանի ազատագրական բանակը/շարժումը, պետք է նույնպես ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ միջոցները միջազգային մարդասիրական իրավունքի նորմերը և մարդու իրավունքների ոլորտի ստանդարտները պահպանելու համար»:

⁶⁹ ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի «Ավելի մեծ ազատության ժամանակ» զեկույցում (2004թ.) նշվում է. «Պաշտպանության համար պատասխանատվության» սկզբունքի աջակցության անհրաժեշտության մասին, որպես հիմք ցեղասպանության, էթնիկ զտումների և մարդկության դեմ հանցագործությունների դեմ պայքարի կոլեկտիվ գործողությունների համար և պայմանավորվել այն մասին, որպեսզի այդ կապակցությամբ ընդունվեն համապատասխան միջոցներ, ճանաչելով, որ այդ պատասխանատվությունը նախևառաջ ընկնում է յուրաքանչյուր առանձին պետության վրա, որի պարտականությունն է հանդիսանում բնակչության պաշտպանությունը, ընդ որում միաժամանակ ելնելով այն բանից, որ եթե ազգային իշխանությունները չեն կարող կամ չեն ցանկանում պաշտպանել իրենց քաղաքացիներին, ապա պատասխանատվությունն անցնում է միջազգային հանրության վրա, որը պետք է օգտագործի քաղաքացիական բնակչության պաշտպանության աջակցության դիվանագիտական, մարդասիրական և այլ մեթոդները...» (կետ 7(բ), բաժին «Մարդուն արժանի պայմաններում ապրելու ազատություն», Ձեկույցի Հավելված):

կարելի էր խուսափել, այն է. զանգվածային սպանություններ և բռնաբարություններ, էթնիկ զտումներ՝ արտահայտված մարդկանց արտաքսմամբ և ահաբեկմամբ: Գնալով ավելի լայն ճանաչում է ստանում այն կարծիքը, որ, չնայած, այդպիսի աղետներից իրենց քաղաքացիներին պաշտպանելու գլխավոր պատասխանատվությունը կրում են ինքնիշխան կառավարությունները, այնուհանդերձ, այն դեպքերում, երբ նրանք չեն կարող կամ չեն ցանկանում ապահովել այդպիսի պաշտպանությունը, դրա համար պատասխանատվությունն իր վրա պետք է վերցնի միջազգային հանրությունը: Այդ պատասխանատվությունը նախատեսում է միջոցառումների մի ամբողջ շարք, ներառյալ կանխարգելիչ միջոցառումները, բռնությանն արձագանքումը և, եթե անհրաժեշտ է, նաև քայքայված հասարակության վերականգնումը (Ջեկոյցի կետ 201-րդ):

3.2 Նախկին Ադրբեջանական ԽՍՀ-ից վտարված հայ բնակչության գույքային իրավունքների պաշտպանությունը

Ադրբեջանական ԽՍՀ-ից վտարված հայ ազգաբնակչության գույքային իրավունքների պաշտպանության (սեփականության իրավունքի) և վնասի փոխհատուցման համապատասխան արդարացի հատուցման տեսանկյունից վերոհիշյալը պահանջում է առանձնահատուկ իմաստավորում, քանի որ հայ ազգաբնակչությունը բռնի ճանապարհով դուրս էր մղվում իր քաղաքացիության նախկին միութենական հանրապետությունից, իսկ բուն դուրս մղման ժամանակ իրականացվել են զանգվածային բնույթի ամենածանր քրեական հանցագործություններ և, այդ պատճառով, գույքային իրավունքների պաշտպանությունը և թողնված գույքի նյութական փոխհատուցումը պահանջում է մշտական հարաբերակցում բռնի տեղահանման, հատուկ ծանրության հանցագործությունների կատարման փաստերի հետ:

Ադրբ. ԽՍՀ-ից վտարված հայ ազգաբնակչության գույքի հիմնական զանգվածը, ըստ որակական-քանակական (արժեքային) չափանիշի, թողնվել է անշարժ գույքի տեսքով: Տվյալ

անշարժ գույքը (բնակարաններ, սեփական տներ, հողային (մշակովի) տարածքներ. ավտոտնակներ և այլ օժանդակ կառույցներ) այսօրվա դրությամբ գտնվում են այլ անձանց անօրինական սեփականության տակ, որոնք՝ կամ իրենք են անմիջականորեն բռնագավթել նշված գույքը հայերի վտարման ժամանակ, կամ ձեռք են բերել այն հետագայում՝ «անբարևխիղճ սեփականտերերից»⁷⁰:

Սեփականության իրավունքի պաշտպանության քաղաքացիական-իրավական միջոցների շարքում առանձնակի տեղ են զբաղեցնում ուրիշի ապօրինի սեփականության մեջ գտնվող գույքի պահանջի մասին հայցերը՝ վիճակացիոն հայցերը⁷¹: Այն դեպքերում, երբ գույքը փաստացի գտնվում է մի անձի տիրապետման տակ, որը տիրացել է դրան անօրինական ճանապարհով, ապա վիճակացիոն հայցի բավարարման անհրաժեշտությունը ոչ մի կասկած չի առաջացնում:

Սակայն, տվյալ հարցի լուծումը ոչ այդքան ակնհայտ կլինի այնպիսի իրավիճակում, երբ գույքը հայտնվում է երրորդ անձի տիրապետման տակ, օրինակ, այն անձի, որը գույքը գնել է ոչ իրավասու օտարողից: Օրենքով պաշտպանվող Գույքի սեփականատիրոջ (տիրողուսային սեփականատիրոջ) շահերը տվյալ դեպքում բախվում են փաստացի սեփականատիրոջ ուշադ-

⁷⁰ Քաղաքացիական իրավունքի տերմին:

⁷¹ Վիճակացիոն հայցի տակ հասկացվում է գույքը փաստացի տնօրինողի նկատմամբ չտնօրինող սեփականատիրոջ ոչ պայմանագրային պահանջը՝ գույքի առարկայական կերպով վերադարձի մասին: Վիճակացիոն հայտ ներկայացնելու համար անհրաժեշտ է միաժամանակ մի շարք պայմանների առկայություն: Նախևառաջ, պահանջվում է, որպեսզի սեփականատերը գրկվի իր տիրապետման տակից դուրս եկած գույքի նկատմամբ փաստացի տնօրինությունից: Այնուհետև, անհրաժեշտ է, որպեսզի գույքը, որից գրկվել է սեփականատերը, պահպանվի բնական վիճակով և գտնվի այլ անձի փաստացի տիրապետման ներքո: Վիճակացիա կարող է իրականացվել միայն անհատական առուժով որոշակի գույքի նկատմամբ, ինչը բխում է տվյալ հայցի բնույթից՝ ուղղված հենց այն գույքի վերադարձմանը սեփականատիրոջը, որը դուրս է թողնվել իր տիրապետությունից: Վիճակացիոն հայցի առարկա է հանդիսանում անօրինական տիրապետման տակից գույքի վերադարձման պահանջը: Ընդ որում, հարկավոր է հաշվի առնել, որ եթե հայցվորը հարց է դնում իրեն համարժեք գույքի տրամադրման կամ դրամական փոխհատուցման վճարման մասին, ապա նա դրան կարող է հասնել պաշտպանության այլ միջոցների, մասնավորապես, պատճառած վնասների համար հայցի օգնությամբ:

րության արժանի շահերի հետ, որի գործողությունները, սուբյեկտիվ առումով, հաճախակի անբասիր են: Այսպիսի դեպքում, երրորդ անձից գույքի վիճակացիայի հնարավորությունը, նախևառաջ, կախված է նրանից, թե որքանով է բարեխիղճ գույքը ձեռք բերած անձը: Այն դեպքում, երբ գույքի սեփականատերը գիտեր կամ, ծայրահեղ դեպքում, պետք է իմանար, որ գույքը ձեռք է բերում դրա օտարման իրավունքը չունեցող անձից, ապա գործող համարվում է անբարեխիղճ⁷²:

Աղբբ. ԽՍՀ-ից բռնի տեղահանված հայ ազգաբնակչության կողմից թողնված գույքի նկատմամբ ակնհայտ են համարվում տվյալ հայցերի տեխնիկական իրականացումը դժվարացնող հետևյալ գործոնները. նախևառաջ՝ դա գույքի կորստի պահից անցած տևական ժամանակն է (այն կարող է արդեն մի քանի անգամ փոխած լինել իր անբարեխիղճ սեփականատերերին), երկրորդը՝ Աղբբեջանական Հանրապետության ներկայիս իշխանությունների կանխատեսելի բացարձակ անընկալունակությունը հարցի նման դրվածքի նկատմամբ՝ ԱՀ-ի օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունները այդպիսի հայցերի համար կհարուցեն բոլոր հնարավոր և անհնարին խոչընդոտները, ինչը չի բխում այդպիսի հայցեր ներկայացնող հայց-

⁷² *Sergeev A.П., Гражданское право/Под ред. Сергеева А.П., Толстого Ю.К. М., 1998, с. 467-471.* «Փախստականների և տեղաշարժի ենթարկված անձանց բնակարանների և գույքի ռեստիտուցիայի հարցերով սկզբունքները» Պ-Ս. Պինյերի Վերջնական զեկույցում (ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի Մարդու իրավունքների աջակցության և պաշտպանության ենթահանձնաժողով, 57-րդ նստաշրջան, 28.07.2005) նշվում է. 1) «Պետություններն ապահովում են, որպեսզի անհրաժեշտ պրոցեսուալ երաշխիքները, որոնք տրամադրվում են կրկնակի անգամ բնակարան գրառնեցնող անձանց, վեճա չպատճառեն օրինական սեփականատերերի, վարձակալների և այլ տիրապետողների իրավունքներին, համապատասխան բնակարանի, հողի և գույքի տիրապետման արդար և ժամանակին վերականգնման իրավունքներին» (կետ 17.2), 2) «Երկնակի անգամ բնակարանը գրառնեցնող անձանց կողմից, բարեխիղճ գործող երրորդ կողմերին բնակարանի, հողի և գույքի վաճառքի դեպքում, պետությունները կաբող են դիտարկել տուժած երրորդ կողմերին փոխհատուցումներ տրամադրելու մեխանիզմներ ստեղծելու մասին հարցը: Սակայն տեղի ունեցած մարդկային տեղաշարժի փաստը կարող է միանգամայն ակնհայտորեն մատնանշել թողնված գույքի գնման անօրինականության մասին ենթադրվող տեղեկացվածությունը, կասկածի տակ դնելով այդպիսի դեպքերում բարեխիղճ գույքային շահերի առկայությունը» (կետ 17.4):

վորների՝ ի դեմս իրենց գույքային իրավունքներում չվերականգնված նախկին Աղբբ. ԽՍՀ-ի հայերի, շահերից:

Բացի այդ, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել սկզբունքային հետևյալ դրույթի վրա: Հարցին այսպիսի մասնավոր բնույթ տալը շեղում է շեշտադրումը հայ ազգաբնակչության վտարման, որի հետևանքը հանդիսացավ հայ բնակչության սեփական գույքի լիակատար կամ համարյա լիակատար կորուստը գլխավոր նախաձեռնողի վրայից: Վտարման գլխավոր նախաձեռնողները, փաստացի, հանդիսանում էին պետությունը՝ ի դեմս Աղբբ. ԽՍՀ-ի ղեկավարության և այն ժամանակ հանրապետությունում իշխանությանը մոտ գտնվող ազգայնական ուժերը: Իսկ մասնավոր անձինք՝ հանցավոր գործողություններ կատարողները և հայերի կողմից թողնված գույքի ապօրինի գավթիչները, գործիք էին Աղբբ. ԽՍՀ-ի պաշտոնատար անձանց և վերոնշյալ իշխանամերձ ազգայնական ուժերի ձեռքերում, որոնք հետագայում դարձան վերաստեղծվող ԱՀ-ի ղեկավարներ և իրենց «կարողությունը» դիզեցին վտարված հայ ազգաբնակչությունից ապօրինի կերպով բռնագրավված գույքի միջոցով: Սա մատնացույց է անում պետության գլխավոր պատասխանատվությունը՝ ի դեմս ներկայիս ԱՀ-ի, այնպիսի վտարման համար, որը հանգեցրեց Աղբբ. ԽՍՀ-ի հայ ազգաբնակչության գույքի համարյա լիակատար կորստի (ինչ վերաբերում է անշարժ գույքին, ապա այդպիսի կորուստը կրում է համարյա հարյուր տոկոսին մոտ բնույթ): Վտարումը տեղի է ունեցել այն տարածքներից, որոնց վրա տվյալ պահին իրականացվում է ԱՀ պետաիրավական ինքն-իշխանությունը:

Մեր կողմից դիտարկվող խնդիրների ամբողջականության մեջ կարևոր է նաև հաշվի առնել և՛ սեփականության նկատմամբ միջազգային մասնավոր իրավունքի, և՛ միջազգային քաղաքացիական գործընթացի նորմերը:

Միջազգային մասնավոր իրավունքում սեփականության հարաբերությունների իրավական կազմավորման գերակայող

միջոց է հանդիսանում կոլլեկտն-իրավականը⁷³, քանի որ գոյություն ունեցող խնդիրների ողջ բազմազանությամբ հանդերձ, գործնականում, չկան կոնվենցիաներ, որոնք պարունակեն միօրինակ նյութաիրավական նորմեր: Միջազգային մասնավոր իրավաբանքում կա այսպիսի մի հասկացություն՝ «ամբակցման բանաձև»: Կոնկրետ փաստացի հանգամանքների նկատմամբ նման բանաձևի կիրառումը հանգեցնում է այն պետության իրավունքի ընտրությանը, որը իրավասու է կարգավորելու կոնկրետ անդրասահմանային մասնավոր իրավական հարաբերությունները⁷⁴: Յուրաքանչյուր պետություն ստեղծում է իր կոլլեկտն իրավունքը՝ ելնելով սեփական շահերից, սեփական պատմական, ազգային զարգացման առանձնահատկություններից: Այնուհանդերձ, որքան էլ բազմաթիվ և բազմազան լինեն ամբակցման բանաձևերը (կոլլեկտն հանգուցակապերը), դրանք կառուցվում են որոշակի միանման կանոնների հիման վրա: Ամբակցման բանաձևերը՝ դրանք առավել բնորոշ, առավելագույնս ընդհանրագծված կանոններ են, որոնք հաճախ կիրառվում են կոլլեկտն նորմերի կառուցման համար: Գույքի գտնվելու վայրի մասին օրենքը (*lex rei sitae*) միջազգային մասնավոր պրակտիկայում հաստատված ամբակցման առաջին բանաձևերից մեկն է, որը նշանակում է այն պետության իրավունքի կիրառումը, որի տարածքում գտնվում է մասնավոր իրավական հարաբերությունների օբյեկտ հանդիսացող գույքը: Ժամանակին գույքի գտնվելու վայրի մասին օրենքը կիրառվում էր բացառապես անշարժ գույքի նկատմամբ, ներկայումս դրա գործողության ոլորտը ներառում է նաև շարժական

⁷³ Կոլլեկտն նորմն այն նորմն է, որը որոշում է, թե որ պետության իրավունքը պետք է կիրառվի տվյալ օտարերկրյա տարրով բարդացված, մասնավոր իրավական հարաբերության նկատմամբ: Այստեղից էլ թիտոն է նրա առանձնահատկությունը՝ կոլլեկտն նորմն ինքն իրեն չի տալիս այն հարցի պատասխանը, թե ինչպիսին են տվյալ իրավահարաբերության կողմերի իրավունքները և պարտականությունները, այլ միայն ցույց է տալիս այդ իրավահարաբերության կողմերի իրավունքները և պարտականությունները սահմանող կանոնակարգը:

⁷⁴ Նմանօրինակ իրավահարաբերությունների մասնակիցներ կարող են հանդիսանալ ֆիզիկական անձը և պետությունը, չնայած այն հանգամանքին, որ այն հանդիսանում է մասնավոր իրավական հարաբերություն:

գույքը: Ընդհանուր առմամբ, այս օրենքով գործնականում ողջ աշխարհում որոշվում է ինչպես շարժական, այնպես էլ անշարժ գույքի իրավական վիճակը: Մասնավորապես, այն լուծում է սեփականության իրավունքի ծագման, փոփոխման և դադարեցման կարգի հետ կապված հարցերը: Համարվում է, որ գույքի գտնվելու վայրի մասին օրենքի համընդհանուր ընդունված կիրառումը պայմանավորված է ձևավորված միջազգային իրավական սովորույթով: Այդ օրենքին են դիմում նույնիսկ այն դեպքում, երբ այն չի ամրագրված համապատասխան պետության ազգային օրենսդրությամբ: Գույքի գտնվելու վայրի մասին օրենքի կառուցվածքում գույքի գտնվելու վայրը հասկացվում է որպես իրական ֆիզիկական կառուցորիս, այսինքն՝ այն պետության իրավունքը, որի տարածքի վրա իրականում գտնվում է գույքը: Տվյալ կանոնից բացառություն է կազմում այն դեպքը, երբ իրերի (գույքի) իրավական վիճակը, անկախ գույքի իրականում գտնվելու վայրից, որոշվում է այն երկրի իրավունքով, որի գրանցամատչանում այն գրանցված է:

Մասնավոր իրավական հարաբերությունների հարցերով դատական մարմինների գործունեության հետ ամօրինականորեն կապված ամբակցման ևս մեկ բանաձև է հանդիսանում դատարանի օրենքը (*lex fori*), որը լուծում է իրավունքի կոլլեկտն ի օգուտ այն պետության, որտեղ քննության է առնվում մասնավոր իրավական վեճը: Համաձայն այդ բանաձևի, դատարանը կամ այլ իրավակիրառող մարմինը, չնայած մասնավոր իրավական հարաբերություններում օտարերկրյա տարրի առկայության, պետք է դեկլարվի իր երկրի իրավունքով: Դատարանի օրենքի կիրառման համընդհանուր ճանաչված ոլորտ է համարվում միջազգային քաղաքացիական դատավարությունը, դատարանը քննության առնելով օտարերկրյա տարրեր պարունակող քաղաքացիական գործերը, միշտ դեկլարվում է իր դատավարական իրավունքով (բացառության կարգով այն կարող է կիրառել օտարերկրյա դատավարական իրավունքի նորմերը, եթե դա հատուկ վերապահված է օրենքով կամ միջազգային պայմանագրով): Այնուհանդերձ, քաղաքացիական դատավարության ոլորտում իրավունքի ընտրու-

թյան խնդիրը բացակայում է, այդ պատճառով դատարանի օրենքը այստեղ հանդիսանում է ոչ թե ամրակցման բանաձև, այլ միջազգային դատավարության սկզբունքներից մեկը⁷⁵:

ԱՊՀ-ի շրջանակներում գործում է դատավարական իրավունքի սկզբունքները և նորմերը ամրագրող բազմակողմ պայմանագիրը, որով պետք է ղեկավարվեն նրա մասնակիցները: Դա 1993թ. Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին կոնվենցիան է, որը կարելի է համարել միջազգային քաղաքացիական դատավարության հարցերը կարգավորող տարածաշրջանային բնույթի միջազգային փաստաթուղթ: Կոնվենցիայի II մասի 20-րդ հոդվածը մեզ հետաքրքրող թեմայով ձևակերպում է հետևյալ դրույթը. «Անշարժ գույքի սեփականության իրավունքի և գույքային այլ իրավունքների մասին հարցերով իրավասու են բացառապես գույքի գտնվելու վայրի դատարանները»:

Այսպիսով, ելնելով միջազգային մասնավոր իրավունքի և կոնկրետ (մասնավորապես, սեփականության ինստիտուտի և անձանց խախտված գույքային իրավունքների պաշտպանության միջոցների (քաղաքացիական դատավարություն) հետ կապված հարաբերությունների կարգավորման ոլորտում) գործող բազմակողմ փաստաթղթերի սկզբունքներից և նորմերից, նշված հարցերով վեճերը հանդիսանում են մասնավոր իրավական՝ օտարերկրյա տարրի պարունակությամբ:

ԱՀ-ի ներկայիս իշխանությունների վերոնշյալ պատասխանատվությունը, որը հիմնված է Ադրբ. ԽՍՀ-ից վտարված հայ ազգաբնակչության նկատմամբ ամենածանր հանցավոր գործողությունների փաստերի վրա (որոնց համար պատասխանատվությունը սահմանված է գործող ընդհանուր միջազգային իրավունքով), որոնք իրականացվել են ներկայումս ԱՀ-ի իրավատիրություն գտնվող տարածքներում, ինչպես նաև հիմնված վտարված բնակչության՝ իր գույքային իրավունքների վերականգնողականության հարցում ԱՀ-ի ներկայիս իշխանութ-

յունների անգործության վրաստի վրա, մատնանշում է միութենական հանրապետության նախկին քաղաքացիների՝ իրենց իրավունքների վերականգնման և իրենց պատճառած ֆիզիկական, բարոյական և նյութական վնասների փոխհատուցման հարցի հստակ արտահայտված հանրային (պետականորեն պատասխանատու)՝ և ոչ թե մասնավոր իրավական բնույթը:

Ադրբ. ԽՍՀ-ից վտարված հայ ազգաբնակչության օրինական իրավունքների վերականգնողականության հարցի կապակցությամբ պետք է դիտարկվեն խորհրդային օրենսդրության՝ սահմանադրական և իրավական-նորմատիվ բնույթի սկզբունքները և նորմերը: Դրա անհրաժեշտությունը ծագում է այն փաստից, որ Ադրբ. ԽՍՀ-ի հայ ազգաբնակչության լիակատար վտարման պահին (1988-1990թթ.) այն տարածքների վրա՝ որտեղից վտարվում և դեպի որոնք անմիջականորեն տեղաշարժվում էին վտարվող մարդիկ, գործում էին միասնական համամիութենական խորհրդային օրենսդրության նորմերը: Խորհրդային միութենական հանրապետությունները դարձան անկախ պետություններ, միջազգային իրավունքի ինքնուրույն սուբյեկտներ, որոնք սեփական ազգային օրենսդրություն ունեցան միայն 1991թ-ից հետո⁷⁶:

Ներկայիս ԱՀ-ն չի կարող վկայակոչել իր իրավական (իրավաբանական) անմեղսակցությունը, առնվազն, նախկին Ադրբ. ԽՍՀ-ի ազգաբնակչության կոնկրետ մի մասին զանգվածային արտաքսման հետևանքների հարցում՝ հիմնվելով ԱՀ-ի Ադրբ. ԽՍՀ-ի անհրավահաջորդության սկզբունքի վրա: Մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը, դրանց երաշխավորումը, խախտված իրավունքների վերականգնման արդյունավետ միջոցների իրականացումը հանդիսանում են «հայցային վաղեմություն» չունեցող բացարձակ կատեգորիաներ, որոնք իրավահաջորդության ծավալի և բովանդակության հարցում խիստ կապի մեջ չեն գտնվում կր-

⁷⁶ Ընդ որում, օբյեկտիվ պատճառներից ելնելով, նախկին խորհրդային հանրապետությունները իրենց ներպետական օրենսդրությունը միանգամից չունեցան: Եվ այդ պատճառով, ղեռնա երկար ժամանակ գործում էր, թեև, մշտապես ուղղումների ենթարկվող, քայց այնուհանդերձ, հին խորհրդային օրենսդրությունը:

⁷⁵ Международное частное право / Отв. ред. Дмитриева Г.К. М., 2004. с. 116, 129, 134-135.

կլին ստեղծվող պետության ինքնիշխան կամքի հետ: Առավել ևս դա ակնհայտ է այն դեպքում, երբ մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների զանգվածային խախտումները ունեցել են ոչ միայն և ոչ այնքան գույքային բնույթ (դրանք հետևանքներ են, որոնք շարունակվում են առ այսօր), այլ ուղեկցվում էին ամենաժանր բնույթի հանցավոր գործողություններով, որոնց համար նախատեսված էին միջազգային-իրավական և ներպետական ամենախիստ պատժամիջոցներ⁷⁷:

Աղբ. ԽՍՀ-ից հայերի զանգվածային բռնի դուրս մղման հետ այս կամ այլ կերպ առնչվող հարցերով 1988-1990թթ-ի դրությամբ գոյություն ունեին համամիութենական օրենսդրության հետևյալ նորմերը:

ԽՍՀՄ-ի 1977թ. Սահմանադրության մեջ կար ԽՍՀՄ-ի բոլոր քաղաքացիների՝ անկախ ազգային պատկանելությունից, իրավահավասարության մասին նորմ, ավելին՝ սահմանադրական մակարդակում ամրագրված էր հետևյալ նորմը. «...ազգային հատկանիշներով քաղաքացիների իրավունքների ցանկացած ուղղակի կամ անուղղակի սահմանափակում, ուղղակի

⁷⁷ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հարցերով հանձնաժողովի «Մարդու իրավունքների ոլորտի միջազգային նորմերի կոպիտ խախտումների և միջազգային մարդասիրական իրավունքի լուրջ խախտումների գոհերի համար իրավական պաշտպանության և վնասի փոխհատուցման իրավունքին վերաբերող հիմնական սկզբունքները և դեկավար դրույթները» (ընդունված Հանձնաժողովի կողմից 2005/35 որոշմամբ, 19.04.2005) փաստաթղթում նշված է: «Եթե դա նախատեսված է կիրառվող պայմանագրով կամ այլ միջազգային-իրավական պարտավորություններով, ապա դրույթների գործողությունը վաղեմության ժամկետի մատուցված է տարածվի ստորոտ իրավունքների միջազգային նորմերի և միջազգային մարդասիրական իրավունքի լուրջ խախտումների վրա, որոնք, համաձայն միջազգային իրավունքի, հանդիսանում են հանցագործություններ» (կետ 6): Ներկայիս Աղբրեջանի Աղբ. ԽՍՀ-ի նկատմամբ անիրավահարգությանը ԱԿ-ի իշխանությունների կողմից հնարավոր վկայակոչման կապակցությամբ, անհրաժեշտ է նշել Մարդու իրավունքների հարցերով ՄԱԿ-ի Հանձնաժողովի դիրքորոշումը, որն արտահայտված է Պ-Ս. Պինդյուսի վերոնշյալ զեկույցում. «Պետությունները ապահովում են իրենց նախկին աները, հողերը կամ բնակության վայրերը կամավոր վերադառնալու ցանկացող փոխատականների և տեղաշարժի ենթարկված անձանց համար հնարավորություն դա անելու համար: Այդպիսի իրավունքը չի կարող նվազեցվել պետական իրավահարգողության պայմաններում և չի կարող ենթարկվել կամայական կամ անօրինական սահմանափակումների» (կետ 10.2):

կամ անուղղակի առավելությունների հաստատում, ինչպես նաև ...ազգային բացառիկության, թշնամանքի կամ արհամարհանքի ...ցանկացած քարոզումը պատժվում է օրենքով» (հոդված 36-րդ): Խորհրդային օրենսդրության համաձայն, ազգային և ռասայական իրավահավասարության խախտումը հանցագործություն է, որը նախատեսված էր «Պետական հանցագործությունների համար քրեական պատասխանատվության մասին» 1958թ-ի ԽՍՀՄ-ի օրենքի 11-րդ հոդվածով (ԽՍՀՄ-ի Գերագույն խորհրդի Նախագահության 1989թ. ապրիլի 8-ի որոշման խմբագրությամբ)⁷⁸:

ԽՍՀՄ-ի 1977թ. Սահմանադրությամբ ԽՍՀՄ-ի քաղաքացիների անձնական սեփականության մեջ կարող էին գտնվել «ամենօրյա, անձնական գործածության, հարմարության և օժանդակ տնային տնտեսության առարկաներ, բնակելի տուն և աշխատանքային խնայողություններ» (հոդված 13-րդ): Միևնույն հոդվածը ամրագրում էր նաև, որ «Քաղաքացիների անձնական սեփականությունը և այն ժառանգելու իրավունքը պաշտպանվում է պետության կողմից»: Հաշվի առնելով այն, որ 1977թ. Սահմանադրության համաձայն հողը գտնվում էր պետության բացառիկ սեփականության մեջ (հոդված 11-րդ), հոդված 13-րդը նախատեսում էր. «Քաղաքացիների օգտագործման տակ կարող են գտնվել օրենքով սահմանված կարգով տրամադրված հողեր՝ օժանդակ տնտեսություն (ներառյալ անասուն և թռչուն պահելու համար), այգեգործություն և բանջարաբուծություն վարելու, ինչպես նաև անհատական բնակարանային շինարարության համար: Քաղաքացիները պարտավոր են նպատակահարմար կերպով օգտագործել

⁷⁸ Օրենքի դրույթները ամրագրված էին ՌԽՖՍՀ-ի ԲՕ 74-րդ հոդվածով: Խորհրդային օրենսդիրը տարբերակում էր ազգային և ռասայական իրավահավասարության խախտման պատասխանատվությունը՝ կախված նախատեսված որակավորող հատկանիշների առկայությունից: Առավել բարձր պատասխանատվություն էր սահմանվում, եթե նշված գործողությունները ուղեկցվել են բռնությամբ կամ սպառնալիքներով, ինչպես նաև եթե կատարվում են պաշտոնատար անձի կողմից (հոդված 74, մաս 2), ինչպես նաև այն դեպքում, եթե դրանք կատարվել են մարդկանց խմբի կողմից կամ եթե հանգեցրել են մարդկային զոհերի կամ այլ ծանր հետևանքների (հոդված 74, մաս 3, ՌԽՖՍՀ ԲՕ):

իրենց տրամադրված հողակտորները: Պետությանը և կոլտնտեսությունները համակողմանի աջակցություն են ցուցաբերում քաղաքացիներին օժանդակ տնտեսություն վարելու հարցում»:

ԽՍՀՄ-ի քաղաքացիները անձնական սեփականության իրավունքներով կարող էին ունենալ բնակարաններ պետական և հասարակական բնակարանային ֆոնդի շենքերում («Քաղաքացիներին անձնական սեփականությամբ բնակարանների վաճառքի և դրանց պահպանման և վերանորոգման մասին որոշումը» հաստատվել է ՌԽՖՍՀ-ի Մյնիստրների խորհրդի կողմից, 1989թ. ապրիլի 21-ին): Չեռք բերված բնակարանի նկատմամբ սեփականության իրավունքը առաջանում էր առք ու վաճառքի պայմանագրի գրանցման պահից սկսած (ՌԽՖՍՀ-ի քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հոդված):

ԽՍՀՄ-ի Սահմանադրությունն ամրագրում էր ԽՍՀՄ-ի քաղաքացիների բնակարանի իրավունքը. «Այդ իրավունքը ապահովվում է պետական և հասարակական բնակարանային ֆոնդի զարգացմամբ և պահպանությամբ, կոոպերատիվ և անհատական բնակարանային շինարարությամբ, հանրային վերահսկողության ներքո բնակելի տարածքի արդար բաշխմամբ, որը տրամադրվում է բարեկարգ բնակարանների շինարարության ծրագրի իրականացման շափով...» (հոդված 44-րդ): ԽՍՀՄ-ի 1977թ. Սահմանադրության 55-րդ հոդվածը ԽՍՀՄ-ի քաղաքացիների համար երաշխավորում էր բնակարանի անձեռնմխելիություն. «Ոչ ոք իրավունք չունի, առանց օրինական հիմքերի, մտնելու բնակարան՝ այնտեղ բնակվող անձանց կամքին հակառակ»: Բնակարանի տակ հասկացվում էր ոչ միայն քաղաքացիների կողմից վարձվող կամ անձնական սեփականության իրավունքով նրանց սլատկանոց բնակատեղին, այլ նաև քաղաքացիների անձնական կյանքի ոլորտի հետ կապված օժանդակ շինությունները: Խորհրդային օրենսդրությունը տվել է այն անձանց սպառիչ ցանկը, որոնք իրավունք ունեն մտնել քաղաքացիների բնակարանները, որից նրանք կարող են օգտվել օրենքով իրենց ուղղակի նշանակմա-

նր համապատասխան հաստատված սահմաններում և նպատակներով: Քաղաքացիների բնակարանի անձեռնմխելիության իրավունքի խախտման համար սահմանված էր քրեական պատասխանատվություն (ՔՕ 136-րդ հոդված):

Խորհրդային օրենսդրությանը հայտնի էր նաև «վտարում» հասկացությունը՝ օրենսդրությամբ սահմանված կիմքով և կարգով բնակելի տարածքից օգտվելու իրավունքի հարկադիր զրկում: Ոչ ոք չէր կարող վտարվել զբաղեցրած բնակելի տարածքից առանց օրենքով նախատեսված հիմքերի և կարգի (Բնակարանային օրենսգրքի 10-րդ հոդված): Եթե, նույնիսկ, անձը հարկադիր վտարվում էր օրինական հիմքերով, ապա Բնակարանային օրենսգրքը վտարումը հնարավոր դարձնող կանխապայմաններ էր դնում և պաշտպանում էր վտարվողների բնակարանային իրավունքները, այն 1. վտարումից հետո տրամադրվող բնակելի շինությունը պետք է բարեկարգ լիներ տվյալ բնակավայրի պետական և հանրային բնակարանային ֆոնդի տների բարեկարգվածությանը համահավասար, եթե վարձկալը առանձին բնակարան էր զբաղեցնում, ապա անհրաժեշտ էր նրան նույնպես տրամադրել առանձին բնակարան, նոր բնակելի տարածքն իր չափերով չէր կարող ավելի փոքր լինել քան այն բնակարանը, որ մինչ այդ զբաղեցնում էր վարձակալը, լրացուցիչ բնակնակերտար ներառյալ, եթե նա դրա իրավունքն ունեցել է, պետք է հաշվի առնվելին ընտանիքի ուշադրության արժանի շահերը (Բնակարանային օրենսգրքի 41-րդ հոդված):

Խորհրդային օրենսդրությունը նախատեսում էր նաև «տարածքների ինքնական զբաղեցման» հնարավոր իրավիճակ, որի տակ հասկացվում էր պետական և հանրային բնակարանային ֆոնդի կառույցներում բնակելի տարածքների բնակեցում առանց սահմանված կարգով այն տրամադրելու և դրա վերաբերյալ համապատասխան պայմանագրի կնքման: Տարածքների ինքնական զբաղեցման սլարտադիր իրավաբանական հատկանիշ էր հանդիսանում միաժամանակ և՛ շինությունների բնակեցումը առանց օրդերի, և՛ առանց վարձակալության մասին պայմանագրի կնքման բնակեցումը: Եթե շի-

նությունը բնակեցվում էր առանց օրդերի, սակայն պաշտոնատար անձի թույլտվությամբ, ապա համարվում էր, որ այն զբաղեցվել է վարձակալման անվավեր պայմանագրով՝ կնքված այդ պաշտոնատար անձի կողմից շինությունը զբաղեցրած քաղաքացու հետ: Բնակելի շինության վարձակալման անվավեր պայմանագրով բնակելի տարածքը զբաղեցնելու դեպքում պետք է վտարում իրականացվեր՝ առանց դատական կարգով այլ բնակելի տարածք տրամադրելու (ԽՍՀՄ-ի Գերագույն Դատարանի Լիազումար Պլենումի 1987թ. ապրիլի 3-ի «Դատարանների կողմից բնակարանային օրենսգրքի կիրառման պրակտիկայի մասին» որոշում): Եթե տեղի էր ունենում շինության ակնհայտ ինքնակամ բնակեցում (նույնիսկ առանց վարձակալման մասին անվավեր պայմանագրի), ապա վտարումը պետք է իրականացվեր դատախազի թույլտվությամբ՝ վարչարարական կարգով:

Խորհրդային օրենսդրության կողմից «վերաբնակեցում» հասկացությունը այդ պահին ընկալվում էր հետևյալ կերպ՝ բնական ռեսուրսների յուրացման համար սակավ բնակեցված շրջանները բնակեցնելու նպատակով դեպի բնակավայրեր բնակչության տեղաշարժ երկրի ներսում: Տեղաշարժվողներին տրամադրվում էին արտոնություններ և առավելություններ, վճարվում էր նրանց և նրանց ընտանիքների անդամների ուղեվարձը, գույքի տեղափոխումը, նրանց տրվում էր երաշխիքային գումարներ: Բնակեցման վայրերում վերաբնակեցվածները որոշակի ժամկետով ազատվում էին գյուղատնտեսական հարկից, քաղաքային տիպի ավաններում բնակչությունից գյուղատնտեսական գործունեությունից ստացած եկամուտների եկամտահարկից, նրանց հատկացվում էր բնակարան, արտոնային պայմաններով վարկեր և այլ առավելություններ: Աշխատանքային ռեսուրսների պլանային վերաբաշխման կարգով այլ տեղանք տեղափոխվելու դեպքում, մարդկանց և իրենց ընտանիքների անդամներին, պարտադիր կարգով պետք է տրամադրվեր բնակարան՝ համաձայն աշխատանքային պայմանագրի պայմանների:

Այն ժամանակի օրենսդրության համաձայն, բնակելի տարածքը տրամադրվում էր յուրաքանչյուր անձի հաշվարկով՝ բնակելի մակերեսի հանրապետական նորմի սահմաններում, բայց ոչ պակաս, քան սահմանված պարտադիր նվազագույնը (օրինակ, ՌԽՖՍՀ-ում տվյալ նորմերը սահմանված էին «Բնակարանային պայմանների բարելավման և բնակարանային տարածքների տրամադրման կարիք ունեցող քաղաքացիների հաշվառման կանոններով»): Այն ժամանակի բնակարանային նորմերը, դրանք օրենսդրությամբ հաստատված քաղաքացիների կողմից բնակտարածքի օգտագործման հաշվարկային քանակական նորմատիվներն էին: Բնակարանային նորմը սահմանվում էր հանրապետական օրենքով (Բնակարանային օրենսգրքի 38-րդ հոդված), որը, սակայն, մեկ անձի հաշվարկով չէր կարող լինել պակաս՝ քան 9 մ² բնակելի տարածք⁷⁹: Բնակտարածքի նորմը կիրառվում էր պետական և հանրային շենքերի բնակարանային ֆոնդի նկատմամբ տրամադրվող բնակելի տարածքի առավելագույն չափը որոշելու, այլ քաղաքացիներին (ընտանիքի այլ անդամներին) բնակեցնելու, բնակարանային վարձի հաշվարկման և այլնի ժամանակ:

Այն ժամանակաշրջանի խորհրդային օրենսդրությունը չէր օգտագործում «փախստական» կամ «բռնի տեղահանված» («ներքին տեղաշարժի ենթարկված անձ») հասկացությունները, այդ պատճառով վերը դիտարկված յուսվածական նորմերը նշվեցին ելնելով նրանց՝ Ադրբ. ԽՍՀ-ի հայ ազգաբնակչության աղետալի վիճակի հետ ունեցած հարաբերակցությունից, ազգաբնակչության, որն իր խորհրդային քաղաքացիական պատկանելության հանրապետությունից չստացավ ո՛չ անմիջական պաշտպանություն վտարման ժամանակ, ոչ էլ դրան հաջորդող ժամանակաշրջանում՝ հնարավոր վերադարձի երաշխիք, փոխհատուցում՝ կորցրած գույքի, ֆիզիկական վնասի և բարոյական կորստի համար: Սահմանադրական և քրեական

⁷⁹ Բնակտարածքային ամենամեծ չափը ՌԽՖՍՀ-ում էր՝ 13,65մ², 9-ը հանրապետություններում (ՌԽՖՍՀ, ԲԽՍՀ և այլն)՝ 12 մ², ՀԽՍՀ-ում՝ 9 մ²:

օրենսդրության համամիութենական պաշտպանական նորմե-
րը (ԽՍՀՄ-ի քաղաքացիների իրավահավասարությունը, քրե-
ական պատժամիջոցները ԽՍՀՄ-ի քաղաքացիների իրավա-
հավասարությունը խախտելու համար և այլն), իրավահաս-
տատող (բնակարանային օրենսդրություն, սոցիալական
օրենսդրություն) և իրավաերաշխավորող (ապօրինի վտարու-
մից պաշտպանություն, բնակարանների ինքնական զբաղեց-
ման համար պատժամիջոցներ, պաշտոնատար անձանց գոր-
ծողությունների և անգործության վիճարկում և այլն) նորմերը
անմիջական հարաբերություն ունեն այն ժամանակ Ադրբ.
ԽՍՀ-ի հայ ազգաբնակչության խախտված իրավունքների
հետ: Խախտումները համալիր բնույթ էին կրում և չէին սահ-
մանափակվում միայն սոցիալ-տնտեսական ասպեկտներով:
Վերջիններս հետևանք էին անհամեմատ առավել ծանր, դա-
վադիր բնույթի խախտումների՝ սեփական խաղաղ քաղաքա-
ցիական բնակչության վրա զանգվածային, կատարյալ բռնի
բնույթի հարձակումներ իրականացնելու ձևով: Տվյալ հարձա-
կումների նպատակն էր, որպես գերագույն խնդիր, Ադրբ.
ԽՍՀ-ի հայ ազգաբնակչության ոչնչացումը, որպես նվազա-
գույն՝ նշված բնակչության լիակատար վտարումը (ալտա-
բատը) Ադրբ. ԽՍՀ-ի տարածքներից: Հետևաբար, Ադրբ.
ԽՍՀ-ի հայերի անձնական, քաղաքական և սոցիալ-տնտեսա-
կան իրավունքների և ազատությունների ողջ համալիրը բանդ-
վեց Ադրբ. ԽՍՀ-ի սահմաններում և, համապատասխանաբար,
պետք է վերականգնվեր այն ժամանակ դեռևս գոյություն ունե-
ցող ԽՍՀՄ-ի միութենական այլ հանրապետությունների տա-
րածքներում: Նախկին Ադրբ. ԽՍՀ-ի տարածքից վտարված
հայազգի բոլոր անձանց թվից (անձինք, որոնք ստիպված լքել
են այն տարածքները, որոնք այժմ գտնվում են ԱՀ-ի ինքնիշ-
խանության ներքո) որոշակի մասը ստացել է իր օրինական
կարգավիճակը նախկին ԽՍՀՄ-ի նոր անկախ հանրապե-
տությունների քաղաքացիության տեսքով կամ ձևակերպել է
իր իրավական կարգավիճակը քաղաքացիության ձևով՝ ԱՊՀ-
ի շրջանակներից դուրս: Սակայն, տվյալ խմբի ազգաբնակչու-
թյան անհամեմատ մեծ մասը ներկայացնում են կամ ժամա-

նակավոր կարգավիճակով (օրինակ՝ փախստական) կամ
փաստացի որևէ կարգավիճակ չունեցող անձինք, ինչը իրա-
վաբանորեն թույլ չի տալիս նրանց դնել համեմատաբար հաս-
տատուն և կայուն կապի մեջ որոշակի պետության հետ
(նրանք հանդիսանում են ապատրիդներ՝ քաղաքացիություն
չունեցող անձինք): Տվյալ խմբի անձանց մեծ մասը, գտնվելով
սնորոշ իրավաքաղաքական վիճակում, իրենց վրա զգում են
այսպիսի իրավական «առկախ» վիճակի փաստացի
հետևանքները: Տվյալ խմբի անձանց վերադարձը նախկին
Ադրբ. ԽՍՀ-ի տարածքները, որտեղ ներկայումս իրականաց-
վում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետաիրա-
վական ինքնիշխանությունը (այդտեղ գործում է ԼՂՀ քաղա-
քական իշխանությունը և դրա հիմքում առկա՝ ԼՂՀ-ի օրենսդ-
րությունը), հանդիսանում է նրանց խախտված իրավունքների
վերականգնման և նրանց անորոշ իրավաքաղաքական կար-
գավիճակի հարթահարման թերևս միակ հնարավոր ճանա-
պարհը: ԱՀ-ի պատասխանատվությունը չի հանվում օրակար-
գից: Տվյալ պատասխանատվությունը, առնվազն, ենթադրում է
վտարված անձանց նկատմամբ վտարման պահին իրակա-
նացված հանցավոր գործողություններով պատճառած վնասի
փոխհատուցում: Անձի նկատմամբ զանգվածային և լայնա-
ժամկետ (ջարդարարական) ամենաժանր բնույթի հանցագոր-
ծությունները (սպանություններ, առողջությանը վնասի պատ-
ճառում, առևանգում և այլն) կատարվել են այն տարածքների
վրա, որոնց վրա ներկայումս իրականացվում է ԱՀ-ի պետաի-
րավական ինքնիշխանությունը: Սեփական քաղաքացիների
լիակատար բռնի վտարման հատևանքը եղավ նրանց կողմից
տվյալ տարածքներում ապրած և աշխատած ու տարիների
ներսցքում բազմաթիվ սերունդների կողմից կուտակած բան-
կային ներդրումների, շարժական և, հատկապես, անշարժ
գույքի կորուստը:

Պետության պատասխանատվությունը, իր տարածքում,
առնվազն, իր թողտվությամբ և անգործության հետևանքով
իրականացրած հանցավոր գործողությունների համար հան-
վասանում է իրավունքի ընդհանուր դրույթ բոլոր ժողովրդավար

պետությունների համար, որոնց տարածքներում մարդու իրավունքները և ազատությունները ու իրավական պետության կառուցումը հռչակված են որպես գերակա նպատակ: Անհատի, նրա կյանքի և մարդկային արժանապատվության նկատմամբ հանցավոր ոտնձգությունների, ինչպես նաև պետական մարմինների թողտվության հետևանքով մասնավոր անձանց կողմից, տվյալ մարմինների պաշտոնատար անձանց և, ընդհանուր առմամբ, պետության կողմից՝ վտարված քաղաքացիների թողած գույքի յուրացման համար պետության պատասխանատվությունը պետք է նյութալիանցվի կամ բնական փոխհատուցման (վերադարձ իրենց տները, գույքի վերադարձ) կամ փոխհատուցման վճարման ձևով: Առարկայական փոխհատուցումը, որը ենթադրում է վերադարձ այն վայրերը, որտեղից տեղի է ունեցել վտայումը, պատենցիալ վերադարձողների համար անվտանգության տարրական երաշխիքների բացակայության պատճառով լուրջ քննարկման թեմա չէ, այդ քայլի միանգամայն անիրագործելի լինելու հիմնավորմամբ: Այդ պատճառով, մնում է փոխհատուցել նախկին քաղաքացիների կրած անձնական (քարոյակական) և սոցիալ-տնտեսական վնասները⁸⁰:

Միջազգային նորմերը խախտող-պետության, սեփական քաղաքացիական բնակչության նկատմամբ էթնիկ գտումների

⁸⁰ «Բոլոր փախստականները և տեղաշարժի ենթարկված անձինք իրավունք ունեն հետ ստանալ ցանկացած բնակարան, հող և/կամ գույք, որից նրանք զրկվել են կամայականորեն կամ անօրինական կարգով, կամ ստանալու փոխհատուցում ցանկացած բնակարանի, հողի և/կամ գույքի համար, որոնք փաստացի չեն կարող վերադարձվել՝ համաձայն անկախ, անաչառ սրիքունալի որոշման» և «Պետությունները պետություններին պետք է առաջնային ուշադրություն հատկացնեն ռեստիտուցիայի իրավունքին՝ որպես իրավական պաշտպանության մախապատվելի միջոցի՝ տեղաշարժման դեպքում և որպես արդարության վերականգնման առանցքային տարրերից մեկը: Ռեստիտուցիայի իրավունքը գոյություն ունի որպես առանձին իրավունք և ոչ մի դեպքում չի նսեմացվում փախստականների և տեղաշարժի ենթարկված անձանց, որոնք կարող են հավակնել բնակարանի, հողի կամ գույքի ռեստիտուցիայի, գործնական վերադարձով կամ չվերադարձով» («Պ-Ս. Պիներյուի նշված Վերջնական զեկույցի «Փախստականների և տեղաշարժված անձանց բնակարանի և գույքի ռեստիտուցիայի հարցերով սկզբունքները» հավելվածի կետեր 2.1 և 2.2):

նախաձեռնողի և հովանավորողի համար հայրենիքի կորստի «փոխհատուցումը» (այդ կորուստն ամբողջ ծավալով փոխհատուցելու բուն հնարավորության ողջ պայմանականությամբ հստակեցնել) չի կարող հանգեցվել սոսկ միայն պատճառած ֆիզիկական վնասի և կորսված գույքի փոխհատուցման: «Յեղասպանության համար նյութական պատասխանատվության իրավաբանական իմաստը կայանում է նրանում, որ գոյության համար միջոցների (աշխատանքային գործիքներ, շարժական և անշարժ գույք՝ ներառյալ հողը, բնակարանը և այլն) բռնի գրկելու միջոցով պայմաններ են ստեղծվում մարդկային խմբի քայքայման համար, որը հանդիսանում է ցեղասպանություն հանցագործության օբյեկտիվ կողմի մի մասը (1948թ. Յեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին կոնվենցիայի Հոդված 2-րդ, կետ «գ»)»⁸¹:

Օրինակ, Նախիջևանի և ընդհանուր առմամբ վերցրած Ադրբ. ԽՍՀ-ի տարածքներում ապրող հայ ժողովուրդը, նշված աշխարհագրական տարածքի շրջանակներում, եղել է բնիկ, ավտոխտոն ժողովուրդ: Որպես բնիկ ժողովուրդ, հայերը տվյալ աշխարհագրական տարածքների սահմաններում ունեին հողի իրավունք՝ այդ դրույթի լայն ընկալմամբ: Բացի հողի նյութական (գույքային) տիրապետումից, ցանկացած բնիկ ժողովուրդ հանդիսանում է այդպիսին՝ ըստ նշանակության (այսինքն՝ արմատավորված տվյալ հողի վրա), եթե չի պատկերացնում իր գոյությունը, կենսագործունեությունը և զարգացումը իր արմատավորման տարածքի շրջանակներից դուրս: Պետք է տեղի ունենա իր կամքից անկախ կամ իր կամքին դեմ որևէ մի բան (օրինակ՝ բնական աղետ, ագրեսիայի կամ ցեղասպանության գործողություններ, հետապնդումներ և արտքասում պետության կողմից), որպեսզի մարդը հեռանա այն տարածքից, որն իր ընկալմամբ հանդիսանում է իր հայրենիքը: Տեղաբնիկ ժողովուրդների և անկախ պետություններում ցեղային կենսակերպ վարող ժողովուրդների մասին 1989թ. Կոնվենցիայի համապատասխան (ընդունված ՄԱԿ-ի համա-

⁸¹ Мошенская Н.В., указ. соч.

կարգի մեջ գտնվող Աշխատանքի Միջազգային Կազմակերպության (ԱՄԿ) գլխավոր համաժողովի ժամանակ)⁸² «կառավարությունները հաշվի են առնում համապատասխան ժողովուրդների մշակույթի և հոգևոր արժեքների համար հողերի կամ տարածքների հետ (կամ թե մեկի, թե մյուսի), որոնք նրանք զբաղեցնում են կամ օգտագործում են այլ կերպ, նրանց ունեցած կապի հատուկ կարևորությունը՝ կախված հանգամանքներից և, *հատկապես, այդ կապի կողեկտիվ ասպեկտների կարևորությունը* (ընդգծված է հեղինակների կողմից)» (Հոդված 13): Կոնվենցիան ամբազրում է, որ. «1. ...Համապատասխան ժողովուրդները չեն վտարվում իրենց կողմից զբաղեցրած հողերից: 2. Եթե նշված ժողովուրդների վերաբնակեցումը, որպես բացառիկ միջոց, համարվում է անհրաժեշտ, ապա այդպիսի վերաբնակեցումը կարող է տեղի ունենալ միայն նրանց ազատ և գիտակից համաձայնության առկայության դեպքում...: 3. Հնարավորության առկայության դեպքում նշված ժողովուրդները իրավունք են ստանում վերադառնալ իրենց ավանդական հողերը՝ վերաբնակեցում առաջացրած հիմքերի գործողության դադարեցմամբ: 4. Երբ այդպիսի վերադարձն անհնար է, ինչը սահմանվում է երկու կողմերի համաձայնությամբ, կամ այդպիսի համաձայնության բացակայության դեպքում, համապատասխան գործառույթների միջոցով, նշված ժողովուրդներին բոլոր հնարավոր դեպքերում տրամադրվում են հողեր, որոնք իրենց որակով և իրավական վիճակով առնվազն համագոր են նրանց կողմից նախկինում զբաղեցրած հողերին և քավարար են նրանց ներկայիս կարիքները քավարարելու և նրանց հետագա զարգացման համար: Այն դեպքերում, երբ համապատասխան ժողովուրդները գերադասում են փոխհա-

⁸² «Սույն Կոնվենցիան տարածվում է, բ) անկախ պետություններում ապրող ժողովուրդների վրա, որոնք դիտարկվում են որպես տեղաբնիկ այն նկատառումներից ելնելով, որ նրանք համդասանում են նրանց ժառանգները, ովքեր բնակում էին երկրում կամ աշխարհագրական մարզում, որի մի մասն է հանդիսանում տվյալ երկիրը նրա զավթման կամ գաղութացման կամ գոյություն ունեցող պետական սահմանների հաստատման շրջանում և որոնք, անկախ իրենց իրավական վիճակից, պահպանում են իրենց որոշ կամ բոլոր սոցիալական, տնտեսական, մշակութային և քաղաքական ինստիտուտները» (Կոնվենցիա, հոդված 1):

տուցում ստանալ դրամական կամ բնական արտահայտմամբ, ապա նրանք այդպիսի փոխհատուցում ստանում են համաձայն համապատասխան երաշխիքների: 5. Նման կերպ վարաբնակեցված անձինք ստանում են լրիվ փոխհատուցում դրա հետ կապված ցանկացած կրած վնասի կամ կորստի համար» (Հոդված 16):

1989թ. ԱՄԿ-ի Կոնվենցիայում խոսվում է կամավոր կամ բացառիկ բնույթ կրող վերաբնակեցման մասին և ցանկացած դեպքում հաշվի են առնվում վերաբնակեցվող բնիկ ժողովրդի շահերը: Ադրբ. ԽՍՀ-ի հայ ժողովուրդը ենթարկվել է էթնիկ զտումների, որոնց նպատակը եղել է բնիկ ժողովրդի փակատար ֆիզիկական վերացումը իր կողմից պատմականորեն զբաղեցրած հողերում: ԱՄԿ-ի Կոնվենցիան բնիկ ժողովրդին պատկանող և այլ տարածքներ վերաբնակեցվող կոնկրետ անձանց հայեցողությանն է թողնում հնարավորությունը՝ կամ տոանալու լրիվ փոխհատուցում, կամ հասնելու իրենց «առարկայական ձևով» իրավունքի վերականգնմանը, ինչոր նախատեսում է վերադարձ իրենց պատմական բնակության տարածքները, որոնք մի ժամանակ գտնվել են նրանց վերաբնակեցումը նախաձեռնող-պետության սահմաններում: Կոնվենցիան առանձնահատուկ ընդգծում է, որ ժողովրդին պետք է տրամադրվեն հողեր, որոնք «իրենց որակով և իրավական վիճակով առնվազն համագոր պետք է լինեն մինչ այդ նրանց կողմից զբաղեցրած հողերին և քավարար՝ նրանց մշտական կարիքների և հետագա զարգացման համար»:

ԽՍՀՄ 1977թ. Սահմանադրության մեջ ամբազրված է հողի բացառիկ պետական սեփականությունը և, դրա հետ մեկտեղ, հռչակվում էր, որ «Պետական սեփականությունը դա ողջ խորհրդային ժողովրդի ընդհանուր սեփականությունն է» (Հոդված 11): Սրա վրա հիմնվելով, կարելի է եզրակացնել, որ խորհրդային հանրապետության հողի նկատմամբ՝ որպես սեփականության օբյեկտի, խորհրդային ժամանակաշրջանում Ադրբ. ԽՍՀ-ի տարածքից հայերի փակատար վտարման պահին, որի վրա հետագայում ձևավորվեց ԱՀ-ն, գործում էր Ադրբ. ԽՍՀ «ողջ խորհրդային ժողովրդի» ընդհանուր համա-

տեղ սեփականության ռեժիմը: «Համատեղ սեփականությունն՝ ի տարբերություն մասնայինի, չունի նախօրոք սահմանված մասեր, դրանք սահմանվում են միայն համատեղ սեփականության բաժանման կամ մասնահանման ժամանակ: Բաժնեմասերը ճանաչվում են հավասար, եթե օրենքով կամ համասեփականատերերի փոխադարձ համաձայնությամբ այլ բան չի նախատեսված»: Համատեղ սեփականության բաժանման կամ դրանից մասնահանման հիմքերը և կարգը սահմանվում են միևնույն կանոններով, ինչպես մասնային սեփականության դեպքում, քանի որ այլ բան չի նախատեսված օրենքով կամ չի բխում համատեղ սեփականության մասնակիցների հարաբերությունների էությունից»⁸³:

Նախկին Ադրբ. ԽՍՀ-ի հայ ժողովուրդը ենթարկվել է ցեղասպանության և էթնիկ գտումների, որի հետևանքները սոցիալ-տնտեսական տեսանկյունից հանդիսացան մշտական բնակչության վայրի և աշխատանքի, շարժական ու անշարժ գույքի կորուստը, այլ գրկանքներ և անհարմարություններ՝ կապված բռնի վերաբնակեցման հետ, իսկ ընդհանուր առմամբ վերցրած, անձի և ժողովրդի առավել լայն և կենսականորեն առավել կարևոր շահերի տեսանկյունից՝ Հայրենիքի կորուստը: Վերոնշյալն անհրաժեշտաբար բերում է սեփական հայրենիքը կորցրած և նրանից բռնի կերպով գրկված անձանց իրավունքների, առկա հնարավորությունների առավելագույնի չափով լիակատար վերականգնման համապատասխան խնդրին: Հաշվի առնելով «խորհրդային ժողովրդի ընդհանուր սեփականության» և «ընդհանուր համատեղ սեփականության» վերոհիշյալ սկզբունքները՝ սեփական Հայրենիքը կորցրած Ադրբ. ԽՍՀ-ի հայ ժողովրդի համարժեք և լիակատար փոխհատուցման համար որպես հիմք կարելի է ընդունել հետևյալ ընդհանուր սխեման: Հայրենիքի հետ առավելագույն կապը և՛ սոցիալմշակութային և՛ տնտեսական տեսանկյունից նույնացվում է հողի հետ: Ադրբեջանի բնիկ հայ ժողովրդին

⁸³ Гражданское прав / Под. ред. Сергеева А.П., Толстого Ю.К., ч. 1, М., 1998, с. 452.

պետք է հողեր տրամադրվեն այն տարածքներում, որոնք գտնվում էին այն պետական կազմավորման սահմաններում, որտեղից տեղի է ունեցել բռնի տեղահանումը: Հաշվի առնելով անվտանգության և ագրեսիայի կրկնությունը կանխարգելման անհրաժեշտության, ոչ անկախալային կենսագործունեության և զարգացման, ներկայիս իրավաբաղադրական իրողության գործոնները, իրողություն, որն արդեն բավականին տևական է, Դաշտային Ղարաբաղի տարածքների վրա ԼՂՀ-ի արդյունավետ վերահսկողության և այնտեղ ԼՂՀ-ի պետաիրավական ինքնիշխանության գործողության ձևով, կորցրածին համարժեք և փոխհատուցման բնույթ կրող հողերի տրամադրումը պետք է հիմնավորված լինի հետևյալ ընդհանուր-համամասնական մոտեցմամբ:

Նախկին Ադրբ. ԽՍՀ-ի տարածքը հավասար էր 86.6 հազար կմ²: Ադրբ. ԽՍՀ-ի բնակչությունը (1989թ. համամիութենական մարդահամարի տվյալներով) կազմում էր 7029 հազար մարդ⁸⁴, ընդ որում տվյալ միութենական հանրապետության հայ ազգաբնակչության թվաքանակը պաշտոնապես կազմում էր 360 հազար մարդ (առանց ԼՂԻՄ-ի հայ ազգաբնակչության, որը կազմում էր 145 հազար մարդ), այսինքն՝ Ադրբ. ԽՍՀ-ի ողջ բնակչության ավելի քան 5%-ը: Միաժամանակ, անհրաժեշտ է նշել, որ նախկին Ադրբ. ԽՍՀ-ի տարածքում ապրող հայ ազգաբնակչության թվաքանակը (ԼՂԻՄ-ի սահմաններից դուրս) իրականում շատ ավելի մեծ էր և հասնում էր ոչ պակաս, քան կես միլիոնի: Խրհրդային Ադրբեջանի իշխանությունների կողմից այդ հանրապետությունում ազգային փոքրամասնությունների թվաքանակի միտումնավոր նվազեցումից և բաց նենգափոխումներից բացի, թվաքանակի այդպիսի տարբերությունը բացատրվում էր նաև նրանով, որ այդ մարդկանց որոշակի մասը (հատկապես Բաքվում և այլ խոշոր քաղաքներում ապրողները), այդ թվում նաև խառը ամուսնություններում գտնվող անձինք, 1989թ. մայրաքաղաքի ժամանակ արդեն չէին նշում իրենց բնիկ էթնիկական ծագումը (ինչը, այ-

⁸⁴ Правда, № 119 (25837), 29.04.1989.

նուհանդերձ նրանց չվրկեց արտաքսումից): Դա հաստատվում է նաև արևմտյան հեղինակավոր փորձագետների կողմից բերված տվյալներով: Նրանք, մասնավորապես, նշում են, որ Ադրբ. ԽՍՀ-ի հայ ազգաբնակչությունը 1980-ական թվականների վերջին կազմում էր շուրջ 500 հազար մարդ (առանց նախկին ԼՂԽՄ-ի ազգաբնակչության), իսկ Ադրբեջանից հայ վախճառականների քանակությունը, նրանք մարդասիրական ակտի հետևանքով ապաստարան գտան Հայաստանի Հանրապետությունում. 1990-ական թվականների կեսերին կազմում էր մոտավորապես 350-400 հազար մարդ: Ադրբեջանի կողմից իրականացրած Լթնիկ գոտումների և Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի դեմ ռազմական ագրեսիայի հետևանքով առաջագամ մարդասիրական ակտի ուղջ մաշտաբները հասկանալու համար այդ թվերին հարկավոր է ավելացնել նաև ռազմական գործողություններից ստեղծված Այրբեջանի հետ Հայաստանի Հանրապետության սահմանամերձ շրջանների շուրջ 77 հազար ՆՏԱ-ին (ներքին տեղաշարժված անձանց), ինչպես նաև 15-20 հազար ՆՏԱ-ին՝ ԱՀ-ի կողմից գրավված ԼՂՀ-ի շրջաններից⁸⁵:

Համամասնական հարաբերակցությամբ համեմատելով Ադրբ. ԽՍՀ-ի 1989թ. տարածքային և ազգային-ժողովրդագրական ցուցանիշները (թեև, անհրաժեշտ է ընդգծել, որ 1989թ. վերջին Մյուրենական մարդասիանարի պահին արդեն Ադրբ. ԽՍՀ-ի շատ շրջաններում սկսվել էր «խայկական տարրի վերացման» գործընթացը, որն արտահայտվում էր հայկական ազգային պատկանելություն ունեցող անձանց համար քողարկված կերպով կյանքի անտանելի պայմաններ ստեղծելով, ինչը հանգեցրեց միութենական հանրապետությունից հայերի պարտադրված ելքի սկզբին)⁸⁶, ստացվում է, որ 1989-

1990թթ. ԼՂԽՄ-ի սահմաններից դուրս պաշտոնապես բնակվող 500 հազար հայեր կարող էին հավակնել այդ նախկին խորհրդային հանրապետության առնվազն 6,15 հազար կմ² տարածքին: Հետևաբար, խոսքը գնում է մի տարածքի մասին, որն իր չափերով գերազանցում է այն տարածքին, որը 1989 թվականի դրությամբ զբաղեցնում էր ԼՂԽՄ-ը (4,4 հազար կմ²) իր շինձու սահմաններում: Սակայն, նշված թիվը դուրս է բերված Ադրբ. ԽՍՀ-ի հայ ազգաբնակչության իր պատմական բնակության տարածքի վրա հողային բաժնեմասի բնդիանոյր սահմանման ճանապարհով, սակայն չի բնդրվում վարված բաղաբացիների կորսված գույքի փոխհատուցողական բնույթի լրացուցիչ բաժնեմասը: Մյուսմասնակ ակնհայտ է, որ նախկին ԼՂԽՄ-ի տարածքը (4,4 հազար կմ²), ինչպես նաև Նախիջևանի Էմքնավար Հանրապետության տարածքը (5,5 հազար կմ² մակերեսով, որը չի կարող համարվել Ադրբեջանական Հանրապետության տարածք և, փոխուպի, ենթամանդատային տարածք է հանդիսանում)⁸⁷ հաշվարկի ժամանակ չպետք է նույնացվի և չի կարող ներառվել նախկին Ադրբ. ԽՍՀ-ի վերոնշյալ այն բնդիանոյր տարածքի մեջ, որից պետք է արամստորվի Լթնիկ գոտումների ենթարկված Ադրբ. ԽՍՀ-ի հայ ժողովրդին: Այսպիսով, նախկին Ադրբ. ԽՍՀ-ի արտաքսված հայ ազգաբնակչության հողային բաժնեմասի հաշվարկ-

գայիքում, Կիրովոպոլում և այլ բնակավայրերում), այնուհից անբնդիանո փոխտեղափոխների զանգվածային հոսք կը գտնու: 1988թ. նոյեմբերի սկզբին Հայաստան եկան 28 հազար հայեր, 1988թ-ի նոյեմբերի 22-ից 30-ը Փախստատկանները հարցերով, արդեն, երկրորդ Համամասնական կողմից գրանցվեց ավելի քան 24 հազար մարդ: Փախստականների հարցերով Երևանում 1989թ. հոկտեմբերի սկզբին տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ բերվեցին տվյալներ ույն մասին, որ 1988թ. վերոնշյալից սկսած Ադրբեջանից Հայաստան եկել է 215 հազար մարդ, Լեռնային Ղարաբաղ՝ 24 հազար, Մոսկվա է մեկնել՝ 5290 մարդ, այլ շրջաններ, գլխավորապես Հյուսիսային Կովկաս՝ 25 հազար մարդ. Տե՛ս մանրամասները՝ *Եր-Տարկեսյու Ա. Вынужденные миграции армян: причины и проблемы адаптации // Армянский вестник. Общественно-политический журнал. № 1-2, М., 2001. с. 79:*

⁸⁷ Տե՛ս մանրամասները՝ *Եր-Տարկեսյու Ա. Вынужденные миграции армян: причины и проблемы адаптации // Армянский вестник. Общественно-политический журнал. № 1-2, М., 2001, с. 79:*

⁸⁵ *MacFarlane N.S. Minear L. Humanitarian Action and Politics: The Case of Nagorno-Karabakh/The Watson Jr. Institute for International Studies, Brown University. Occasional Paper №25. Providence, 1997. P.20, 37-40.*

⁸⁶ Ադրբեջանում հայերի զրադարող հալածանքների և հետապնդումների կապակցությամբ (հեռացումներ աշխատանքից, բնակարանների բալան, ողորակի սպառնալիքներ, իսկ այնուհետև՝ բարբարոսական բռնի գործողություններ Սում-

ները պետք է հիմնվեն ոչ թե ներկայիս գոյություն ունեցող միջազգային իրավունքի օրինական շրջանակներում փաստացի և բացարձակ կերպով ԱՀ-ին բաժին ընկնող նրա տարածքային մակերեսի թվի վրա (86,6 հազար կմ²-ը դա միայն և միայն նախկին Ադրբ. ԽՍՀ-ի տարածքի մակերեսն է), այլ այն թվի, որը հաշվի է առնում ներկայիս ԱՀ-ի կողմից նախկին Ադրբ. ԽՍՀ-ի տարածքին հավակնելու իրավաբանական անհնարինության իրողությունը (Ադրբ. ԽՍՀ-ի տարածքը՝ ՆԻՀ-ի և ԼՂԻՄ-ի տարածքները հաճած՝ կազմում է 76,7 հազար կմ²):

Ադրբեջանական ԽՍՀ-ի տարածքի մակերեսը հավասար էր 86,6 հազար կմ²: Ներկայումս, պաշտոնական Բաքուն բոլոր տեղեկատու հրատարակություններում նույնպես, նրպես իր տարածքի չափ, նշում է այս թիվը: Տվյալ թիվը հաշվի չի առնում Կասպից ծովի տարածքային բաժանման առումով կատարված այն փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել ԽՍՀՄ-ի փլուզումից հետո: Ադրբեջանը Կասպից ծովի սեկտորալ բաժանման սկզբունքի կիրառման կողմնակիցն է: Դա նշանակում է այդ երկրի տարածքի փաստացի մեծացում 74571 հազար կմ²-ով և Ադրբ. ԽՍՀ-ի հայ ազգաբնակչությանը բաժին ընկնող տարածքային բաժանման վրա համաստատաբան ավելացում:

Ասվածը վկայում է այն մասին, որ Ադրբեջանի կողմից տվյալ պահին վերահսկվող փաստացի ծովային տարածքը ավելի մեծ է՝ համեմատած խորհրդային ժամանակների հետ, երբ Կասպից ծովը բաժանված էր միջազգային իրավունքի երկու սուբյեկտների՝ ԽՍՀՄ-ի և Իրանի միջև: Այս լրացուցիչ տարածքները պետք է հաշվի առնվեն Ադրբեջանական ԽՍՀ-ից վտարված և տուժած հայերի հողային փոխհատուցումների ընդհանուր հաշվարկները իրականացնելիս: Ավելին, ակնհայտ է, որ տվյալ լրացուցիչ տարածքները ոչ միայն աշխարհագրական տարածքներ են, այլև տարածքներ են, որ հարուստ են բնական տարբեր ռեսուրսներով, առաջին հերթին, նավթի և գազի պաշարներով: Ադրբեջանական Հանրապետության զարգացման ներկայիս բարձր տնտեսական ցուցանիշ-

ները յիովին բիում են հենց այս տարածքներին տիրապետելու փաստից, քանզի դրանց բնական ռեսուրսները շահագործվում են առավելագույն ինտենսիվությամբ: Նրանց նշանակությունը Ադրբեջանի տարածքային ընդհանուր չափի մեջ առավել մեծ է և պետք է գնահատվի մաս Ադրբեջանական ԽՍՀ-ի երկրորդ պետականատեղծ ազգության համար անհրաժեշտ փոխհատուցման բաժնի տեսանկյունից, ազգություն, որի սերունդների ցանքերով հիմնականում հիմնադրվել և արդյունաբերորեն կարգի են գցվել Կասպից ծովի ադրբեջանական հատվածի նավթագազային ռեսուրսները:

Դաշտային Ղարաբաղի տարածքը, որն այժմ գտնվում է ԼՂՀ-ի իրավատիրություն, վերջինիս բարի կամքով կարող է հանդիսանալ իր հայրենիքից վտարված և իր գույքից զրկված Ադրբեջանական ԽՍՀ-ի բնիկ հայ ժողովրդի համար՝ իր իրավունքների վերականգնման հոգևոր (Հայրենիք) և նյութական (գույքային համարժեքը՝ հողի տեսքով) հիմք:

ԱՀ-ում «պետության գեղագույն նպատակ» է հռչակված մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների ապահովումը, ընդ որում «Սահմանադրության մեջ թվարկված մարդու և քաղաքացու իրավունքները ու ազատությունները կիրառվում են համաձայն միջազգային պայմանագրերի՝ որոնց կողմ է հանդիսանում ԱՀ-ն» (ԱՀ Սահմանադրության 12-րդ հոդված): Այնուհետև. «ԱՀ-ում սեփականությունն անձեռնմխելի է և պաշտպանվում է պետության կողմից. սեփականությունը չի կարող օգտագործվել մարդու և քաղաքացու իրավունքները և ազատությունները, հասարակության և պետության շահերը, անձի արժանապատվությունը ռանահարելու համար» (ԱՀ Սահմանադրության 13-րդ հոդված): Համաձայն ԱՀ Սահմանադրության 29-րդ հոդվածի. «Ոչ ոք առանց դատարանի որոշման չի կարող զրկվել սեփականությունից: Գույքի լիակատար առգրավում չի թույլատրվում: Պետական կամ հասարակական կարիքների համար գույքի օտարում կարող է տեղի ունենալ միայն վերջինիս արժեքի նախապես արդարացի փոխհատուցման պայմանով»: Համաձայն 31-րդ հոդվածի. «Յուրաքանչյուրը տիրապետում է անվտանգ բնակվելու իրա-

վունքին: Արգելվում է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի, սահմանափակում կատարել մարդու կյանքի, նրա ֆիզիկական և հոգևոր առողջության, սեփականության, բնակարանի նկատմամբ, սրա հանդեպ բռնություն կիրառել: 32-րդ և 33-րդ հոդվածների համապատասխանաբար ամրագրում են անձնական անձեռնմխելիության և բնակարանի անձեռնմխելիության իրավունքները: 68-րդ հոդվածը նախատեսում է «վնասի փոխհատուցում պահանջելու իրավունքը». «1. Հանցագործությունից, ինչպես նաև իշխանության չարաշահումից տուժած անձի իրավունքը պաշտպանվում է պետության կողմից: Տուժած անձը իրավունք ունի մասնակցելու արդարադատության իրականացմանը և պահանջելու իրեն պատճառած վնասների փոխհատուցում: 2. Յուրաքանչյուր տիրապետում է պետական մարմինների կամ նրանց պաշտոնատար անձանց կողմից իրականացրած գործողությունների արդյունքում կրած վնասի պետության կողմից փոխհատուցման իրավունքին»:

ԱՀ-ի սահմանադրական վերջին պարտավորությունը հիմնվում է միջազգային կոնվենցիայի վրա, որի մասնակիցն է հանդիսանում այս հանրապետությունը: 1983 թվականին Եվրոպայի Խորհրդի շրջանակներում ընդունվեց Ծանր հանցագործությունների գոհեքին փոխհատուցման վճարման մասին կոնվենցիան (տժյ մեջ է մտել 1988թ. փետրվարի 1-ից): ԱՀ-ն վավերացրել է տվյալ կոնվենցիան 2002թ. մարտի 28-ին, որը նրա համար ուժի մեջ է մտել մինևույն տարվա հունիսի 1-ից:

Կոնվենցիայի ներածության մեջ ասվում է, որ «Ելնելով արդարության և հասարակական համերաշխության հասկացություններից, հարկավոր է պիտարկել կանխամտածված բռնի հանցագործությունների գոհեքի վիճակը, որոնք ենթարկվել են իրենց ֆիզիկական վիճակի կամ առողջության նկատմամբ հանցագործի կամ այն անձանց վիճակը, որոնք զանվում էին հանցագործության աբոյունքում զոհվածների խնամակալության տակ», ինչպես նաև «ամենրաժեշտ է մշակել և ներդնել պետության կողմից տուժածներին վնասի փոխհատուցման համակարգ այն տարածքում, որտեղ իրականացվել են այդ հանցագործությունները, հատկապես այն դեպքերում, երբ հանցա-

յունը հայտնի չէ կամ միջոցներ չունի»: Կոնվենցիան նախատեսում է պետության պատասխանատվությունը և այն անձանց սուբյեկտային կազմը, որոնք իրավունք ունեն պետության կողմից վնասի փոխհատուցման. «1. Երբ վնասի փոխհատուցումը չի կարող ապահովվել այլ աղբյուրներից, պետությունը այն պետք է վերցնի իր վրա հետևյալ կատեգորիաների համար. ա) այն անձանց համար, որոնց ֆիզիկական վիճակին կամ առողջությանը կանխամտածված բռնի հանցագործությունների արդյունքում լուրջ վնաս է հասցվել, բ) նրանց համար, որոնք զանվում էին այդպիսի հանցագործության արդյունքում զոհված անձանց խնամակալության տակ: 2. Նախորդ պարբերությամբ նախատեսված վնասի փոխհատուցումը իրականացվում է նույնիսկ այն ժամանակ, երբ հանցագործը չի կարող ենթարկվել դատական հետապնդման կամ պատժվել» (հոդված 2-րդ):

Վնասի փոխհատուցման նվազագույն ձևը և բովանդակությունը Կոնվենցիան մանրամասնում է հետևյալ կերպ. «Կախված դեպքից, փոխհատուցումը պետք է ծածկի, առնվազն, վնասի հետևյալ մասերը՝ աշխատավարձի կորուստը, դեղամիջոցների և հուպիտալացման ծախսերը, քաղման ծախսերը, խնամարկյալների վերաբերող դեպքերում՝ խնամակալության ծախսերը» (հոդված 4-րդ):

Առաջին հայացքից կարող է այնպիսի տպավորություն ստեղծվել, թե Կոնվենցիայի նորմերը ունեն «ներքին կիրառման» բնույթ, սակայն դա այդպես չէ. «Վնասի փոխհատուցումը, որը իրականացվում է այն պետության կողմից, որի տարածքի վրա կատարվել է հանցագործությունը, վճարվում է. ա) Մուլն կոնվենցիայի մասնակից-պետությունների քաղաքացիներին, բ) Եվրոպայի Խորհրդի բոլոր անդամ-պետությունների քաղաքացիներին, որոնք մշտապես բնակվում են այն պետության տարածքում, որտեղ իրականացվել է հանցագործությունը» (հոդված 3-րդ):

Այն մասին, որ Կոնվենցիայի նորմերը կիրառելի են ոչ միայն ներպետական իրավական պրակտիկայում, վկայում է նրա հետևյալ դրույթը. «Երկկողմ կամ բազմակողմ պայմա-

նագրերի և պետությունների միջև փոխօգնության կիրառման դեպքում, Կողմերի իրավասու իշխանությունները պետք է փոխհամաձայնության գան սույն Կոնվենցիայով ընդգրկված ոլորտում առավել հնարավոր լիարժեք համագործակցության մասին: Այդ նպատակով, Կոնվենցիային միացող յուրաքանչ-յուր պետություն նշանակում է կենտրոնական մարմին, որին հանձնարարվում է ընդունել աջակցության հարցապնդումները, դրանց ընթացք տալ և տեղեկացնել այդ մասին Եվրոպայի Խորհրդի Գլխավոր Քարտուղարին» (հոդված 12-րդ):

Չնայած սահմանադրական նորմերի և բազմակողմ բնույթի միջազգային գործող պարտավորությունների առկայության, ԱՀ-ն ԼՂՀ-ի հետ շփումներ հաստատելու ոչ մի քայլ չի ձեռնարկում համատեղ ջանքերով՝ կողմերի այն բնակչության իրավունքների և ազատությունների վերականգնման համար, որն առավելագույնս է տուժել նրանց միջև հակամարտությունից: Վերոնշյալի կապակցությամբ, ԼՂՀ-ն ստիպված է այս ձգձգված հարցի լուծմանն ուղղված սեփական միակողմ քայլերը ձեռնարկել: 1988-1990թթ. Ադրբ. ԽՍՀ-ի սահմաններից վտարված Ադրբ. ԽՍՀ-ի նախկին քաղաքացիների, ներկայումս ԼՂՀ իշխանությունների արդյունավետ վերահսկողության տակ գտնվող տարածքների վրա վերաբնակեցման գործընթացը, որտեղ գործում է ԼՂՀ օրենսդրությունը և որտեղ հնարավոր է ստեղծել անվտանգ պայմաններ վերաբնակեցվող անձանց բնակության և սոցիալ-տնտեսական զարգացման համար, որպես տրամաբանական արդյունք պետք է հանգեցնի ԼՂՀ-ի և վերաբնակեցվող անձանց միջև հաստատուն իրավաբանական կապի հաստատմանը՝ արտահայտված փոխադարձ իրավունքների և պարտականությունների ամբողջականությամբ: Վերաբնակեցվող անձանց ԼՂՀ-ի քաղաքացիություն ստանալու հնարավորություն պետք է ընձեռնվի: Քաղաքացիություն ստանալու սկզբունքները, պայմանները և կարգը կկարգավորվի օրենսդրական մակարդակով՝ «ԼՂՀ քաղաքացիության մասին» օրենքի և դրան համապատասխան ենթաօրենսդրական բնույթի այլ նորմատիվ-իրավական ակտերի ձևով:

Այս հարցում, ցանկացած մարդու կողմից քաղաքացիություն ստանալու իրավունքի ոլորտի այն միջազգային-իրավական սկզբունքներից և նորմերից բացի, որոնց մասին հիշատակվում է մեր նախորդ աշխատության⁸⁸ մեջ, կարող են կիրառվել նաև մեզ համար մտիկ եվրոպական իրավաքաղաքական տարածության մեջ գործող իրավական սկզբունքները և նորմերը:

1997թ. Եվրոպայի Խորհրդի շրջանակներում ընդունվեց Քաղաքացիության մասին կոնվենցիան (ուժի մեջ է մտել 2000թ. մարտի 1-ին): Դրան համապատասխան. «1. Յուրաքանչյուր պետություն, իր օրենսդրության համապատասխան սահմանում է, թե ովքեր են հանդիսանում իր քաղաքացիներ: 2. Այդ օրենսդրությունը ճանաչվում է այլ պետությունների կողմից, եթե այն համապատասխանում է քաղաքացիության նկատմամբ կիրառվող միջազգային կոնվենցիաներին, միջազգային սովորական իրավունքին և համընդհանուր ճանաչված իրավական նորմերին» (հոդված 3-րդ՝ «Պետությունների իրավասությունը»): Կոնվենցիայի 4-րդ հոդվածը ձևակերպում է այն սկզբունքները, որոնց վրա պետք է հիմնվեն յուրաքանչ-յուր պետության քաղաքացիության ինստիտուտի կանոնները. ա) յուրաքանչյուր մարդ քաղաքացիության իրավունք ունի, բ) պետք է խուսափել քաղաքացիության բացակայությունից, գ) ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել քաղաքացիությունից:

Կոնվենցիայի 5-րդ հոդվածը ամրագրում է բացարձակ բնույթի ևս մեկ սկզբունք՝ անխտրականության սկզբունքը. «Յուրաքանչյուր մասնակից-պետություն ղեկավարվում է իր քաղաքացիների նկատմամբ անխտրականության սկզբունքով, լինեն դա ծնունդով քաղաքացիներ, թե անձինք, որոնք ձեռք են բերել իրենց քաղաքացիությունը հաջորդող ժամանակահատվածում»: Կոնվենցիան նախատեսում է քաղաքացիության վերականգնման իրավիճակը և 9-րդ հոդվածում ձևակերպում է, որ «Յուրաքանչյուր մասնակից-պետություն, իր ներ-

⁸⁸ Ս. Մինասյան, Ս. Աղաջանյան, Է. Ասատրյան, Գարաբաղյան հակամարտություն. Փախստականներ, տարածքներ, անվտանգություն: Երևան, 2005:

քին օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և պայմաններով նպատարում է օրինական հիմքերով իր տարածքում բնակվող նախկին քաղաքացիների մոտ՝ իր քաղաքացիության վերականգնմանը»:

Իրավահաջորդության և քաղաքացիության կարևորագույն հարցերը, նրանց վտխադարձ կապը Կոնվենցիայում նշված են հետևյալ կերպ. նախևառաջ, Կոնվենցիայի «Պետությունների իրավահաջորդություն և քաղաքացիություն» VI գլուխը սկսվում է 18-րդ հոդվածով, որը ամրագրում է այս հարցում գլխավոր սկզբունքը. «Պետությունների իրավահաջորդության ժամանակ քաղաքացիության հարցերում յուրաքանչյուր համապատասխան մասնակից-պետություն պահպանում է իրավունքի առաջնայնության սկզբունքը, այն նորմը, որը վերաբերում է մարդու իրավունքներին և այն սկզբունքները, որոնք պարունակվում են սույն Կոնվենցիայի 4-րդ և 5-րդ հոդվածներում» (դրանք դիտարկվել են վերևում):

Այնուհետև, Կոնվենցիայի 18-րդ հոդվածը իր երկրորդ մասում նշում է, որ «Պետությունների իրավահաջորդության դեպքերում քաղաքացիություն տրամադրելու կամ պահպանելու մասին որոշումներ ընդունելու ժամանակ յուրաքանչյուր համապատասխան մասնակից-պետություն հաշվի է առնում, մասնավորապես, ա) տվյալ պետության հետ համապատասխան անձի իրական և արդյունավետ կապի առկայությունը, բ) համապատասխան անձի մշտական բնակության վայրը պետության իրավահաջորդության պահին, գ) համապատասխան անձի ցանկությունը, դ) համապատասխան անձի տարածքային ծագումը»:

Հաշվի առնելով այն, որ պետությունների իրավահաջորդության մեկնաբանությունների և կիրառման հարցերը իրենց մեջ պարունակում են որոշակի դիսկոնսենսուսային ներուժ, Կոնվենցիան, միջպետական համաձայնագրերի օգնությամբ, նախատեսել է հնարավոր տարընթերցվածքների կարգավորման սկզբունք. «Պետությունների իրավահաջորդության դեպքերում համապատասխան մասնակից-պետությունները միջոցներ են ձեռնարկում քաղաքացիության հարցերի կարգա-

վորման համար իրար միջև համաձայնագրեր կնքելու ճանապարհով և, համապատասխան դեպքերում, իրենց փոխհարաբերությունների շրջանակներում՝ այլ շահագրգիռ պետությունների հետ: Այդպիսի համաձայնագրեր կնքվում են՝ հաշվի առնելով սույն գլխում շարադրված կամ հիշատակված սկզբունքները և նորմերը»: Կարևոր է նշել, որ համաձայն Կոնվենցիայի 29-րդ հոդվածի. «Սույն Կոնվենցիայի I, II և VI գլուխներում պարունակող դրույթներից ոչ մեկի նկատմամբ չի կարող որևէ վերապահում կատարվել»:

ԳԼՈՒԽ IV

ԱՂՐԲԵՋԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՂԱՐԱՔԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԵՎ ՌԱԶՄԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԷՍԿԱԼԱՑԻԱՅԻ ՀԱՄԱՐ

Աղրբեջանը բացառիկ պատասխանատվություն է կրում ղարաբաղյան հակամարտության ռազմական և ռազմատեխնիկական եսկալացիայի համար: Նախ Աղրբեջանական ԽՍՀ-ի, իսկ հետո նաև Աղրբեջանական Հանրապետության տարբեր քաղաքական ուժերի և պաշտոնական իշխանությունների գործողությունների հետևանքով, աղրբեջանական զինված կազմավորումների (հետագայում նաև կանոնավոր բանակի) կողմից 1990-1992թթ. բռնազավթվել էր ահռելի քանակությամբ սպառազինություն և ռազմական տեխնիկա (ՄՌՏ), որի կիրառումը Լեռնային Ղարաբաղի ժողովրդի նկատմամբ ագրեսիայի ժամանակ, հանգեցրեց հսկայական զոհերի՝ հատկապես խաղաղ բնակչության շրջանում և հանդիսացավ հակամարտության լայնածավալ պատերազմի վերանելու գլխավոր պատճառը: Դրա հետ մեկտեղ պետք է նաև ընդգծել, որ ղարաբաղյան հակամարտության ռազմատեխնիկական եսկալացիայի մեջ մեծ է նաև ԽՍՀՄ-ի նախկին կոմունիստական ղեկավարության (հետագայում նաև Ռուսաստանյան Դաշնության՝ որպես ԽՍՀՄ իրավահաջորդի իշխանությունների) պատասխանատվությունը, որի թողսվությամբ Աղրբեջանի տարածքում տեղակայված Խորհրդային բանակի նախկին զորամասերի, ինչպես նաև ԽՍՀՄ ՆԳՆ և ՊԱԿ մի շարք ստորաբաժանումների սպառազինության և ռազմական տեխնիկայի հիմնական քանակությունը ընկավ աղրբեջանական ռազմական կազմավորումների ձեռքը և օգտագործվեց Լեռնային Ղարաբաղի դեմ ագրեսիայի ժամանակ: Այդ են միանշանակորեն հաստատում 1990-1994թթ. ղարաբաղյան հակամարտության ռազմական փուլի փաստերը և զարգացման դինամիկան:

Աղրբեջանը բացառիկ կերպով պատասխանատու է ոչ միայն ղարաբաղյան հակամարտության քանակական, այլև «ուրակական» ռազմատեխնիկական եսկալացիայի համար: Իմնակայության ռազմական փուլի տևողության ընթացքում քանակապես անընդհատ ավելացող սպառազինության և ռազմական տեխնիկայի նորանոր տեսակների զանգվածային կիրառումը նախաձեռնվում էր բացառապես աղրբեջանական կողմից, ընդ որում զենքի այդ նոր տեսակները առաջին հերթին կիրառվում էին ընդդեմ ողջ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության սահմանամերձ շրջանների խաղաղ հայ ազգաբնակչության:

4.1 Աղրբեջանի կողմից սպառազինության և ռազմական տեխնիկայի անվերահսկելի բռնազավթումը 1990-1992թթ.

Խորհրդային Միությունն իր գոյության վերջին տարիներին, ՆԱՏՕ-ի ակտիվ անդամ Թուրքիայի հետ սահմանային տարածաշրջանում ուներ հզոր ռազմական ներուժ, որը ներառում էր Անդրկովկասյան Կարմիր դրոշի շքանաշանակիր ռազմական օկրուգի և Անդրկովկասյան սահմանային օկրուգի զորամիավորումները, ՀՕՊ-ի 19-րդ առանձին բանակը, 34-րդ հակաօդային պաշտպանության բանակը, Կասպյան նավատորմը, Սևծովյան նավատորմի նավերի բրիգադը: Դրանից բացի, տարածաշրջանում տեղակայված էին նաև կենտրոնական ենթակայության զորմասեր՝ ներքնուրուտի հետախուզության կենտրոնը (Թբիլիսիից ոչ հեռու), հրթիռային հարձակման մասին վաղաժամ նախազգուշացման և տիեզերական տարածության հսկողության ռադիոլոկացիոն կենտրոնը (Աղրբեջանում՝ Գարալայի ՌԼԿ), ինչպես նաև ԽՍՀՄ ՆԳՆ-ի ներքին զորքերի և ՊԱԿ-ի զորքերի ստորաբաժանումները⁸⁹:

⁸⁹ Տե՛ս մանրամասները՝ *Минасян С., Южный Кавказ: проблемы ограничения и контроля над вооружениям //Южный Кавказ: проблемы региональной безопасности и интеграции / Под ред. Минасяна С., т. 1, №1. РАУ: Ереван, 2004.*

Անդրկովկասյան ռազմական օկրուգում միավորված էր 4-րդ համագորային բանակը, 7-րդ գվարդիական բանակը, 31-րդ բանակային կորպուսը, 104-րդ օդադեսանտային դիվիզիան, 171-րդ ուսումնական կենտրոնը և մի շարք այլ առանձին զորամասեր: Ադրբեջանական ԽՍՀ-ում տեղակայված 4-րդ բանակի կազմում ընդգրկված էին 3 մտտոհյաձգային դիվիզիաներ (ՄՀԴ)⁹⁰՝ 23-րդ ՄՀԴ-ն Կիրովսբադում (Գյանջա), 60-րդ ՄՀԴ-ն՝ Լենքորանում և 295-րդ ՄՀԴ-ն Գյուզդեկում, ինչպես նաև մի շարք այլ ստորաբաժանումներ: Նախիջևանում գտնվում էր 75-րդ ՄՀԴ-ն, որը ԽՍՀՄ գոյության վերջում փոխանցվեց ՊԱԿ-ի համակազմ: Բացի այդ, Ադրբեջանական ԽՍՀ-ի տարածքում՝ Կիրովսբադում (Գյանջա) տեղակայված էր 104-րդ առանձին օդադեսանտային դիվիզիան (ՕԴԴ):

ՀՕՊ-ի 19-րդ առանձին բանակը (շտաբը՝ Թբիլիսիում) Անդրկովկասի տարածքում իր տրամադրության տակ ուներ մի քանի զենիթահրթիռային ստորաբաժանումներ և ռադիոտեխնիկական գործերի զորամասեր: Դրանցից, ՀՕՊ-ի առավել մարտունակ և բազմաբանակ զորամասերը և գործերի ստորաբաժանումները նույնպես տեղակայված էին Ադրբեջանական ԽՍՀ-ի տարածքում, մասնավորապես Բաքվի և Մինգեչաուրի շրջաններում: Անդրկովկասի տարածքում տեղակայված ռազմաօդային բազաները հիմնականում գտնվում էին 34-րդ օդային բանակի (շտաբը Թբիլիսիում) ենթակայության տակ: Վրաստանում 9 օդակայաններ կային, Ադրբեջանում գտնվում էին 5 օդակայաններ, իսկ Հայաստանում ընդհանրապես ռազմական օդակայաններ չկային⁹⁰: Ադրբեջանի տարածքում տեղակայված էին Խորհրդային բանակի ռազմաօդային ուժերի (ՌՕՌԻ) և ՀՕՊ-ի 4 ավիագնդեր՝ Սիբալ-Չայում գրոհային ավիացիոն առանձին գունդը (սալառագինված Cy-25 գրոհայիններով), ՀՕՊ-ի 82-րդ կործանիչ գունդը՝ Նաստսևիյում (ՄնԴ-25ՍԴՇ), 976-րդ ռմբակոծիչ գունդը՝

Բյուրբամիրում (ռազմաճակատային ռմբակոծիչներ Cy-24) և 882-րդ հետախուզական ավիացիոն գունդը՝ Գալյարում (ՄնԴ 25ՔԵ, Cy-24ՄՔ): Շահագործվող յուրաքանչյուր օդակայանում պահեստավորվում էր ավիացիոն ռազմամթերքի առավելագույն միջև հիմն ռազմակոնսպեկտներ (տես աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Խորհրդային բանակի սպառագինությունների և անձնակազմի տեղաբաշխումը Լեռնային Ղարաբաղի զինված հսկամարտության մեջ ներքաշված պետությունների տարածքում (1991թ. վերջի դրությամբ)⁹¹

Երկիրը	Տանկեր	ՌԶՄ ⁹²	Հրետանային համակարգեր	Հարվածային ուղղահրթիռներ	ուսզանական ինքնաթիռներ	Անձնակազմ
Ադրբեջան	378	1 165	447	24	124	64 000
Հայաստան	258	641	357	7	-	20 000
Լեռնային Ղարաբաղ	13	120	16	-	-	2 000

Ինչ վերաբերում է զինամթերքին և ռազմական հանդերձանքին, ապա Ադրբեջանի տարածքում պահպանվում էր դրանց ամենամեծատ ավելի մեծ քանակություն, քան նախկին Անդրկովկասի մնացած ողջ տարածքում: Ադրբեջանում գտնվում էին մեկ ռազմաավարական (ավելի քան 7.200 վազոն ծավալով) պահեստ Գիլյագիում, երկու շրջանային (1.100-ական վազոն ծավալով)՝ Աղդամում և Նաստսևիում և չորս դիվիզիոնային պահեստներ (150-200-ական վազոն ծավալով)՝ Գյուզդեկում, Գյանջայում, Լենքորանում և Նախիջևանում: Այս պահեստներում զինամթերքի ընդհանուր քանակությունը գնահատվում էր ավելի քան 11.000 վազոն: Համեմատության համար՝ Հայաստանում գտնվում էին ընդամենը երեք դիվիզիոն

⁹⁰ Пидущкин М., Вооружая Кавказ: Нечаянное наследство Москвы // Кавказ: вооружен и разобщен / Под ред. Матвеевой А., Хизкока Д. Saferworld, ЦАСТ: Лондон – Москва, Февраль, 2004, с. 164-167.

⁹¹ Հաշվարկված է պաշտոնական փաստաթղթերի և հետևյալ հրատարակությունների տվյալների հիման վրա. The Military Balance 1991/1992. IISS: London, 1991, p.45, 61, 92; SIPRI Yearbook 1992: World Armament and Disarmament. Oxford University Press, SIPRI: Oxford, 1992, p. 347.
⁹² ՌԶՄ- ռազմական զրահապատ մեքենաներ:

նային պահեստներ (Գյումրի, Բալախովիտ, Կիրովական) զինամթերքի մոտ 500 վագոն ընդհանուր ծավալով, այսինքն՝ 20 անգամ պակաս, քան Ադրբեջանում⁹³: Ինչ վերաբերում է ԼՂՀ-ի տարածքին, որտեղ տեղակայված էին 23 ՄՀԴ մոտոհրաձգային 366-րդ գունդը, բիմիական պաշտպանության առանձին գումարտակը և Հադրութի սահմանապահ ջոկատը, ապա այս ստորաբաժանումները ունեին զինամթերքի նվազագույն պաշարներ, որոնց մեծ մասը 1991թ. վերջին և 1992թ. սկզբին տեղափոխվեց Ադրանի շրջանային պահեստը կամ ոչնչացվեց 1992թ. փետրվար-մարտ ամիսներին Լեռնային Ղարաբաղի տարածքներից այդ գործառնների անձնակազմի դուրս բերումից հետո:

Ղարաբաղյան հակամարտության սրմանը համընթաց (1989թ. վերջից սկսած և, հատկապես, 1990թ. հունվարին Բաքվում հայ ազգաբնակչության ցեղասպանությունից և ջարդերից հետո) ադրբեջանական ղեկավարության և որոշակի քաղաքական ուժերի կողմից Ադրբեջանում սկսեցին նախկին ԽՍՀՄ գործառններից սպառազինությունների և ռազմական տեխնիկայի բռնագաղթման և ձեռքբերման ուղղությամբ միջոցներ ձեռնարկվել՝ Արցախի ժողովրդի դեմ ագրեսիայի ժամանակ օգտագործելու համար: Ընդ որում, Ադրբեջանի տարածքում տեղակայված նախկին Խորհրդային բանակի ռազմական օբյեկտների վրա զինված հարձակումները գուցորդվում էին Անդրկովկասյան ռազմական օկրուգի 4-րդ բանակի ու ԽՍՀՄ ՆԳՆ ներքին գոյքերի գործառնների զինծառայողների և հրամանատարության անթաքույց կաշառումով և նրանց անմիջական ներգրավումով ռազմական գործողությունների մեջ՝ ադրբեջանական ռազմականացված կազմավորումների և Ադրբ. ԽՍՀ-ի ՆԳՆ ՕՍՕՆ-ի կողմում⁹⁴ (ՀՆՄԽ), իսկ հետա-

գայում նաև ադրբեջանական կանոնավոր բանակի կազմում (սկսած՝ 1991թ. վերջերից և 1992թ. սկզբից):

Պետք է նշել, որ Ղարաբաղում էսկալացիայի ծավալմանը և հայ ազգաբնակչության շարունակվող էթնիկ գաղթումներին և ցեղասպանությանը զուգընթաց, Ադրբեջանի քաղաքական ուժերը 1990թ. սկզբից բավականին լուրջ մտադրություն ունեին տիրանալու նախկին Աչքբ. ԽՍՀ-ի տարածքում տեղակայված ԽՍՀՄ զինված ուժերի գործառնների ոչ միայն սովորական (կոնվենցիոնալ) սպառազինությանը և ռազմական տեխնիկային: Խոսք էր գնում նույնիսկ միջուկային զինամթերքի, մասնավորապես, Ադրբ. ԽՍՀ-ի տարածքում գտնվող Անդրկովկասյան ռազմական օկրուգի պահեստներում պահպանվող մարտաօդային միջուկային զենքի (ՄՄՁ) բռնագաղթման իրական փորձերի մասին: Միայն մեծ ջանքերի շնորհիվ, ինչպես վկայում են իրադարձությունների ականառեսները, խորհրդային կենտրոնական զինվորական ղեկավարությանը հաջողվեց դուրս բերել այդ միջուկային զինամթերքը Ադրբեջանական ԽՍՀ-ի տարածքից և, սույնով, կանխել ադրբեջանական զինված կազմավորումների կողմից դրանց զավթումը: «ՄՄՁ-ի դուրս բերումը անցկացվում էր օպերատիվ բարդ իրավիճակի պայմաններում, կապված, մասնավորապես, տարբեր տեսակի քաղաքական խմբերի ակտիվացման հետ, որոնցից ոմանք կարող էր փորձ անել խոչընդոտելու այդ գործողություններին, այդ թվում նաև՝ ուժով: 1990թ. Բաքվի քախումներից հետո միջուկային ռազմամթերքի դուրս բերումը Ադրբեջանից կտրուկ բարդացավ՝ Ադրբեջանի Ազգային ճակատի հետ կապված որոշ տարրերի կողմից այդ գործողությունները խոչընդոտելու փորձով: Ռազմամթերքի դուրս բերումը իրականացվել է խիստ գաղտնիության պայմաններում, ինչը թույլ տվեց հասցնել դրանք ռազմաօդակայան առանց միջադեպե-

⁹³ Юнусов А., Азербайджан: в ожидании перемен пол бременем истории // Кавказ: вооружен и разобщен / Под ред. Матвеевой А., Хизкока Д. Saferworld, ЦАСТ: Лондон – Москва, Февраль, 2004, с. 61.

⁹⁴ ՕՍՕՆ – միլիցիայի հատուկ նշանակության ջոկատ: Ղարաբաղյան հակամարտության սկզբնական շրջանում (1990թ. աշնանից) Ադրբեջանի իշխանությունների կողմից հանրապետության ՆԳՆ համակարգում կազմավորվեցին բազմաթիվ

զինված ջոկատներ, որոնք ակտիվորեն օգտագործվում էին Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչության դեմ: Հանրապետության տարածքում տեղակայված Խորհրդային բանակի զինանոցից նրանց փոխանցվեց հրաձգային զենքի և գրահատելիսիկայի մեծ քանակություն: Նախապես, դրանց կազմում հաշվվում էր մոտ 3000 մարդ, այնուհետև, դրանց համակազմի բանակը նշանակալիորեն աճեց:

րի, սակայն, պարզվեց, որ այնուհետ թռչչորդին շրջափակված էր բաղաբացիական անձանց խմբերով, որոնք փորձեցին խոչընդոտել ինքնաթիռների թռչչորդ: Մասնակցի վկայությամբ, իրավիճակը ծայրասահման լարված էր, և ինքնաթիռների անձնակազմերը ստիպված նախազգուշական կրակոցներ են արձակել ռազմածրերի տեղափոխումն իրականացնող ռմբարկոծիչների ծիֆին հրանոթներից: Բարեբախտաբար, ամբոյտը գրվեց և հնարավոր եղավ խուսափել գոհերից, ինքնաթիռները կարողացան հանգիստ թռչել»⁹⁵:

Ադրբեջանական իշխանությունների, տարատեսակ քաղաքական կուսակցությունների և զինված կազմավորումների ակտիվ գործողությունների արդյունքում, արդեն 1992թ. կեսերին Ադրբեջանի վերահսկողության տակ անցան նրա տարածքում տեղակայված 4 մոտոհրամբային դիվիզիաներ⁹⁶, ՀՕՊ-ի 3 բրիգադները, ռազմածրային բոլոր բաբակները (ավիացիոն տեխնիկայի մեծ քանակությամբ), ՊԱԿ-ի սահմանապահ գործակալները, որոնք պահպանում էին նախկին ԽՍՀՄ-ի պետական սահմանը⁹⁷: Ադրբեջանին բաժին հասավ նաև Կասպից նավատորմի նավերի և ցամաքային ենթակառուցվածքի նշանակալից մասը: Հանրապետությունը յուրացրեց նաև ռազմամթերքի, զինվորական գույքի պահեստները և 49-րդ զինամոզը⁹⁸: Փաստացի, Ադրբեջանից, այն էլ մեծ ուշացումով, ուստական կողմը միայն 1993թ. մայիսին դուրս բերեց ընդամենը Գյանջալում տեղակայված 104-րդ ՕԳԳ-ն, որն արդեն կորցրել էր իր ծանր տեխնիկայի զգալի մասը՝ **ԲՄԼ, ԵՏՐ-Ը, 120-մմ-ոց ՏԱԿ** և այլնի տասնյակ միավորներ: ՌԳ-ի պաշտպանության նա-

խարարության հրամանի համաձայն՝ Ռուսաստան տեղափոխվեց նաև Ադրբեջանի տարածքում տեղակայված ռազմական ինքնաթիռների մի մասը (1992թ. մայիս-հունիս ամիսներին):

Ադրբեջանի տարածքում միակ ռազմական օբյեկտը մնաց Գարալինի ՌԼԿ-ն, որը մնում էր երթուղային հարձակման նախազգուշացման համակարգի (ՀՀՆՀ) մեջ, որը բացի Հնդկական օվկիանոսի ցրատարածությունից (այդ թվում նաև ալգանավերից) բալխատիկ կրթիոների արձակման նկատմամբ վերահսկողությունից, բույլ է ապիս իրականացնել Իրանի, Ռուրքիայի, Հնդկաստանի, Իրաքի, Պակիստանի, մասնակիորեն, Չինաստանի, ինչպես նաև մի շարք ասիական և աֆրիկյան երկրների տարածքների օդային և տիեզերական տարածության մոնիթորինգ: Կայանը նախատեսված է բալխատիկ կրթիոների և տիեզերական օբյեկտների հայտնաբերման, դրանց աղեկցման, կորոզիանոների չափման և նրանց հետագծի պարամետրերի հաշվարկման համար: Այն միաժամանակ կարող է ուղեկցել մինչև 20 բարդ թիրախ (օրինակ՝ կրթուղային ռազմագլխիկներ) 20 տարբեր անկյունային ուղղություններով ու ազանովված է տիեզերական և ակտոդինամիկ խանգարումների հարուցողների դեմ պաշտպանության ծիջոցներով: 2002թ. Գարալայի ՌԼԿ-ն առայել է ՌԳ ռազմական բազայի կարգավիճակ, որը վարձակալում է այն Ադրբեջանից 10 տարի ժամկետով⁹⁹: Զանի որ Ադրբեջանի Սահմանադրությունը ձևականորեն արգելում է օտարերկրյա ռազմական բազաների տեղադրությունն իր տարածքում, այդ պատճառով Գարալայի ՌԼԿ-ն, ռուս-ադրբեջանական բանակցությունների արդյունքում, սկսել է գործել որպես Ռուսաստանի կողմից Ադրբեջանից վարձակալվող ռազմական օբյեկտ: Սակայն, իր բնույթով ավյալ ռազմական օբյեկտը միանգամայն համապատասխանում է ռազմական բազայի դասական սահմանմանը: Ավելին, իրականում Գարալայի ՌԼԿ-ն Ռուսաստանի համար հանդի-

⁹⁵ Ядерное пераспроотранение / Под ред. Орлова В.А., т. 1, ПИР-Центр: М., 2002, т. 1, с. 211.

⁹⁶ Բացի Սակիստանից, որն անհատազինությունը և ռազմական տեխնիկան ոչնչացվել էր 1992թ. վերաբախին հակամարտության գրառուց անձնակազմի դուրսբերման ժամանակ, սպառազինության միայն մի չնչին մասն էր մնացել վարաբազային ինքնապաշտպանության ուժերի մոտ:

⁹⁷ Բացառությամբ Լեռնային Կարաբողի տարածքում գտնվող Հաղվորի սահմանադիտի օղկառի:

⁹⁸ *Երանցի В.* Так вооружали Закавказье // *Общая газета*, 22.10.1998.

⁹⁹ *Коротченко Н.* Определен статус Габалинской РЛС // *Независимое военное обозрение*, 08.02.2002.

սանում է առավել արժեքավոր ռազմավարական ռազմական օբյեկտը Հարավային Կովկասում և, հնարավոր է նաև՝ ընդհանրապես Ռուսաստանի սահմաններից դուրս (յի բացառիկ կարևորությամբ այն անհնար է համեմատել Վրաստանում և Հայաստանում նրա ունեցած ռազմական բազաների հետ): Ավելին՝ իրականում Գաբալիայի ՌԼԿ-ն (որտեղ այսօր զինվորական ծառայություն են անցնում շուրջ 1500 ռուսաստանցի զինծառայողներ) հանդիսանում է ռուսական ընդամենը 7 ՀՀՆՀ ՌԼԿ-ից մեկը, ընդ որում միակը, որը իրականացնում է մերձավորարևելյան տարածաշրջանի և Հնդկական օվկիանոսի ջրատարածության օդային և տիեզերական տարածության առավել լիարժեք դիտարկումը:

Այսպիսով, չնայած 1992թ. մայիսի 15-ին Տաշքենդի համաձայնագրերի կնքմանը (Եվրոպայում սովորական զինված ուժերի մասին Պայմանագրի (ԵՍՁՈՒՊ) սկզբունքների և գործառույթների իրականացման մասին Համաձայնագիր և Սպառազինության և տեխնիկայի առկայության առավելագույն մակարդակների մասին Արձանագրություն) և 1990թ. Եվրոպայում սովորական զինված ուժերի մասին պայմանագրին միանալուն (ԵՍՁՈՒՊ), Ադրբեջանը յուրացրեց անհամեմատ ավելի շատ սպառազինություն և ռազմական տեխնիկա, քան նրան թույլատրվում էր այդ փաստաթղթերով (տե՛ս աղյուսակ 2): Իս, հիմնականում, սպառազինության և ռազմական տեխնիկայի բաժանման գործընթացի համար պատասխանատու Ռուսաստանի պաշտպանության նախարարության նախկին ղեկավարության դիրքորոշման, ինչպես նաև տեղերում ռուսական զորամասերի հրամանատարների կոռումպացվածության հետևանքն էր¹⁰⁰: Արդյունքում, բարդացավ և ձայնողվեց նախկին Խորհրդային բանակի կազմացրված զորամասերի սպառազինության և ռազմական տեխնիկայի դրսև բերումը Ադրբե-

¹⁰⁰ Օրինակ, ադրբեջանական կողմի վկայությամբ, 1992թ. հունիսի կեսերին Ադրբեջանի պաշտպանության նախկին փոխնախարար Բարա Նազարովն 20 մլն դոլարով «ձեռք է բերել» Գյանջայում տեղակայված 23-րդ ՄՀԳ-ի ողջ սպառազինությունը և ռազմական տեխնիկան՝ վերջինիս հրամանատար գեներալ-մայոր Յուրի Պայտովից: Տե՛ս մանրամասները՝ *Isnycos A.* նշված աշխատությունը, էջ 62:

ջանի տարածքից: Ընդ որում, 4-րդ համագորային բանակի ռազմական գույքի նույնիսկ պաշտոնական բաժանման և այն Ադրբեջանին փոխանցելու գործընթացը անցել է ադրբեջանական իշխանությունների ուժեղ ճնշման տակ, որոնք սպառազինության կարիք ունեին՝ դրանք Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ ռազմական գործողություններում կիրառելու համար: Առանձին դեպքերում, Ադրբեջանում ռազմական գույքի զավթման դեպքերը տեղի են ունեցել 4-րդ բանակի կրամանատարության առանձին ներկայացուցիչների բուլլոլությամբ, որը կենտրոնացված զինվորական կառավարման համակարգի փլուզման պայմաններում միշտ չէր, որ Ռուսաստանյան Դաշնության պաշտպանության նախարարության ղեկավարության հետ համաձայնեցնում կամ նրան տեղյակ էր պահում իր գործողությունների մասին: Օրինակ, համաձայն Ռուսաստանի պաշտպանության նախարարության թիվ Վ14(3)022 առ 22 հունիսի 1992թ. ղեկավար հրահանգի, Ադրբեջանին փոխանցվել է 237 տանկ, 325 ռազմական զրահապատ մեքենա (Ռ-ՉՄ), 170 հրետանային կայանքներ: Այսպիսով, միայն այս մեկ ղեկավար հրահանգով, Ադրբեջանին փոխանցվող սպառազինությունները մի քանի կատեգորիաներով գերազանցում էին ԵՍՁՈՒՊ-ի կողմից թույլատրված առավելագույն մակարդակներով նրա ստանձնած պարտավորությունները: Ադրբեջանը 1992թ. (միայն իր տարածքում տեղակայված նախկին Խորհրդային բանակի և ԽՍՀՄ ՆԳՆ ՆՁ զորամասերի հաշվին) ստացել է ընդամենը 325 տանկ, 789 Ռ-ՉՄ, 458 հրետանային կայանքներ, մեծ քանակությամբ ավիացիոն տեխնիկա, ավելի քան 100 հազար միավոր թեթև և հրաձգային զենք (ԹՀՁ)¹⁰¹ և դա՛ չհաշված Ադրբեջանի կողմից զենքի և ռազմական տեխնիկայի ու զինամթերքի զանգվածային գնումները այլ երկրներից, ինչպես նաև զենքի անփոխհատույց մատակարարումները Թուրքիայից:

Աղյուսակ 2. ԵՍՁՈՒՊ-ի կողմից սահմանափակվող և Հարավային Կովկասի պետությունների համար ԵՍՁՈՒՊ-ի կողմից ընդունված

¹⁰¹ *Isnycos A.*, նշված աշխատությունը, էջեր՝ 63-64:

սպառազինությունների ազգային (ԱՍՍ) և տարածքային (ՏՍՍ) սահմանային մակարդակները

Երկիրը	Տանկեր	ՌԶՄ	Հրետանային համակարգեր	Ռազմական ինքնաթիռներ	Հարվածային ուղղաթիռներ
Ադրբեջան	220	220	285	100	50
Հայաստան	220	220	285	100	50
Լեռնային Ղարաբաղ	220	220	285	100	50

Ընդ որում, անհրաժեշտ է նշել, որ Ադրբեջանը՝ ստանալով նույնիսկ այսօրիսի նշանակալից ռազմական զինանոց, բավարարված չէր ոչ դրա քանակությամբ, ոչ էլ, ադրբեջանական զինվորականների խոսքերով սառած, ռուսական կողմից պաշտոնապես իրեն փոխանցված սպառազինության և ռազմական տեխնիկայի շահագործման մեջ դրսևորած ցածր որակով: Օրինակ, չնայած այն հանգամանքին, որ 1992թ. իր հարևանների հետ համեմատած, Ադրբեջանին բաժին հասավ շատ ավելի մեծ քանակությամբ ավիացիոն տեխնիկա (մոտ 50 ռազմական ինքնաթիռ և ավելի քան 20 ռազմական և տրանսպորտաուղեսանտային ուղղաթիռներ), ադրբեջանցի փորձագետները շարունակում են դժգոհություն արտահայտել այն բանից, որ Ադրբեջանի տարածքում տեղակայված ավիաբազաներում գտնվող ինքնաթիռների և ուղղաթիռների մի մասը ռուսական կողմը դուրս է բերել (36 Су-25, 8 МиГ-25, 38 Су-24, 28 Ил-76, 6 Ан-2, 3 Ан-26, 13 Ми-24, 11 Ми-8, 9 Ми-2, 2 Ми-9, 1 Ми-6 և այլն)¹⁰²:

Ադրբեջանի կողմից իր տարածքում տեղաբաշխված Խորհրդային բանակի զորամասերի մեծ մասի փաստացի «սեփականաշնորհումից» հետո, ռազմատեխնիկական առումով, Բաքուն ճնշող առավելության հասավ ԼՂՀ-ի (և նույնիսկ՝ Հայաստանի, որը աջակցում էր Լեռնային Ղարաբաղի ժողովրդին ադրբեջանական ագրեսիային դեմակայելու մեջ) նկատ-

մամբ: Անհրաժեշտ է հատուկ ընդգծել, որ բացի դարաբաղյան ջոկատների կողմից ադրբեջանական բանակից զավթված ռազմավարային զենքից և ռազմական տեխնիկայից¹⁰³, նախկին Խորհրդային բանակի գույքից ԼՂՀ-ին բաժին հասավ 366 ՄՀԳ-ի հաստիքային սպառազինության և ռազմական տեխնիկայի աննշան մասը: Համաձայն պաշտոնական տվյալների, 1990թ. նոյեմբերի 19-ի դրությամբ, Ստեփանակերտում տեղակայված 366 ՄՀԳ-ի տրամադրության տակ կար ընդամենը 72 տեսակի 13 տանկ, 120 ՌԶՄ և 16 հրետանային համակարգեր¹⁰⁴: Համաձայն Ռուսաստանի Պաշտպանության նախարարության պաշտոնական տվյալների, գնդի անձնակազմը ուղղաթիռներով դուրս բերելուց հետո, հայկական կողմին թողնվեց ընդամենը 9 տանկ և 87 ՌԶՄ (5 БТР-70, 49 БМП-1, 28 БМП-2 և 5 БРМ-1к), որոնք գտնվում էին վատ տեխնիկական վիճակում: Գնդի մնացած ռազմական տեխնիկան ուղղակի ոչնչացվել է ռուսական զինծառայողների կողմից: Այդ պատճառով, 1992-1994 թթ. դարաբաղյան գորքերի սպառազինման հիմնական մուտքերի աղբյուրը դարձան ռազմական ավարները: Ռազմական գործողությունների մասնակիցների վկայությամբ, դարաբաղյան ջոկատների շատ հրամանատարներ նույնիսկ հրամայում էին իրենց զինվորներին ոչ թե ոչնչացնել թշնամու տանկերը և ՌԶՄ-ները, այլ գրավել նվազագույն վնասվածքներով՝ հետագայում օգտագործելու համար:

¹⁰³ Մասնավորապես, բրիտանացի լրագրող Թոմ Վալսին տված իր հարցազրույցում Հայաստանի պաշտպանության նախարար Ս. Մարգարյանը հայտարարեց, որ 1992-1994թթ. ռազմական գործողությունների ընթացքում դարաբաղյան գույքերը ադրբեջանական բանակից խլեցին 156 տանկ: Տես մանրամասները՝ *De Waal T.*, Black Garden: Armenia and Azerbaijan through Peace and War. New York - London, 2003; *de Baat T.* Черный сад. Армения и Азербайджан между миром и войной. М., 2005. էջ՝ 408. Բացի այդ, Հայաստանի Հանրապետության զինված ուժերը Ադրբեջանի հետ սահմանում ռազմական բախումների ժամանակ գրավեցին T-54/55 տեսակի՝ ամնվազն 8 տանկ, որոնք վերանորոգվեցին և համալրեցին հայկական բանակի զինանոցը: Տես մանրամասները՝ CFE Joint Consultative Group Documents-JCG.DFI/29/01, 30.10.2001; JCG.DEL/30/01, 06.11.2001; JCG.DEL/32/01, 13.11.2001.

¹⁰⁴ Համաձայն 1990թ. ԵՍՁՌԹ-ի ստորագրմամբ նախատեսված տեղեկատվության փոխանակման շրջանակներում ԽՍՀՄ կողմից ներկայացված տվյալների:

¹⁰² *Allyer Y.*, Arms Control Process in Transcaucasia // NATO School, Polaris Quarterly, Vol.1, Issue 2, Summer 2004. P.47.

Այսպիսով, համաձայն ռուսական պաշտոնական աղբյուրների, Ադրբեջանին փոխանցված սպառազինության Ընդհանուր քանակությունը նշանակալիորեն գերազանցում էր ԵՍՁՈՒՊ-ի կողմից և 1992թ. Տաշքենդի համաձայնագրով Ադրբեջանի համար սահմանված թույլատրելի նորմերը: Միևնույն ժամանակ, համաձայն արևմտյան ռազմական փորձագետների տվյալների, միայն 1993թ. դրությամբ, ԵՍՁՈՒՊ-ի գործողության տակ ընկնող սպառազինության հիմնական տեսակների առավելագույն թույլատրելի մակարդակներին Ադրբեջանի զինված ուժերի համապատասխանության համար, այդ հանրապետությունը պետք է ոչնչացներ կամ կոն-վերտացիայի ենթարկեր 195 տանկ, հարյուրավոր միավոր Ռ-2Մ, 68 հրետանային համակարգեր և այլն¹⁰⁵:

4.2 Հակամարտության ռազմատեխնիկական էսկալացիան և Լեռնային Ղարաբաղի խաղաղ բնակչության նկատմամբ Ադրբեջանի կողմից զենքի նոր տեսակների ոչ խտրական կիրառումը

Ղարաբաղյան հակամարտության ծավալմանը նույնատող կարևորագույն գործոնը, որի համար պատասխանատվություն է կրում Ադրբեջանի ղեկավարությունը, հանդիսանում էր այն, որ ռազմական գործողությունները արագորեն ձեռք բերեցին լայնամասշտաբ պատերազմի բնույթ՝ ադրբեջանական կողմից սպառազինության և ռազմական տեխնիկայի նոր տեսակների անընդհատ աճող ծավալների կիրառումամբ:

Օրինակ, եթե Լեռնային Ղարաբաղում և Հայաստանի հետ սահմաններին բախումների առաջին շրջանում գործնականում կիրառվում էր միայն թեթև հրաձգային սպառազինություն,

նր, ապա 1991թ. ապրիլ-մայիս ամիսներին «Օղակ»¹⁰⁶ գործողության իրականացումից հետո (ադրբեջանական ՕՍՕՆ-ի, ԽՍՀՄ Ներքին գործերի նախարարության և Պաշտպանության ուժերով), ադրբեջանական կողմից առաջին անգամ սկսեց կիրառվել զրահատեխնիկա՝ ԵՄԻ և ԵՄԴՄ, որոնք գտնվում էին Ադրբեջանի ՕՍՕՆ-ի զինանոցում և ստացվել էին ԽՍՀՄ Պաշտպանության նախարարության և ՆԳՆ զորամասերից: Ասենք նաև, որ ինչպես նշում են ադրբեջանական աղբյուրները, արդեն 1990թ. հունվարին Բաքվի իրադարձությունների՝ հայ ազգաբնակչության զանգվածային կոտորածների և ջարդերի ընթացքում, ադրբեջանական զինված կազմավորումների կողմից ԽՍՀՄ ՁՈՒ զորամասերից զավթվել են ոչ միայն թեթև և հրաձգային զենքի հարյուրավոր միավորներ, այլև, նույնիսկ, T-72 տեսակի 4 տանկ, որոնք, ճիշտ է, այնուհետև վերադարձվեցին¹⁰⁷: 1991թ. սկսած ադրբեջանական կողմը սկսեց արդեն օգտագործել կարկտացրիչ հրանոթներ և «Ալազան» տեսակի հրթիռային կայանքներ: Սակայն, 1991թ. վերջին, Լեռնային Ղարաբաղից և սահմանամերձ գոտիներից ներքին գործերի և Խորհրդային բանակի դուրս բերման հետ միասին, ռազմական տեխնիկայով կողմերի հագեցվածության մակարդակը սկսեց աճել՝ հայտնվեցին ականանետեր, նոնա-կանետեր, ԻՄԿՄ, Ռ-2Մ-ներ: Ռազմական գործողությունների տևողությամբ փուլը սկսելուց հետո, որն ընդունված է թվագրել 1992թ. հունվարով, ադրբեջանական կողմն առաջին անգամ սկսեց օգտագործել «Գրադ» РС30 ԵՄ-21, բազմաթիվ Մի-24 ռազմական ուղղաթիռներ, մեծ տրամաչափի հրետանի, տանկեր և այլ ծանր տեխնիկա: Իսկ ադրբեջանական ԿՄ-25 գրոհային և ռազմական ինքնաթիռների այլ տեսակների կիրառումը սկսելուց, հատկապես, ադրբեջանական բանակի լայնածավալ տնտեսային հարձակումից հետո 1992թ. հունիսին, որին՝ օդից տուժանալով ակտիվ աջակցություն, մասնակցում էին արդեն

¹⁰⁵ Conventional Arms Control: Former Warsaw Pact Nations' Treaty Compliance and US Cost Control // US General Accounting Office (GAO) Report to Congressional Requesters. GAO: Washington, December 1993. P.21.

¹⁰⁶ «Օղակ» գործողության իրականացման և 1991թ. մայիսից հունիսի սկզբներն ընթացած ժամանակահատվածում հայկական մի շարք գյուղերի արտաքսման մասին տեղեկանքն առնելով՝ *Зояна С. Нагорный Карабах: проблема и конфликт.* Ереван, 2001.

¹⁰⁷ *Թուրքոս Ա.* նշված աշխատությունը, էջ՝ 55:

հարյուրավոր միավոր տանկեր և ՌՁՄ-ներ, ռազմական գործողությունները ձեռք բերեցին լայնամասշտաբ պատերազմի բնույթ: Այս ամենը ուղեկցվում էր հայ խաղաղ ազգաբնակչության նկատմամբ սպառազինության նորանոր տեսակների մշտական կիրառմամբ՝ մարդասիրական բոլոր նորմերի և Կոնվենցիաների խախտմամբ: Սույն աշխատության մեջ նպատակ չի լրվում ամբողջովին լուսաբանելու դարաբաղյան հակամարտության ռազմական փուլը, այլ միայն բերվում են փաստեր, որոնք վկայում են հակամարտության ռազմատեխնիկական էսկալացիայի, ինչպես նաև խաղաղ ազգաբնակչության դեմ սպառազինության և ռազմական տեխնիկայի արգելված տեսակների զանգվածային և ոչ խտրական կիրառման համար Ադրբեջանի բացառիկ պատասխանատվության մասին:

Ինչպես գտնում են վորձագետները, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության խաղաղ բնակչության դեմ ռազմական ուղղակի ագրեսիայի և ծանր տեխնիկայի ու սպառազինության զանգվածային ոչ խտրական կիրառման սկիզբը կայրելի է համարել 1991թ. սեպտեմբերի 25-ը: Այդ օրը Շուշիի կողմից «Ալազան» տեսակի հրթիռներով գնդակոծվեց Շուշիի շրջանի Քարին Տակ բնակավայրը: Նույն օրը «Ալազան» հրթիռներով սկսվեց Ստեփանակերտի գնդակոծումը: Քաղաքի վրա արձակվեց 7 հրթիռ: Միևնույն օրվա երեկոյան Ադրբեջանի 2 քաղաքացիական ուղղաթիռներ նռնակներ նետեցին Ստեփանակերտի, ինչպես նաև Շոշ և Քարին Տակ գյուղերի վրա: Նույն ժամերին ադրբեջանցիներով բնակեցված Խոջալու բնակավայրից «Ալազան» հրթիռներով սկսվեց Ասկերան շրջկենտրոնի և Ասկերանի շրջանի Նորագյուղ բնակավայրի գնդակոծումը: Սեպտեմբերի 25-ի երեկոյան Շուշիից վերսկսվեց Շոդ գյուղի հրետակոծությունը, իսկ մոտավորապես մեկ ժամից հրետակոծությունը վերաուղղորդվեց Ստեփանակերտի վրա: Դարձյալ նույն օրը ուժգին գնդակոծության ենթարկվեց Մարտակերտի շրջանի Կիչան գյուղը: Սեպտեմբերի 25-ին ողջ օրվա ընթացքում ՌՁՄ-ից, ինչպես նաև «Ալազան» հրթիռներով գնդակոծվում էին Շահումյանի շրջանի Կարաչինար և Մանա-

չիլ գյուղերը: Այդ գյուղերում զոհվեց 4 մարդ՝ այդ թվում վեց տարեկան մի տղա: Նույն օրը՝ երեկոյան, մոտավորապես 30 սոսնականներ հարձակվեցին Ստեփանակերտի ծայրամասային Արմենավան քաղամասի վրա: Մինչդեռ, դեռևս նախօրեին՝ սեպտեմբերի 18-ին, Լեռնային Ղարաբաղ էին այցելել Ռուսաստանի և Ղազախստանի նախագահներ Բ. Ելցինը և Ե.Նազարբաևը, իսկ սեպտեմբերի 23-ին Ժելեզնոժուկում տոբլագրվել էր լայնորեն գովազդված Ռուսաստանյան Ռաշտայան նախագահ Բ.Ն. Ելցինի և Ղազախստանի նախագահ Ե.Ա. Նազարբաևի միջնորդական առաքելության արդյունքների մասին համատեղ կոմյունիկեն: Դրան հաջորդող օրերին ԼՂՀ-ի բնակավայրերի գնդակոծության ինտենսիվությունը աճեց: Ընդ որում, ադրբեջանական օժտմանակները շարունակում էին կիրառել անասնագողության, դաշտերի հրկիզման և փլագման, մարդկանց սպառանդ վերցնելու, ճանապարհներին սվստոտրանապոթի գնդակոծման պրակտիկան:

1991թ. աշնանը հայկական բնակավայրերի բազմաթիվ գնդակոծություններից առավել ուժգինը, թերևս, Ասկերանի շրջանի Խրամորտ գյուղի նոյեմբերի 15-ի գնդակոծությունն էր՝ կրետանու և «Ալազան» տեսակի հրթիռների կիրառմամբ: Արյուն 1991թ. նոյեմբերի կեսերից Ստեփանակերտի բնակչությունը գնդակոծությունից պատսպարվելու նպատակով ստիպված եղավ իջնել նկուղները: ԼՂՀ-ի մայրաքաղաքը ենթարկվում էր ամենօրյա գնդակոծության: Ջրից, էլեկտրաէներգիայից, ջեռուցումից և սննդամթերքից զրկված քաղաքում ապրում էին ավելի քան 55 հազար մարդ: 1991թ. նոյեմբերի ողջ երկուրդ կեսը և դեկտեմբերը Ստեփանակերտը, ինչպես նաև ԼՂՀ-ի այլ բնակավայրերը, ամեն օր ենթարկվում էին գնդակոծության: Գնդակոծությունների ժամանակ Ադրբեջանը գնալով ավելի հաճախ էր օգտագործում «Ալազան» տեսակի ռեակտիվ հրթիռներ, հրետանի, խոշոր տրամաչափի գնդացիներ: ԼՂՀ-ի մայրաքաղաքի գնդակոծումը չէր դադարում ոչ մի ժամ: Փաստացի, հայկական բնակավայրերի մերձակա բարձունքների վրա տեղակայված էին ադրբեջանական դիպուկահարները, որոնք կրակում էին ցանկացած շարժվող թիրախի վրա:

Հատկապես ինտենսիվ էր ղեկտեմբերի 10-ի գնդակոծությունը (անկախության հանրաքվեի անցկացման օրը) և 1992թ. Նոր տարվա գիշերը: Այդ օրը միայն Ստեփանակերտի վրա մոտակա ադրբեջանաբնակ գյուղերից և Շուշիից բաց էր թողնվել «Ալազան» տեսակի 86 հրթիռ և 12 հրամոթային արկ (1 մարդ զոհվեց, 5-ը՝ վիրավորվեցին): Նույն այդ գիշերը գնդակոծության ենթարկվեցին Մարտունի ավանը (սպանվել է՝ 1, վիրավորվել՝ 1 մարդ), Շահումյան ավանը (սպանվել է՝ 2, վիրավորվել՝ 1 մարդ), Մարտակերտ քաղաքը (վիրավորվել է 7 մարդ): Նույն օրը Ադրբեջանի ՕՍՕՆ-ի ստորաբաժանումները Արդամի կողմից հարձակվեցին Ասկերանի շրջանի Խրամոյտ, Ֆարուխ, Աղբուլաղ և Նախիջևանի կյուղերի վրա¹⁰⁸:

1991թ. նոյեմբերի 1-ից մինչև 1992թ. հունվարի 27-ը Լեռնային Ղարաբաղի բնակավայրերը 80 անգամ ենթարկվել են ոմբակոծությունների, որոնց ժամանակ բաց է թողնվել 2737 հրթիռ և արկ: Արդյունքում, փլուզվել կամ վնասվել են 627 շենքեր, սպանվել է 47, վիրավորվել՝ 167 մարդ: Տեղի է ունեցել 46 զինված բախում, որոնցում սպանվել է 42 մարդ: Ընդհանուր առմամբ, բախումների ժամանակ զոհվել է 157, վիրավորվել՝ 256 մարդ¹⁰⁹:

1992թ. հունվարի 13-ին Շահումյան ավանի գնդակոծության ժամանակ ադրբեջանական կողմը առաջին անգամ կիրառեց ԵՄ-21 «Գրադ» տեսակի համազարկային կրակի ռեակտիվ հրթիռային համակարգերը: Ավանի վրա 40 հրթիռներից բաղկացած համազարկ արձակվեց, որի արդյունքում զոհվեց 5 մարդ, իսկ ծանր վիրավորվեց՝ 21-ը: Հունվարի 19-ին ուժգին գնդակոծության ենթարկվեց Ստեփանակերտը և Մարտունի ավանը:

Փետրվարի սկզբին Ադրբեջանի ժողովրդական ճակատի գորապետ (փետրվարի 10-ից՝ Շուշիի պարետ, մարտի 17-ից՝ ԱՀ պաշտպանության նախարար) Ռահիմ Գազիևը «Գրադ»

հրթիռային երկու կայանքները վերատեղակայեց Ստեփանակերտից բարձր տեղադրված Շուշի քաղաքում, որպեսզի այնտեղից, արդեն այս համակարգերի միջոցով, իրականացնի բաղաքի գնդակոծությունը: «Գրադից» հրաձգությունը Ստեփանակերտի վրա վարվում էր առանց «երբ և ինչպես» կրակելու հարցի համաձայնեցման: Շուշիում գտնվող ադրբեջանցի սպաների խոստովանությամբ. «Յուրաքանչյուրը կարող էր արթնանալ առավոտյան գիշերային գիմարբուքից հետո, խուճախում նստել «Գրադի» վրա և կրակել, կրակել, կրակել Ստեփանակերտի վրա առանց նպատակի, առանց որևէ կորոլինատի»¹¹⁰: Արդյունքում, փետրվարի 13-ին, ժամը 15⁰⁰ սկսված Ստեփանակերտի հերթական գնդակոծության ժամանակ, ադրբեջանական կողմը արդեն կիրառեց բնակավայրերը գնդակոծելու համար արգելված ԵՄ-21 «Գրադ» տեսակի համազարկային կրակի ռեակտիվ հրթիռային համակարգը: Քաղաքում նշանակալից ավերածություններ եղան: Այսպես, փետրվարի 16-ի երեկոյից սկսած մինչև 17-ի առավոտը Ստեփանակերտի վրա արձակվեց «Գրադ» համակարգի մոտ 300 հրթիռ: Չոհվեց ավելի քան 10 մարդ, շուրջ 30-ը՝ վիրավորվեցին: Քաղաքում ամբողջությամբ ավերվեցին 31 շենք, տասնյակ շինություններ ստացան մասնակի վնասվածքներ: Փետրվարի 19-ին Ստեփանակերտի վրա արձակվեց ավելի քան 350 արկ, այդ թվում նաև 218 «Գրադ» համակարգի հրթիռներ: Չոհվեց մայրաքաղաքի 17 բնակիչ, 34-ը՝ վիրավորվեցին: Ամբողջ Ստեփանակերտում բոցավառվում էին հրդեհները, որոնք պարբերաբար կրկնվող հրետակոծումների պատճառով հնարավոր չէր հանգցնել:

1992թ. գարնան ընթացքում այդ գնդակոծությունների արդյունքում զոհվածների ընդհանուր քանակությունը հաշվվում էր հարյուրավոր մարդկանցով: Այսպիսով, սկսած 1991թ. նոյեմբերից մինչև 1994թ. մայիսին զինադադարի կնքումը, Ստեփանակերտ քաղաքը գործնականում ամեն օր գնդակոծվում էր զենքի տարբեր տեսակներով՝ «Ալազան» հրթիռներ, ԵՄ-21

¹⁰⁸ Տե՛ս մանրամասները՝ *Мелик-Шахназарян Л.*, Военные преступления Азербайджана против мирного населения Нагорно-Карабахской Республики. Ереван, 1997.

¹⁰⁹ Տե՛ս մանրամասները՝ *Зоян С.*, նշված աշխատությունը:

¹¹⁰ *de Baat T.*, նշված աշխատությունը, էջ՝ 239:

«Գրադ» տնտեսական կազմակերպությունը կրակի ռեակտիվ հրթիռներ, տանկեր, տարբեր տրամաչափի հրետանային հրանոթներ, իսկ հետո նաև ենթարկվեց ադրբեջանական ինքնաթիռների օդային հարձակումների: Ընդհանուր առմամբ, քաղաքի վրա ընկել են ավելի քան 21 000 «Գրադ» հրթիռներ, 2 700 «Արգամ» հրթիռներ, 1900 տարբեր տրամաչափի հրետանային արկեր, 180 գնդիկային ռումբեր, հինգ հարյուր կգ-նոց մոտ 100 ավիատումբեր, այդ թվում 8-ը՝ վակուումային:

Ստեփանակերտ քաղաքը և նրա բնակչությունը ոչնչացնելու Ադրբեջանի ձգտումը բոլորովին բացառություն չէր հանդիսանում: Ոչ պակաս ծուծկու կրակ էր բացվել նաև Ասկերան, Մարտունի և Շահումյան ավանների, Քարին Տակ, Կարաչինար, Խրամուրտ և այլ գյուղերի ուղղությամբ: ԼՂՀ-ի բնակավայրերի նմանօրինակ զանգվածային գնդակոծությունը հանդիսանում է Ադրբեջանի՝ հանուն ԼՂՀ-ի խաղաղ բնակչության ոչնչացման պատերազմելու մտադրության անհերքելի վկայությունը: Շրջափակման և մշտական գնդակոծության պատճառով 1992թ. սկզբին գյուղական վայրերից սննդամթերքի ներմուծումը Ստեփանակերտ ամբողջությամբ դադարեցվեց: Հանրապետության ղեկավարությունը ստիպված եղավ անցնելու բնակչության սննդամթերքի կտրոնային մատակարարման, սակայն փետրվարի վերջից սկսած մույնիսկ այդ չնչին քանակությունը չէր մտնում առևտրային ցանց: Առաջացավ Ստեփանակերտ քաղաքի բնակչության սովամահ լիմելու իրական վտանգ: Էլեկտրաէներգիայի, խմելու ջրի բացակայությունը վարակիչ հիվանդությունների տարածման վտանգ ստեղծեց:

Հանրապետության խաղաղ բնակավայրերի զանգվածային գնդակոծությունը հատկապես ուժեղացավ 1992թ. հունիսին՝ ադրբեջանական լայնածավալ հարձակումից հետո, որում սկստիվ մասնակցություն ունեցան նաև ԱՀ-ի տարածքում տեղակայված ռուսական բանակի զորամասերի և ստորաբաժանումների զինձառայողները: Դա հանգեցրեց փախստականների մեծ հոսքերի Շահումյանի, Մարտակերտի և Ասկերանի շրջաններից, որոնք մշտապես ենթարկվում էին հրետանային

գնդակոծության և ադրբեջանական ավիացիայի ռմբակոծության: Այսպես, 1992թ. օգոստոսի 5-ին, Ադդամի շրջանի տարածքից «Գրադով» Ստեփանակերտի գնդակոծության հետևանքով զոհվեց՝ 26 և վիրավորվեց՝ 65 մարդ: Հրետանային գնդակոծության և ավիանոսակոծության արդյունքում արդեն Ստեփանակերտում զոհվեցին 119 փախստականներ՝ Մարտակերտի շրջանից: ԼՂՀ-ի բնակավայրերի կանոնավոր հրետանային գնդակոծությունները գործնականում շարունակվեցին մինչև ռազմական գործողությունների վերջը: Մինչդեռ, 1992թ. մայիս-հունիս ամիսներից, Ադրբեջանը խաղաղ բնակչության դեմ ավելի ակտիվ սկսեց ինքնաթիռներ և ուղղաթիռներ օգտագործել (որոնք հիմնականում վարում էին նախկին ԽՍՀՄ զինված ուժերի զորամասերի վարձկան օդաչուները), ինչև հսկամարտության մեջ ավիացիայի կիրառման դեպքեր արձանագրվել էին նաև ավելի վաղ:

Դեռևս սկսած 1990թ. աշնանից Լեռնային Ղարաբաղի վրայով թռչող ադրբեջանական ուղղաթիռներից հայկական բնակավայրերի վրա բազմիցս կրակ է արձակվել ինքնաձիգներից և գնդացիներից: 1991թ. մայիսի 8-ին Շահումյանի Մեծ Շեն գյուղի վրայով թռչող ուղղաթիռներից նոսակնելու նետվեցին: Լեռնային Ղարաբաղի խաղաղ բնակչության նկատմամբ ավիացիայի կիրառման նմանօրինակ դեպքեր հետագայում բազմիցս կրկնվեցին: 1991թ. մայիսի 15-ին Հադրութի շրջանի հայկական Սպիտակաշեն գյուղի շրջանում ուղղաթիռից Ադրբեջանի ՆԳՆ ՕՍՕՆ-ի ստորաբաժանման դեսանտ իջեցվեց, որը գյուղի բնակչության լիակատար վտարում իրականացրեց: Վտարումը ուղեկցվում էր թախանով և զանգվածային կրակումներով, որի արդյունքում Մպիտակաշենը լիովին այրվեց: 1991թ. հոկտեմբերի 14-ին Շահումյանի շրջանի Կարաչինար գյուղում վայրէջք կատարեց Մո-8 քաղաքացիական մի ուղղաթիռ: Ուղղաթիռի մեջ գտնվում էին ադրբեջանական օժոնականները, որոնք կրակ բացեցին գյուղի բնակիչների վրա: 1991թ. սեպտեմբերի 18-ին ադրբեջանական կողմը առաջին անգամ կիրառեց Մո-24 ուղղաթիռները Ասկերանի շրջանի Երկազյուղ, Մեհրիշեն և Բերքաձոր գյուղերի խաղաղ բնակչու-

թյունը գնդակոծելու համար: Երկու ուղղաթիռ շկառավարվող հրթիռներով գնդակոծեցին գյուղացիների աները, ինչի արդյունքում Նորագյուղում զոհվեց մեկ կին և եւ 7 մարդ վիրավորվեց: Դրանից հետո, ընդհուպ մինչև գինադադարը, ԼՂՀ-ի խաղաղ բնակչության նկատմամբ Ադրբեջանը ակտիվորեն ռազմական ուղղաթիռներ էր կիրառում¹¹¹:

1992թ. մայիսի 8-9 Ադրբեջանը ԼՂՀ-ի խաղաղ բնակչության նկատմամբ սկսեց կիրառել նաև ռազմական ինքնաթիռներ: 80-րդ գրոհային ավիագնդից օդաչու Վագիֆ Կուրբանովի կողմից առևանգված Cy-25 գրոհային ինքնաթիռով Ստեփանակերտի, հարակից գյուղերի և նոր ազատագրված Շուշիի ռմբակոծության արդյունքում զոհվեց 30 և վիրավորվեց 120 մարդ: 1992թ. մայիսի 9-ին Ստեփանակերտից Երևան ուղևորվող չվերթային քաղաքացիական ԿԻ-40 ինքնաթիռը հարձակման ենթարկվեց և գնդակոծվեց վերոհիշյալ գրոհային ինքնաթիռի կողմից: Հարձակման արդյունքում ուղևորային ինքնաթիռը վնասվածք ստացավ և բռնկվեց: Միայն ինքնաթիռի անձնակազմի վարպետությամբ ու հմտությամբ թույլ տվեցին նրան հարկադիր վայրէջք կատարել և փրկել ուղևորների կյանքը: Այդ օրից սկսած ադրբեջանական ավիացիան կանոնավոր կերպով հարձակումներ էր կատարում Լարաբադի հայկական բնակավայրերի վրա: 1992թ. հունիսի 13-ին Վ.Կուրբանովի Cy-25 գրոհային ինքնաթիռը խվիվեց և վայր գցվեց, իսկ օդաչուն զոհվեց: 1992թ. հուլիսից, ռուսական զորքերի կողմից իրենց օդակայաններում թողնված տասնյակ ռազմական ինքնաթիռների զավթման արդյունքում, ադրբեջանական ավիացիան սկսեց արդեն խմբակային հարձակումներ իրականացնել ԼՂՀ-ի խաղաղ բնակավայրերի վրա: Դրա հետ միաժամանակ, սկսած 1992թ. օգոստոսից, Ադրբեջանը սկսեց կիրառել միջազգային կոնվենցիաներով արգելված, այսպես կոչված՝ «զնդիկավոր ավիառումբեր», որոնք նախատեսված են խաղաղ բնակչության ոչնչացման համար: Այսպես, օգոստոսի 31-ին Ստեփանակերտի վրա արձակվեց քսան «զնդի-

կավոր ավիառումբ»․ որի արդյունքում զոհվեց 16 մարդ, տարբեր կարգի ծանրության վնասվածքներ ստացան 121 մարդ:

Ինչպես նշում են ռազմական փորձագետները. «գրոհային Cy-25-ը՝ գերազանց հարմարեցված լինելով գործերի կրակային աջակցության համար, գրադվում էր բացառապես քաղաքների և գյուղերի «ռազմավարական ռմբակոծություններով»: Իսազմական ինքնաթիռների նմանօրինակ կիրառումը բնորոշ էր ողջ պատերազմի ընթացքում և, հավանաբար, գլխավոր նպատակ ուներ ոչ այնքան կոստրելու Լարաբադի Պաշտպանության ուժերի ոգին և ռազմական ներուժը, որքան ստիպելու հայ ազգաբնակչությանը լքել Լարաբադը: Մյևնույն նպատակը, որն ըստ էության չլուծված խնդիր մնաց, ուներ նաև քաղաքացիական օբյեկտների վրա անդապար հարվածներ հասցնող ադրբեջանական փողային և ռեակտիվ հրետամին»¹¹²: Ընդ որում, միայն Ստեփանակերտի վրա ադրբեջանական ավիացիան արձակել է 180 Ռ-ՄԿ (բեկորային ենթառազմաթերթով տոմբային մեկանգամյա կոնտեյներ, այսպես կոչված՝ «զնդիկավոր ռումբեր») և մոտ 100-500 կգ բեկորային ականառումբեր, ներառյալ 8. այսպես կոչված, վակուումային ռումբեր (հեյուկ պայթուցիկով ծավալային դետոնացիայով ավիառումբ):

Բոլոր այս փաստերը միանշանակորեն վկայում են Ադրբեջանի կողմից միջազգային մարդասիրական իրավունքը, մատավորապես, 1949թ. Ժնևի Կոնվենցիաների կոպիտ կերպով խախտելու մասին: Միջազգային դատարանը իր՝ Խոյիդդատավական եզրակացության մեջ մարդասիրական իրավունքի ոլորտ՝ «գլխավոր սկզբունքներ» սահմանեց որպես սովորական: Իրանը իրենց մեջ ներառում են թիրախների տարբերակման սկզբունքը և այն զենքի արգելքը, որի կիրառման ժամանակ սննհար է տարբերակել քաղաքացիական և ռազմական օբյեկտները, ինչպես նաև արգելք՝ կոնքատանտներին չափազանց մեծ տառապանքների ենթարկելու և այնպիսի զենքի կիրառման նկատմամբ, որը կոնքատանտներին կպատճառի սրկալիսի տառապանքներ կամ կհանգեցնի այդպիսի տառա-

¹¹¹ Տե՛ս մանրամասները՝ *Мелик-Шахназарян Л.*, նշված աշխատությունը:

¹¹² *Жирохов М.*, Авиация в армяно-азербайджанском конфликте // www.airwar.ru.

պանքաների անհիմաստ խորացմանը¹¹³: Այս սկզբունքները ամրագրված են Լրացուցիչ արձանագրություն I-ով, որի մի շարք դրույթների վերաբերում են պատերազմի վարման միջոցներին և մեթոդներին¹¹⁴: Լրացուցիչ արձանագրություն I-ի 35-րդ հոդվածը ասում է, որ զինված հակամարտության կողմերի պատերազմ վարելու մեթոդների և միջոցների յնտարության իրավունքը անասանհամարակալ չի հանդիսանում: Նշված հոդվածը արգելում է. «կիրառել զենք, սկաննել, նյութեր և ռազմական գործողությունների այնպիսի մեթոդներ, որոնք կարող են ավելորդ վնասներ կամ լրացուցիչ տառապանքներ պատճառել», «կիրառել ռազմական գործողությունների մեթոդներ և միջոցներ, որոնք նպատակ ունեն պատճառել կամ, ինչպես կարելի է սպասել, կպատճառեն ընդարձակ, երկարաժամկետ և լուրջ վնասներ բնական միջավայրին» (համապատասխանաբար՝ 2-րդ և 3-րդ մասեր):

Լրացուցիչ արձանագրություն I-ի 51-րդ հոդվածը արգելում է ռազմական գործողություններում այնպիսի միջոցների և մեթոդների կիրառումը, որոնք առանց տարբերակման խոցում են ռազմական օբյեկտներին և քաղաքացիական անձանց: Մի-

¹¹³ Միջազգային Կոտաբուսի «Միջուկային զենքի սպառնալիքի կամ դրա կիրառման օրինակաբանությունը»: Կոնսուլտատիվ եզրակացություն, 1996, 19-ը հովաթի, ՄԱԿ ԳԱ A/51/218, էջ 78:

¹¹⁴ Լրացուցիչ Արձանագրություն I-ում զենքի կոնկրետ տեսակների նկատմամբ արգելք չկա: Ձենքի կոնկրետ տեսակների նկատմամբ արգելքները պարունակվում են միջազգային իրավունքի հետևյալ ռազմակողմ պայմանագրերում (կոնվենցիաներում)՝ Պատերազմում հեղձուցիչ, բուսավոր կամ նմանօրինակ գազերի և մասնաբաժանական միջոցների կիրառման արգելման մասին արձանագրություն, 1925 թ.: Մանրէարսնական (կենսոարսնական) զենքի և բուսավոր զենքի մշակումը, արտադրումը և պաշարների կուտակումը արգելելու և դրանց ոչնչացման մասին կոնվենցիա, 1972 թ.: Մոխրակալ զենքի կոնկրետ տեսակների, որոնք կարող են համարվել չափազանց վնասաբեր կամ որոնք ունեն ոչ խտրական գործողության բնույթ, արգելման կամ սահմանափակման մասին կոնվենցիա, 1980 թ. և դրան կից՝ Չհայտնաբերվող բեկորների մասին (Արձանագրություն I): ականների, ական-թակալողների և այլ սարքավորումների մասին (Արձանագրություն II): հրկիզող զենքի մասին (Արձանագրություն III) և կորացնող լազերային զենքի մասին (Արձանագրություն IV) արձանագրությունները, քիմիական զենքի մշակումը, արտադրումը, կուտակումը և կիրառումը արգելելու և դրա ոչնչացման մասին կոնվենցիա, 1993 թ.: Հակահետևակային տվյալների կիրառումը, սպառնքելի կուտակումը, արտադրումը և փոխանցումը արգելելու մասին կոնվենցիա, 1997 թ.:

չազգային մարդասիրական իրավունքի մասնագետների շրջանում ճանաչված կարելի է համարել հետևյալ դրույթը. «Եթե գնահատվող զինատեսակը կամ պատերազմ վարելու միջոցներն ու մեթոդները չեն բնկնում պայմանագրային նորմերի կամ սովորական իրավունքի կոնկրետ արգելքի տակ, ապա պետությունը ինքը պետք է որոշի կամապատասխանում են արդյոք այլ նորմերը Լրացուցիչ արձանագրություն I-ի նորմերին»¹¹⁵: Նշվում է նաև, որ «Լրացուցիչ արձանագրություն I-ի 35-րդ հոդվածի 2-րդ մասում պարունակվող արգելքի կապակցությամբ Միջազգային դատարանը եկավ հետևյալ եզրակացության՝ ավելորդ տառապանքները՝ «ավելի մեծ վնաս պատճառելն է, քան այն, որն անխուսափելի է օրինական ռազմական նպատակներին հասնելու համար» (Կոնսուլտատիվ Եզրակացություն, «Միջուկային զենքի սպառնալիքի կամ դրա կիրառման օրինակաբանությունը», 1996 թ. - *հեղինակների ծանոթությունը*): Այլ խոսքով ասած, անհրաժեշտ է հավասարակշռություն հաստատել ռազմական անկրաժեշտության և այն կորստի միջև, որը պատճառում է զենքը, որպեսզի վերջինս չափազանց չլինի տվյալ ռազմական անհրաժեշտության նկատմամբ»¹¹⁶:

Այսպիսով, Այրբեջանի կողմից Ղարաբաղի խառնուրդ բնակչության նկատմամբ սպառազինության (հատկապես ծանր կրեռանու, համազարկային կրակի ԵՄ-21 «Գ-րադ» ռեակտիվ համակարգերի, բնակավայրերի փաստացի «գորգային ռմբակոծումները» ավիացիայի կողմից և այլն) ոչ խտրական կիրառումը միանշանակորեն վկայում են միջազգային և միջազգային մարդասիրական իրավունքի հիմնարար նորմերի և սկզբունքների խախտման մասին:

¹¹⁵ *Dayem H., Kuzleno P., Hecoy P.*, Новые войны - новое оружие? Обязанности государств оценивать законность средств и методов ведения войны // *Международный журнал Красного Креста. Сборник статей.* 2002, с. 105.

¹¹⁶ *Dayem H., Kuzleno P., Hecoy P.*, նշված աշխատությունը, էջ 105:

ԿՈՄՔԱՏԱՆՏՆԵՐԻ, ՎԱՐՉԿԱՆՆԵՐԻ,
ՓԱՆՍՏԱԿԱՆՆԵՐԻ և ՆՏԱ-Ի ԿԱՐԳԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ՀԱՐԱՔԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՐԱՔԱՂՅԱՆ
ՀԱԿԱՍԱՐՏՈՒԹՅԱՆ ՄԵՉ

Միջազգային մարդասիրական իրավունքի հիմքում, ի սկզբանե, ընկած են երկու արտոնյալ կատեգորիաներ՝ կոմբատանտներ և քաղաքացիական անձինք: Կոմբատանտները «իրավունք» ունեն անմիջական մասնակցություն ունենալու ռազմական գործողություններում: Գերի ընկնելու դեպքում նրանք ունեն ռազմագերու կարգավիճակ: Պայմանները, որոնց անհրաժեշտ է համապատասխանել կոմբատանտ-ռազմագերու կարգավիճակի իրավունք ստանալու համար, բերվում են Ռազմագերիների նկատմամբ վերաբերմունքի մասին ժնկի 1949թ. Կոնվենցիայի (Ժնևի Կոնվենցիա III) 4-րդ հոդվածում, ինչպես նաև Ժնևի Կոնվենցիա III-ի պրոյեկտերը զարգացնող 1977թ. Լրացուցիչ արձանագրություն I-ի 43-րդ և 44-րդ հոդվածներում: Ռազմագերիների հետ չեն վարվում որպես հանցագործների, չնայած նրանք կարող են ենթարկվել դատական հետապնդման, ինչպես հակամարտության ընթացքում, այնպես էլ մինչև այն՝ իրականացրած հանցագործության համար:

Քաղաքացիական անձինք օգտվում են իրենց կարգավիճակից բխող պաշտպանության իրավունքից: Միջազգային մարդասիրական իրավունքում գործում է ընդհանուր դրույթ այն մասին. որ նրանք օգտվում են պաշտպանությունից այն վտանգների մասով, որոնք առաջանում են պատերազմական գործողությունների կապակցությամբ և չպետք է դառնան հարձակման թիրախ: Քաղաքացիական անձինք օգտվում են նմանօրինակ պաշտպանությունից այնքան ժամանակ, քանի դեռ անմիջական մասնակցություն չեն ունենում ռազմական գոր-

ծողություններին¹¹⁷: Բացառությամբ շատ հազվադեպ, հուսույսարատից ծագող զանգվածային զինված երայրների, քաղաքացիական անձինք իրավունք չունեն անմիջականորեն մասնակցելու ռազմական գործողությունների: Եթե նրանք, այնուհանդերձ, անմիջական մասնակցություն են ունենում ռազմական գործողություններում, նրանք մնում են քաղաքացիական անձինք, սակայն հանդիսանում են հարձակման համար օրինական օբյեկտ այն ողջ ժամանակահատվածի ընթացքում, քանի դեռ հանդես են գալիս այդ կերպ:

Վերոնշյալը, բացահայտում է միջազգային մարդասիրական իրավունքի շրջանակներում (միջազգային իրավունքը զինված հակամարտությունների ընթացքում) քիչ թե շատ կոնսուսուսային մոտեցումը այն հարցում, թե որ սուբյեկտները և օբյեկտներն են հանդիսանում օրինական հարձակման թիրախ և թե ինչպիսին է վերաբերմունքը զինված հակամարտության ընթացքում հարձակման օրինական կամ անօրինական թիրախ հանդիսացող սուբյեկտների և օբյեկտների նկատմամբ: Մակայն, միջպետական հակամարտությունը չի սահմանափակվում դիմակայության միայն զինված փոկով: Միշտ անհրաժեշտ է հաշվի առնել նաև օբյեկտիվ բնույթի հետպատերազմյան իրավիճակները, որոնք ձևավորվում են որպես զինված հակամարտության այս կամ այն ելքի հետևանքներ: Ռազմական գործողությունների ավարտից հետո, կողմերի միջև հակամարտության վիճակի հաղթահարման և նրանց միջև բոլոր խնդրահարույց հարաբերությունները լուծելու հարցում, առաջաջնային նշանակություն է ձեռք բերում երկու կողմերից փախստականների և բռնի տեղահանված անձանց օբյեկտիվ առկայության փաստը: Ընդ որում, կարևոր է, որպեսզի գործող միջազգային իրավունքի նորմերի և արդարության սկզբունքի հիման վրա օբյեկտիվ իրավաքաղաքական գնահատական տրվի նշված անձանց կարգավիճակին, ինչն անհրաժեշտ է հակամարտության բուն էությունը մարդասիրական չափման մեջ հասկանալու համար:

¹¹⁷ Լրացուցիչ Արձանագրություն I, մաս 3-րդ, հոդված 51. 1977 թ.:

Եթե փախստականներին վերաբերող իրավունքի դրույթներում առկա է «փախստական»¹¹⁸ հասկացության հստակ սահմանումը, ապա միջազգային մարդասիրական իրավունքում, ընդհակառակը, պարունակվում է միանգամայն անորոշ ձևակերպում և ընդհանրապես, ինքը՝ «փախստական» տերմինը կիրառվում է միայն խիստ հազվադեպ դեպքերում¹¹⁹: Տերմինի լայն նշանակությամբ (փախստականներ և բռնի տեղահանվածներ) «Տեղաշարժված անձանց» պաշտպանության սկզբունքը առավել խտացված ձևով կարելի է հայտնաբերել բոլոր ԺՆԼԻ կոնվենցիաների համար ընդհանուր 3-րդ հոդվածում՝ «Անձինք, որոնք անմիջականորեն չեն մասնակցում ռազմական գործողություններին (ընդգծված է հեղինակների կողմից), ներառյալ զինված ուժերի կազմից այն անձինք, որոնք վայր են դրել զենքը, ինչպես նաև նրանք, որոնք դադարել են մասնակցություն ունենալ ռազմական գործողություններում հիվանդության, վիրավորվելու, կալանավորվելու կամ զանկացած այլ պատճառով, բոլոր պարագաներում առանց խտրականության պետք է օգտվեն մարդասիրական վերաբերմունքից...»:

Մարդասիրական իրավունքի փաստաթղթերը, ի տարբերություն 1951թ. Փախստականների կարգավիճակի մասին Կոնվենցիայի, փախստականներին պաշտպանության տրամադրումը չեն պայմանավորում նրանց կարգավիճակի իրավաբանական սահմանմամբ: Անկախ այն բանից, թե ինչի՝ հետապնդման, զինված հակամարտության կամ անկարգությունների այդպիսիքում է տեղաշարժված անձը լքել իր սշտական բնակության վայրը, այն օգտվում է պաշտպանությունից որպես քաղաքացիական անձ, որի վրա ներագդել են ռազմական գործողություններ՝ լինի դա միջազգային, թե ներքին զինված հակամարտություն: Այն փաստը, որը մարդը հատել է միջազգային սահմանը՝ նույնպես որոշիչ չի հանդիսանում.

¹¹⁸ Փախստականների կարգավիճակի մասին Կոնվենցիա, հոդված 1, 1951թ.:

¹¹⁹ *Лавуаге Ж-Ф.* Беженцы и перемещённые лица: международное гуманитарное право и роль МККК // Защита лиц и объектов в международном гуманитарном праве. Сборник статей и документов. М., 1999, с. 201.

1949թ. պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության ժնկյան Կոնվենցիան (Ժնկյան Կոնվենցիա IV) և 1977թ. Լրացուցիչ արձանագրությունների համապատասխան դրույթները ուղղված են այն բանին, որ կանխարգելեն կամ, առնվազն, սահմանափակեն հակամարտության իրավիճակների ներագդեցությունը քաղաքացիական անձանց վրա, որոնք կարող են հայտնվել նման իրավիճակներում և զգան իրենց՝ հատկապես խոցելի¹²⁰:

Որոշ զինված հակամարտությունների օբյեկտիվ առկա վիճակի, կողմերի միջև դիմակայության զինված փուլում տեղ գտած կոնկրետ հանգամանքների նկատմամբ կիրառելության առումով կարևորվում է 1951թ. Կոնվենցիաներով «փախստականի» կարգավիճակի տարածման կամ չտարածման հարցը այն «քաղաքացիական անձանց» վրա, որոնք ամենաակտիվ մասնակցությունն են ունեցել սեփական պետականությունը կառուցելու ազգի իրավունքի ժխտման ռազմական փուլում: Դիտարկելով դարաբաղյան հակամարտության 1991-1994թթ. պատերազմական ժամանակահատվածը, ամիրաժևշտ է պարզել Լեռնային Ղարաբաղի և Գաշտալի Գարաբաղի մի շարք հարակից շրջանների այդքեջանական բնակչության տեղն ու դերը ԼՂՀ-ի հռչակումից առաջ և հետո՝ ռազմական օպերացիաների և դիվերսիոն գործողությունների պլանավորման, նախապատրաստման, սահմազերծման և իրականացման մեջ: Նշված գործողությունների գլխավոր նպատակը, ախաբելչական ուղղվածությունը դրսևտրվեց Գարաբաղի քաղաքացիական հայ բնակչությանը ախաբեկելու և վախեցնելու, նրան իր սեփական պետությունը կառուցելու իրավունքի իրականացումից հրաժարվելու պարտադրանքի ձևով, ինչպես նաև գտավ իր արտաքին օբյեկտավորված արտահայտությունը նախկին Ադրբ. ԽՍՀ-ի ողջ տարածքում հայ ազգաբնակչության վտարման ընթացքում զանգվածային բռնի գործողությունների, քաղաքացիական անձանց զանգվածային սպա-

¹²⁰ *Морис Ф., де Куртени Ж.* Действия МККК в интересах беженцев и гражданских перемещённых лиц // Защита лиц и объектов в международном гуманитарном праве / Сборник статей и документов. М., 1999, с. 175-176.

նությունների իրականացման և ներքին քաղաքական նպատակներով (Խոջալուի սադրանքը) սեփական ադրբեջանական ազգաբնակչության նկատմամբ զանգվածային սադրանքներ կազմակերպելու, քաղաքացիական օբյեկտների և բնակավայրերի վրա ոչ խտրական հարձակումների մեջ: ԱՀ-ի կառավարական ուժերի կողմից վարձկանների¹²¹ (այդ թվում՝ աֆղան մոջահեդների և չեչեն գրոհայիների¹²²), լայն ներգրավումը 1992-1994թթ. ռազմական գործողությունների ժամանա-

¹²¹ Գոյություն ունի վարձկանների հավաքագրման, օգտագործման, ֆինանսավորման և ուսուցման դեմ պայքարի Միջազգային կոնվենցիա, 1989 թ., որի դրույթների համաձայն. 1) ««վարձկան» տերմինը նշանակում է ցանկացած անձ, որը. ա) նախույ կազմակերպված է տեղում կամ արտասահմանում այն նպատակով, որպեսզի կռիվ գինված հակամարտության մեջ, բ) մասնակցելով ռազմական գործողություններին՝ դեկավարվում է գլխավորապես անձնական օգուտ ստանալու ցանկությանը, գ) չի հանդիսանում հակամարտության մեջ գտնվող երկրի քաղաքացի և ոչ էլ՝ հակամարտության մեջ գտնվող վերահսկող երկրի տարածքում մշտապես բնակվող անձ, դ) չի մտնում հակամարտության մեջ գտնվող երկրի գինված ուժերի կազմի մեջ՝ կատարելու համար իր պաշտոնական պարտականությունները երկրի գինված ուժերում» (հոդված 1), 2) «Ցանկացած անձը, որը հավաքագրում, օգտագործում, ֆինանսավորում կամ սովորեցնում է վարձկաններին, որոնց օստիանումը բերված է սույն Կոնվենցիայի 1-ին հոդվածում, հանցագործություն է գործում սույն Կոնվենցիայի իմաստով» (հոդված 2); 3) «Մասնակից-պետությունները չեն ընտրում, չեն օգտագործում, չեն ֆինանսավորում կամ ուսուցանում վարձկաններին միջազգային իրավունքով ճանաչված ժողովուրդների ինքնորոշման անբաժան իրավունքի օրինական իրականացմանը հակադրելու նպատակով և միջազգային իրավունքի համապատասխան ընդունում են պատշաճ միջոցներ այդ նպատակով վարձկանների հավաքագրումը, օգտագործումը, ֆինանսավորումը կամ ուսուցումը կանխարգելելու համար» (հոդված 3, մաս 2). ՄԱԿ-ի ԳԱ «Ազրեյիայի սահմանում» 3314 (XXIX), 1974թ., որոշման, 3-րդ հոդվածի «գ» կետի «պատրաստ կողմից կամ պետության անունից գինված բանդաների, խմբերի և կանոնավոր ուժերի կամ վարձկանների ուղարկումը, որոնք իրականացնում են գինված ուժի կիրառման ակտեր այլ պետության նկատմամբ, որոնք կրում են այնպիսի լուրջ բնույթ, որ դա համարժեք է վերոնշյալ ակտերին (ներխուժում, հարձակում, ռմբակոծում, շրջափակում և այլն – ծանոթությունը՝ հեղինակների), կամ նրա նշանակալից մասնակցությունը դրանցում կողակվի որպես ագրեսիայի ակտ»:

¹²² Չեչեն, աֆղան և այլ վարձկանների ու միջազգային ահաբեկիչների մասնակցության մասին Ադրբեջանի կողմից տե՛ս սույն աշխատության Հավելվածը: Տե՛ս նաև մանրամասները՝ *Демоян Г. Исламские наемники в в карабахской войне: К истокам провинкования сети международного терроризма в Азербайджан // Карабахская драма: скрытые действия. Ереван, 2003; Demoyan H. Islamist Mercenaries in the Karabakh War: The Way International Terrorist Network Penetrated Azerbaijan. Yerevan, 2004.*

կաշրջանում նույնպես վկայում է դարաբաղյան հակամարտության ռազմական փուլում ադրբեջանական մասնակցության ահաբեկչական բնույթի մասին¹²³, ինչը հիմք չի տալիս միջազգային մարդասիրական իրավունքով և միջազգային իրավունքով ընդհանուր առմամբ արգելված գործողություններ անմիջականորեն իրականացրած և դրանց աջակցած սուբյեկտների նկատմամբ կիրառել փախստականների կարգավիճակ տնեցող խաղաղ բնակիչներ որակումը: Ինչպես հայտնի է, ռազմական գործողությունների շրջանում Ադրբեջանը դարաբաղյան ճակատում ակտիվորեն օգտագործել է մեծ քանակությամբ օտարերկրյա վարձկաններ¹²⁴:

Մասնավորապես, 1993թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին, դարաբաղյան ճակատի բոլոր տեղամասերում ռազմական գործողություններին մասնակցելու համար ժամանեցին շուրջ 1500 մոջահեդներ: Նրանք առանձնակի ակտիվությամբ օգտագործվում էին հետախուզական-դիվերսիոն խնդիրների լուծման համար՝ առաջավոր գրոհային ստորաբաժանումներ, ինչպես նաև ադրբեջանական բանակի թիկունքում արգելափակիչ ջոկատներ ձևավորելու նպատակով: Աֆղանական վարձկանները մինչ ռազմական դիրքեր ուղարկելը կենտրոնացվում էին Գերան և Էրզի բնակավայրերի ուսումնական ստորաբաժանումներում: Ադրբեջանի գինված ուժերի ցուցակային կազմում նրանք հաշվառված էին որպես «հատուկ հանակազմ», իսկ ռազմական ստորաբաժանումներում գրանց-

¹²³ Ժողովրդավարական կրկնների շրջանում միջազգային հարաբերությունների ժամանակակից ընկալմամբ, իրավաքաղաքական զարգացման փոխանաչված և լայնորեն համաձայնեցված սակավաթիվ տեսակետներից մեկը հանդիսանում է դրույթն այն մասին, որ «ահաբեկչական կազմակերպություններին անենահեշտը կոնքրետացնող կարգավիճակ տրամադրելու մեթոդն է իրենց գործողություններում, առհասարակ, նրանք չեն պահպանում կոնքրետանտների և քաղաքացիական բնակչության միջև եղանակարար տարբերությունը, հաճախ մերժելով նմանօրինակ ցանկացած պահանջ: Օրինակ, 1998թ. Ուսամա բեն Լադենը իր ուղեքնամ նշում է ամերիկացիներին և նրանց դաշնակիցներին՝ ինչպես քաղաքացիական, այնպես էլ գինվորական անձանց ապանելու պարտքի մասին»: Տե՛ս *Уткин К., Комбатанты, «непривилегированные воюющие» и конфликты XXI века//Материал для Неформальной встречи экспертов на высшем уровне, посвящённой теме «Подтверждение и развитие международного гуманитарного права», 2003 г., с. 10.*

¹²⁴ Տե՛ս մանրամասները՝ սույն աշխատության Հավելվածում:

ված էին «Ա ջոկատ» անվան տակ: Նրանք գործում էին առանձին գումարտակների կազմում: Աֆղան մոջահեդներից կազմավորվել էր նաև առանձին հրետանային գունդ:

Ադրբեջանում աֆղան վարձկանների ընդհանուր հրամանատարությունը իրականացնում էր էքնիկ թաջիկ «գեներալ» Մամունը: Աֆղան վարձկանների մյուս հրամանատարներից ամիրաժեշտ է հիշատակել «գեներալ» Ախիջերիին, Մարտակերտի ուղղությամբ հրամանատար Վալդուլային, «Ա ջոկատ»-ի հրամանատարներ Վազերիին և Խոջա-Մալիքին: Մոջահեդները ադրբեջանական ազգության զինծառայողների համեմատությամբ օգտվում էին հատուկ արտոնություններից: 1994թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին, զինադադարը կնքելուց հետո, աֆղանական վարձկանները Իրանով դուրս բերվեցին Ադրբեջանից: 1992-1993թթ. հիմնականում Մարտակերտի և Աղդամի ուղղությամբ գործում էին չեչեն վարձկանների մի քանի առանձին ջոկատներ, որոնք գլխավորապես իրականացնում էին հետախուզական-դիվերսիոն առաջադրանքներ: Ռեզմական գործողությունների ակտիվ փուլի հենց սկզբից ադրբեջանական բանակի կազմում կռվում էր ռուս և ուկրաինացի վարձկանների մեծ քանակություն, որոնք ծառայում էին բոլոր զորատեսակներում՝ ցամաքային զորքերից մինչև ավիացիա: Հենց սլավոնական վարձկաններն էին, որ սպասարկում էին ադրբեջանական բանակի առավել բարդ տեխնիկան: 1994թ. հունվար-փետրվար ամիսներին Ադրբեջան ժամանեց վարձկանների մի մեծ խումբ Ռուսաստանից և Ուկրաինայից: Նրանց օգնությամբ ադրբեջանական ռազմական հրամանատարությունը ԼՂՀ-ի Պաշտպանության բանակի թիկունքում 1994թ. ապրիլին պլանավորել էր իրականացնել յայնամասշտաբ օդադեսանտային «Էդելվես» օպերացիան¹²⁵: ԼՂՀ-ի Պաշտպանության նախարարության գնահատականներով, ադրբեջանական բանակի կազմում դարաբաղյան ճակատի մարտերում մասնակցած ռուս և ուկրաինացի վարձկանների ընդհանուր քանակությունը կազմում էր ավելի քան 5000 մարդ:

¹²⁵ Տվյալները ներկայացված են ԼՂՀ Պաշտպանության նախարարության կողմից:

Կարևոր նշանակություն ունի նաև կոմբատանտների, վախստականների և ՆՏԱ-ի կարգավիճակների միջև հարաբերակցության խնդիրը, հատկապես Ադրբեջանի ղեկավարության կողմից դարաբաղյան հակամարտության ընթացքում տուժած ադրբեջանական ՆՏԱ-ի բանակության վերաբերյալ ակնհայտորեն ուռճացված տվյալների համատեքստում, որոնց թվին պաշտոնական Բաքում վերագրում է նաև Ադրբեջանի ՊՆ-ի և ՆԳՆ-ի բազմաթիվ ռազմականացված կազմավորումների և կանոնավոր զորամասերի նախկին անդամներին, որոնք հավաքագրվել են Ղարաբաղի և հարակից շրջանների ադրբեջանական ազգաբնակչությունից և որոնց նկատմամբ կիրառելի է միայն կոմբատանտների և ԼՂՀ-ի դեմ ռազմական ազդեցիկ ալտիվ մասնակիցների կարգավիճակը:

Ադրբեջանում պետական մակարդակով Լեռնային Ղարաբաղի և հարակից շրջանների ադրբեջանական ազգաբնակչության ներկայացուցիչներից զինված ջոկատների կազմավորումը սկսվեց դեռևս 1990թ. վերջերին: Արդեն 1991թ. հունվարի 22-ին ապօրինաբար կազմավորված Շուշիի հեռուստակայանը քաղաքում անցկացված ցույցի կադրեր ցուցադրեց, որտեղ ժողովրդական պատգամավորների շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի նախագահը ներկաներին կոչ էր անում երգել, որ նրանք կանեն ամեն ինչ, որպեսզի Լեռնային Ղարաբաղում ոչ մի հայ չմնա: Ցույցի եկած մի քանի հազար մարդիկ պատրաստակամությամբ երգվեցին և սկսեցին անդամագրվել զինված ջոկատներում: Ռնդ որում, ադրբեջանական ազգաբնակչության կազմից զինված ջոկատների կազմավորումի սկզբնականում օրինականացվել էր Ադրբեջանական ԽՍՀ ՆԳՆ-ի և ՕՍՕՆ-ի մարմինների հաստիքային կառուցվածքի ընդարձակմամբ: 1991թ. սկզբից, Ադրբեջանի ՕՍՕՆ-ի թվաքանակը Լեռնային Ղարաբաղում կտրուկ աճեց: Ինչպես փետրվարի 3-ին հանրապետական հեռուստատեսությամբ հայտարարեց Ադրբեջանի ներքին գործերի նախարար Մամեդ Ասադովը. «...Լեռնային Ղարաբաղի տրամագծով տեղակայված են Ադրբեջանի ՆԳՆ ՕՍՕՆ-ի 10000 ծառայողներ: Օրերս այդ թիվը կաճի ևս 600 մարդով...Մենք ծրագրում ենք

ԼՂԻՄ-ի ադրբեջանաբնակ գյուղերում ՕՍՕՆ-ի աշխատակիցների քանակությունը հասցնել մինչև 5000 և ավելի... Մտնել Ղարաբաղ և գրավել այն՝ զուտ տեխնիկական խնդիր է...»: Նույն հարցազրույցում Ասադովը տեղեկացրեց ԽՍՀՄ-ի կենտրոնական մարմիններին ուղղված Խորհրդային Ադրբեջանի ղեկավարության՝ հանրապետությունում տեղակայված Խորհրդային բանակի ստորաբաժանումներում ադրբեջանցիների թվաքանակը մինչև 50%¹²⁶ հասցնելու պահանջով դիմումի մասին: Մ. Ասադովի խոսքերով, 1991թ. առաջին կեսին, հատկապես ԽՍՀՄ ՊՆ և ՆԳՆ զորամասերի հետ համատեղ «Օդակ» օպերացիան իրականացնելու շրջանում, Ադրբեջանական ԽՍՀ-ի ղեկավարության կողմից Ղարաբաղում ստեղծվել է «22 միլիցիայի բաժանմունքներ... Բռնագաղթվել են շուրջ 20 հայկական գյուղեր, որոնք ունեն... ռազմավարական նշանակություն...»: Ինչպես հետո ավելացրեց ադրբեջանցի նախարարը. «Ներկայումս Ղարաբաղում տեղաբաշխված է 5000 խորհրդային զինվոր, մենք աշխատում ենք նրանց հետ: Սակայն եթե կենտրոնը այնտեղից հետ կանչի զորքերը, ապա մենք ստիպված կլինենք զինվորական ծառայությունից հետ կանչել մեր 100 հազար ադրբեջանցիներին և տեղաբաշխել նրանց խորհրդային զորքերի կողմից լքված կետերում»¹²⁷:

1991թ. նոյեմբերի 7-ին Ադրբեջանի ՆԳՆ-ի որոշմամբ ԼՂՀ-ի բոլոր ադրբեջանաբնակ գյուղերում վերադարձվեցին խորհրդային զորքերի կողմից ավելի վաղ առգրավված որսորդական զենքը, և այդ պատրվակի տակ որսորդականի հետ այդ բնակավայրեր բերվեց նաև ռազմական հրաձգային զենք, ինչը հնարավորություն տվեց հանրապետության ադրբեջանցիներին կտրուկ ակտիվացնել հայ ազգաբնակչության դեմ ուղղված ռազմական գործողությունները: 1991թ. սեպտեմբերի 5-ին Ադրբեջանի Պաշտպանության նախարարության ստեղծումից և երկրի խորհրդարանի կողմից Ադրբեջանի Ազգային բանակ (ԱԱԲ) ստեղծելու մասին հոկտեմբերի 9-ին որոշում

¹²⁶ Տե՛ս մանրամասն՝ Լ Մելիք-Շահնազարյան, նշված աշխատությունը:

¹²⁷ Նույն տեղում:

կայացնելուց հետո, ադրբեջանական զինված ուժերի առաջին կանոնավոր զորամասերը կազմավորվեցին ԼՂՀ-ի և հարակից շրջանների ադրբեջանական բնակչության թվից: Մասնավորապես, Ադրբեջանի Ազգային պաշտպանության խորհրդի երկու անդամներ Ռահիմ Գազիևի և Էթիբար Մամեդովի նախաձեռնությամբ, նոյեմբերի 9-ին արդեն ԼՂՀ-ի Շուշիի շրջանի բնակիչներից կազմավորվեց Շուշիի առաջին տարածքային գումարտակը: Նոյեմբերի 19-ին այդպիսի տարածքային գումարտակ է ստեղծվել նաև Շուշիի հարակից Լաչինի շրջանում: 1992թ. հունվարի 22-ին Շուշիի և Լաչինի գումարտակները վերակազմավորվեցին, համապատասխանաբար՝ Ադրբեջանի Պաշտպանության նախարարության կանոնավոր 1-ին և 2-րդ գումարտակների: Այսպիսով, Ադրբեջանի Ազգային բանակի առաջին կանոնավոր զորամասերը կազմավորվել են համարյա բացառապես Լեռնային Ղարաբաղի ադրբեջանական բնակչության թվից: Գրեթե անմիջապես, այդ զորամասերը, թերևս, բավականին անհաջող, սկսեցին օգտագործվել ԼՂՀ-ի հայ ազգաբնակչության դեմ վարվող մարտերում: Այսպես, արդեն 1992թ. հունվարի 26-ին, Ադրբեջանի պաշտպանության նորանշանակ նախարար Թաջադդին Մեխթիևը ԱԱԲ-ի Շուշիի 1-ին գումարտակը գրոհի նետեց հայկական Քարին Տակ գյուղի դեմ: Գրոհն ավարտվեց անհաջող, Շուշիի գումարտակը միայն սպանվածներով կորցրեց 123 զինվոր¹²⁸:

Փետրվարի սկզբին Գազիևի հրամանատարությամբ Շուշիում ստեղծվեց ԱԱԲ-ի ռազմական պարետատունը: 1992թ. մարտի 17-ին Ռ. Գազիևին նշանակեցին պաշտպանության նախարար և նա վերադարձավ Բաքու, իսկ 1992թ. ապրիլին փոխգնդապետ Էլբրուս Օրուջևի ղեկավարությամբ կազմավորվեց Ադրբեջանի ՊՆ-ի Շուշիի արդեն մի ամբողջ բրիգադը: Էլբրուս Օրուջևին, բացի Շուշիից, նշանակեցին նաև երեք քաղաքների՝ Լաչինի, Ղուբաթլուի և Ջանգելանի ռազմական պարետ: Բնականաբար, Շուշիի բրիգադի անձնակազմը հիմնականում հավաքագրված էր ԼՂՀ-ի Շուշիի շրջանի ադրբեջա-

¹²⁸ Մուսկոբ Ա., նշված ստեղծագործությունը, էջ՝ 59:

նական բնակիչների շարքերից: Նույն ժամանակահատվածում, Ադրբեջանի պաշտպանության մախարարության մախկին 2-րդ գումարտակի հիման վրա կազմավորվեց տարածքային պաշտպանության Լաչինի գունդը, որը 1992թ. մայիսին ուներ շուրջ 3000 մարտիկ՝ տեղական ռազմական առաջնորդ, Ժողովրդական ճակատի անդամ Արիֆ Փաշակի¹²⁹ հրամանատարությամբ: ԼՂՀ-ի և հարակից շրջանների ադրբեջանցի բնակիչներին Ադրբեջանի կանոնավոր զորամասեր հավաքագրելու պրակտիկան շարունակվեց ընդհուպ մինչև 1994թ. զինադադարի կնքումը: Մասնավորապես, հենց նրանք էին կազմում Ադղամի և Ֆիզուլու բրիգադների, Լաչինի և Ջանգելանի տարածքային գնդերի, Գերանբոյի առանձին գումարտակի և մի շարք այլ ստորաբաժանումների կորիզը, որոնք ակտիվորեն մասնակցում էին ԼՂՀ-ի դեմ իրագործվող ագրեսիային: Ռազմական գործողությունների մասնակիցների հիշողություններով, 1993-1994թթ. ադրբեջանական բանակի ծնունային հարձակման ժամանակ, Լեռնային Ղարաբաղի հյուսիս-արևմուտքում դրան իր ակտիվ մասնակցությունն ունեցավ Քելբաջարի 3-րդ գունդը՝ կազմավորված այդ շրջանի տեղաբնակ ադրբեջանցիներով¹³⁰:

Ընդ որում, անհրաժեշտ է հաշվի առնել, որ ադրբեջանական բանակի զորամասերում բավականին մեծ տոկոս էին կազմում հանցագործ անցյալով մարդիկ կամ ուղղակի քրեական հանցագործները: Ադրբեջանի իշխանությունները 1992թ. յուրատեսակ «համաներում» անցկացրեցին հարյուրավոր բանտարկյալների համար, որոնք կամավոր ցանկություն էին արտահայտել մասնակցելու Լեռնային Ղարաբաղում ռազմական գործողություններին¹³¹: Հատկապես մեծաքանակ հանցագործներ են ծառայել Ադղամի ադրբեջանական զորամասե-

լում, որոնք հայտնի էին ողջ Ադրբեջանում իրենց «գողական սուլանդույթներով»¹³²:

Բնական է, որ այդպիսի պայմաններում, այն անձանց վրա, որոնք նախկինում բնակվել են ԼՂՀ-ում ու հարակից շրջանների տարածքներում և ակտիվորեն մասնակցել են Լեռնային Ղարաբաղի ժողովրդի դեմ ռազմական գործողություններին և ագրեսիային կամ աջակցել են դրան, չի կարող տարածվել վախատականի կամ ՆՏԱ-ի կարգավիճակը:

¹²⁹ 1992 թվականի գարնանը ելյոթֆիզիոլոգ Քյամալ Ալին եկավ Աղզամ կովերու. «Էրբ 1992 թվականին ես եկա Աղզամ՝ բանակ, որպես այդպիսին չկար, կային միայն վեց կամ յոթ առանձին ստորաբաժանումներ, որոնք կազմում էին հայերի հետ: Այդ խմբերը կազմակերպվել էին տեղական հանցագործների, ավազակների կողմից, որոնք երկար տարիներ անց էին կացրել խորհրդային բանտերում սպանության և այլ հանցագործությունների համար... Սակայն այդ խմբավորումները հակամարտում էին միմյանց հետ ճիշտ այնպես, ինչպես հայերի հետ: Օրինակ, պայմանավորվում էին զավթել ռուսական պահեստները: Չավթումից հետո մեկին հասավ հինգ տանկ, իսկ մյուսին՝ ոչինչ: Եվ վերջ: Այսուհետ նրանք թշնամիներ են: Այդ որստճառով, այդ խմբավորումները ի վիճակի չէին իրականացնել որևէ կամայական գործողություն»: ...Այդպիսի զինված խմբերից մեկի հրամանատարն էր Յազուր Մամեդը, որը առաջներում զբաղվում էր գերեզմանաքանդակի վրա փորագրությամբ և տեղակայել էր իր ռազմական ջոկատը գերեզմանոցում: Ավելի ուշ նրան ձերբակալեցին՝ մեղադրանք ներկայացնելով գոհված զինվորների դիակներով համար դրամաշորթության մեջ, իսկ դիակները նա պահում էր սառեցված վիճակում՝ սառնարանային պահեստարանում: Մյուս հրամանատարը Ասիֆ Մահերամովն էր, որը վերջերս է դուրս եկող բանտից, որտեղ պատիժ էր կրում մարդասպանության համար: Նրա մականունը «Ֆրեյդ» էր, քանի որ մտավորականի համբավ ուներ...»: Ինչպես խոստովանեց Քյամալ Ալին. «Այն ժամանակ մեր բանակը ղեկավարում էին հանցագործները»: Մեջբերումները՝ համաձայն *Դե Կուայթ*, *de Baas T.*, նշված աշխատությունը, էջ 227:

¹²⁹ *de Baas T.*, նշված ստեղծագործությունը, էջեր՝ 240-242, 248-249:

¹³⁰ *Аббасов И., Мамедов Д., Азербайджанские военные вспоминают военное фиаско//Война и мир на Кавказе: 100 избранных статей Кавказского информационного еженедельника. IWPР: Лондон, 2005, с. 76-78.*

¹³¹ *Юнусов А.*, указ. соч., с. 65.

ԱԳՐՔԵԶԱՆԻ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՌԱԶՄԱԿԱՆԱՑՈՒՄԸ՝
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՍՏԱՐՏՈՒԹՅԱՆ ԽԱՂԱՂ
ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ԱՊԱԿԱՑՈՒՆԱՅՆՈՂ ԳՈՐԾՈՆ

Ինչպես արդեն նշվել է, 1990-1992թթ., Ադրբեջանը իր տարածքում տեղակայված մախկին Խորհրդային Բանակի զորամասերի, ինչպես նաև ԽՍՀՄ ՆԳՆ և ՊԱԿ-ի զորքերի գործնականում ողջ սպառազինության յուրացման արդյունքում ստացավ զենք և ռազմական տեխնիկա. ինչպես նաև զինամթերք և ռազմական գույք, որը մի քանի անգամ գերազանցում էր Վրաստանին, Հայաստանին և ԼՂՀ-ին բաժին հասածը՝ միասին վերցրած: Բացի այդ, Ադրբեջանին բաժին հասավ ավելի մեծաքանակ ավիացիոն տեխնիկա և Կասպից ծովի ռազմական նավատորմը, այդ այն դեպքում, երբ Հայաստանը բաժանման ժամանակ ընդհանրապես ոչ մի ռազմական ինքաթիւ և, բնականաբար, ռազմածովային սպառազինություն չի ստացել: Ինչպես նշում են արևմտյան փորձագետները, հենց Ադրբեջանի ռազմատեխնիկական ճնշող առավելությունը Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Պաշտպանության բանակի զորամասերի նկատմամբ, հատկապես Ադրբեջանի կողմից 1992-1994թթ. Ուկրաինայից հարյուրավոր տանկեր և ՌՉՄ-ներ ձեռք բերելուց հետո, դարձավ Հարավային Կովկասում սպառազինությունների մրցավազքի սկզբնավորման գլխավոր պատճառը¹³³: Միաժամանակ, Ադրբեջանի ռազմականացումը աչքի է ընկնում ռազմական ծախսերի և այլ երկրներից ստացվող ռազմական և ֆինանսական օգնության աճող ծավալներով:

¹³³ Hagelin B., Arms Transfers to the South Caucasus and Central Asia Compared, 1992-2002 // Armament and Disarmament in the Caucasus and Central Asia. SIPRI: Stockholm, 2003, p. 27-28.

6.1 Ադրբեջանի կողմից ՍՌՏ-ի աճող գնումները

Դեռևս Խորհրդային Միության գոյության տարիներին սկսեցին հայտնվել առաջին պաշտոնական տվյալները Ադրբեջանին երրորդ երկրների կողմից ռազմական օգնություն տրամադրելու մասին: Դրանք վերաբերում էին Թուրքիայի կողմից Ադրբեջանին ռազմական օգնություն տրամադրելու փաստին և հնչեցվել են 1990թ. հունվարի 24-ի ՏԱՄՍ-ի հաղորդագրության մեջ: Հաղորդագրությամբ ԽՍՀՄ ղեկավարությունը նախազգուշացում հայտարարեց թուրքական կողմին Նախիջևանին զենք և զինամթերք մատակարարելու համար: Չենքի և հանդերձանքի մատակարարմանը զուգահեռ, թուրքական կողմը Թուրքիայի և Ադրբեջանի տարածքներում գործող ռազմական ուսումնարաններում նախաձեռնեց նաև ադրբեջանական սպաների և զինվորների ուսուցման կազմակերպումը: Արդեն իսկ 1992թ. հունվարի վերջին Ադրբեջանի նախագահ Ալազ Մութալիբովի Թուրքիա կատարած պաշտոնական այցելության ժամանակ պայմանավորվածություն ձեռք բերվեց թուրքական ռազմական ուսումնարաններում ադրբեջանական սպաների վերապատրաստման վերաբերյալ¹³⁴:

Ինչպես նշում է փորձագետը. «1992թ. մարտին Ադրբեջանի վարչապետ Հ.Հասանովը պաշտոնական ուղերձով դիմել է Թուրքիայի նախագահ Թ.Օզալին և վարչապետ Ս.Դեմիրելին՝ «ակնկալելով եղբայրների և բարեկամների կողմից անհետաձգելի օգնություն»: Միևնույն ժամանակ, Ադրբեջանում Գարալայի ռադիոլուկացիոն բազայի տարածքում թուրքական ռազմական հրահանգիչները սկսել էին 450 ադրբեջանցի զորակոչիկների ուսուցումը: Կարևոր է նշել, որ... Անկարան Ադրբեջանին հիմնականում մատակարարում էր իրաքյան բանակի խորհրդային արտադրության զենք, ինչը մեծ քանակություն էր կազմում թուրքական զինվորականների մոտ Պարսից ծոցի պատերազմից հետո, ինչպես նաև ռազմաավարային պաշար-

¹³⁴ Демоян Г., Военная помощь Турции Азербайджану в период военной фазы карабахского конфликта (1991-1994 гг.) // Карабахская драма: скрытые действия. с. 54-56.

ներ՝ խլված քուրդ պարտիզաններից... Ղարաբաղյան ճակատներում թուրքական առանձին ջոկատների անմիջական մասնակցությունից բացի, թուրքական բանակի շուրջ 150 բարձրաստիճան սպաներ, այդ թվում նաև պահեստի 10 գեներալ, 1992թ. սկզբին մասնակցել են ռազմական գործողությունների մշակմանը և ադրբեջանական բանակի գրոհային ու դիվերսիոն ստորաբաժանումների ուսուցմանը: Չարմանալի չէ, որ Ադրբեջանի նոր նախագահ Ա.Էլչիբեյի ռազմական խորհրդական դարձավ թուրքական գեներալ Յաշար Դեմիրբուլաքը, որը հետագայում ընդգրկվեց Ադրբեջանի անվտանգության խորհրդի կազմի մեջ:

Իր գործունեությունը ակտիվացրեց թուրքական «Ազգային հետախուզական կազմակերպությունը» (MIT), որը սերտորեն համագործակցում էր «Գորշ գայլեր» (թուրքերեն՝ «Բոզորթ») թուրքական ծայրահեղ ազգայնական կազմակերպության ադրբեջանական բաժանմունքի հետ: «Գորշ գայլերը» Ադրբեջանում գտնվում էին օրինական կարգավիճակում: Այստեղ կազմակերպությանն անդամակցում էր շուրջ 15 հազար մարդ, ընդ որում նրանք բոլորը գեներ ունեին՝ ծառայելով Ազգային բանակում և ՆԳՆ-ում, ինչպես նաև անկախ զինված կազմավորումներում»¹³⁵: Հօգուտ Ադրբեջանի հետախուզություն իրականացնելուց բացի, MIT-ը Բաքվից ոչ հեռու՝ «Նաստանայա» ռազմական օդակայանում, ուսումնական կենտրոն է կազմակերպել ադրբեջանական բանակի դիվերսիոն-հետախուզական ջոկատներ պատրաստելու համար¹³⁶:

Ընդհանուր առմամբ, լուսաբանելով Ադրբեջանին սպառազինության, ռազմական տեխնիկայի և զինամթերքի մատակարարման խնդիրը (հատկապես 1990-ական թվականների առաջին կեսին, երբ Լեռնային Ղարաբաղում հակամարտությունը գտնվում էր ամենաթեժ փուլում), հարկավոր է հաշվի առնել, որ շատ դեպքերում խոսքը գնում է գեների և ռազմական տեխնի-

կայի այսպես կոչված «գորշ» կամ նույնիսկ «սև» արտահանման մասին, այսինքն՝ այդ մատակարարումների մեծ մասը կատարվում էր ոչ պաշտոնական ճանապարհներով, սակայն արտահանող-երկրի որոշ պետական մարմինների գիտությամբ կամ թույլտվությամբ¹³⁷:

1992թ-ից սկսած, Ադրբեջանի տարածքում տեղակայված ռուսական զորամասերի կողմից սպառազինություն և ռազմական տեխնիկան Ադրբեջանին փոխանցելու գործընթացի ավարտից հետո, ռազմական տեխնիկայի հիմնական մատակարարը Բաքվի համար դարձավ Ուկրաինան (տե՛ս նաև՝ սույն աշխատության Հավելվածը): 1992թ. մարտ-ապրիլ ամիսներին, Ուկրաինայից Ադրբեջան մատակարարվեց T-72 և T-80 տեսակի 10-15 տանկ: Հունիս ամսին Ուկրաինան ու-դարկեց հրաձգային և հրետանային գեների մեծ խմբաքանակ, ինչպես նաև զինամթերք: «Ազատություն» ռադիոկայանի հաղորդագրության համաձայն, 1993թ. սեպտեմբեր ամսին Ուկրաինայից Ադրբեջան ինքնաթիռներով ուղարկվել է T-72 տեսակի 85 տանկ: Մոտավորապես նույն ժամանակ Ադրբեջանը ստացավ T-55 տեսակի մոտ 50 տանկ և մի քանի ՄեԴ-21 ռազմական ինքնաթիռներ, ընդ որում, սպառազինությունների նկատմամբ վերահսկողություն իրականացնող մի շարք կազմակերպությունների պահանջով, Բաքուն ստիպված էր խոստովանել այդ փաստը և տեղեկացնել ԵՍՁՌԻՊ-ի անդամ-պետություններին այդ մասին: 1993-1994թթ. ձմռանը կրկին, Ուկրաինան մատակարարեց T-54, T-55 և T-62 տեսակի ավելի քան 50 տանկ¹³⁸:

1993թ. սեպտեմբերին, ի պատասխան Հայաստանի ԱԳՆ կողմից պաշտոնական բողոքի նոտայի, ուկրաինական արտաքին քաղաքական գերատեսչությունը հերքեց Ադրբեջանին տանկեր փոխանցելու փաստը: Ուկրաինայի ԱԳՆ հայտարարության համաձայն, Ադրբեջանին միայն վերադարձվել են ուկրաինական ձեռնարկություններում վերանորոգված ադրբե-

¹³⁵ Նույն տեղում, էջ՝ 56-58:

¹³⁶ *Мурadian И.*, Система разведывательных служб Турции и пантюркистские организации // *Iran and Caucasus. Vol. III-IV Research Papers from the Caucasian Centre for Iranian Studies, Yerevan - Leiden, 1999-2000. P.341-342.*

¹³⁷ *Макиенко К.*, Черно-белый спектр в оружейном экспорте // *Pro et Contra*, Т.4. №1, Зима 1999, с. 95-99.

¹³⁸ *Шакарян С.*, Политика постсоветской России на Кавказе и ее приоритеты. АЦСНН: Ереван, 2001. с.164.

ջանական տանկեր¹³²: Սակայն հարկավոր է նշել, որ Ադրբեջանի տարածքում տեղակայված 4-րդ բանակի զորամասերի գինամոցում կային T-72 տեսակի տանկեր և ոչ թե՛ T-54, T-55 կամ T-62 տեսակի, այն էլ՝ այդպիսի խոշոր քանակությամբ: Հետևաբար, Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղում ռազմական գործողությունների ժամանակ լայնորեն կիրառվող սովյալ տեսակի տանկերը հանրապետությունը ստացել էր այլ պետություններից: Ինչևհետե, ՄԱԿ-ի սովորական սպառազինությունների Գրանցամատյանին (UNROCA) ներկայացրած 1993թ. իր զեկույցում Ուկրաինան խոստովանել է Ադրբեջանին 100 տանկ և 10 ռազմական ինքնաթիռ վոխանցելու փաստը: Ավելի ուշ, արդեն 1994թ.-ին, ինչպես նշում են արևմտյան հետազոտողները, Ուկրաինայից Ադրբեջան տանկերի մատակարարումների մասին ի հայտ եկան նոր վկայություններ¹⁴⁰: Արդեն առանց տեղեկացնելու ԵՄՁՌԳ-ի անդամ պետություններին, Բաքում Ուկրաինայից գնեց ՄոԴ-21 տեսակի 12, 4՝ Cy-15, 2՝ Cy-25 տեսակների լինքնաթիռներ, ինչպես նաև T-55 տեսակի 100 տանկ: 1994թ. գարնանը T-62 տեսակի տանկերի համար հատուկ չվերթով Ադրբեջան պահեստամասեր բերվեցին: 1995թ. Ադրբեջանը ստացավ լազերային նշանառության կիսաակտիվ համակարգով ավիառումբեր և «օդերկիր» կարգի X-25 ՄՂ և X-29 տեսակի հակառադիոլոկացիոն հրթիռներ: Համագարկային կրակի ռեակտիվ համակարգերի համար 1996թ. Ադրբեջան հասցվեց ԵՄ-21¹⁴¹ տեսակի 2600 հրթիռ: 1996-1998թթ. Ղազախստանը Ադրբեջան ուղարկեց ՄոԴ-25 տեսակի 8 կործանիչներ: 2000թ. Թուրքիան Ադրբեջանին փոխանցեց AV-34 տեսակի պահակային մեկ նավ: Եվս մեկ պահակային նավ փոխանցվեց նրան Միացյալ Նահանգների կողմից 2001թ.¹⁴²:

¹³⁰ RFE/RL News Briefs, 13.09.1993.

¹⁴⁰ Anthony I. Wezeman P.D., Wezeman S.T. The Trade in Major Conventional Weapons // SIPRI Yearbook 1995: Armaments, Disarmament and International Security. Oxford University Press: Oxford, 1995, p. 496.

¹⁴¹ Mavrenko K., Серый рынок оружия и военной техники в государствах СНГ: тенденции и перспективы развития // Научные записки ЦИП-Центра, №6. М., 1997, с. 19.

¹⁴² The Military Balance 2002/2003. IISS: London, 2002, p. 269.

Բացի այդ, 1996թ. ռազմական համագործակցության մասին թուրք-ադրբեջանական համաձայնագրի համապատասխան, Ադրբեջանում մշտական հիմունքներով աշխատում է թուրքական ռազմական խորհրդատուների մի մեծ խումբ, որի գործունեությունը համակարգվում է թուրքական ռազմական կցորդի կողմից: Թուրքիայի ռազմական ներկայացուցիչը ռազմական կցորդի իրավունքով գործում է նաև Նախիջևանում: 1995-1996թթ. Թուրքիայի Պաշտպանության նախարարության ֆոնդերից Ադրբեջան է ուղարկվել դաշտային հանդերձանքի մեծ խմբաքանակներ և այն: 1996-1997թթ. «Ասելսան» թուրքական կազմակերպությունը Ադրբեջան արտահանեց բանակային կապի միջոցներ, իսկ 1998թ. ավարտեց մատակարարված շուրջ 20 մլն դոլար արժողությամբ կապի տեխնիկայի վերանորոգման մասնագետների պատրաստման աշխատանքները: Այսպիսով, համարվում է, որ դա թույլ է տալիս, որ ադրբեջանական բանակը, փաստացի, ամբողջովին անցնի կապի արևմտյան համակարգերի կիրառմանը¹⁴³: 1990-ական թվականների վերջին մամուլում հաղոյուպարություններ հայտնվեցին Ադրբեջանի Պաշտպանության նախարարության Թուրքիայից F-16 կործանիչ գնելու մտադրությունների մասին: Սակայն, ադրբեջանական պաշտպանության նախարարությունը հերքեց այս հաղոյուպարությունները, մինչդեռ, հաստատելով, որ Ադրբեջանի ՌՕՌ-ի հրամանատար գեներալ-մայոր Ռ.Ռ.գալը, որին թուրքական մամուլը կոչում է թուրքական ինքնաթիռներ գնելու զաղափարի հեղինակ, թուրքական կողմի հրավերով 1998թ. ապրիլին այցելել է Թուրքիա¹⁴⁴:

Թուրք-ադրբեջանական ռազմական համագործակցության համատեքստում, այս ամենից բացի, հարկավոր է նշել նաև Թուրքիայի կողմից Ադրբեջանին ԳԴՀ-ի բանակի խորհրդային արտադրության սպառազինության փոխանցման փաստի մասին, որը, 1992թ. Գերմանիայի վերամիավորվելուց հետո

¹⁴³ Чернявский С.И. Азербайджан и Турция – стратегическое партнерство // Независимый Азербайджан: новые ориентиры / Под ред. Кожокина Е.М., т. 2, ИСН: М., 2000, с. 186-187.

¹⁴⁴ Middle East Security Report (MESR), Issue 68, 08.04.1998.

ԳՖՀ-ի կողմից փոխանցվել էր Թուրքիային: Ինչպես հայտնի է, Գերմանիայից Թուրքիա, այսպես կոչված, *կասկադային*¹⁴⁵ մատակարարումներին ի լրացում, Անկարային փոխանցվեց նաև արևելագերմանական բանակի ավելի քան 3 մլրդ դոլար արժողությամբ սպառազինությունը: Հաշվի առնելով, որ թուրքական բանակի զինանոցում գտնվում է համարյա բացառապես ՆԱՏՕ-ական ստանդարտների սպառազինություն, ապա սովյալ զենքը, ինչպես նշում են փորձագետները, նախատեսված էր Ադրբեջանին հետագայում փոխանցելու կամ սպառազինության «գորշ շուկա» վերարտահանելու համար: Ժամանակին, գերմանական հեռուստատեսության առաջին ալիքը հայտնել է գերմանական արտադրության կամ ԳԴՀ բանակին պատկանող զենքի և ռազմական տեխնիկայի՝ ԱՊՀ տարածքում զինված հակամարտությունների գոտի արտահանելու փաստերի մասին: Խոսքն առաջին հերթին գնում էր Ադրբեջան ապառազինություն մատակարարելու մասին, ուր վերջինս այն հասնում էր Թուրքիայով¹⁴⁶: Ինչպես վկայում են ռազմական փորձագետները, Թուրքիայի կողմից արևելագերմանական զենքի և ռազմական տեխնիկայի առանձնահատուկ մեծ քնա-

¹⁴⁵ Խոսքը գնում է ՆԱՏՕ-ի առաջատար պետությունների կողմից ավելցուկ ռազմական տեխնիկան, որը նրանք պետք է կրճատեին համաձայն ԵՍՁՆԻՊ-ի պայմանների, բրկի իրենց գործընկերներին անհատույց փոխանցելու մասին (հիմնականում Թուրքիային և Հունաստանին, ինչպես նաև ավելի պակաս քանակությամբ՝ Նորվեգիային, Իսպանիային և Պորտուգալիային): ՆԱՏՕ-ի առաջատար երկիրները ենթադրում էին, որ դա հարմար միջոց հանդիսացավ պակաս զարգացած ռազմատեխնիկական երկրում ունեցող՝ բրկի իրենց գործընկերներին ժամանակակից սպառազինություն և ռազմական տեխնիկա փոխանցելու համար՝ դրանց քանկարժեք ուղղվածության գործառույթի փոխարեն: Սակայն, արդյունքում, Հունաստանը և Թուրքիան 1990-ական թվականների առաջին կեսին «կասկադային» մատակարարումների պտոճառով դառնալով աշխարհում ծանր սպառազինությունների խոշորագույն ներկրողը, այնքան մեծացրեցին իրենց ռազմական ներուժը, որ ՆԱՏՕ-ի փորձագետները շուտով իրենք սկսեցին կասկածել, որ նմանօրինակ գործունը կարող է նպաստել տարածաշրջանային կայունությանը: (St'u մանրամասները նաև՝ SIPRI Yearbook 1994: World Armament and Disarmament, Oxford University Press: Oxford, 1994).

¹⁴⁶ *Мокиенко К.*, Серый рынок оружия и военной техники в государствах СНГ: тенденции и перспективы развития. с.18-19.

կության փոխանցվել է Նախիջևանում տեղակայված ադրբեջանական զորամասերին:

Բացի այդ, դեռևս Լեռնային Ղարաբաղում ռազմական գործողությունների ընթացքում, «Սփինգեր» հակաօդային հրթիռային համակարգերի և սպառազինության մի քանի այլ տեսակների համատեղ մատակարարումներ են եղել Ադրբեջանին՝ Թուրքիայի և Իսրայելի կողմից¹⁴⁷: 2001թ. դեկտեմբերին բուրքական մամուլում տեղեկություններ հայտնվեցին Թուրքիայում Իսրայելի և Ադրբեջանի ռազմական գերատեսչությունների ներկայացուցիչների միջև՝ Ադրբեջանին «Մերկավա» տեսակի 100 տանկ և մոտ 30 ռազմական ինքնաթիռներ մատակարարելու հնարավորության վերաբերյալ ձեռք բերված պայմանավորվածությունների մասին, որոնք, այնուհանդերձ, դեռևս վերջնական հավաստում չեն ստացել¹⁴⁸:

Տեղեկություններ կան Վրաստանից մի քանի գրոհային Су-25 ինքնաթիռների մատակարարման մասին, որոնք Ադրբեջանի կարիքների համար վերասարքավորվել և արդիականացվել են Թբիլիսիի ավիացիոն գործարանում, ինչպես նաև այն մասին, որ վրացական ձեռնարկություններում վերանորոգվում էին ադրբեջանական բանակի տանկերը և գրահամեքենաները¹⁴⁹:

Ադրբեջանը կատարում էր նաև թեթև և հրաձգային զենքի (ԹՀՁ) խոշոր գնումներ: Դեռևս 1991-1992թթ. թուրքական կողմը Ադրբեջան զենք և ռազմական հանդերձանքը տեղափոխելու գաղտնի օպերացիաներ է իրականացրել: Մասնավորապես, այդ ժամանակահատվածում, երկու օդային մատակարարման միջոցով Նախիջևան է հասցվել շուրջ 5 հազար ավտոմատ, հանդերձանքի և ականանետների մեծ խմբաքանակ¹⁵⁰: Հետագա տարիների ընթացքում ԹՀՁ-ի գնումները

¹⁴⁷ *Минасян С.*, Израиль-Турция: военно-политическое и военно-техническое сотрудничество (в аспекте проблем региональной безопасности) // Центральная Азия и Кавказ, №1, 2004. с.78-79; *Минасян С.*, Стратегическое сотрудничество Израиля и Турции в контексте проблем региональной безопасности // 21 Дар (XXI век), №2, Ереван, 2004, с. 108-109.

¹⁴⁸ Израиль-Турция-Азербайджан... // Независимая газета, 04.12.2001.

¹⁴⁹ http://disarmament.un.org/UN_REGISTER.NSF.

¹⁵⁰ *Bhaty R., Bronson R.* NATO's Mixed Signals in the Caucasus and Central Asia // Survival, Vol.42, №3, Autumn, 2000. P.134.

Աղբբեջանի կողմից ակտիվորեն շարունակվում էր: Հիշատակվում է նաև Վրաստանից Աղբբեջան ավտոմատ զենքի մատակարարման դեպքերի մասին¹⁵¹:

Բացի այդ, վերջին տարիներին նոր տվյալներ են հայտնվել Աղբբեջանին Ուկրաինայի, Թուրքիայի և մի շարք այլ երկրների կողմից ժամանակակից զենքի մատակարարման մասին: Մովորական սպառազինության մասով ՄԱԿ-ի Գրանցամատյանում բերված պաշտոնական տվյալների (UNROCA) համաձայն, 2002թ. Բուլղարիայում Աղբբեջանի կողմից գնվել է 130մմ-ոց 36 միավոր M-46 հրանոթներ, իսկ Ուկրաինայում 72 հատ 100մմ-ոց MT-12 հրանոթներ: Նաև գնվել են T-72 տեսակի տանկեր Սլովակիայից (1 հատ) և Ուկրաինայից (3 հատ)¹⁵²: Սակայն Աղբբեջանի ռազմականցման տարածաշրջանային անվտանգության առավել ապակայունացնող դրսևորում պետք է համարել Ուկրաինայի կողմից 2004թ. մատակարարված համագարկային կրակի 300մմ-ոց 9A52 ռեակտիվ «Մներչ» համակարգը, որն իր հարվածային ներգործությամբ ընդհուպ մոտենում է զանգվածային ոչնչացման զենքի կատեգորիային, ինչը հաստատված է UNROCA-ի տվյալներով¹⁵³:

Աղբբեջանը զենքի գնումներ է կատարում անգամ Հավաքական Անվտանգության Պայմանագրի Կազմակերպության (ՀԱՊԿ) անդամ-երկրներից, այսինքն՝ այն երկրներից, որոնք, փաստացի, հանդիսանում են Հայաստանի ռազմավարական դաշնակիցները¹⁵⁴: Օրինակ, Ղազախստանից, զենքի այլ տեսակների շարքում, Աղբբեջան մատակարարվեցին Cy-27 ժամանակակից կործանիչներ: Տեղեկություններ կան նաև Ռուսաստանից սպառազինության, ռազմական տեխնիկայի, ինչ-

¹⁵¹ Demetriou S. Politics from the Barrel of a Gun: Small Arms Proliferation and Conflict in the Republic of Georgia (1989-2001) // Small Arms Survey Occasional Paper №6. Saferworld: Geneva, November 2002. P.13-14.

¹⁵² Կարելի է ենթադրել, որ իրականում Սլովակիայից և Ուկրաինայից գնվել էր T-72 տանկերի ավելի մեծ քանակություն, քանի որ դժվար թե կողմերին ձեռնառու լինեք վաճառել կամ գնել, իսկ այնուհետև նաև Աղբբեջան տեղափոխել ավյալ ռազմական տեխնիկայի միայն եզակի միավորներ:

¹⁵³ http://disarmament.un.org/UN_REGISTER.NSF.

¹⁵⁴ Нарушение баланса сил в регионе чревато эскалацией напряженности // Республика Армения, 03.02.2006.

պես նաև զինամթերքի և պահեստամասերի մեծածավալ մատակարարումների մասին: Ավելին, Ռուսաստանի պաշտպանության նախարար Ս.Իվանովը, 2006թ. հունվարին Աղբբեջան իր կատարած այցելության ժամանակ հատուկ նշեց, որ Մոսկվան պատրաստ է կողմերի համարժեքության սկզբունքների վրա (այսինքն՝ զենքի համարժեք մատակարարում այնքան, որքան ՀԱՊԿ-ի իր գործընկեր՝ Հայաստանին) սպառազինություն և ռազմական տեխնիկա վաճառել Աղբբեջանին՝ «տարածաշրջանում ուժերի հավասարակշռությունը հաշվի առնելով և կոմերցիոն հիմքի վրա»¹⁵⁵:

6.2. Աղբբեջանի կողմից ռազմական ծախսերի և ստացվող օտարերկրյա ռազմական օգնության ծավալի շարունակական աճի դիմամիկան

Ռազմական ծախսերում երկարաժամկետ միտումները կամ որանց ամսալստելի փոփոխությունները կարող են վկայել լատենկացած պետության ռազմական գործունեության իրականացման ընթացքի փոփոխության և դրա արդյունքների մասին: Այդ առումով, 1994թ. մայիսին Լ.ՂՀ-ի հետ զինադադարը կնքելուց հետո ընկած ժամանակաշրջանում, Աղբբեջանի ռազմական ծախսերի աճի դիմամիկայի վերլուծությունը միանշանակորեն վկայում է սղբբեջանական ղեկավարության ռևանշիստական մտադրությունների և նրա՝ կրկին ռազմական ճանապարհով դարաբաղյան խնդիրը «լուծելու» վճռականության մասին:

Միաժամանակ պետք է խոստովանել, որ Աղբբեջանի ռազմական ծախսերի մակարդակը որոշելիս հավաստի և մանրակրկիտ տվյալների ու աղբբյուրների բավարար քանակության բացակայությունը թույլ չի տալիս ճշգրիտ գնահատել Աղբբեջանի ռազմական նպատակներով կատարված իրական ծախսերը: Պետությունների ռազմական ծախսերի որոշման հիմնական աղբբյուրներ, որպես կանոն, հանդիսանում են.

1. Պետական մարմինների կողմից ներկայացվող պաշտոնական տվյալները (Բյուջետային փաստաթղթերը, պաշտպա-

¹⁵⁵ Иванов: Москва готова продавать оружие Азербайджану и Армении // www.regnum.ru, 24.01.2006.

նության և ֆինանսների նախարարությունների տեղեկագրական և վիճակագրական հրատարակությունները), ինչպես նաև միջազգային կազմակերպությունների (ՄԱԿ, ԵԱՀԿ և այլն) հեղինակավոր պետական և ոչ կառավարական հետազոտական և վերլուծական ինստիտուտների (SIPRI, IISS, ACDA և այլն) կողմից տարածվող ռազմական ծախսերի վերաբերյալ հարցաթերթիկների կառավարական գերատեսչությունների պատասխանները:

2. Միջազգային կազմակերպությունների կողմից բողոքվող միջազգային վիճակագրական հրատարակությունները (IMF Government Financial Statistics Yearbook, IMF Country Report, UNDP Human Development Report, World Bank World Development Report և այլն):
3. Հետազոտական կենտրոնների և ինստիտուտների, մասնագիտացված ամսագրերի տվյալները և այլն:
4. Հեղինակավոր լրատվական գործակալությունների, պարբերականների, էլեկտրոնային ՁԼՄ-ի հաղորդագրությունները:

Ընդ որում, պետք է նկատել, որ անցումային տնտեսությամբ բոլոր պետություններին բնորոշ որոշ խնդիրներ (բյուջետային փաստաթղթեր պատրաստելու և տնտեսական հիմնական ցուցանիշներով վիճակագրական տեղեկատվություն ներկայացնելու անկարողությունը, կոռումպացվածությունը և տնտեսության մեջ «ստվերային սեկտորի» նշանակալից առկայությունը) լրացուցիչ բարդություններ են առաջացնում Ադրբեջանի իրական ռազմական ծախսերը որոշելու հարցում: Բացի այդ, Ադրբեջանի ղեկավարությունը գիտակցաբար ձեռնարկում է բոլոր միջոցները ծածկելու, նվազեցնելու կամ խեղաթյուրելու համար ռազմական նպատակներով կատարված իր ծախսերի մասին տվյալները: Լրացուցիչ բարդություն է ներկայացնում այն, որ Ադրբեջանին (բացի օտարերկրյա ռազմական օգնության շրջանակներում ստացվող ֆինանսական միջոցներից և բյուջետային ֆոնդերից) հատուկ է նաև ռազմական նպատակներով արտաբյուջետային միջոցների օգտագործումը, որոնք չեն անցնում պաշտոնական վիճակագրությամբ: Օրինակ, 2002թ. օգոստոսին Ադրբեջանում ստեղծվել է զինված ուժերի աջակցության հիմնադրամ՝ նախատեսված ինչպես առանձին

անձանցից, այնպես էլ մասնավոր և պետական կազմակերպություններից միջոցների հավաքման համար¹⁵⁶:

Աղյուսակ 3. Ադրբեջանի ռազմական ծախսերը 1992-2005թթ. (մլրդ մամաթ)¹⁵⁷

1992 թ.	1993 թ.	1994 թ.	1995 թ.	1996 թ.	1997 թ.	1998 թ.	1999 թ.	2000 թ.	2001 թ.	2002 թ.	2003 թ.	2004 թ.	2005 թ.
0.8	7.9	85.6	248	305	353	376	435	494	-	608	680	899	1,480

Աղյուսակ 4. Ադրբեջանի ռազմական ծախսերի ընդհանուր ցուցանիշները ԱՄՆ դոլարով 1992-2004թթ. (մլն դոլար)^{158 159}

1992 թ.	1993 թ.	1994 թ.	1995 թ.	1996 թ.	1997 թ.	1998 թ.	1999 թ.	2000 թ.	2001 թ.	2002 թ.	2003 թ.	2004 թ.
1181	949	583	330	338	379	406	514	573	[850]	[900]	[950]	[1,100]

¹⁵⁶ Azerbaijan Creates Charitable Fund to Support Armed Forces // RFE/RL Newsline, Vol.6, N.158, 22.08.2002.

¹⁵⁷ Шенс Э., Лозе-Вайнтрауб Е., Омитуган В., Штоленхейм П., Военные расходы // Ежегодник СИПРИ 2000: Вооружения, разоружение и международная безопасность. СИПРИ, ИМЭМО РАН: М., 2001. с.288-289; Шенс Э., Лозе-Вайнтрауб Е., Омитуган В., Штоленхейм П., Военные расходы // Ежегодник СИПРИ 2002: Вооружения, разоружение и международная безопасность. СИПРИ, ИМЭМО РАН: М., 2003, с. 298-299.

¹⁵⁸ ԱՄՆ դոլարով կայուն գներով (1998թ. կուրսով) ներկայացված 1992-2000թթ. ռազմական ծախսերի ցուցանիշները կիրառվում են համեմատելու համար այն տեղադրումների ծավալների փոփոխության միտումները, որոնք հատկացվում էին ռազմական նպատակների համար, ինչպես նաև նշված ժամանակահատվածում ռազմական ծախսերի համեմատական համադրության նպատակով: 1992-2000 թթ. ժամանակահատվածի համար տվյալները բերվում են ըստ՝ Шенс Э., Лозе-Вайнтрауб Е., Омитуган В., Штоленхейм П., Военные расходы // Ежегодник СИПРИ 2002, с. 305.

¹⁵⁹ 2001-2004թթ. համար բերված Ադրբեջանի ռազմական ծախսերը՝ տրված լուսակուտի փակագծերով [], հաշվարկված են Լոնդոնի Ռ-ազմավարական Հետազոտությունների Միջազգային Ինստիտուտի /IISS/ մեթոդիկայով: 2001-2004թթ. համար տվյալներն ըստ՝ The Military Balance 2001/2002. IISS: London, 2001; The Military Balance 2002/2003. IISS: London, 2002; The Military Balance 2003/2004. IISS: London, 2003; The Military Balance 2005/2006. IISS: London, 2005.

Ադրբեջանի ռազմական ծախսերը, 1994թ. ԼՂՀ և Հայաստանի հետ զինադադար կնքելուց հետո բնկած ժամանակահատվածում, իրական գներով արդեն 2002թ-ին փաստացի աճել էին երկու անգամ: 2002թ. Ադրբեջանի պաշտոնական ռազմական բյուջեն կազմեց մոտավորապես 608 մլն մանաթ՝ համարյա երկու անգամ գերազանցելով Հայաստանի պաշտպանական և մի քանի անգամ՝ ԼՂՀ ռազմական բյուջեն¹⁶⁰:

Անգամ ադրբեջանական հետազոտողների գնահատմամբ, երկրի ռազմական ծախսերը մեծապես գերազանցում են բյուջեի մնացած հոդվածներով ֆինանսական ծախսերը: «Ներկայումս, Ադրբեջանի պաշտպանական ծախսերը անընդհատ աճում են: Ըստ պաշտոնական տվյալների, 1997թ. պաշտպանությանը հատկացվել է 74 մլն դոլար, ինչը կազմել է բյուջեի 10%-ը: Հաջորդ տարի պաշտպանության համար ծախսերը աճեցին մինչև 79 մլն դոլար կամ բյուջեի 11%-ը: Այնուհետև, պաշտպանության համար պաշտոնապես հատկացվել էր 99 մլն դոլար կամ բյուջեի համարյա 12%-ը: Հետագայում պաշտպանության համար ծախսերը աճում էին՝ 2000 թվականին դրանք հասան մինչև 101 մլն դոլար, 2001թ-ին՝ 112 մլն դոլար կամ բյուջեի համարյա 13%-ը, դա մոտավորապես այնքան էր, որքան ծախսվել էր սոցիալական ապահովության վրա և կրթության ծախսերի կեսն էր: 2002թ. բյուջեում նախատեսվեց էլ ավելի մեծ գումար՝ համարյա 126 մլն դոլար: Նկատենք, որ պաշտպանական ծախսերը տատանվում են ողջ բյուջեի 12-13%-ի սահմաններում, ինչն ինքնին մեծ գումար է: Մակայն հաշվի առնելով ժամանակակից Ադրբեջանի իրողությունները, այդ պաշտոնական թվերը վստահություն չեն ներշնչում: Ռազմավարական հետազոտությունների միջազգային ինստիտուտը (International Institute for Strategic Studies) քերում է ավելի բարձր թվեր՝ 130 մլն դոլար 1996թ-ի, 193 մլն դոլար՝ 1998թ-ի, 203 մլն դոլար՝ 1999թ-ի և 217 մլն դոլար՝ 2000 թվականի համար»¹⁶¹:

¹⁶⁰ New Allegations of Corruption within Azerbaijan's Defense Ministry//RFE/RL Caucasus Report, 04.02.2000.

¹⁶¹ /Onyos A., նշված աշխ. էջ.68-69.

Ադրբեջանի կողմից իր ռազմականացման գործընթացների ակտիվացումը վառ կերպով դրսևորվեց մահ 2005թ. դեկտեմբերին Ռազմական արդյունաբերության առանձին նախարարության ստեղծմամբ: Հաշվի առնելով այն համգամանքը, որ Ադրբեջանի ռազմաարդյունաբերական համալիրը դեռևս բավարար զարգացած չէ, ապա տվյալ գերատեսչությունը, ինչպես խոստովանում են ադրբեջանական փորձագետները, առաջին հերթին, թերևս կգրադվի այլ երկրներից¹⁶² զենքի և ռազմական տեխնիկայի զանգվածային գնումների համակարգմամբ:

Ինչ վերաբերում է Ադրբեջանի կողմից այլ պետություններից ռազմական նպատակների համար ստացվող ֆինանսական և տեխնիկական օգնությանը, ապա այս ոլորտում Բաքվի հիմնական գործընկերն է հանդիսանում Անկարան: 1997թ. Ադրբեջանն ու Թուրքիան անվտանգության ոլորտում համագործակցության մասին արձանագրություն ստորագրեցին¹⁶³: Թուրքիան 1999թ. զինված ուժերն արդիականացնելու համար Ադրբեջանին տրամադրեց 3.5 մլն դոլարի ռազմական օգնություն: 2001թ. Անկարան Բաքվին ռազմական նպատակներով հատկացրեց ևս 3 մլն դոլար, իսկ 2002թ. նոր համաձայնագիր ստորագրվեց ռազմական համագործակցության մասին¹⁶⁴: Մակայն կարծիք կա, որ Ադրբեջանի զինված ուժերին Թուրքիայի իրական ֆինանսական և ռազմատեխնիկական օգնությունը անհամեմատ ավելի մեծ է: Ինչպես հայտարարեց Թուրքիայի պաշտպանության նախարար Վեջի Քենուլը 2005թ. հուլիսին Ադրբեջանի ԱԳՆ ղեկավար Է.Մամեդյարովի հետ ունեցած հանդիպման ժամանակ, Թուրքիայի ռազմական օգնությունը Ադրբեջանին, ընդհանուր առմամբ, կազմել է 170 մլն դոլար¹⁶⁵:

¹⁶² Азербайджан демонстрирует серьезность намерений // www.day.az, 27.12.2005.

¹⁶³ Middle East Security Report (MESR), Vol.1, №.43, 05.11.1997.

¹⁶⁴ Eaton M. Major Trends in Military Expenditure and Arms Acquisitions by the States of the Caspian Region // The Security of the Caspian Sea Region / Ed. Chufirin G. SIPRI: Oxford University Press, 2001. P.92-93.

¹⁶⁵ Ադրբեջանին Թուրքիայի ռազմական օգնությունը կազմում է 170 միլիոն դոլար // РИА «Новости», 22.07.2005.

Թուրքիան նաև լայնածավալ օգնություն է տրամադրում Ադրբեջանին՝ նրա զինված ուժերի, այդ թվում նաև սպայական կազմի¹⁶⁶ ուսուցման և մարզման հարցում: Դեռևս Լեռնային Ղարաբաղում պատերազմի շրջանում թուրքական հրահանգիչները Ադրբեջանի տարածքում մասնակցում էին ադրբեջանական զինվորականների պատրաստման և ուսուցման գործընթացին: Ինչպես նշում են ամերիկյան փորձագետները, 1993-1994թթ. ձմռանը պատրաստվելով հարձակման, ադրբեջանական շատ զորամասեր ուսուցում են անցել Թուրքիայի հատուկ նշանակության զորքերի¹⁶⁷ սպաների ղեկավարությամբ, ավելի ուշ, ադրբեջանական որոշ զինծառայողներ թուրքական «կոմանդոս» զորամասերի կազմում Թուրքիայի հարավարևելքում նույնիսկ մասնակցել են քուրդ աշխարհագորայինների դեմ օպերացիաներին¹⁶⁸: 1999թ. ստեղծված Ադրբեջանի ռազմական ակադեմիան փաստացի հանդիսանում է Թուրքիայի ազգային անվտանգության ակադեմիայի «մասնաճյուղը», քանի որ դասավանդողների մեծ մասը թուրքական սպաներ են, իսկ ուսումնական ծրագրերը կազմված են թուրքական ռազմական ստանդարտների հիման վրա:

Թուրքական ժանդարմերիան խնամակալություն է իրականացնում Ադրբեջանի ներքին զորքերի նկատմամբ, կադրեր է պատրաստում և ծավալում նյութատեխնիկական օգնություն է տրամադրում: Ադրբեջանի ՆԳՆ ներքին զորքերի հրամանատար՝ զեներալ-լեյտենանտ Չաքիր Հասանովի խոստովանությամբ, 1997թ. թուրքական ժանդարմերիան Ադրբեջանի ՆԶ-ին հատկացրել է շուրջ 7 մլն դոլար, որոնցից մոտ 3,5 մլն ծախսվել է «Գալա» ուսումնական կենտրոնի շինարարության վրա: Բացի այդ, Ադրբեջանի ՆԶ-ի շուրջ 100 զինծառայողներ ուսուցում են անցել Թուրքիայում, ընդ որում, առանձնակի ուշադ-

¹⁶⁶ Turkey to Maintain Military Aid to Azerbaijan // Turkish Daily News, 25.09.2002.

¹⁶⁷ Gray J.E. Turkish SOF Train Azerbaijani Forces // FMSO Publications, FMSO: Fort Leavenworth, January, 1994.

¹⁶⁸ Howard G.E. NATO and the Caucasus: The Caspian Axis // NATO After Enlargement: New Challenges, New Missions, New Forces/Ed. Blank S.J. SSI: Carlisle, 1998. p. 174.

ություն է հատկացվում հատուկ նշանակության ստորաբաժանումների սպաների պատրաստմանը: Այդ նպատակների համար, ներկայումս, Թուրքիայում ուսանում են ՆԶ-ի շուրջ 20 ադրբեջանցի սպաներ¹⁶⁹:

Անկարան, հանդիսանալով Ադրբեջանի, ՆԱՏՕ-ի կառույցներում ներգրավելու մասով, այսպես ասած, «խնամակալը», իր վրա է վերցրել նաև այդ երկրի զինված ուժերի՝ հյուսիսատլանտյան դաշինքի տարբեր, այդ թվում՝ խաղաղասպահ, ծրագրերում և միջոցառումներում մասնակցելու ֆինանսավորման հարցը: 1999թ. սեպտեմբերի 1-ին թուրքական գումարտակի կազմում Կոսովո ուղարկվեց 34 զինվորից կազմված ադրբեջանական մեկ դաստակ: Բոլոր ծախսերն իր վրա վերցրեց թուրքական կողմը՝ տարեկան 340 հազար դոլարի չափով¹⁷⁰:

2005թ. թուրքական ծրագրերի շրջանակներում սպասվում էր թուրքական սպաների մի խմբի ժամանումը Ադրբեջան, որը պետք է այցելեր պաշտպանության նախարարություն, Հատուկ պահպանության պետական ծառայություն և ներքին զորքեր, ծանոթանար այդ հաստատություններում իրականացվող աշխատանքներին և առաջարկություններ ներկայացներ: Ադրբեջանական ՋԼՄ-ների տվյալներով, մոտ ժամանակներս սպասվում է Թուրքիայի հետ ադրբեջանական զինված ուժերի տեխնիկական ապահովման ակտիվացման մասին նոր պայմանագրի կնքում: Համաձայն պայմանագրի, Թուրքիան աջակցություն կցուցաբերի ներքին զորքերի Հատուկ պահպանության պետական ծառայության և Ադրբեջանի ՌՃՈՒ-ի տեխնիկական ապահովմանը: Միաժամանակ, Թուրքիան նպատակ ունի աջակցել Ադրբեջանի ՀՕՊ-ի զորքերի զինանոցի նորացմանը: Թուրքական կողմը աջակցություն է առաջարկել Նախիջևանում¹⁷¹ նոր ռազմական օդակայան կառուցելու հարցում: Բացի այդ, ներկայումս, թուրքական ռազմական

¹⁶⁹ Мамедов Д. «Цветной революции» в Азербайджане не будет // Военно-промышленный курьер, № 24 (91), 06-12.06.2005.

¹⁷⁰ ИТАР-ТАСС, 01.09.1999.

¹⁷¹ Турция поможет вооруженным силам Азербайджана // www.regnum.ru, 20.05.2005.

մասնագետների կողմից մշակվում է ծավալուն ծրագիր, որը ադրբեջանական բանակի մեխանիզացված բրիգադների տանկային վաշտերի համալրման համար նախատեսում է՝ T-72 և T-80 տեսակի լրացուցիչ մոտ 150 տանկ:

Ինչ վերաբերում է Միացյալ Նահանգների կողմից հատկացվող ֆինանսական օգնությանը, ապա համաձայն 1993թ. ԱՄՆ կոնգրեսի կողմից ընդունված «Ազատության աջակցության ակտի» (*Freedom Supporting Act*) 907-րդ ուղղման, որը արգելում է Բաքվին օգնություն ցուցաբերել Ադրբեջանի կողմից Հայաստանը շրջափակման մեջ պահելու պատճառով, Վաշինգտոնը չկարողացավ ուղղակի ռազմական աջակցություն ցուցաբերել այս հանրապետությանը: 2001թ. սեպտեմբերի 11-ի իրադարձություններից հետո միայն, «միջազգային հակահարեկչական կոալիցիա տեղի էր» համատեքստում, տվյալ ուղղումը կասեցվեց և ամերիկյան վարչակարգը կարողացավ ուղղակի ֆինանսական օգնություն հատկացնել Ադրբեջանին (տե՛ս աղյուսակ 5): Ադրբեջանին ռազմական օգնությունը իրականացվում է հետևյալ ծրագրերի շրջանակներում՝ FMF (*Foreign Military Financing*), FOESF (*Foreign Operations Emergency Supplemental Funding* (այն դեռևս իրականացվում է միայն Վրաստանում, սակայն հնարավոր է, որ կտարածվի նաև Ադրբեջանի վրա), IMET (*International Military Education and Training*): Բացի այդ, 2001թ. սեպտեմբերի 11-ից հետո, Ադրբեջանը Վաշինգտոնի ֆինանսական օգնությունը ստանում է նաև ահաբեկչության և զանգվածային ոչնչացման զենքի տարածման դեմ պայքարի (*Nonproliferation, Anti-terrorism, Demining and Related Programs - NADR*) ծրագրով: Այդ ծրագրով Ադրբեջանը 2002թ. ստացել է 3 մլն դոլար և 3,23 մլն՝ 2003թ.¹⁷²:

Վաշինգտոնի կողմից Ադրբեջանին տրամադրվող ռազմական օգնությունը ունի ոչ միայն այդ երկրի պաշտպանության նախարարությանը նյութատեխնիկական աջակցություն ցուցաբերելու ուղղվածություն, այլև՝ «միջազգային ահաբեկչության դեմ պայքարի» շրջանակներում, հիմնականում նախա-

տեսում է նաև ադրբեջանական ներքին գործերի, սահմանապահ և մաքսային մարմինների տեխնիկական վերազինում, նախառակ ունենալով, այդ թվում նաև նպաստելու Կատպից ծովում այդ երկրի սահմանների վերահսկողության ամրապնդմանը: Միաժամանակ, Միացյալ Նահանգները օգնում են Ադրբեջանին ուժեղացնելու երկրի օդային տարածության վերահսկողության իրականացման հնարավորությունները, այդ թվում նաև ՆԱՏՕ-ի ՀՕՊ-ի հետ փոխկապակցված համակարգերի տվյալների փոխանակմամբ, աջակցում են նաև ՆԱՏՕ-ի ստանդարտներին համապատասխան ադրբեջանական օդակայանների արդիականացման հարցում: Սակայն այս հարցում, ինչպես նշում են արևմտյան փորձագետները, ԱՄՆ-ն չի կարող գործել առանց Հյուսիսատլանտյան դաշինքի¹⁷³ օգնության: Իրադարձությունների զարգացումը ցույց է տալիս, որ վերջին հաշվով արևմտյան ստանդարտների համաձայն արդիականացված ադրբեջանական օդակայանները կդառնան, այսպես կոչված, «ծավալման շարժուն միջոցների» նախատիպերը, ավելի պարզ ասած՝ նոր տեսակի ռազմական բազաներ, որոնցով ԱՄՆ-ը ձգտում է շրջապատել Եվրասիայի ողջ հարավը և հարակից շրջանները: Ադրբեջանի տարածքում գտնվող տվյալ օբյեկտների գլխավոր տարբերությունը «սառը պատերազմի» ժամանակաշրջանի ստանդարտ ռազմական բազաներից կդառնա այն, որ խաղաղ ժամանակ նրանցում կգտնվի միայն սահմանափակ քանակությամբ տեխնիկական անձնակազմ, սակայն անհրաժեշտության դեպքում, շատ կարճ ժամկետներում, ԱՄՆ մայրցամաքային մասից կամ աշխարհի այլ տարածաշրջաններից այստեղ կարող են բերվել ամերիկյան բանակի շարժական ուժեր, որոնք ընդունակ կլինեն վարելու տևական ռազմական գործողություններ: Այսպիսով, Ադրբեջանին ռազմական օգնություն ցուցաբերող ճանա-

¹⁷³ O'Malley W.D., McDermott R.N. NATO's Opportunity to Build Regional Stability in the South Caucasus // Central Asia Caucasus Analyst, vol. 5, N 10, 19 May, 2004.

¹⁷² www.fas.org.

պարիով Վաշինգտոնը միաժամանակ պայմաններ է ստեղծում, քեկուզ և որոշակի առումով սահմանափակ մասշտաբներով, այս երկրում իր մշտական ռազմական ներկայության համար: Սակայն, մյուս կողմից էլ, ամերիկյան փողերով և ՆԱՏՕ-ի ստանդարտներով այդ օդակայանների արդիականացումը, չնայած «անուղղակի»՝ այնուհանդերձ բավականին էական օգնություն հանդիսացավ Ադրբեջանի զինված ուժերի համար, ինչն, անհրաժեշտության դեպքում, թույլ կտա Բաքվին առաջին անգամ արդյունավետ օգտագործել օդակայանները Լեռնային Ղարաբաղում հակամարտությունը վերսկսելու ժամանակ: Ադրբեջանական փորձագետների տվյալներով՝ այդ նպատակներով և ԱՄՆ-ի միջոցներով վերագինվել են ադրբեջանական 7 ռազմական օդակայաններ:

Նմանօրինակ նշանակություն (այսինքն՝ Լեռնային Ղարաբաղում ռազմական գործողությունների վերսկսման դեպքում, օգտագործման հնարավորություն) կարող է ունենալ ԱՄՆ-ի կառավարության կողմից կասպիական տարածաշրջանի որոշ պետություններին (առաջին հերթին՝ Ադրբեջանին), այսպես կոչված, «Կասպիական պահապան» (Caspian Guard) ստեղծելու և Ադրբեջանի տարածքում երկու ամերիկյան ՌԼԿ-ներ (Խիզաչում և Աստարայում) կառուցելու համար տրամադրված աջակցությունը: Ըստ առկա տվյալների, ԱՄՆ-ը մոտակա 6 տարիների ընթացքում այդ նպատակների համար ծրագրում է ծախսել շուրջ 130 մլն դոլար: Ինչպես հայտնի է, Caspian Guard-ը Պենտագոնի կողմից նախատես մտահղացված էր կասպիական նավթի հանքավայրերի և Բաքու-Թբիլիսի-Ջեյհան (ԲԹՋ) նավթամուղի պաշտպանության համար: Այդ ստորաբաժանումները պետք է կազմված լինեին ադրբեջանական, վրացական և թուրքական զինծառայողներից: Այժմ պարզվում է, որ Caspian Guard ծրագրի փողերով նախատեսվում է Ադրբեջանում ստեղծել նաև տարածաշրջանի հետախուզման և մոնիթորինգի համար անհրաժեշտ հրամանատարական կետեր և այլ ռազմական ենթակառուցվածք: Բնականաբար, բոլոր

այս միջոցառումները ամենաուղղակի կերպով կանդրադառնան ԼՂՀ և Ադրբեջանի միջև գոյություն ունեցող ռազմական հավասարակշռության վրա:

Աղյուսակ 5. Ըստ ծրագրերի ռազմական կարիքների համար ԱՄՆ կողմից ֆինանսական աջակցությունը Ադրբեջանին ԱՄՆ դոլարով¹⁷⁴

Ծրագիր	2002թ.	2003թ.	2004թ.
IMET	377.000	750.000	900.000
FMF	4.000.000	3.000.000	2.500.000

Իր կողմից, Ռուսաստանը նույնպես, Ադրբեջանին սպառազինության և ռազմական տեխնիկայի ուղղակի կոմերցիոն վաճառքներ կատարելուց բացի, բավականին շոշափելի օգնություն և տեխնիկական աջակցություն է ցուցաբերում այս երկրի զինված ուժերին: Օրինակ, Գաբալայի ՌԼԿ-ի կարգավիճակի մասին Ռուսաստանի և Ադրբեջանի միջև 2002թ. կնքված համաձայնագրի պայմաններից մեկը եղել է Ադրբեջանին ռազմական աջակցություն ցուցաբերելու Մոսկվայի պատրաստակամությունը, մասնավորապես, նրա ՀՕՊ-ի և ավիացիայի արդիականացման, որոշ կատեգորիաների ադրբեջանական զինծառայողների ՌԴ-ում ուսուցման և սպառազինության և ռազմական տեխնիկայի վերանորոգման ծառայությունների ոլորտներում¹⁷⁵: Մոսկվան Բաքվին որոշակի ռազմատեխնիկական աջակցություն է ցուցաբերում նաև (օրինակ, զինամթերքի և պահեստամասերի մատակարարում) ԱՊՀ-ի ռազմական ինտեգրման շրջանակներում առկա որոշ մեխանիզմների և կառույցների միջոցով:

¹⁷⁴ Garcia V., Stohl R. U.S. Arms Sales to Azerbaijan, U.S. Arms Sales to Armenia // www.cdi.org, 21.03.2003; Foreign Military Training Report // www.fas.org/usmp/campaigns/training/.

¹⁷⁵ Коромисно И., Определен статус Габалинской РЛС // Независимое военное обозрение. 08.02.2002.

6.3 Սպառազինությունների և ռազմական գործունեության վերահսկողության միջազգային ռեժիմների խախտումը Ադրբեջանի կողմից

Հակամարտություններով «հարուստ» Հարավային Կովկասի տարածաշրջանում սպառազինությունների վերահսկողության ուսումնասիրման և վերլուծության հարցը բախվում է մի շարք դժվարությունների և սխալների հետ, որոնք մեծապես պայմանավորված են նրանով, որ փորձագետները, հաճախ վերացարկվում են իրականությունից կամ հրաժարվում են պրոֆեսիոնալ և անաչառ ուսումնասիրությունից: Սպառազինությունների վերահսկողության ոլորտում առկա ռեժիմների և մեխանիզմների համաշխարհային փորձը հիմնականում հանդիսանում է երկրներ համակարգի ժառանգությունը և հարմարեցված է գերակրթյունների, ինչպես նաև ռազմաքաղաքական բյուրոկրատիայի, այլ թվում «սառը պատերազմի» ժամանակաշրջանի Վարշավյան պայմանագրի կազմակերպության (ՎՊԿ) և ՆԱՏՕ-ի դիմակայության պայմաններին: Ի տարբերություն սրա, սպառազինությունների վերահսկողության տարածաշրջանային ռեժիմները, դեռևս, համեմատաբար, վատ են մշակված և գործունակ չեն: Սակայն, բոլոր գործող, կնարավոր կամ ավարտվող միջպետական և էթնիկ հակամարտություններով տարածաշրջաններում, կոնվեցիոնալ սպառազինությունների նկատմամբ վերահսկողության ռեժիմները դեռևս անկատար են և բախվում են քաղմաքիվ դժվարությունների հետ: Բացառությամբ Վստահության և անվտանգության ամբարայնգման միջոցառումներից (CSBM), ԵՄՁՈՒՊ-ի կողմից նախատեսված կամ ԵԱՀԿ շրջանակներում իրականացվող պարբերական վերահսկողությունից և այլ միջոցառումներից, Հարավային Կովկասում կոնվենցիալ սպառազինությունների հիմնական տեսակների վերահսկողության կամ սահմանափակման մասով գործնականում գոյություն չունեն գործուն մեխանիզմներ: Ներկայումս, միայն, արվում են առաջին քայլերը թեթև և իրաձգային զենքի տարածման վերահսկողության ռեժիմների սահմանման ուղղությամբ:

Համաձայն փորձագետների գնահատականի, Հարավային Կովկասում սպառազինությունների նկատմամբ վերահսկողության համալիր խնդրի առաջնային տարրերից մեկն է հանդիսանում զինված հակամարտությունների գոտիներում տարածաշրջանի երկրներին մատակարարված իրավունքով օգտագործվող սպառազինությունների և ռազմական տեխնիկայի քանակության որոշման հարցը: Հարցը խստորեն կրկնված է այսպես կոչված «գորշ գոտիների» խնդրի հետ, որտեղ տարածքների վրա տարածաշրջանի երկրների կողմից չեն կիրառվում, թաքցվում կամ խեղաթյուրվում են ԵՄՁՈՒՊ-ի գրույթները և սպառազինությունների առկայության մասին տվյալները: Այդպիսին են հանդիսանում Բաթյան երկրները, որոնք չեն ստորագրել և չեն միացել Պայմանագրին, ինչպես նաև Հարավային Կովկասի «չճանաչված պետությունները» և որանց հարակից Վրաստանի և Ադրբեջանի սահմանամերձ շրջանները: Օրինակ, վերջին բոլոր տարիների ընթացքում տարօրինակ պատկեր է ուրվագծվում ԵՄՁՈՒՊ-ով նախատեսված տարեկան զեկույցներում այն սպառազինությունների հիմնական տեսակների քանակության հարգում, որոնք հայտարարագրվում են Ադրբեջանի կողմից: Եթե Լեռնային Ղարաբաղում ռազմական գործողությունների ավարտից հետո առաջին տարիներին Ադրբեջանի կողմից հայտարարագրվող տանկերի, Ռ-ՉՄ և հրետանային համակարգերի քանակությունը անհամեմատ գերազանցում էր իրեն թույլատրված բվտալի առավելագույն մակարդակները, ապա վերջին տարիներին Ըսքում հայտարարագրում է ճիշտ այնքան, որքան իրեն թույլատրված է ունենալ ԵՄՁՈՒՊ-ով սահմանափակվող սովորական սպառազինության և տեխնիկայի ազգային սահմանային մակարդակների արձանագրությամբ (տե՛ս աղյուսակ 6), ընդ որում՝ չիրականացնելով ռազմական տեխնիկայի ոչ մի կրճատում: Այսպիսով, կան բոլոր հիմքերը պնդելու, որ Ադրբեջանը իրականում անհամեմատ գերազանցում է Սպառազինությունների և տեխնիկայի պայմանագրով սահմանափակվող քանակությունը:

Աղյուսակ 6. Սովորական սպառազինությունների հիմնական տեսակների հայտարարագրված քանակությունը 1992-2003թթ. և Ադրբեջանի ազգային սահմանային մակարդակները (փակագծում) համաձայն ԵՍՁՈՒՊ-ի դրույթների և ընդունված ԵՍՁՈՒՊ-ի կողմից¹⁷⁶

Տարի	Տանկեր (220)	ՌՁՄ (220)	Հրետանային համակարգեր (285)	Ռազմական ինքնաթիռներ (100)	Հարվածային ադրաթիռներ (50)
1992	134	-	126	15	9
1993	278	338	294	50	6
1994	279	822	350	48	23
1995	285	835	343	58	18
1996	300	580	302	46	18
1998	270	361	301	37	15
1999	262	331	303	48	15
2000	220	490	282	50	15
2003	220	516	282	48	15
2004	220	516	282	48	15
2005	220	595	270	47	15

Ինչպես խոստովանում են իրենք՝ ադրբեջանցի հետազոտողները. «Քանի որ այս համաձայնագիրը (ԵՍՁՈՒՊ-*հեղի-մակների ծանոթությունը*) հաստատում է խիստ սահմանափակումներ Ադրբեջանի զինձառայողների, սպառազինությունների և ռազմական տեխնիկայի առավելագույն քանակության նկատմամբ, ապա Ադրբեջանը ստիպված է լինում թաքցնել իրական թվերը»¹⁷⁷: Ադրբեջանը դա կապում է ԼՂՀ հարակից

¹⁷⁶ Տե՛ս մանրամասն. The Military Balance (1992/1993, 1994/1995, 1996/1997, 1998/1999, 2000/2001, 2002/2003, 2004/2005, 2005/2006); SIPRI Yearbook (1996, 1998, 2000, 2002, 2003); Armament and Disarmament in the Caucasus and Central Asia.
¹⁷⁷ Юнцов А., նշված աշխատությունը, էջ 69.

շրջաններում տեղակայված իր բանակի ստորաբաժանումներին սպառազինության մասին տեղեկատվություն տրամադրելու անհնարինությամբ¹⁷⁸: Բացի այդ, Ադրբեջանի կանոնավոր գորքերում ՌՁՄ-ի քանակության համապատասխանության համար ազգային սահմանային մակարդակներին՝ համաձայն ԵՍՁՈՒՊ-ի, որը սահմանափակում է դրանց քանակությունը 220 միավորով, դրանց նշանակալից մասը (մոտ 200 միավոր) պաշտպանության մախարարության գորքերի կազմից փոխանցվեց երկրի ներքին և սահմանապահ գորքերին:

Սույնով, իրականում, ներկայիս Ադրբեջանի ռազմականացման մակարդակը հասել է այնպիսի աստիճանի, որ, Հայաստանի զինված ուժերի Գլխավոր շտաբի պետ, գեներալ-մայոր Մ. Հարությունյանի խոսքերով, Ադրբեջանն այսօր ունի 1,5-2 անգամ ավելի շատ տանկեր և ՌՁՄ, 2-2,5 անգամ ավելի հրանոթային համակարգեր և այլն: Բնական է, որ այն իրավիճակում, երբ միջազգային հանրությունը չի կարող առաջ քաշել իրական մեխանիզմներ Ադրբեջանի աճող միլիտարիզացմանը հակադրելու համար՝ ի խախտումն սպառազինությունների վերահսկողության բոլոր նորմերի և գործառույթների¹⁷⁹, ԼՂՀ-ն ստիպված է ինքը ինչ-որ կերպ հավասարակշռելու կողմերի ռազմական ներուժում առաջացած անհավասարակշռությունը, հաշվի առնելով սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական և այլ ցուցանիշների անհամամասնությունը:

Ավելին, նպատակ ունենալով վերանայել ԵՍՁՈՒՊ-ի ներկայումս գործող ձևաչափը, ադրբեջանական կողմը փորձում է արդարացնել ԵՍՁՈՒՊ-ի կողմից սահմանափակվող սպառազինությունների ազգային և տարածաշրջանային սահմանային մակարդակների աճի անհրաժեշտությունը, ինչպես նաև դրանց ներկայիս քանակության աճը երեք հիմնական կատեգորիաներում (տանկեր, ՌՁՄ և հրետանային համակարգեր): Օրինակ, նրանք հենվում են այն հանգամանքի վրա, որ

¹⁷⁸ Lachowski Z. Arms Control in the Caucasus // Armament and Disarmament in the Caucasus and Central Asia. SIPRI; Stockholm, 2003. p. 34-36.

¹⁷⁹ Британские эксперты призывают считаться с новыми реалиями в Нагорном Карабахе // <http://www.panarmenian.net/news/rus/?nid=15516>

Աղբրեջանի ազգաբնակչության քանակությունը և տարածքի մակերեսը նշանակալիորեն գերազանցում են մնացած ԵՍՁՈՒՊ-ի անդամ՝ այսպես կոչված «փոքր պետությունների» համանման ցուցանիշները, իսկ այդ ցուցանիշները համդիսանում են կարևորագույն գործոն ցամաքային սպառազինության (տանկեր, Ռ-ՉՄ և հրետանային համակարգեր) սահմանային մակարդակները որոշելու համար: Արդյունքում, ՆԱՏՕ-ի առաջատար ռազմականադեմիական հրատարակություններում աղբրեջանական ռազմական փորձագետները նշում են, որ սպառազինության այդ երեք կատեգորիաներով Աղբրեջանի թույլատրելի սահմանները պետք է նկատելիորեն ավելացվեն: Այսպես, կիրառելով աղբրեջանցի փորձագետների կողմից սպառազինության ցամաքային տեսակների (տանկեր, Ռ-ՉՄ) միավորի այսպես կոչված «միջինացված գործակիցը» հազար քառ. կմ նկատմամբ («տարածքային չափանիշ») կամ մեկ միլիոն ազգաբնակչության նկատմամբ («ժողովրդագրական չափանիշ»), ստացվում է, որ Աղբրեջանի համար սպառազինության սահմանային մակարդակները համաձայն ԵՍՁՈՒՊ-ի, պետք է աճեն մինչև 727 տանկի և 1030 Ռ-ՉՄ-ի (ըստ «տարածքային չափանիշի») կամ 607 տանկի և 870 Ռ-ՉՄ-ի (ըստ «ժողովրդագրական չափանիշի»)՝¹⁸⁰:

Այսպիսով, կարելի է պնդել, որ աղբրեջանական կողմը ձեռնարկում է շատ լուրջ փորձեր օրինականացնելու սովորական սպառազինությունների վերահսկողության ԵՍՁՈՒՊ-ի և գործող եվրոպական ռեժիմի՝ իր կողմից կատարած խախտումները, օրինական տեսք տալով ՍՌՏ-ի նոր տեսակների իր անվերահսկելի գնումներին և ահագնացող միլիտարիզացմանը:

ԳԼՈՒԽ VII

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԿԱՏԱՄԲ ԱԴԻԲԵՋԱՆԻ ԱԳՐԵՍԻԱՅԻ ԻՐԱՎԱԲԱՂԱԲԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Ղարաբաղյան հակամարտությանը այս կամ այն չափով լյջորեն զբաղվող փորձագետները վաղուց արդեն պարզել են իրենց համար, որ այդ խնդրի ցանկացած որոշում և առավել ևս Հարավային Կովկասի տարածաշրջանային անվտանգության ապագա հետհակամարտային ճարտարապետության հեռանկարները արդյունավետորեն կարող են գտնվել բացառապես իրավաբաղաքական բնագավառում: Սրա հետ միառժամանակ, ցանկացած հակամարտության լուծման իրավական բաղադրիչը, այստեղ ղարաբաղյան հակամարտությունը բացառություն չի կազմում, միշտ տառապում է որոշակի ստերեոտիպությունից և պահպանողականությունից, և արդյունավետ է միայն այն ժամանակ, երբ կիրառվում է ոչ թե հիմնավորելու կամ որոշելու համար մինչև հակամարտությունը գոյություն ունեցած իրավիճակը, այլ ամրագրելու համար արդեն ձեռք բերված քաղաքական իրողությունները: Ընդհակառակը, այն որոշակի չափով պետք է հիմնվի միջազգային իրավական բաղադրիչի վրա, հատկապես մարդու և այն կատեգորիաների անձանց իրավունքների պաշտպանության ոլորտի վրա, որոնք առավելագույնս են տուժել հակամարտության և Աղբրեջանի կողմից սանձազերծած ռազմական ագրեսիայի ընթացքում:

Ընդ որում, եթե ընդունենք (իրավագետ-փորձագետների մեծ մասի կողմից ընդունվող) այն դրույթը, որ միջազգային իրավունքի սուբյեկտներ են հանդիսանում, առաջին հերթին, պետությունները, ապա դրա հետ միաժամանակ հարկ է խոստովանել, որ առավել կարևոր պատմական և քաղաքական իրադարձությունները, որոնք նպաստում են «նոր» պետությունների ծագմանը կամ «հների» վախճանին, տեղի են ունե-

¹⁸⁰ Տե՛ս մանրամասն. *Aliyev Y. Arms Control Process in Transcaucasia // NATO School, Polaris Quarterly, Vol. I, Issue 2, Summer 2004, p. 45-46.*

նում իրավական դաշտից դուրս և նրա նկատմամբ արտաքին բնույթ ունեն: Եթե հարցին մոտենանք այլ տեսանկյունից, ապա կարելի է ենթադրել, որ այդ պատմական և քաղաքական իրադարձությունները և իրողություններն էլ հենց ծնում են նոր իրավական կարգ: Ավելին, հաշվի առնելով մի շարք հետազոտողների կարծիքը, որոնք պնդում են, որ պետությունների ի հայտ գալը և անհետանալը իրենցից մետաիրավական (անցումային-իրավական) բնույթի իրադարձություններ չեն ներկայացնում, ինչպես նաև չբացառելով այն տեսության իրավա-ցիությունը, համաձայն որի այս կամ այն պետության ճանաչումը այլ պետությունների կողմից հանդիսանում է ավելի շուտ քաղաքական, քան իրավաբանական, կամ, համենայնդեպս, իրավունքի տարրեր չձևավորող ակտ, ապա «նոր պետության իրավաբանական գոյությունը կախված է ոչ թե նրա ճանաչումից այլ պետությունների կողմից, այլ օբյեկտիվորեն այն որոշ պայմանների կատարումից, որոնք վերապահվում են միջազգային իրավունքով այն պետությանը, որը կարող է ճանաչվել»¹⁸¹: Այսպիսով, ելնելով վերոնշյալ միջազգային-իրավական սորամաբանությունից և տարածելով այն Հարավային Կովկասի իրողությունների վրա, ակնհայտ է դառնում, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավաբանական (և ստավել ևս քաղաքական) կայացածությունը բնութագրող կարևորագույն գործոն է հանդիսանում նրա համապատասխանությունը այն մի շարք ցուցանիշներին, որոնք հանդիսանում են ցանկացած պետության անբաժան ատրիբուտը:

Միաժամանակ, պետք է նշել, որ պետականության այս ատրիբուտներին ԼՂՀ լիակատար համապատասխանությամբ հանդերձ, հանրապետությունը Հարավային Կովկասում կատարում է նաև անվտանգության և կայունության կարևորագույն, նույնիսկ համակարգ ձևավորող քաղաքական գործոնի դեր: Այն վստահը, որ ավանդական միջազգային իրավական դաշտում ԼՂՀ-ն դեռևս չի ճանաչված, բոլորովին չի նշանակում, որ դա ինչ-որ կերպ կարող է անդրադառնալ նրա ֆիզի-

կական «կենսունակության» վրա և նսեմացնել այն դերը, որը նա կատարում է տարածաշրջանային անվտանգության արդի ճարտարապետության հարցում: Համաձայն արևմտյան հայտնի փորձագետներից մեկի կարծիքի, ԼՂՀ-ն «երկար լսող է խաղում, որում չպարտվելը, կնշանակի հաղթել»¹⁸², և չնայած միջազգային ճանաչման բացակայությանը, տարածաշրջանում հաղիսանում է առանցքային քաղաքական խաղացող: Այս գործընթացը անշրջելի է, և միջազգային հանրության, առաջին հերթին առաջատար տարածաշրջանային և արտատարածաշրջանային մի շարք տերությունների ռեակցիան ցույց է տալիս, որ նրանք իրենք են շահագրգիռ ԼՂՀ կայացման հարցում՝ որպես անվտանգության գործոնի: Ընդ որում, այդ գործընթացը բոլորովին չի կապվում ողջ դարաբաղյան խնդրի վերջնական կարգավորման չափից դուրս զգալի արագացման անհրաժեշտության հետ, քանի որ բավականին հստակ պատկերացում կա նմանօրինակ արագացված կարգավորման հնարավոր բացասական հետևանքների մասին:

Ներկայիս Ադրբեջանական Հանրապետությունը չի հանդիսանում Ադրբեջանական ԽՍՀ իրավահաջորդը և այդ պատճառով բացարձակ, ոչ մի հակափաստարկ չիանդորժող իմաստով, չի կարող հավակնել նախկին Ադրբեջանական ԽՍՀ ամբողջ տարածքին: Իրավական առումով որպես այդպիսի հակափաստարկ հանդես է գալիս ԼՂՀ (հաշվի առնելով 1991թ. դեկտեմբերի 10-ի հանրաքվեի հիման վրա հանրապետության ստեղծման բուն փաստի իրավական անթերիությունը) «արդյունավետ վերահսկողությունը» այն պատմական տարածքներում, որոնց նկատմամբ ոչ «1918-1920թթ. նմուշի» Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությունը, ոչ «1990-2000-ական թթ. նմուշի» Ադրբեջանական Հանրապետությունը երբեք վերահսկողություն չեն իրականացրել, ինչպես նաև չեն ունեցել այն լեգիտիմ սահմանված կամ միջազգային հանրության կողմից ճանաչված սահմանները, որոնց նկատմամբ, ներկայումս, Ադրբեջանի ղեկավարությունը հա-

¹⁸¹ *Arton P.*, Мир и война между народами. М., 2000, с. 161-162.

¹⁸² *Lynch D.*, Separatist States and Post-Soviet Conflicts // International Affairs, Vol.78, №4, 2002, p. 848.

վակնություններ է ներկայացնում: Մասնավորապես Վլենգ-
ներք, որ Անդրկովկասում թուրքական ագրեսիայի ակիբի վրա
1918թ. կազմավորված և առաջին անգամ քաղաքական քար-
տեզի վրա հայտնված Ադրբեջանական Դեմոկրատական
Հանրապետությունը չհիմնավորված տարածքային հավակ-
նություններ ներկայացրեց բոլոր հարևան պետություններին
Բաքվից մինչև Բաթում ընկած տարածքների նկատմամբ, Ազ-
գերի Լիգային 1919թ. ներկայացնելով համապատասխան
փաստաթուղթ: Սակայն, Ազգերի Լիգան օրինական չճանաչեց
ԱԴՀ այդ հավակնությունները (ինչը, Ազգերի Լիգայի կողմից
դե յուրե ԱԴՀ-ն ճանաչման գլխավոր պատճառը հանդիսա-
ցավ) և այդ պետությունը լքեց աշխարհի քաղաքական քար-
տեզը առանց միջազգայնորեն ճանաչված և օրինական սահ-
մանների: 1919թ. հռչակված Ադրբեջանական Հանրապետու-
թյունը փաստացի վերադարձավ 1918-1920թթ. իրողություննե-
րին, ինչով դարձավ միջազգայնորեն ճանաչված սահմաններ
չունեցող պետության իրավահաջորդը և, համապատասխա-
նաբար, որևէ իրավունք չունի այն տարածքների նկատմամբ,
որոնք այսօր գտնվում են ԼՂՀ իրավատիրույթում: Ավելին,
նույնիսկ Ադրբեջանին (ինչպես նաև հետխորհրդային մնա-
ցած պետություններին) ՄԱԿ, ԵԱՀԿ և մի շարք միջազգային
այլ կազմակերպություններ ընդունելը ԽՍՀՄ միջազգային
իրավասուբյեկտայնության ինտեգրիայի հետևանք էր և չէր նա-
խատեսում այդ կազմակերպությունների կողմից այն սահման-
ների և տարածքների ճանաչում, որոնց նկատմամբ այժմ հա-
վակնություններ է ներկայացնում պաշտոնական Բաքուն:

Մինչդեռ, նախկին Ադրբեջանական ԽՍՀ հայ ազգաբնակ-
չության էթնիկ գտումները և արտաքսումը, իսկ այնուհետև
նաև Ադրբեջանի ուղղակի ագրեսիան սեփական պետություն
կառուցելու իր օրինական իրավունքը իրականացնել ձգտող
ԼՂՀ ժողովրդի դեմ նույնպես հանգեցրեցին որոշակի իրավա-
կան և քաղաքական հետևանքների:

Այն տարածքներից, որոնց վրա այսօր իրականացվում է
ԱՀ պետաիրավական ինքնիշխանությունը հայ ազգաբնակ-
չության լիակատար արտաքսման (ներքին ագրեսիա) իրավա-
կան հետևանքները և, ընդհանուր առմամբ, ի խախտումն մի-

ջազգային իրավունքի, այդ գործողություններին հաջորդող
ԼՂՀ դեմ բացահայտ ռազմական գործողությունների ծրագ-
րավորումը, նախապատրաստումը և իրականացումը ակնհայ-
տորեն վկայում են նշված հետևանքներից առավել տուժած
անձանց օրինական իրավունքների վերականգնման անհրա-
ժեշտության առաջնայնության օգտին: Ադրբեջանի ներքին
ագրեսիայից աուժեցին անձինք, որոնք այժմ գտնվում են
անորոշ իրավական, ծանր սոցիալ-տնտեսական վիճակում և
զրկված են իրենց իրավունքների և ազատությունների պաշտ-
պանության իրավական միջոցներից: Գտնվելով նախկին
Ադրբեջանական ԽՍՀ տարածքի սահմաններից դուրս, այնու-
հանդերձ ունեն միջազգային սկզբունքների և նորմերի վրա
հիմնված իրավունքը անվտանգության պայմաններում վերա-
դառնալու իրենց արտաքսման վայրերը՝ ստանալով իրենց
կրած նյութական կամ քարոյական կորստի փոխհատուցումը
և իրենց անձնական, քաղաքական և սոցիալ-տնտեսական
իրավունքները և ազատությունները վերականգնելու հնարա-
վորությունը: Իր նախկին քաղաքացիների նկատմամբ Ադրբե-
ջանի ներկայիս դիրքորոշման օբյեկտիվ իրողություններում
նշված բոլոր պայմանների ապահովմամբ (անվտանգություն,
կարգավիճակի իրավաքաղաքական վերականգնողականույթ-
յուն, պետության կողմից սոցիալ-տնտեսական աջակցություն
և այլն) վերադարձը՝ իր բոլոր պարամետրերով հնարավոր,
իրագործելի և արդյունավետ է՝ ԼՂՀ ներկայիս պետաիրավա-
կան ինքնիշխանության իրականացման տարածքներում: Այս-
պիսով, իր ներկայիս ինքնիշխանության տարածքներում իրա-
կանացված ներքին ագրեսիայի համար ԱՀ միջազգային իրա-
վական պատասխանատվությունը կունենա նյութական բո-
վանդակություն տվյալ տարածքներ արտաքսված հայերի վե-
րադարձի, տվյալ անձանց նկատմամբ ագրեսիվ գործողույթ-
յուններ չվերսկսելու երաշխիքներ տալու և իրենց փաստացի
ողջ շարժական և անշարժ սեփականությունը կորցրած նախ-
կին Ադրբեջանական ԽՍՀ տարածք վերադարձող արտա-
քսված անձանց կողմից այստեղ թողնված գույքի փոխհա-

տուցման տրամադրման հետ կապված միջոցառումների իրականացմանը շխտչընդոտելու տեսքով:

Այս դեպքում առկա կլինի ԱՀ-ի միջազգային իրավական «մեղմ» պատասխանատվությունը, քանի որ նրանից պահանջվում է միայն ԼՂՀ-ի իրավատիրոջում գտնվող տարածքներ վերադարձող անձանց անվտանգ բնակության և նրանց որոշակի փոխհատուցման վճարման երաշխիքների տրամադրում: Սակայն ակնհայտ է, որ հարցերի լուծման և դրանց կազմակերպման, իրականացման վերադարձող անձանց արդյունավետ ինտեգրման հիմնական ծանրությունը և դրան համաարտասիսան պատասխանատվությունը ընկնում է ԼՂՀ պետական մարմինների վրա: Արտաքսված անձանց իրավունքների վերականգնողականության, նրանց աղետալի սոցիալ-տնտեսական վիճակի հարթահարման, նյութական վիճակի բարելավման և նորմալ կենսագործունեության համար պայմաններ ստեղծելու նպատակով ջանքերը համատեղելու հարցում ԱՀ-ի իշխանությունների կողմից որևէ շարժի բացակայության պայմաններում, ԼՂՀ իշխանությունները պետք է իրենց վրա վերցնեն տվյալ կատեգորիայի անձանց նկատմամբ շարունակվող անարդարության վերացման բեռը: Դա առավել քան կարևոր է և օրինաչափ, քանի որ ողջ Ադրբեջանով մեկ հայերի էթնիկ գաղմկների ձևական պատրվակ է հանդիսացել ԼՂԽՄ-ի հայերի շարժումը՝ ի պաշտպանություն իրենց ոտնահարված իրավունքների: ԼՂՀ անկախության համար իրենց կյանքով և գույքով վճարեցին Ադրբեջանի հազարավոր հայեր, ինչը ծանրակշիռ բարոյախրավական պարտավորություններ է դնում ԼՂՀ վրա այդ մարդկանց նկատմամբ:

Ռետոխտուցիան ԱՀ կողմից կարող է «պասիվ» բնույթ ունենալ, ինչը նախատեսում է նրա «չհակազդելու» դիրքորոշումը արտաքսված անձանց վերադարձի նկատմամբ այն տարածքները, որտեղ վերադարձ, բնակեցում և արդյունավետ ինտեգրացում իրականացնող հիմնական պատասխանատու կողմի, ի դեմս ԼՂՀ, կարող են ապահովվել պայմաններ վերաբնակիչների նորմալ կենսագործունեության համար: Տեղի կունենա հակամարտության կողմերի պահանջների յուրօրինակ «փոխ-

հարվառում»՝ ԱՀ-ն հնարավորություն կստանա կրել մեղմ միջազգային իրավական պատասխանատվություն՝ երաշխավորող բնույթի (իրենից խոշոր նյութական փոխհատուցումների վճարում չպահանջող) գործադրությունների տեսքով, ինչպես նաև վերաբնակեցվող անձանց տեղավորման հարցում ուժերի ներածի չափով, սակայն, միաժամանակ, պարտադիր մասնակցությամբ, իսկ ԼՂՀ-ն, հնարավոր է, կիրառելի իր նկատմամբ ԱՀ կողմից արտաքին ազդեցիկ իրականացնելու համար իր կրած վնասների լիակատար փոխհատուցման պահանջից:

Խորնորդային այս (Ադրբ. ԽՍՀ) հանրապետության տարածում ապրող հայերի նկատմամբ իրականացրած ներքին ազդեցիկի համար Ադրբեջանական ԽՍՀ և ԼՂՀ ժողովրդի նկատմամբ արտաքին ազդեցիկի համար ԱՀ միջազգային-իրավական պատասխանատվությունը վերջինիս բարի կամքով կարող է հանգել հետևյալի. 1) ԱՀ ներկայիս և հետագա իշխանությունների կողմից նախկին Ադրբ. ԽՍՀ հայ ազգաբնակչության սեփական ժողովրդավարական պետություն կառուցելու իրավունքը այսպես կամ այնպես ժխտող ցանկացած գործողությունների չվերակախելու, չիրագործելու և չխրախուսելու մասով երաշխիքների, 2) շխտչընդոտելու անձանց վերադարձին, բնակեցմանը և ինտեգրմանը այն տարածքներում, որտեղ ԼՂՀ իշխանությունները պատրաստ են իրենց վրա վերցնելու նախկին Ադրբ. ԽՍՀ տարածք վերադարձողների տեղավորման գլխավոր պատասխանատվությունը, 3) հնարավորությունների սահմաններում, սակայն, պարտադիր կարգով տրամադրել նյութական միջոցներ և ֆինանսական ռեսուրսներ վերադարձող անձանց տեղավորման համար, ինչը կզնահատվի որպես որոշակի փոխհատուցման միջոց (ռեպարացիայի)¹⁸³ և ռեսախտուցիայի¹⁸⁴ տեսքով) ԱՀ կողմից Ադրբ. ԽՍՀ

¹⁸³ Ռեպարացիա (լատիներեն՝ reparatio – վերականգնում)՝ խաղաղության պայմանագրի կամ հարձակման ենթարկված պետությանը (պետություններին) պատճառած վնասի միջազգային այլ ակնադի ուժով փոխհատուցում: Ռեպարացիայի ծավալը և բնույթը պետք է սահմանվեն պատճառած նյութական վնասի համապատասխան (համարժեքության սկզբունք): Արտակարգ ռեպարացիաների նպատակը

գոյության ժամանակ նրա տարածքի վրա թողնված արտաքս-
ված հայ ազգաբնակչության գույքի համար, ազգաբնակչու-
թյուն, որը այդ պահին ուներ Ադրբ. ԽՍՀ հանրապետական քա-
ղաքացիություն և, համապատասխանաբար, եթե չենթարկվեր
արտաքսման, կարող էր ստանալ մաս ԱՀ քաղաքացիության
կարգավիճակ, 4) չխոչընդոտել վերադարձող բնակչության
իրեն որոշակի պետության հետ կապող (քաղաքացիության
ընտրություն) իր իրավաքաղաքական կարգավիճակի ընտ-
րության հարցում կամքի արտահայտմանը; 5) հետագայում
չկիրառել որևէ գործողություն, որը կարող է կասկածի տակ
դնել ԼՂՀ պարտադիր ներգրավվածությունը տարածաշրջա-
նային բնույթի բոլոր հարցերում՝ քաղաքական, սոցիալ-տնտե-
սական, մարդասիրական զարգացման բոլոր պարամետրե-
րով, թույլ չտալ գործողություններ, որոնք ուղղված են ԼՂՀ և
նրա բարեկամ պետությունների իրավահավասար, փոխշահա-
վետ և խաղաղ մասնակցության բացառման՝ այնպիսի ծրագ-
րերում, որոնցում նրանք շահագրգռված են՝ ռազմաքաղաքա-
կան համագործակցությունից մինչև տնտեսական փոխգոր-
ծակցություն և որոնց իրականացումը, առանց նրանց մաս-
նակցության, կլինի պակաս արդյունավետ:

ԱՀ-ի կողմից իր միջազգային-իրավական պատասխա-
նատվության նշված մեղմ առարկայացման հանդեպ անընկա-

կայանում է ոչ միայն նյութական վնասի փոխհատուցման մեջ, այլ նաև նրանում,
որ բացառի ագրեսիայի և այլ միջազգային հանցագործությունների իրականաց-
ման գործոնները: Դեպքարացիան կարող է տեղի ունենալ *ռեստիտուցիայի* ձևով:

¹⁸⁴ *Ռեստիտուցիան* դա այն վիճակի վերականգնումն է, որը գոյություն է ունեցել
մինչև հակաիրավական գործողության իրականացումը: Համաձայն «Պատասխա-
նատվության մասին հոդվածների» 43-րդ հոդվածի, սույնում պետությունը իրա-
վունք ունի խախտող-պետությունից ստանալու ռեստիտուցիա: Այն կարող է ար-
տահայտվել անօրինական կերպով խլված գույքի վերադարձի ձևով: Տուժած պե-
տությունը իրավունք ունի միջազգային իրավախախտում կատարած պետությու-
նից փոխհատուցում ստանալու այն վնասի համար, որը պատճառվել է այնպիսի
գործողություններով, երբ կրած վնասը ծածկվում է «առարկայական ռեստիտու-
ցիայով»: Համաձայն «Պատասխանատվության մասին հոդվածների» 44-րդ հոդ-
վածի, փոխհատուցումը ընդգրկում է ցանկացած տնտեսապես գնահատվող վնաս,
որը պատճառվել է սույնում պետությանը և կարող է ներառել տոկոսները և բաց
թողնված օգուտը: Փոխհատուցումը նշանակում է փողի վճարման ձևով ռեպարա-
ցիա՝ որպես պատճառած վնասների փոխհատուցում:

լունակության դեպքում ԼՂՀ-ն կարող է առավել կոշտ դիրքո-
րոշման իրավունք իրեն վերապահել՝ ընդհուպ մինչև Ադրբե-
ջանի նկատմամբ ռեպրեսալիաների¹⁸⁵ կիրառում, վկայակոչե-
լով հետևյալ միջազգային-իրավական փաստարկները: Ժա-
մանակակից միջազգային իրավունքում տարածքի գիջման
կարևոր տեսակ է հանդիսանում տարածքային փոփոխությու-
նը ագրեսորին իր տարածքի մի մասից զրկումը, եթե այդ տա-
րածքը պարբերաբար օգտագործվել է որպես հարմար պլաց-
դարմ հարակից պետությունների վրա հարձակվելու համար:
Նման փոփոխությունները հանդես են գալիս որպես պետու-
թյան կողմից ծանրագույն միջազգային հանցանք՝ ագրեսիա
գործելու համար պատիժ և դրա կրկնությունը կանխող միջոց:
Նմանօրինակ փոփոխությունները միջազգային-իրավական
պրակտիկայում կոչվում են ադյուդիկացիա՝ արբրիտաժի կամ
միջազգային դատարանի որոշմամբ՝ տարածքի հատկացում:
Ադյուդիկացիան տարածք ձեռք բերելու օրինաչափ միջոց է,
քանի որ պետք է նախատեսի, որ պետությունները ունեն բա-
վար իրավական հիմքեր տվյալ վիճելի տարածքները տնօրի-
նելու համար¹⁸⁶: Ադյուդիկացիայի վառ պատմաիրավական
նախադեպ է ծառայում հակահիտլերյան կոալիցիայի երկրնե-
րի ընդունած որոշումը, երբ 1945թ. Պատտադամի դեկլարացիայի
հիման վրա վերացվեց նախկին ֆաշիստական Գերմանիայի
տարածքը՝ Արևելյան Պրուսիան, որպեսզի այն «երբեք
չսպառնա իր հարևաններին»¹⁸⁷: Սույնով ագրեսոր-պետու-
թյան պատասխանատվությունը համաձայն ժամանակակից
միջազգային իրավունքի ներառում է նաև այնպիսի միջոցա-

¹⁸⁵ *Ռեպրեսալիաներ* (լատիներեն՝ reprehendo – զսպում են, կանգնեցնում են,
հանդիմանում են)՝ հարկադիր միջոցներ, որոնք սահմանափակում են այլ պետու-
թյան միջազգային իրավունքով պաշտպանվող իրավունքները ի պատասխան նրա
կողմից կատարված իրավախախտման: Իմաստը կայանում է որևէ պետության
կողմից պատժամիջոցների կիրառման մեջ ի պատասխան այլ պետության անօրի-
նական գործողությունների՝ նպատակ ունենալով վերջինիս որդեկ վնասի փոխհա-
տուցման կամ զեղծ մնալու հետագայում իրավախախտումներից:

¹⁸⁶ Большой юридический словарь / Под ред. Сухарева А.Я., Крутских В.Е. М.,
2002.

¹⁸⁷ Тегеран – Ялта – Потсдам. Сборник документов. М., 1971, с. 386.

ռումներ ազդեաորի նկատմամբ. «որոնք կարող են արտա-
հայտվել, մասնավորապես, նրա տարածքի օտարում հետա-
գայում ազդեաորի կանխարգելելու նպատակով»: Աղբրեջանի
դեպքում աղյուղիկացիա հասկացոթյունը գործում է իր՝ մի-
ջազգային-իրավական ոչ բուն իմաստով, քանի որ ԱՀ չի հան-
դիսանում Աղբր. ԽՍՀ իրավահաջորդը և արդեն չի կարող հա-
վակնել նախկին Աղբր. ԽՍՀ ողջ տարածքին, այդ թվում նաև
այն շրջանները, որոնք ակտիվորեն օգտագործվել են Լեռնա-
յին Ղարաբաղի ժողովրդի դեմ ազդեաորի ընթացքում և որոնց
վրա ներկայումս տարածվում է ԼՂՀ ինքնիշխանոթյունը:

ԼՂՀ ժողովրդի դեմ ազդեաորի համար Աղբրեջանի քաղա-
քական պատասխանատւոթյունը, ինչպես նաև երկարաժամ-
կետ խաղաղոթյան հաստատման անհրաժեշտոթյունը և Հա-
րավային Կովկասում տարածաշրջանային անվտանգոթյան
կայուն համակարգի կազմավորումը նախատեսում են նաև
դարաբաղյան հակամարտոթյան կարգավորման գործուն քա-
ղաքական և ռազմաքաղաքական մեխանիզմների և երաշխիք-
ների ստեղծում: Տարածաշրջանում երկարաժամկետ խաղա-
ղոթյան հեռանկարները կախված են այն հանգամանքից, թե
որքան իրատեսական և իրագործելի կլինեն այդ մեխանիզմնե-
րը, ընդ որում ոչ միայն դարաբաղյան հակամարտոթյան կար-
ճաժամկետ կարգավորման համատեքստում, այլ նաև Հարա-
վային Կովկասում անվտանգոթյան նոր համակարգի կայաց-
ման տեսանկյունից:

Այս առումով ստիպված ենք փաստել, որ այս բնագավա-
ռում դարաբաղյան խաղաղարար գործընթացում այս կամ այն
չափով ներգրավված միջազգային կազմակերպոթյունների
առկա ռեսուրսները բավարար չեն, ինչպես նաև կասկածելի է
մեր տարածաշրջանում բոլոր այդ կազմակերպոթյունների
արդյունավետ գործունեոթյան և դրանց շահերի «զուգակց-
ման» հնարավորոթյունը, առավել ևս՝ անվտանգոթյան հար-
ցերում: Դիտարկելով հայ-աղբրեջանական գոտում Բաքվի
կողմից նախաձեռնած միլիտարիզացիայի նվազեցման մե-
խանիզմը գտնելու, մեր տեսանկյունից, առանցքային ասպեկ-
տը, դարարարյան հակամարտոթյան կարգավորման ցանկա-

ցած համատեքստում հարկավոր է նշել, որ հակառակ խաղա-
ղարար գործընթացում տարբեր միջազգային և ռազմաքաղա-
քական կազմակերպոթյունների ներգրավվածոթյան վերա-
բերյալ բոլոր դեկլարաաիվ հայտարարոթյունների, նրանք բո-
լորը առ այսօր սպառազինոթյունների և ռազմական գործո-
ղոթյունների վերահսկողոթյան մասով ունեն միայն մեկ գոր-
ծուն մեխանիզմ, որը կարելի է օգտագործել Հարավային Կով-
կասի պետոթյունների միլիտարիզացիայի նվազեցման հա-
մար: Աղբրի մեխանիզմ ևն հանդիսանում Եվրոպայում սո-
վորական զինված ուժերի մասին պայմանագիրը (ԵՄՁՈՒՊ) և
ԵՄՁՈՒՊ-ի հետ փոխկապակցված Վստահոթյան և ան-
վտանգոթյան ամրապնդման միջոցառումները, պարբերական
ստեղոթյունները և ԵԱՀԿ շրջանակներում նախատեսված
կամ իրագործվող այլ միջոցառումներ: Անլուրջ կլինել ենթադ-
րել, որ կարելի է ստեղծել սպառազինոթյունների վերահսկո-
ղոթյան և միլիտարիզացիայի նվազեցման մեկ այլ բացառիկ
մեխանիզմ Լեռնային Ղարաբաղում խաղաղ գործընթացը
սպառազինոթյունը համար: Սակայն, այս պայմաններում, ստիպ-
ված ենք արձանագրել, որ ներկայումս սովորական սպառա-
զինոթյան նկատմամբ Եվրոպայում գործող (և նախորդող
երեք տասնամյակների ընթացքում շատ մեծ դժվարոթյամբ
ստեղծված) վերահսկողոթյան ռեժիմը լուրջ ճգնաժամ է ապ-
րում: Նույնիսկ 1999թ. ԵԱՀԿ ստամբուլյան համաժողովի ժա-
մանակ ԵՄՁՈՒՊ-ի ադապտացիան չավելացրեց այդ մեխա-
նիզմի արդյունավետոթյունը: Իրականում ադապտացված
ԵՄՁՈՒՊ-ը ոչ միայն չի աշխատում, այլև դեռևս չի վավերաց-
ված առաջատար արևմտյան երկրների կողմից, այնտեղ չեն
մտնում նույնիսկ ՆԱՏՕ-ի ներկայիս որոշ անդամներ, իսկ
Ռուսաստանի ռազմաքաղաքական դեկավարոթյունը ոչ մեկ
անգամ ամենաբարձր մակարդակներում հայտարարել է դրա-
նից դուրս գալու հնարավորոթյան մասին: Ավելին, եթե իրերն
իրենց անունով կոչենք, ապա ոչ Եվրոպական և ոչ համաշ-
խարհային հանրոթյունը այդպես էլ չկարողացավ ստեղծել
սպառազինոթյունների, ընդ որում՝ ոչ միայն սովորական, վե-
րահսկողոթյան և սահմանափակման իրական մեխանիզմ:

Ճգնաժամ է ապրում որ միայն ԵՍՁՈՒՊ-ը, այլև զանգվածա-
յին ոչնչացման զենքի վերահսկողության ռեժիմները, ինչը
հաստատվում է ՁՈՁ-ի հետագա տարածման փաստերով
Արևելյան և Հարավ-Արևելյան Ասիայում: Եվ արդյունքում,
ինչպես վերը նշվեց (սույն աշխատության Գլուխ IV և Գլուխ
VI), ստեղծվեց մի իրավիճակ, երբ Ադրբեջանը արդեն 15 տա-
րի առնվազն երեք կատեգորիաներում խախտում է ԵՍՁՈՒՊ-
ը՝ 2-2,5 անգամ գերազանցում է սպառազինության և ռազմա-
կան տեխնիկայի առկայության իր սահմանային ազգային
մակարդակները, իսկ համաշխարհային հանրությունը լուծ է
(չնայած գործերի իրական վիճակի մասին տեղեկացվածու-
թյան), իսկ եվրոպական փորձագիտական հանրությունը չի
համարձակվում նույնիսկ նշել Բաքվի զինամոցում առկա
ՍՈՏ-ի թվերը, որպեսզի վերջնականորեն չվարկաբեկի և «եր-
կարած զի դեռևս շատ երկարատև ժամանակահատվածում
այլընտրանք չունեցող ԵՍՁՈՒՊ-ի կյանքը»: Տվյալ համա-
տեքստում երևում է Ադրբեջանի միլիտարիզացման նվազեց-
ման նկատմամբ վերահսկողության այսպիսի մեխանիզմի ողջ
անգործունակությունը:

Ռազմաքաղաքական բրեյկ մյուս կարևոր տեսանկյունն է
հանդիսանում հակամարտության գոտի խաղաղարար կոն-
տինգենտի, որպես ռազմական գործողությունների չվերա-
կանգնման երաշխիք, մտցնելու հնարավորության վերլուծու-
թյունը: Սակայն պետք է նշել, որ վերջին 50 տարիների հա-
մաշխարհային պրակտիկան ցույց է տալիս, որ խաղաղարար-
ները, որպես զինված հակամարտությունների կարգավորման
գործիք, արդյունավետ են միայն քացառապես երկու իրավի-
ճակներում. եթե հակամարտության կողմերը արդեն հասել են
ուժերի իրական հավասարակշռության և համարում են հակա-
մարտությունը վերջնականապես սպառված, կամ եթե կողմե-
րից մեկը հակամարտության արդյունքում հասել է այնպիսի
շոշափելի առավելության (ինչպես, օրինակ, ալբանացիները
Կոսովոյում), որ խաղաղարարները պետք են միայն հակա-
մարտության գոտում ստեղծված իրավիճակին օրինականու-
թյուն հաղորդելու համար: Այլ դեպքում հակամարտության գո-

տում խաղաղարարների ցանկացած կոնտինգենտների առ-
կայությունը երաշխիք չի տալիս ողբերգությունների չկրկնվե-
լու առումով, ինչպես դա սյառուսեց Սրբբենիցայում, երբ հո-
լանդական խաղաղարարների գումարտակը չկարողացավ
կանխարգելել հազարավոր մարդկանց զոհվելը: Կամ վերջին
դեպքը կոսովյան Միտրովիցայում 2004թ. մարտին, երբ KFOR-ի
մեծաքանակ կոնտինգենտի առկայությունը չկանխեց սերբերի
և ալբանացիների զանգվածային բախումները, որոնք հանգեց-
րեցին նոր էթնիկ զտումների Եվրոպայի կենտրոնում: Հարկ է
տեսել ման այնպիսի ոչ պակաս կարևոր գործոն, ինչպիսին է
հակամարտության գոտում խաղաղարարների երկարատև
ներկայության անհնարիությունը կամ քաղաքական ֆորամա-
ժորային հանգամանքների ծագումը, որոնք օբյեկտիվորեն
խաղաղարարների ներկայությունը կործանեն անհնարին կամ
անցանկալի: Ասենք, 1990թ. ԽՍՀՄ-ը (ԱՄՆ-ի հետ միասին)
հանդես էր գալիս որպես կարևորագույն երաշխիք արաբա-
խուրայերական խաղաղարար գործընթացում: Բոլորը հիշում
են, թե ինչ սյառուսեց նույն ԽՍՀՄ-ի հետ ուղիղ մեկ տարի հե-
տո: Կամ հիշենք Ռուսաստանը, որը հանդես էկավ որպես խա-
ղաղության երաշխավոր Աբխազիայում և Հարավային Օսիա-
յում: Եթե ելնենք ևս միայն կայունությունը պահպանելու և
ռազմական գործողությունները չվերսկսելու հրամայականից,
ապա Մոսկվան համեմատաբար լավ էր կադրանում կատա-
րել իր դերը 10 տարիների ընթացքում, մինչև իր դիրքերի թու-
լացումը Հարավային Կովկասում, արդյունքում չբերեց այդ
հակամարտությունների գոտիներից իր ստորաբաժանումների
յուրս բերման պահանջների առաջ քաշմանը, ինչը մոտ ապա-
գայում կարող է հանգեցնել շատ լուրջ հետևանքների Աբխա-
զիայում և Հարավային Օսիայում: Կարևոր են ՆԱՏՕ-ն կամ
ՀԱՊԿ տալ երաշխիքներ, որ 5-10 տարի հետո իրենք կհանդի-
տանան որպես գործուն ռազմաքաղաքական կազմակերպու-
թյուններ, ստափել ևս ունակ՝ «համադրելու» իրենց շահերը հա-
կամարտության գոտում և պահել այնտեղ գործունակ խաղա-
ղարար կոնտինգենտներ: Ղարաբաղյան խաղաղ գործընթա-
զի, ինչպես նաև ողջ Հարավային Կովկասի տարածաշրջանա-

յին անվտանգության ցանկացած երաշխավորի ներուժի հանկարծակի «հեռացումը» կամ աներևութանալը անխուսափելիորեն կրենի ողջ համակարգի կործանմանը: Առավել ևս, որ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը լավ է հիշում նմանատիպ «խաղաղարար խնդիրներ» լուծելու համար տարածաշրջանում Խորհրդային բանակի զորամասեր և ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի մտցնելու «արդյունքները» 1988-1991թթ.:

Ստեղծված պայմաններում դարաբաղյան հակամարտության գոտում ռազմաքաղաքական հավասարակշռությունը կարելի է բնութագրել որպես հակադիր ուժերի որակաքանակական հավասարություն, որտեղ խիստ տեխնիկական ցուցանիշների հետ միասին կարևոր դեր է խաղում աշխարհագրական գործոնը և պաշտպանական գործողությունների համար ԼՂՀ տահմանների ներկայիս հարմար կոնֆիգուրացիան: Բնական է, որ Ադրբեջանի ռազմական տեխնիկայի և անձնակազմի քանակական առավելությունը մեծապես չեզոքացվում է Հայաստանի Զինված ուժերի (որպես ԼՂՀ ժողովրդի անվտանգության հիմնական երաշխավոր) և ԼՂՀ Պաշտպանության բանակի որակական առավելությամբ: Ընդ որում, հարկավոր է նաև հաշվի առնել ինչպես սպառազինության և համակարգերի տարբեր տեսակների համալիր հարաբերակցությունը, այնպես էլ ռազմական հակամարտության հնարավոր վերսկսման դեպքում դրանց արդյունավետ կիրառման հնարավորությունը: Ադրբեջանի հարձակողական սպառազինության առավելությունը չեզոքացվում է նաև ԼՂՀ ներկայիս պաշտպանական դիրքերի օպտիմալությամբ (ռազմական տեսանկյունից): Այլ խոսքով, դարաբաղյան բանակի պաշտպանական դիրքերի ներկայիս կոնֆիգուրացիան, այդ թվում նաև Դաշտային Ղարաբաղի տարածքի հաշվին, թույլ է տալիս վերացնել կամ չեզոքացնել տարածաշրջանային անվտանգությունը վտանգող այն սպառնալիքը, որն առաջանում է Ադրբեջանի կողմից սպառազինությունների և ռազմական տեխնի-

կան չվերահսկելի և զանգվածային գնումների հետևանքով¹⁸⁸: Այս դեպքում Ադրբեջանի համար ռազմական գործողությունների ժամանակ կաճի հնարավոր ռազմական կորուստների մակարդակը, ինչը հանդիսանում է առավել արդյունավետ գործոն նրան զուգելու համար:

Այդ պատճառով քաղաքական ոլորտում, դարաբաղյան հակամարտության ցանկացած հնարավոր լուծում պետք է անպայման ապահովի նրա երկարաժամկետությունը, հեռանկարների կայունությունը և կողմերի վստահությունն առ այն, որ այն կորուստները, որոնք կկրի ռազմական գործողությունները նախաձեռնող-պետությունը, ամեն դեպքում և զինված հակամարտության ցանկացած ելքի ժամանակ կգերազանցեն պատերազմը նախաձեռնելուց ակնկալվող բոլոր օգուտները: Այս տեսանկյունից չի կարելի հաշվի չառնել Դաշտային Ղարաբաղի տարածքների նշանակությունը, որոնց վրա այժմ տարածվում է ԼՂՀ ինքնիշխանությունը, ոչ միայն որպես ԼՂՀ անվտանգության և զարգացման կարևորագույն տարրի, այլ նաև որպես կարևոր պայման ռազմական գործողությունները չվերսկսելու համար: Ամեն ինչից բացի, դրանք անվտանգության պայմաններ կապահովեն ոչ միայն ԼՂՀ ներկայիս բնակչության համար, այլև Ադրբեջանական ԽՍՀ նսիւկին հայ քաղաքացիների՝ փախստականների և ՆՏԱ-ի համար, որոնք մոտ ապագայում կարող են դառնալ ԼՂՀ քաղաքացիներ և բնակեցվել այդ տարածքներում: Դրան պետք է ավելացնել նաև, որ Դաշտային Ղարաբաղի տարածքները և Իրանի հետ ընդհանուր սահմանի առկայությունը կարևոր են ոչ միայն անվտանգության տեսանկյունից, այլև որոշիչ գործոն են հանդիսանում դարաբաղյան պետականության կենսունակության համար, այդ թվում հաշվի առնելով նաև այդ տարածքների սոցիալ-տնտեսական և հաղորդակցության կարևորությունը ԼՂՀ-ի համար:

¹⁸⁸ Минасян С., Низинный Карабах пужен для безопасности НКР: Превосходство Азербайджана в вооружениях компенсируется оптимальностью оборонительных позиций непризнанной Республики // Военно-промышленный курьер, № 38 (105), 12-18 октября, 2005.

Քաղաքական ոլորտում տվյալ բաղկացուցիչը փաստացիորեն կնշանակի էքնիկ սահմանազատման վիճակի ամրագրում ԼՂՀ և ԱՀ միջև: Կարելի է բերել հակամարտությունների էքնիկ սահմանազատումների վրա հիմնված կարգավորման և երկարաժամկետ խաղաղության հաստատման բազում և բավականին արդյունավետ պատմական նախադեպեր: Գրանցից են 1923թ. Լոզանի հայտնի սկզբունքները, որոնց հիման վրա շուրջ մեկ ու կես միլիոն մարդ վերաբնակեցվեց Թուրքիայից և Հունաստանից, XX դարի առաջին կեսի նմանօրինակ պայմանագրերը բալկանյան երկրների միջև բնակչության փոխանակման մասին (օրինակ, Բուլղարիայի և Հունաստանի միջև 1919թ., Ռումինիայի և Թուրքիայի միջև 1934թ.) և Երկրորդ համաշխարհային պատերազմի արդյունքում գերմանացիների վերաբնակեցումը Արևելյան Եվրոպայի մի շարք երկրներից ու և անկախության ձեռքբերումից հետո բնակչության փոխանակումը Հնդկաստանի և Պակիստանի միջև և այլն: Չնայած, որ էքնիկ սահմանազատումը նույնպես հանգեցնում է նշանակալից բացասական հետևանքների մարդասիրական բնագավառում, կապված մարդկանց մեծ թվաքանակի՝ իրենց նախկին բնակչության վայրերից վերաբնակեցման հետ, այնուհանդերձ, այդ հարկադրված իրականացվող միջոցները արդարացնում են տվյալ սկզբունքի կարևորագույն առավելությունը՝ երկարաժամկետ խաղաղության հաստատումը ժողովուրդների և պետությունների միջև: Այն փաստը, որ էքնիկ սահմանազատման սկզբունքը՝ ցանկացած հակամարտությանը բնորոշ որոշակի առանձնահատուկ տարբերություններով, համեմատաբար հաջողությամբ կիրառվել է համաշխարհային հանրության կողմից նախկին Հարավսլավիայում, նույնպես ցույց է տալիս այս մեխանիզմի գործունակությունը: Ներկայումս ավելի շատ փորձագետներ և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ գալիս են օրինաչափ եզրա-

կացության, որ դարաբաղյան դիմակայության գոտում էքնիկ սահմանազատման միջազգային-իրավական ամրագրումը և փաստացի իրավիճակի ճանաչումը հանդիսանում է ինչպես հսկամարտության լուծման առավել արդյունավետ միջոց, այնպես էլ Հարավային Կովկասի ողջ տարածաշրջանում երկարաժամկետ խաղաղություն հաստատելու գործոն:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Ադրբեջանի ագրեսիան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժողովրդի դեմ, իր բոլոր դրսևորումներով, հանգեցրեց որոշակի իրավաքաղաքական հետևանքների, որոնք, հաշվի չառնելով, հնարավոր չէ հասնել ղարաբաղյան երկարամյա հակամարտության իրական և գործուն կարգավորման: Ընդ որում հատուկ ուշադրություն պետք է հատկացնել խնդրի մարդասիրական չափմանը: Ղարաբաղյան հակամարտության ցանկացած լուծում, որ ներկայիս փուլը սկսել է մարդասիրական աղետով՝ ցեղասպանության և զանգվածային սպանությունների, ինչպես նաև հետագա էթնիկ գոտումների տեսքով, նախկին Ադրբեջանական ԽՍՀ հայազգի քաղաքացիների արտաքսմամբ և տեղահանմամբ իրենց նախկին բնակության վայրերից, առաջին հերթին պետք է նախատեսի արդարության վերականգնում և այդ մարդկանց պատճառած բարոյական և նյութական վնասների փոխհատուցում: Առավել ևս, որ այդ հարցը գտնվում է ուղղակի կապի մեջ Ադրբեջանի կողմից ԼՂՀ-ի դեմ շարունակվող ագրեսիայի համար իրավաքաղաքական պատասխանատվության հետ:

Անհրաժեշտ է նաև հաշվի առնել Հարավային Կովկասում անվտանգության նոր համակարգի ձևավորման հարցում խաղաղության հաստատման մեխանիզմների անվտանգության և երաշխիքների գործոնները: Հատկապես դա վերաբերում է անվտանգության ռազմաքաղաքական ասպեկտներին և Ադրբեջանի կողմից նախաձեռնվող տարածաշրջանային խորացող միլիտարիզացիայի նվազեցման համար պայմանների ստեղծմանը:

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ղարաբաղյան հակամարտության հիմքում ընկած են 1920-1921թթ. ռուս-թուրքական պայմանավորվածությունները Հարավային Կովկասում և Արևմտյան Հայաստանում տարածքային վերադասավորումների վերաբերյալ, իսկ ավելի ուշ՝ նաև բուլշևիկյան իշխանությունների կուսակցական որոշումները: Այդ պայմանավորվածությունների պատանդ դարձավ Ղարաբաղի և, ընդհանրապես, նախկին Ադրբեջանական ԽՍՀ-ի՝ ներառյալ Նախիջևանի ինքնավարության հայությունը, իսկ Նախիջևանի ԻՀ-ն էլ, ԽՍՀՄ փլուզումից և Ադրբեջանական ԽՍՀ լուծարումից հետո այլևս չի կարող դիտարկվել որպես Ադրբեջանական Հանրապետության մաս, քանի որ հրաժարվելով Ադրբեջանական ԽՍՀ իրավահաջորդությունից՝ ԱՀ-ն ինքնաբերաբար դադարեցրել է իր մասնակցությունը նաև Խորհրդային Ադրբեջանի կողմից ստորագրած պայմանագրերին: Այսպիսով, վաղ թե ուշ, օրինաչափորեն կանգնելու է 1921թ. հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագրի հարցը:
- Ադրբեջանի իշխանությունները հնարավորություն ունենին որոնելու ղարաբաղյան հակամարտության խաղաղ լուծման ճանապարհները քաղաքական հարթության վրա, սակայն դրան գերադասեցին բացահայտ բռնության ուղին, հույսը դնելով այն բանի վրա, որ գտնվելով անկլավային վիճակում, ամբողջովին մեկուսացված արտաքին աշխարհից՝ Ղարաբաղի հայերը չեն դիմանա իրենց պարտադրված անհավասար ամենակործան համընդհանուր պատերազմին: Ադրբեջանական իշխանությունների այս ընտրության գինը եղավ Ադրբեջանի 500 հազար հայերի կոտորված ճակատագիրը, որոնք դարձան փախստականներ՝ կորցնելով իրենց հարազատներին և մտերիմներին, զրկվելով իրենց գույքից, իսկ մոտավորապես նույնչափ ադրբեջանցիներ դարձան ներքին տեղաշարժի ենթարկված անձինք և կորցրեցին իրենց գույքի

մեծ մասը, արդեն ռազմական գործողությունների գոտու ընդլայնման և աղբբեջանական զինված ուժերի ստորաբաժանումներում իրենց մասնակցության արդյունքում, ինչպես նաև տասնյակ հազարավոր սպանվածները, վիրավորները և անհետ կորածները պատերազմի ընթացքում՝ երկու կողմերից: Աղբբեջանի կողմից բռնության և ռազմական ագրեսիայի նախաձեռնումը պետք է պատժվի, ինչն ապացուցում են միջազգային պրակտիկան և պատմական նախադեպերը: Արդարությունը պահանջում է, որպեսզի Աղբբեջանի իշխանությունները փոխհատուցեն տուժածների կրած բոլոր վնասները:

- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իշխանությունները պետք է ապահովեն հայ փախստականների վերաբնակեցումը այն տարածքներում, որոնք գտնվում են իրենց ինքնիշխանության տակ, քանի որ ներկայումս միայն նրանք կարող են այն մարդկանց համար, որ կցանկանան այստեղ վերագտնել Հայրենիք, ապահովել անվտանգության և նորմալ գոյության պատշաճ երաշխիքներ: Այս մոտեցումը պետք է ընդգրկի նաև խառը հայ-աղբբեջանական ընտանիքներին, որոնք լքել են հակամարտող կողմերի տարածքը 1988թ-ից ի վեր: Այդ կատեգորիայի մարդկանց փոխհատուցումը հաշվարկելիս հարկավոր է ելնել այն հանգամանքից, որ նրանց այդ փոխհատուցումները պետք է հատկացվեն միանգամից երկու չափանիշներին համապատասխան.

ա/ Հայրենիքի կորուստ, ինչը նախատեսում է գուտ հողային փոխհատուցում նախկին Աղբբեջանական ԽՍՀ այն տարածքում, որն այսօր գտնվում է ԼՂՀ ինքնիշխանության ներքո և որտեղ վերջինիս իշխանությունները կկարողանան երաշխավորել այդ մարդկանց անվտանգությունը,

բ/ կրած բարոյական և նյութական վնասը՝ այս չափանիշով փոխհատուցումները կարող են լինել ինչպես ֆինանսական, այնպես էլ նյութական բնույթի՝ շինության, սարքավորումների, ինչպես նաև հողի տեսքով:

- Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային ճանաչումը լավ հիմք կդառնա տարածաշրջանում խաղաղություն հաստատելու համար: ԼՂՀ-ի դեմ ԱՀ-ի սանձազերծած պատերազմի հետևանքների հաղթահարումը իր բոլոր բաղադրիչներով, մեծապես ավելի հեշտ լուծվող կդառնա, եթե միջազգային հանրությունը և Աղբբեջանական Հանրապետությունը ճանաչեն ԼՂՀ անկախությունը: Մյուսամասնակ, ԼՂՀ անկախության պաշտոնական ճանաչումը թույլ կտա արդարացիորեն լուծելու միջազգային հանրության և տարբեր միջպետական կազմակերպությունների կողմից հազարավոր հայ փախստականներին իրական օգնություն ցուցաբերելու խնդիրը, որոնք ԼՂՀ չճանաչվածության պայմաններում գրկված են այլպիսի հնարավորությունից (ի տարբերություն Աղբբեջանում նմանօրինակ կատեգորիայի անձանցից) և շարունակում են ենթարկվել խտրականության: Դիսկրիմինացված ԼՂՀ-ի միջազգային ճանաչումը նաև թույլ կտա կանխարգելել տարածաշրջանում սպառնալիցությունների մրցավազքի հետագա խորացումը, որի գլխավոր մեղավորն ու նախաձեռնողն է հանդիսանում տվյալ պահին բացառապես Աղբբեջանի ղեկավարությունը: Աղբբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի հանրապետության ճանաչման մերժումը, բացի ամեն ինչից, շատ երկար ժամանակով կարգելափակվեն Արևմուտք-Արևելք գծով տարածաշրջանային հաղորդակցությունները, ինչն իր մեջ լուրջ աշխարհաքաղաքական սպառնալիքներ է պարունակում՝ այդ թվում նաև տարածաշրջանի ժողովուրդների համար:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1. Մարդու սոցիալ-տնտեսական իրավունքների պաշտպանության միջազգային-իրավական նորմերը

Դարաքաղյան հակամարտության արդյունքում առավելագույնս տուժած բնակչության սոցիալ-տնտեսական իրավունքների միջազգային-իրավական ասպահովումը հիմնվում է միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչված սկզբունքների ու նորմերի և արդարության սկզբունքի վրա: Վերջինիս իրականացումը պահանջում է ազգաբնակչության առավել տուժած մասի իրավունքների սոցիալ-տնտեսական վերականգնողականության ոլորտում համապատասխան միջազգային սկզբունքների և իրավական ակտերի ճանաչում և գործնական կիրառում, ինչպես նաև կոմպենսացիոն մեխանիզմների գործարկում այն դեպքերում, երբ իրավունքների «առարկայական» վերականգնումը (սեփական տները վերադառնալը, նախկին աշխատանքի վերականգնվելը, վտարման համար պատասխանատվություն կրող երկրի կողմից սոցիալական պաշտպանության «վերակենդանացումը» և այլն) օբյեկտիվ պատճառների ուժով, անհնար է:

Միջազգային փաստաթղթերով սոցիալ-տնտեսական իրավունքների համալիրը բավականաչափ ընդարձակ է: Տվյալ ոլորտի ստորև բերվող միջազգային սկզբունքները և նորմերը խմբավորված են ըստ իրենց՝ 1988-1990թթ. Ադրբեջանական ԽՍՀ սահմաններից վտարված նախկին Ադրբ. ԽՍՀ-ի հայ ազգաբնակչության օրինական իրավունքների առաջնահերթ վերականգնման հարցի նկատմամբ ունեցած իրական առնչության չափանիշի: Տվյալ խմբի անձանց նկատմամբ, առանց ստորև նշված սոցիալ-տնտեսական իրավունքների, իրավական արդյունավետ պաշտպանության միջոցներ ստանալու իրավունքների ճանաչման և իրականացման, դարաքաղյան հակամարտության իրական լուծումն անհնարին է: Հակառակ

դեպքում, հիմքում չունենալով մարդասիրական ամուր հեռանալան՝ հակամարտությունից առավելագույնս տուժած ազգաբնակչության իրավունքների պաշտպանության սկզբունքի և պրա իրականացման արդյունավետ մեխանիզմի տեսքով, այդպիսի լուծումը կկրի կիսատ, սուբյեկտային (բանակցային գործընթացում կողմերի ձևաչափի անհամապատասխանությունը հակամարտության լուծման իրական տարբերակին) և օբյեկտային (քաղաքական կարգավորում, ոչ թե իրավական լուծում) պակասավոր բնույթ:

1. Համընդհանուր սկզբունքներ և նորմեր

1. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, 1948թ.

«1. Յուրաքանչյուր ոք ունի ինչպես միանձնյա, այնպես էլ ուրիշների հետ համատեղ սեփականություն ունենալու իրավունք: 2. Ոչ ոք չպետք է կամայականորեն զրկվի իր սեփականությունից» (հոդված 17):

2. Միջազգային դաշնագիր տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին, 1966թ.

«1. Սույն Դաշնագրի յուրաքանչյուր պետություն պարտավորվում է իր ունեցած ռեսուրսների առավելագույն սահմաններում, անհատապես և միջազգային օգնության ու համագործակցության միջոցով, ձեռնարկել միջոցներ, մասնավորապես, տնտեսական և տեխնիկական բնագավառներում, առաջադիմորեն հասնելու համար սույն դաշնագրում ճանաչվող իրավունքների լիարժեք իրականացմանը՝ բոլոր պատշաճ միջոցներով, այդ թվում, մասնավորապես, օրենսդրական միջոցների կիրառմամբ: 2. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները պարտավորվում են երաշխավորել, որ սույն Դաշնագրով հռչակված իրավունքները կիրականացվեն առանց որևէ խտրականության, այն է՝ անկախ ռասայից, մաշկի գույնից, սեռից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ծննդից, գույքային կամ այլ դրությունից» (հոդված 2):

3. Միջազգային դաշնագիր քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին, 1966թ.

«Սույն Դաշնագրի յուրաքանչյուր պետություն պարտավորվում է. ա) ցանկացած անձի համար, որի՝ սույն Դաշնագրով ճանաչվող իրավունքները կամ ազատությունները խախտված են, ապահովել արդյունավետ իրավական պաշտպանություն, անգամ եթե այդ խախտումը կատարած լինեն պաշտոնապես գործող անձինք, բ) ապահովել, որպեսզի իրավական պաշտպանություն հայցող անձի համար այդպիսի պաշտպանության իրավունք սահմանվի դատական, վարչական կամ օրենսդրական իրավասու իշխանությունների կամ պետության իրավական համակարգով նախատեսված այլ իրավասու մարմնի կողմից, և զարգացնել դատական պաշտպանության հնարավորությունները, գ) ապահովել իրավասու իշխանությունների կողմից իրավական պաշտպանության միջոցների կիրառում՝ դրանք տրամադրելու դեպքում» (մաս 2, հոդված 2, կետ 3):

4. Կոնվենցիա սոցիալական առաջընթացի և զարգացման մասին, 1969թ. (հռչակվել է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 2542 (XXIV) որոշմամբ)

«Բոլոր ժողովուրդները և բոլոր մարդիկ, անկախ ռասայից..., ազգությունից, էթնիկ պատկանելությունից..., իրավունք ունեն ապրելու արժանապատիվ պայմաններում ու ազատության պայմաններում և օգտվելու սոցիալական առաջընթացի պտուղներից և պետք է իրենց հերթին նպաստեն դրան» (հոդված 1), «Սոցիալական առաջընթացը և զարգացումը հիմնվում է արժանապատվության հարգման և մարդկային անհատականության արժևորման վրա և ապահովում են մարդու իրավունքների և սոցիալական արդարության զարգացում, ինչը պահանջում է. ա) անհավասարության..., ինչպես նաև ՄԱԿ-ի նպատակներին և սկզբունքներին հակասող ցանկացած այլ քաղաքականության և գաղափարախոսության բոլոր ձևերի անհապաղ և վերջնական վերացում, բ) քաղաքացիական և քաղաքական իրավունքների, ինչպես նաև տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների ճանաչում և արդ-

յունավետ իրականացում՝ առանց որևէ խտրականության» (հոդված 2), «Սոցիալական զարգացումը պահանջում է յուրաքանչյուր մարդուն աշխատանքի և զբաղմունքի ազատ ընտրության իրավունքի տրամադրում: Սոցիալական առաջընթացը և զարգացումը, համաձայն մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների, ինչպես նաև արդարության և սեփականության սոցիալական գործառնության սկզբունքների, պահանջում են հասարակության բոլոր անդամների մասնակցություն արտադրական և հանրօգուտ աշխատանքում ու հողի և արտադրության միջոցների նկատմամբ սեփականության այնպիսի ձևերի հաստատում, որոնք բացառում են մարդու շահագործման ցանկացած ձևեր, ապահովում են սեփականության հավասար իրավունքներ բոլորի համար և մարդկանց միջև իրական հավասարության տանող պայմաններ են ստեղծում» (հոդված 6):

5. Կոնվենցիա քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին, 1954թ.

«Պայմանավորվող պետությունները շարժական և անշարժ գույքի և դրան առնչվող այլ իրավունքների ձեռքբերման, ինչպես նաև վարձակալության և շարժական ու անշարժ գույքի հետ կապված այլ պայմանագրերի կապակցությամբ քաղաքացիություն չունեցող անձին հատկացնում են բարենպաստ պայմաններ և, ամեն դեպքում, ոչ պակաս բարեհաճ վերաբերմունք, քան նույն հանգամանքներում ընդհանրապես հատկացվում է օտարերկրացիներին (հոդված 13 «Շարժական և անշարժ գույքը»): «1. Յուրաքանչյուր քաղաքացիություն չունեցող անձ իրավունք ունի ազատորեն դիմելու Պայմանավորվող պետությունների տարածքում գտնվող դատարաններին: 2. Այն պայմանավորվող պետությունում, որտեղ գտնվում է քաղաքացիություն չունեցող անձի սովորական բնակության վայրը, դատարան դիմելու հետ կապված հարցերում նա օգտվում է նույն վերաբերմունքից, ինչ քաղաքացիները՝ ներառյալ իրավաբանական օգնություն ստանալու հնարավորությունը և ազատումը դատական ծախսեր վճարելու անհրաժեշտությունից (cautio judicatum solvi): 3. 2-րդ կետում նշված հարցերով, քաղաքացիություն չունեցող անձն իր սովորական բնակու-

թյան երկրից դուրս օգտվում է իր սովորական բնակության երկրի քաղաքացիներին հասկացվող վերաբերմունքից» (հոդված 16 «Դատարան դիմելու իրավունքը»): «Բնակարանով ապահովելու կապակցությամբ Պայմանավորվող պետություններն այնքանով, որքանով հարցը կարգավորվում է օրենքներով կամ ենթօրենսդրական ակտերով կամ հանդիսանում է Պայմանավորվող պետությունների հանրային իշխանությունների վերահսկողության առարկա, իրենց տարածքում օրինական կարգով բնակվող քաղաքացիություն չունեցող անձանց հատկացնում են հնարավորինս և, ամեն դեպքում, ոչ պակաս բարեհաճ վերաբերմունք, քան միևնույն հանգամանքներում ընդհանրապես հատկացվում է օտարերկրացիներին (հոդված 21 «Բնակարանով ապահովումը»): Պայմանավորվող պետությունները հանրային օժանդակության և օգնության կապակցությամբ իրենց տարածքում օրինական կարգով բնակվող քաղաքացիություն չունեցող անձանց հատկացնում են նույն վերաբերմունքը, ինչ իրենց քաղաքացիներին (հոդված 23 «Հանրային օժանդակություն»): 1. Պայմանավորվող պետությունը, իր օրենքների և ենթօրենսդրական ակտերի համապատասխան, քաղաքացիության չունեցող անձանց թույլատրում է իր տարածք բերած գույքը տեղափոխել մեկ այլ երկիր, ուր նրանք ընդունվել են բնակության նպատակով: 2. Պայմանավորվող պետությունները բարեհաճ են վերաբերվում քաղաքացիություն չունեցող անձանց այն գույքին, որտեղ էլ այն գտնվելիս լինի, տեղափոխման թույլտվության միջնորդություններին, որը նրանց անհրաժեշտ է այլ երկրում, ուր նրանց մուտքը թույլատրվել է բնակություն կաստատելու համար (հոդված 30 «Գույքի տեղափոխումը»):

6. Կոնվենցիա Փախստականների կարգավիճակի մասին (հոդվածներ 13, 16, 21, 23, 30)¹⁸⁹:

¹⁸⁹ Նշված հոդվածների համարակալումը և բովանդակությունը համընկնում են քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին Կոնվենցիայի համապատասխան հոդվածների համարակալմանն ու բովանդակությանը, բացառությամբ «քաղաքացիություն չունեցող անձ» տերմինի: Փախստականների կարգավիճակի մասին Կոնվենցիայում այն փոխարինված է «փախստական» տերմինով:

7. Փախստականների հարցերով ՄԱԿ-ի Գերագույն հանձնակատարի վարչության կանոնադրություն (ընդունվել է 1950թ. ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1950թ. 428 (V) որոշմամբ. «Գերագույն հանձնակատարը ապահովում է փախստականների պաշտպանությունը, որոնց մասին հոգ տանելը գտնվում է իր Վարչության իրավասության շրջանակներում՝ ..., բ) կառավարությունների միջև հատուկ համաձայնագրերի օգնությամբ աջակցում է ցանկացած միջոցառումների իրականացմանը, որոնք նպատակ ունեն թեթևացնելու պաշտպանության կարիք ունեցող փախստականների վիճակը և կրճատելու փախստականների թիվը, գ) աջակցում է կառավարություններին և մասնավոր ջանքերին, որոնք ուղղված են փախստականների կամավոր հայրենադարձությանը կամ նրանց միաձուլմանը նոր երկրներում, դ) ջանում է թույլտվություն ստանալ տեղափոխելու փախստականների գույքը, հատկապես այն գույքը, որը անհրաժեշտ է նրանց բնակեցման համար» (կետ 8):

8. Միջազգային Կոնվենցիա բոլոր աշխատավորների՝ միգրանտների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության մասին, 1990թ.

«Աշխատավոր-միգրանտը և նրա ընտանիքի անդամը չեն կարող կամայականորեն զրկվել սեփականությունից, որոնք նրանք տիրապետում են անհատապես կամ այլ անձանց հետ համատեղ: Այնտեղ, որտեղ վարձու աշխատանքի վերաբերյալ պետության գործող օրենսդրության համաձայն աշխատավոր-միգրանտի կամ նրա ընտանիքի անդամի ակտիվները ամբողջովին կամ մասնակի էքսպրոպրիացիայի են ենթարկվում, սուգա համապատասխան անձը արդարացի և պատշաճ փոխհատուցման իրավունք ունի » (հոդված 15):

9. Խարտիա պետությունների տնտեսական իրավունքների և պարտականությունների մասին, 1974թ.

«Յուրաքանչյուր պետություն կրում է հիմնական պատասխանատվությունը իր ժողովրդի տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացման աջակցության համար: Այդ նպա-

տակով յուրաքանչյուր պետություն իրավունք ունի և պատասխանատվություն է կրում զարգացման նպատակների և միջոցների ընտրության, իր ռեսուրսների լիակատար մոբիլիզացման և օգտագործման, առաջադեմ տնտեսական և սոցիալական բարեփոխումների իրականացման, ինչպես նաև զարգացման գործընթացին ու օգուտներին իր ժողովրդին լիարժեք հաղորդակից լինելու համար: Բոլոր պետությունները պարտավոր են, անհատապես և համատեղ, համագործակցել, որպեսզի վերացվեն այն խոչընդոտները, որոնք խանգարում են այդպիսի մոբիլիզացիային և օգտագործմանը» (հոդված 7):

10. ՄԱԿ-ի հազարամյակի հռչակագիր, 2000թ. (հաստատված է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 55/2 որոշմամբ)

«Մենք (պետությունները-*հեղինակների ծանոթությունը*) գործադրելու ենք բոլոր ջանքերը, որպեսզի երեխաների, ինչպես նաև ողջ քաղաքացիական բնակչությանը, որը առավել շատ է տառապանքներ կրում բնական աղետների, ցեղասպանության, զինված հակամարտությունների և այլ արտակարգ մարդասիրական իրավիճակների արդյունքում, հատկացվի բազմակողմանի աջակցություն և պաշտպանություն՝ նրանց շուտափույթ կերպով նորմալ կյանքի վերադարձնելու նպատակով: Այդ պատճառով մենք լի ենք վճռականությամբ, մարդասիրական իրավունքի համաձայն ընդարձակելու և ամրապնդելու քարոզ արտակարգ իրավիճակներում գտնվող քաղաքացիական բնակչության պաշտպանության ուղղությամբ գործունեությունը, ամրապնդել միջազգային համագործակցությունը և դրա համակարգումը, ներառյալ մարդասիրական օգնություն տրամադրելու համատեղ բեռն այն երկրներին, որոնք ընդունում են փախստականներին և օգնել բոլոր փախստականներին ու ներքին տեղաշարժի ենթարկված անձանց կամավորության հիմքերով վերադառնալ իրենց տները անվտանգության և արժանապատվության պայմաններում ու անարգել վերախնտեզրվել իրենց հասարակությունների մեջ» (կետ 26):

11. ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1962թ. դեկտեմբերի 14-ի 1803 (XVII) «Բնական ռեսուրսների նկատմամբ անբաժանելի ինքնիշխանության մասին» որոշումը

«Ազգայնացումը, սեփականագրվումը կամ բռնագրավումը պետք է հիմնված լինեն հանրային օգուտի, անվտանգության կամ ազգային շահերի նկատառումների կամ դրոպապատճառների վրա, որոնք ճանաչվում են ավելի կարևոր, քան ինչպես քաղաքացու, այնպես էլ օտարերկրացու գուտ անձնական և մասնավոր շահերը: Նման դեպքերում սեփականատիրոջը վճարվում է համապատասխան փոխհատուցում համաձայն այն կանոնների որոնք գործում են պետությունում, որ կիրառում է այդ միջոցները ի իրականացում իր ինքնիշխանության և միջազգային իրավունքի համապատասխան» (կետ 4): ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1973 թ. դեկտեմբերի 17-ի 3171 (XXVIII) որոշում

«Յուրաքանչյուր պետություն իրավունք ունի ոլորշեղու հնարավոր փոխհատուցման գումարը և վճարման ձևերը»: Բոլոր ծագող վեճերը պետք է լուծվեն այն երկրների ազգային օրենսդրության համապատասխան, որոնք իրականացնում են համապատասխան միջոցառումները»:

2. Տարածաշրջանային (Եվրոպական) սկզբունքները և նորմերը

2.1 Սկզբունքները և նորմերը Եվրոպայի Խորհրդի շրջանակներում

1. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Կոնվենցիա, 1950թ.

«...Եվրոպայի Խորհրդի նպատակն իր անդամների միջև առավել միասնություն ձեռք բերելն է և... այդ նպատակին հասնելու միջոցներից մեկը մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պահպանումը և իրականացումն է, ...հավաստելով իրենց խորին հավատը այդ հիմնարար ազատությունների նկատմամբ, որոնք արդարության ու խաղաղության

հիմքն են աշխարհում, և որոնց յավագոյն պահպանումը կախված է. մի կողմից, քաղաքական արդյունավետ ժողովրդավարութունից և, մյուս կողմից, մարդու՝ դրանց վերաբերող իրավունքների ընդհանուր ընթանումից և պահպանումից...» (Կոնվենցիայի ներածական մաս):

2. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիայի, 1950թ.¹⁹⁰ թիվ 1 Արձանագրություն (1952թ.)

«Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ իրավունք ունի ամաբզել օգտվել իր գոյքից: Ոչ ոք չի կարող զրկվել իր գոյքից այլ կերպ, քան հասարակության շահերից ելնելով և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով և միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով» (հոդված 1):

3. Եվրոպական սոցիալական խարտիա, 1961թ. (վերանայվել է 1996թ.)

« Սոցիալական ապահովման իրավունքի արդյունավետ իրականացումը ապահովելու նպատակով կողմերը պաշտպանվորվում են՝ ... 4. Միջոցներ ձեռնարկել համապատասխան երկկողմ և բազմակողմ համաձայնագրերի կնքմամբ կամ այլ միջոցներով և պայմանների պահպանմամբ, որոնք նախատեսված են այդ համաձայնագրերով, որպեսզի ապահովեն հսկասար ունեւիւմ իրենց քաղաքացիների և այլ կողմերի քաղաքացիների համար այն հարցերում, որոնք վերաբերում են սոցիալական իրավունքի ապահովմանը, ներառյալ սոցիալական ապահովության մասին օրենսդրությամբ նախատեսված արտոնությունների պահպանումը՝ անկախ պաշտպանվող անձի

¹⁹⁰ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական Կոնվենցիայի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ նրա բուն տեքստը օլազանապես համատեղվում է հետագայում նրան կից ընդունված արձանագրությունների տեքստերի հետ: Արձանագրությունները (դրանց թիվն այս պահին ընդամենը 14-ն է) հանդես են գալիս որպես անկախ իրավաբանական փաստաթղթեր և լրացնում են 1950թ. Կոնվենցիայի հոդվածները: Այդ պատճառով կարելի է արձանագրել նորմատիվ համալիրի ամբողջականությունը ի դեմս 1950 թվականի Կոնվենցիայի և դրան կից բոլոր արձանագրությունների:

ցանկացած տեղաշարժից Կողմերի տարածքների միջև» (հոդված 12 «Սոցիալական ապահովման իրավունք»): «Բնականաբանի իրավունքի արդյունավետ ապահովման նպատակով Կողմերը պարտավորվում են միջոցներ ձեռնարկել ուղղված՝ 1. պատշաճ պահանջներին համապատասխանող բնակարան տրամադրելու աջակցությամբ, 2. կանխարգելելու անօթևանությունը և կրճատելու նրա ծավալները՝ այն աստիճանաբար վերացնելու նպատակով, 3. մատչելի դարձնելու բնակարանի գինը բավարար միջոցներ չունեցող անձանց համար» (հոդված 31 «Բնակարանի իրավունք»):

2.2 ԵԱՀԿ շրջանակներում գործող սկզբունքները և նորմերը
1. ԵԱՀԽ եզրափակիչ ակտ, 1975թ.

«Մասնակից-պետությունները հարգելու են մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները... Նրանք կխրախուսեն և կզարգացնեն քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային և այլ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացումը, որոնք՝ բոլորը, բխում են մարդկային անհատին բնորոշ արժանապատվությունից և էական են նրա ազատ և լիակատար զարգացման համար: Մասնակից պետությունները ճանաչում են մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հանդիսանուր նշանակությունը, որոնց հարգելը հանդիսանում է խաղաղության, արդարության և բարեկեցության էական գործոն՝ անհրաժեշտ նրանց, ինչպես նաև բոլոր պետությունների միջև բարեկամական հարաբերությունների և համագործակցության զարգացման ապահովման համար: Նրանք մշտապես կհարգեն այդ իրավունքները և ազատությունները իրենց փոխհարաբերություններում և կգործադրեն բոլոր ջանքերը, համատեղ և ինքնուրույն, ներառյալ ՄԱԿ-ի հետ համագործակցությամբ՝ դրանց համընդհանուր և արդյունավետորեն հարգվելուն աջակցելու նպատակով» («Սկզբունքների հռչակագրեր, որոնցով մասնակից-պետությունները կդեկլարվեն իրենց փոխհարաբերություններում», սկզբունք VII):

2. ԵԱՀԽ մասնակից-պետությունների ներկայացուցիչների Վիեննայի 1986թ. հանդիպման ամփոփիչ փաստաթուղթ (1989թ.)

«Մասնակից-պետություններն ընդունում են, որ տնտեսական, սոցիալական, մշակութային, ինչպես նաև քաղաքացիական և քաղաքական իրավունքների զարգացման աջակցությունը առաջնահերթ նշանակություն ունի մարդկային արժանապատվության և յուրաքանչյուր անհատի օրինական ձգտումներին հասնելու համար: Այդ պատճառով նրանք բոլոր անհրաժեշտ միջոցներով, մասնավորապես, օրենսդրական միջոցառումների ընդունման ճանապարհով, կշարունակեն իրենց ջանքերը տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների աստիճանական լիակատար իրականացումը ապահովելու համար: Այդ կապակցությամբ նրանք հատուկ ուշադրություն են հատկացնելու զբաղվածության, բնակարանային, սոցիալական ապահովության, առողջապահության, կրթության և մշակույթի բնագավառի խնդիրներին: Նրանք կաջակցեն իրենց երկրներում բոլոր իրավունքների և ազատությունների իրականացման հարցում, ինչպես նաև միմյանց միջև ու այլ պետությունների հետ հարաբերությունների զարգացման մշտական առաջընթացին, որպեսզի յուրաքանչյուրը, իրապես, լիարժեքորեն օգտվի իր տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներից, ինչպես նաև իր քաղաքացիական և քաղաքական իրավունքներից» (սկզբունք 14):

3. Հելսինկիի բարձր մակարդակի հանդիպման Հռչակագիր, 1992թ.

«Մասնակից-պետությունները՝

– նշում են այն իրավիճակների կանխարգելման կարևորությունը, որոնք կարող են հանգեցնել փախստականների և տեղաշարժի ենթարկված անձանց զանգվածային հոսքի և ընդգծում են բնակչության տեղաշարժման և բռնի տեղահանման բուն պատճառների հայտնաբերման և դիտարկման անհրաժեշտությունը,

– ճանաչում են միջազգային համագործակցության անհրաժեշտությունը՝ ուղղված փախստականների և տեղաշարժված անձանց զանգվածային հոսքերի հետ կապված հարցերի լուծմանը,

– ողջունում և աջակցում են փախստականների և տեղաշարժի ենթարկված անձանց պաշտպանության ապահովմանը և նրանց օգնություն ցուցաբերելուն ուղղված միակողմ, երկկողմ և բազմակողմ երկարաժամկետ լուծումների որոնմանը միտված ջանքերը» («Մարդկային չափում» բաժին, կետեր 40-45):

4. ԵԱՀԿ Լիսաբոնի 1996թ. վեհաժողովի Հռչակագիրը

«ԵԱՀԿ տարածաշրջանում փախստականների վերջին ողբերգությունների ֆոնի վրա և հաշվի առնելով բռնի գաղթի խնդիրները՝ մենք կրկին դատապարտում ենք և պարտավորություն ենք վերցնում մեզ վրա հրաժարվելու էթնիկ գտումների կամ զանգվածային տեղահանումների ցանկացած քաղաքականությունից: Մեր պետությունները, համաձայն միջազգային ստանդարտների, կաջակցեն փախստականների և երկրի ներսում տեղաշարժի ենթարկված անձանց անվտանգ և արժանապատիվ վերադարձին: Նախնական բնակության վայրում նրանց տեղավորումը պետք է իրականացվի առանց խտրականության» (կետ 10):

5. Եվրոպական անվտանգության խարտիա, 1999թ.

«Մենք մերժում ենք էթնիկ գտումների և զանգվածային վտարումների ցանկացած քաղաքականություն: Մենք կրկին հաստատում ենք Փախստականների կարգավիճակի մասին 1951թ. Կոնվենցիայի համապատասխան կացարանի որոնման իրավունքի և փախստականների միջազգային պաշտպանության ապահովման..., ինչպես նաև փախստականների և ներքին տեղաշարժված անձանց կամավոր, արժանապատիվ և անվտանգ վերադարձը հարգելու և աջակցելու մեր կողմնակցությունը: Ոչ խտրական հիմքերի վրա մենք կվործենք հասնել փախստականների և ներքին տեղաշարժված անձանց սո-

ցիալական վերախնտեզրմանը իրենց նախնական բնակության վայրերում» (կետ 22):

2.3 Սկզբունքները և նորմերը ԱՊՀ շրջանակներում

1. Կոնվենցիա մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին, 1955թ.. «Ոչ ոք չի կարող վտարվել անհատական կարգով կամ կոլեկտիվ միջոցառման արդյունքում պետության տարածքից, որի քաղաքացին է հանդիսանում այն» (հոդված 25): «Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի սեփականության իրավունք: Ոչ ոք չի կարող գրկվել իր գույքից, բացառությամբ հասարակության շահերից ելնելով կամ դատական կարգով և պայմանների պահպանմամբ՝ նախատեսված ազգային օրենսդրությամբ և միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչված սկզբունքներով» (հոդված 26):

2. Համաձայնագիր փախստականներին և հարկադիր վերաբնակիչներին օգնության մասին, 1953թ.

«Կողմերը ստանձնում են հետևյալ պարտավորությունները. աջակցել փախստականների և հարկադիր վերաբնակիչների քաղաքացիության հետ կապված հարցերի լուծման համար անհրաժեշտ փաստաթղթերի պահանջին և հանձնմանը, աջակցել փախստականներին և հարկադիր վերաբնակիչներին բնակության նախկին վայրում ամուսնության, ծննդյան վկայականների, աշխատանքային գրքույկների և կենսաթոշակային ապահովման հարցերի լուծման, աշխատանքային ստաժի, արտասահման մեկնելու և այլնի հաստատման համար անհրաժեշտ այլ փաստաթղթերի ստացման գործում, աջակցություն ցուցաբերել փախստականի կամ հարկադիր վերաբնակիչի կողմից լքած պետության տարածքում բնակվող բարեկամների, ինչպես նաև նրա կողմից այնտեղ թողնված գույքի մասին տեղեկությունների ստացմանը» (հոդված 6): «Մեկնման պետությունը փախստականներին և հարկադիր վերաբնակիչներին փոխհատուցում է իր տարածքում լքած կամ կորցրած բնակելի տարածքի և այլ գույքի արժեքը, փոխհատուցում է առողջությանը հասցված վնասը և աշխատավարձի

կորուստը: Նյութական փոխհատուցման չափերը որոշվում են մեկնման պետության գներով: Փախստականներին և հարկադիր վերաբնակիչներին պատկանող կորցրած շարժական և անշարժ գույքի հաշվառման կարգը, նյութական վնասի գնահատումը և փոխհատուցման վճարումը շահագրգիռ Կողմերը որոշում են համատեղ» (հոդված 7): «Յուրաքանչյուր փախստական կամ հարկադիր վերաբնակիչ իրավունք ունի ազատ կերպով դիմել Կողմերի տարածքներում գտնվող դատարաններ» (հոդված 10):

3. Վերազգային մարմինների շրջանակներում մարդու գույքային իրավունքի պաշտպանության և վնասի փոխհատուցման վճարման եվրոպական դատական նախադեպերը

Տնտեսական և սոցիալական իրավունքները, ի տարբերություն անձնական և քաղաքական իրավունքների, մեծամասամբ հանդես են գալիս որպես դրական իրավունքներ, որոնք համապատասխան պետության կողմից պահանջում են անմիջականորեն դիմել արդյունավետ միջոցների կիրառման: Այդպիսի միջոցների թվին են դասվում բնակչության առավել կարիքավոր խմբերի առաջնահերթ սոցիալական ապահովումը, աշխատանքի տեղավորման հարցում օգնությունը, բնակարանային և հողօգտագործման հարցերի լուծման աջակցությունը և այլն: Ակնհայտ է, որ տվյալ միջոցների արդյունավետ կիրառումը ուղղակի կախվածության մեջ է գտնվում հասարակության նյութական բարեկեցությունից, նրա տնտեսական ներուժից:

Եվրոպական իրավական ավանդույթը սոցիալ-տնտեսական իրավունքների ճանաչումը և պաշտպանությունը կապում է սոցիալական պետության սկզբունքի հաստատման հետ: Այսպես, Եվրոպական Միության հիմնական իրավունքների մասին 2000թ. Խարտիայում տնտեսական և սոցիալական իրավունքները ամրագրվել են տարբեր բաժիններում՝ Գլուխ II «Ազատություններ», Գլուխ III «Հավասարություն» և Գլուխ IV «Համերաշխություն»: ԵՄ Խարտիայի տվյալ նորմերը հիմնվում են սրանց նախորդող Եվրոպայի Խորհրդի փաս-

տաքոթերի, այն է՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության 1950թ. Կոնվենցիայի և սովյալ Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության (1952թ.), 1961թ. Եվրոպական սոցիալական խարտիա, (վերանայված՝ 1996թ.) վրա:

Եվրոպական իրավական ավանդույթը նաև ձևակերպել և պահանջում է անվերապահորեն պահպանել մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների երաշխավորման սկզբունքը: Մարդու իրավունքների և ազատությունների երաշխիքների համալիրը, որպես կանոն, բաժանվում է երեք բաղադրիչների՝ ինստիտուցիոնալ, գործառույթային և նյութական¹⁹¹: Նյութական երաշխիքները արտահայտվում են անձին հասցված կորստի և այլ կորուստների հատուցման սկզբունքով: Որպես կանոն, ֆիզիկական և իրավաբանական անձանց մասնավոր իրավունքի գույքային պատասխանատվությունը կարգավորվում է համապատասխան պետության օրենսդրությամբ: Սակայն, օրինակ, Եվրոպական Միության շրջանակներում գնալով ավելի մեծ նշանակություն է ստանում և, համապատասխանաբար, ավելի ընդգրկում կերպով է կարգավորվում հանրային իրավունքի սուբյեկտների գույքային պատասխանատվությունը, ի դեմս՝ վերագրված մարմինների և անմիջականորեն՝ պետությունների: Եվրոպական ընկերակցության գույքային պատասխանատվությունը նախատեսված է անմիջականորեն իր Հիմնադիր պայմանագրով: Համաձայն հոդված 288-ի (պարբերություն 2-րդ) այն պարտավոր է անհատներին փոխհատուցել ցանկացած վնաս՝ պատճառած իր ինստիտուտների կամ ծառայողների կողմից իրենց պարտականությունները կատարելիս: Համապատասխան հայցերը ենթակա են Եվրոպական ընկերակցության դատարաններին, որոնք ղեկավարվելով ընդհանուր սկզբունքներով ունեն լայն հնարավորություններ փոխհատուցման չափերը որոշելու հարցում:

¹⁹¹ «Իրավունքի երաշխիքներ» հասկացությունը կարող է սահմանվել որպես բոլոր այն պայմանների համադրություն, որոնք ապահովում են իրավունքների և ազատությունների իրականությունը: Այդպիսի դեպքում բացի իրավաբանական երաշխիքներից, կանարավոր են տնտեսական և քաղաքական երաշխիքների համակցում:

ԵՄ անդամ-պետությունների գույքային պատասխանատվությունը ԵՄ նորմերով սահմանված սուբյեկտիվ իրավունքների խախտման համար ներդրվել է համեմատաբար վերջերս՝ Եվրոպական համագործակցության Դատարանի կողմից: «Ֆրանկովիչի» գործով որոշման մեջ, որը Դատարանի պրակտիկայում համարվում է առավել շրջադարձային գործերից մեկը, Դատարանը որոշեց, որ անդամ-պետությունները պարտավոր են փոխհատուցել անհատների կորուստը, եթե այն պատճառվել է «Համագործակցության իրավունքի խախտմամբ, որի համար պատասխանատու կարող է ճանաչվել համապատասխան պետությունը»¹⁹²: Անդամ-պետությունների դեմ ներկայացված հայցերը քննության են ստնում ազգային դատարանները, որոնք պարտավոր են ղեկավարվել Եվրոպական համագործակցության Դատարանի նախադեպերով, իսկ փոխհատուցման չափերի որոշման հարցում՝ իրենց երկրի օրենսդրությամբ¹⁹³:

Գույքային իրավունքների (առաջին հերթին սեփականության իրավունքի) պաշտպանությունը և համապատասխան նյութական երաշխիքները (առաջին հերթին կորցրած կամ վնասված գույքի համար փոխհատուցումների ձևով) լայնորեն կիրառվում են Եվրոպայի Խորհրդի իրավական դաշտի շրջանակներում գործող մարդու իրավունքների հարցերով Եվրոպական Դատարանի պրակտիկայում¹⁹⁴:

Մարդու իրավունքների հարցերով Եվրոպական Դատարանի ենթադատ գործերով սեփականության իրավունքի պաշտպանությունը հենվում է վերոհիշյալ 1950թ. Կոնվենցիային կից թիվ 1 Արձանագրության, 1952թ., հոդված 1-ի նորմի վրա: Marckx-ի գործով որոշման մեջ Դատարանը պարզաբանեց, որ

¹⁹² Cases C-6, 9/90, Frankovich, (ECR) I - 5357.

¹⁹³ Четниерская А.О., Право Европейского Союза // Под ред. Кашкина С.Ю. М, 2003. с. 421-422.

¹⁹⁴ Դատարանի վարչություն գտնվում են բոլոր այն վեճերը, որոնք վերաբերում են 1950թ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական Կոնվենցիայի, որոյնների և դրան կից Արձանագրությունների մեկնաբանությանը և կիրառմանը ու կարող են փոխանցվել իրեն: Դրանք միջպետական գործերն են, անհատական բողոքները, ինչպես նաև Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեի իրավաբանական հարցերով կոնսուլտատիվ եզրակացություններին վերաբերող հարցումները:

ճանաչելով սեփական գույք ունենալու և նրանից անարգել կերպով օգտվելու յուրաքանչյուրի իրավունքը, թիվ I Արձանագրության հոդված 1-ը, ըստ էության, երաշխավորում է սեփականության իրավունքը: Առաջին անգամ Դատարանը տվեց թիվ I Արձանագրության հոդված 1-ի¹⁹⁵ ընդարձակ որակավորումը *Sporrong and Lonnroth*-ի գործը լսելու ժամանակ: Դատարանի կարծիքով, տվյալ հոդվածը կազմված է երեք առանձին նորմերից՝ ընդհանուր բնույթի առաջին նորմը հռչակում է սեփական գույքը անարգել տնօրինելու սկզբունքը (այն պարունակվում է առաջին պարբերության առաջին նախադասության մեջ): Երկրորդ նորմը վերաբերում է սեփականության օտարմանը և այն պայմաններին, որոնց առկայության դեպքում դա հնարավոր է (այն պարունակվում է միևնույն պարբերության երկրորդ նախադասության մեջ): Երրորդ նորմը ճանաչում է, որ պետությունը իրավասու է, մասնավորապես, վերահսկողություն սահմանել ընդհանուր շահերի համապատասխան սեփականության օգտագործման նկատմամբ՝ ապահովելով այն օրենքների կատարումը, որոնք անհրաժեշտ է համարում այդպիսի նպատակի համար (այս նորմը պարունակվում է հոդվածի երկրորդ պարբերության մեջ): Դատարանն ընդգծեց, որ բոլոր երեք նորմերը հանդես են գալիս միասին և կապված են միմյանց հետ: Այդ պատճառով, երկրորդ և երրորդ նորմերը պետք է դիտարկվեն առաջին նորմով սահմանված ընդհանուր սկզբունքի համատեքստում:

James and Others գործում Դատարանը տվեց արդարացի հավասարակշռության դրսևորմանի բացված բնութագիրը: Միջոցը, որն անձին գրկում է սեփականությունից, պետք է ունենա ոչ միայն «հանրային շահերից բխող» օրինական նպատակ, ինչպես կոնկրետ դեպքում է, այլ, նաև սկզբունքորեն և

ընտրված միջոցների ու հետապնդվող նպատակների միջև պետք է պահպանվի համամասնության խելամիտ հարաբերակցությունը: Անհրաժեշտ է նշել, որ հանրային և մասնավոր շահերի միջև հավասարակշռությունը կարող է խախտվել ոչ միայն պետական մարմինների գործողություններով, այլ նաև անգործությամբ, քանի որ, որոշ դեպքերում, պաշտոնատար պատասխանատու անձանց հենց անգործությունն է (օրինակ, դատական պաշտպանության, սեփականության պատշաճ երաշխիքների, սեփական գույքից անարգել օգտվելու հնարավորության չտրամադրում), որ կարող է հանգեցնել գույքային իրավունքի խախտման:

Դատարանի կողմից թիվ I Արձանագրության տվյալ հոդվածի մասով գործերի քննության ժամանակ Դատարանը շոշափել է երկու հիմնական հարց՝ գույքից զրկելու համար փոխհատուցում և գույքի օգտագործման նկատմամբ հսկողություն: Ինչ վերաբերում է հանուն հասարակության շահերի նկատմամբ գույքից զրկելուն (սեփականագրկում (էքսպրոպրիացիա) և ազգայնացում (նացիոնալիզացիա)), ապա Դատարանը *James and Others* գործում կարծիք հայտնեց այն մասին, որ գույքի սեփականումը՝ ի կատարում օրինական սոցիալ-տնտեսական կամ այլ քաղաքականության, կարող է իրականացվել հանրության շահերից ելնելով, նույնիսկ եթե հանրությունը, ընդհանուր առմամբ վերցրած, ուղղակիորեն չի օգտագործում այդ սեփականությունը կամ չի օգտվում դրա բարիքներից: Ընդ որում, *Lithgow and Others*-ի գործում, Դատարանը հաշվի առավ, որ փոխհատուցում վճարելու պարտավորությունը բխում է տվյալ հոդվածում պարունակվող անուղղակի պայմանից, ընդհանուր առմամբ, և ոչ թե «հասարակության շահերին» վերաբերող բուն պահանջից: Ինչ վերաբերում է «օրենքով նախատեսված պայմաններով» արտահայտությանը, ապա այն, նախևառաջ, պահանջում է պատշաճ կերպով մատչելի և բավականին հստակ ներքին իրավական դրույթներ:

¹⁹⁵ Արձանագրություն 1-ի 1-ին հոդվածն ամբողջությամբ. «1. Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոք չի կարող զրկվել իր գույքից, բացառությամբ հասարակության շահերից ելնելով և այնպիսի պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով և միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով: 2. Նախորդ դրույթները ոչ մի կերպ չեն ուղեկատարում պետության իրավունքը ապահովելու այն օրենքների կատարումը, որոնք ինքը, համապատասխան ընդունուր շահերի, անհրաժեշտ է համարում սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն սահմանելու կամ հարկերի, կամ տուրքերի, կամ տուգանքների վճարման ապահովման համար»:

րի առկայություն և դրանց պահպանում: Այսպիսով, սեփականությունից զրկումը՝ առանց դրա արժեքի հաշվարկով խելամիտ գումարի վճարման, որպես կանոն, իրենից ներկայացնում է անհամարժեք միջամտություն, որն արդարացված չէ թիվ 1 Արձանագրության հոդված 1-ի տեսանկյունից:

Գույքի օգտագործման նկատմամբ վերահսկողության հետ կապված գործերի քննության ժամանակ Դատարանը ուշադրություն է դարձնում երկու հարցերի վրա՝ հետապնդում է արդյոք օրենսդրուհին սահմանված վերահսկողությունը ընդհանուր շահերի ապահովման նպատակ և հանդիսանում է արդյոք համապատասխան օրենսդրության գործարկումը և, համապատասխանաբար, նրանով նախատեսված վերահսկողությանը համարժեք՝ հետապնդվող օրինական նպատակին¹⁹⁶:

Loizidov v. Turkey (1997)-ի գործով Կիպրոսի հյուսիսային մասի բնակչուհին, որը 1974թ. ստիպված էր լքել իր մշտական բնակության վայրը թուրքական ներխուժումից հետո, հայց էր ներկայացրել, որում նշել էր, որ չի կարող վերադառնալ նախկին բնակության վայր և վերականգնել իրեն պատկանող անշարժ գույքի նկատմամբ իր՝ սեփականատիրոջ իրավունքները: Դատարանն իր որոշման մեջ նշեց Թուրքիայի պատասխանատվությունը 1950թ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական Կոնվենցիայի նորմերի խախտման համար: Դատարանը ընդգծեց, որ հայցվորը մինչ այժմ հանդիսանում է գույքի օրինական սեփականատերը և իրավասու է ցանկած ժամանակ պահանջելու իր անշարժ գույքը, հստակեցրեց վնասի փոխհատուցման համալիրի բաղադրիչները, ներառելով դրանում հողի տեղափոխության համար փոխհատուցումը (հիմնված այն շուկայական գնի վրա, որը կարող էր ստացվել, եթե տեղի չունենար զավթումը), ինչպես նաև գույքից օգտվելու հնարավորության

կորստից ստացած բարոյական վնասը և պատճառում ծախսերը¹⁹⁷:

1950թ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական Կոնվենցիայի իրավանդության կարգերի կառուցվածքային առանձնահատկությունը կայանում է նրանում, որ դրանք դիրքորոշումային նորմեր են և դրանց մեջ ցուցումներ չկան պատժամիջոցների մասին: Բայց դա չի նշանակում, որ պատժամիջոցը չկա: 1950թ. Կոնվենցիան նախատեսում է այն որպես ընդհանուր՝ նրանում նշված բոլոր նորմերի համար: Այն պարունակվում է Կոնվենցիայի «Արդարացի փոխհատուցում» 41-րդ հոդվածում: Ճանաչելով, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի խախտում, Դատարանը իրավունք ունի որոշում կայացնել տուժող կողմին դրամական փոխհատուցում հատկացնելու մասին, որը կռամայա ժամկետում պատասխանող-պետությունը պարտավոր է վճարել: Չնայած, Կոնվենցիայի 41-րդ հոդվածը¹⁹⁸ պարունակում է վերապահություն այն մասին, որ փոխհատուցումը տրամադրվում է միայն այն ժամանակ, երբ ներքին իրավունքն ինքը լիակատար փոխհատուցման հնարավորություն չի տալիս, իրականում, խոսքը գնում է բավականին կոշտ տուգանքային պատժամիջոցների մասին: Փոխհատուցումը տրամադրվում է նյութական կորստի և բարոյական վնասի համար վճարման ձևով, սակայն այն քիչ ընդհանուր բան ունի քաղաքացիական իրավունքի նորմերով նախատեսված ընդհանուր վնասի փոխհատուցման հետ: Ինչպիսին կլինի փոխհատուց-

¹⁹⁷ Մարդու իրավունքների հարցերով եվրոպական հանձնաժողովի Կիպրոսի հարցով իր վեկույցում հաստատեց Loizidov v. Turkey գործով իրավական սկզբունքները (1999 թ.) և, համապատասխանաբար, ճանաչեց օրինական տեղաշարժի ենթարկված կիպրացի մյուս հույների գոյքային տեսիտուցիայի և փոխհատուցման պահանջները: Հանձնաժողովը միաձայն որոշում կայացրեց՝ ճանաչելով Թուրքիայի պատասխանատվությունը եվրոպական Կոնվենցիայի, 1950թ. նորմերի խախտման համար, նկատի ունենալով նրա՝ կիպրոսյի հույներին կրգու հյուսիսային մասում գտնվող իրենց տնեղը վերադառնալու հնարավորություն ստանալը պահպանվող վերջույց: Հանձնաժողովը նշեց նաև Թուրքիայի՝ իր կողմից իրականացված ինտերվենցիայի համար փոխհատուցումից շարունակվող խոստովանություն, որը հանգեցրել է եվրոպական Կոնվենցիայով սահմանված սեփականության իրավունքի խախտմանը:

¹⁹⁸ Թիվ 1 Արձանագրությանը սահմանված Կոնվենցիայի հոդվածների նոր համարակալմանը համապատասխան:

¹⁹⁶ Кравчук И.В., Адвокатская деятельность // Под ред. Буробина В.И. М., 2003, с. 496-499.

ման չափերը և կլինի այն ընդհանրապես, կախված է Դատարանի հայեցողությունից:

Արդարացի փոխհատուցման ձևով տուգանքային պատժամիջոցը միակ պատժամիջոցն է, որով ապահովված են Կոնվենցիայով պաշտպանվող իրավունքները և ազատությունները երաշխավորող նյութաիրավական նորմերը: Դատարանը իրավասու չէ ոչ չեղյալ հայտարարելու, ոչ փոխելու մասնակից-պետության որևէ ակտ՝ լինի դա օրենք, այլ իրավական նորմատիվ ակտ կամ դատական որոշում: Հատկացնելով հայցվորին դրամական փոխհատուցում՝ Դատարանի որոշումը հնարավորություն է ընձեռում նույն պետության համար գիտակցելու բոլոր հնարավոր հետևանքները, եթե չփոխվեն օրենսդրությունը կամ պետական իշխանությունների պրակտիկան, որոնք հնարավոր են դարձրել նմանօրինակ խախտումները¹⁹⁹:

Հավելված II. Ղարաբաղյան պատերազմում վարձկանների մասնակցության մասին վկայող փաստաթղթերը

Համաձայն ԼՂՀ ՊՆ կողմից տրամադրված տվյալների և փաստաթղթերի, 1992-94թթ. Ադրբեջանի ղեկավարությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ պատերազմին մասնակցելու համար ներգրավել է օտարերկրյա վարձկանների մի նշանակալից քանակություն: Ամենախոշոր և արժեքավոր խմբավորումը՝ սեփական կենտրոնացված հրամանատարությամբ, կազմում էին վարձկանները Աֆղանստանից, որոնց քանակը տատանվում էր 1500 մարդու սահմաններում: Նրանք օգտագործվում էին բոլոր ուղղություններով.

- դիվերսիոն-հետախուզական օպերացիաներ իրականացնելու համար,
- առաջային գծում՝ որպես գրոհային ջոկատներ,
- ադրբեջանական զորամասերի թիկունքում՝ որպես արգելափակող ջոկատներ:

Մինչ ռազմական գործողությունների գոտի փոխադրվելը, նրանք տեղակայվում էին Գերաք և Էրզի բնակավայրերում

գտնվող ուսումնական ստորաբաժանումներում: Աֆղանցիները հաշվառման էին կանգնում ԱՀ ՋՈՒ-ում՝ որպես հատուկ զորակազմ: Չորամասերում նրանք հայտնի էին որպես «Ա» խումբ: Ռազմական գործողությունների ընթացքում նրանք կոչվում էին իրենց սեփական առանձին ստորաբաժանումների կազմում: Աֆղանցիներից կազմավորվեց նաև առանձին իրետանային գունդ: Յուրաքանչյուր խմբին հատկացված էր 1-2 թարգմանիչ: Մոջահեդներն օգտվում էին հատուկ այստեղություններից՝ նրանց սրվում էր րացուցիչ սննդամթերք, զենք և տեխնիկական միջոցներ: Ջինադադարի մասին համաձայնագիրը ստորագրելուց հետո, 1994թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսների ընթացքում, աֆղան վարձկանները Իրանի տարածքով դուրս բերվեցին Ադրբեջանից:

1992-1993թթ. Ադրբեջանի կողմից ռազմական գործողություններին մասնակցել է շուրջ 200 չեչեն վարձկան, նրանց քվում նաև Շամիլ Բասաևը: Չեչենները գործում էին Մարապետի ուղղությամբ և հիմնականում լուծում էին դիվերսիոն-հետախուզական բնույթի խնդիրներ:

Ռուս և ուկրաինացի վարձկանները, ռազմական գործողությունների ողջ ընթացքում, ծառայում էին Ադրբեջանի բոլոր տեսակի զորքերում: 1994թ. հունվար-փետրվար ամիսներին ՌԴ-ից և Ուկրաինայից ԱՀ ժամանեց վարձկանների մի մեծ խումբ, որոնց ուժերով ենթադրվում էր իրականացնել օդային-դիվերսիոն, այսպես կոչված, «Էդելվեյս» օպերացիան: Ադրբեջանական բանակում վարձկան ծառայած ռուսների և ուկրաինացիների ընդհանուր քանակությունը կազմում էր մինչև 5000 մարդ:

Այս համատեքստում վարձկաններ պետք է համարել նաև թուրք խորհրդատուների և մասնագետների մեծ խումբը, որն այն ժամանակ գտնվում էր Ադրբեջանի ղեկավարության տրամադրության տակ:

¹⁹⁹ Туманов В.А., Европейский Суд по правам человека, М., 2001, с. 74.

Փաստաթուղթ 1

Վարձկան-սպայի զեկուցագիրը Աղյրբեջանի պաշտպանության նախարարին

Աղյրբեջանական Հանրապետության
պաշտպանության նախարարին

Ձեկուցագիր

Սույնով զեկուցում եմ, որ 778 գ/մ հատուկ նշանակության գումարտակի անձնակազմի ֆիզիկական վիճակն անբավարար է: Ձոռիված և վիրավոր կորցրել ենք 21 (քսանմեկ) զինվոր, այդ թվում նաև սպաներ: Անձնակազմի 30 %-ը անմարտունակ է վնասվածքների և սոմատիկ հիվանդությունների պատճառով:

Անձնակազմի 75 %-ի մոտ հայտնաբերվել է պետիկուլեզ: Հագուստի ոջիլ է հայտնաբերվել հագուստի ծալքերում, ինչպես նաև հիվանդների ճանկոտված մարմինների վրա, ինչն ուղեկցվում է քորով: 778 գ/մ բուժկետի բժիշկների ջանքերով ստեղծվել են պայմաններ համազգեստը եռացնելու, ինքնաշեն բաղնիքներում լողանալու համար: Ձինժառայողների լիարժեք լողանալն ապահովելու նպատակով ԺԺԱ մեքենա տրամադրելու խնդրանքով նյութական ապահովման առանձին գումարտակին ուղղված դիմումին ստացվել է այդ հատուկ մեքենան մոտակա ժամանակները ուղարկելու անհնարինության մասին պատասխան: Իրավիճակը բարդանում է տեղացած ծյունով և ճանապարհների անանցելիությամբ: Անձնակազմի հիմնական մասը տառապում է քոսով: Ծծմբաքսոսի կիրառումը դաշտային պայմաններում դրական արդյունք չտվեց: Հիվանդները ուղարկվել են բուժվաշտ՝ անհրաժեշտ բուժումն անցնելու համար:

Ձինժառայողների 30%-ի մոտ հայտնաբերվել են ստորին վերջույթների սնկային հիվանդություններ: Յողով մշտական մշակում է իրականացվել: Նկատվել են կրկնության դեպքեր: Ներկայումս մման հիվանդներն առկա են:

Գումարտակում հայտնաբերվել են վերին շնչառական ուղիների դիֆթերիայի դեպքեր: Շնչառության և կուլ տալու

ոժվարանալու բողբոքներով, կոկորդի ցավերով, ջերմությամբ (40°C) և խեղդող հագով հիվանդները բերվել են բուժվաշտ, որտեղ հոսպիտալացվել են, իսկ հետո ուղարկվել Բաքու: Հիվանության հատկապես ծանր ընթացք է դիտարկվել Կուրբանով Մեհդի Այազ օղու մոտ, որին ախտորոշում է կատարվել 27/10/92թ.: Դիֆթերիայի տարածման սպառնացող վտանգի կապակցությամբ անձնակազմի պատվաստում է իրականացվել զտված դիֆթերիա-պրկախտային անատոքսինով՝ 0,5մլ մեկ անգամյա դեղաքանակում անտիգենի նվազեցված պարունակությամբ: Միաժամանակ անձնակազմի հետ զրույցներ են անցկացվել անձնական հիգիենայի կանոնների կարևորության մասին:

Չնայած ձեռնարկվող միջոցառումների և 778 գ/մ բժիշկների կողմից իրականացվող վերահսկողության վերահսկողության գումարտակում ձևավորվել է սպառնալից համաճարակաբանական իրավիճակ:

Այս կապակցությամբ խնդրում են Ձեզ գործուն միջոցներ ձեռնարկել: Անհրաժեշտ են համարում դուրս բերել գումարտակը ռազմական գործողությունների գոտուց դեպի մշտական տեղաբաշխման դիրքեր՝ դիտարկման կամ կայանտինի ռեժիմի հաստատման համար:

778 գ/մ Հատուկ նշանակության
գումարտակի հրամանատար ֆ/գ Վ. Մուդրակ

18/10/1992թ.

Փաստաթուղթ 2

Վարձկան-սպայի զեկուցագիրը իր ենթակայությանը հանձնված Աղյրբեջանի ՁՈՒ-ի ստորաբաժանման ռազմական կորուստների մասին

002 գ/մ հրամանատարին

Ձեկուցագիր

Ռազմական գործողությունների ժամանակ 778 գ/մ հատուկ նշանակության գումարտակը կրել է հետևյալ կորուստները՝

Չոհված

Բարակ Հուրյաս Սարիբիլա օղի – III վաշտի շարքային, ախտորոշում՝ գլխի հրազենային վերք.

Նազիմով Իսկանդեր Աշտարի – II վաշտի շարքային, ախտորոշում՝ ականոզ մարմնի անդամահատում.

Աբդուռահմանով Ջավադ – II վաշտի շարքային, ախտորոշում՝ հրազենային կույր վերք ձախ երիկամի շրջանում.

Դուլբանով Մեհդի Այազ – II վաշտի շարքային, ախտորոշում՝ դիֆթերիա.

Ախունով Նախիր Անվեր օղի – շարքային, ախտորոշում՝ բեկորային վերք սրտի շրջանում:

Վիրավոր

Լատիշև Վադիմ – սնայպեր, վերին վերջույթների և որովայնի հրազենային վերք, Գումբատով Ջ. – ստորին ձախ վերջույթի գնդիկավոր վերք, Ասադով Ուլվտ – թմբկաթաղանթի պատում, Շինդիև Համիդ – աջ ազդրի բեկորային վերք, Բաբիև Գաբիլ – ձախ վերին վերջույթի հրազենային վերք, Յուսիֆով Ասիֆ – աջ վերին վերջույթի հրազենային վերք, Մահմուդով Ռովշան – գլխի և աջ վերին վերջույթի հրազենային վերք, Մանեբով Այդին – կրծքավանդակի բեկորային վերք, Յուսիբով Հաֆիզ – աջ ստորին վերջույթի հրազենային վերք, Բինալիև Վազիֆ – աջ ստորին վերջույթի ասեղնային վերք, Մամեդով Վուգար – որովայնի հրազենային թափանցող վերք, Իգաուլով Վադիմ – կրծքավանդակի թափանցող հրազենային վերք աջից, Աբասով Մ. Ա. – գլխի վափուկ հյուսվածքների հրազենային վերք, Աբուշև Էլշան – ձախ վերին վերջույթի բեկորային վերք, Սաֆարով Ֆահրադին – աջ վերին վերջույթի գնդակային վերք, Սուլեյմանով Բախշչալի – որովայնի թափանցող գնդակային վերք:

Անձնակազմի մոտ 30% անմարտունակ են հիվանդությունների և վնասվածքների պատճառով:

778 զ/մ Հատուկ նշանակության գումարտակի հրամանատար փ/գ Վ. Մուդրակ
19/10/1992թ.

Փաստաթուղթ 3

Քաղվածք 160 զ/մ հրամանատարի № 109 հրամանից ադրբեջանական բանակի մթերային ապահովման մեջ գտնվող մոջահեդ-վարձկանների մասին

16/08/1993թ.

«Գերան» ուսումնական կենտրոն

«... «3. Մթերային ապահովման մեջ գտնվում է 305 (երեք հարյուր հինգ) մարդ, որոնցից՝

1. 160 զ/մ՝ սպաներ-25, վառատարներ-4, զինվորներ-25, գործուղվածներ-0,
2. տանկային գումարտակ՝ սպաներ-15, վառատարներ-14, սերժանտներ-5, զինվորներ-95, գործուղվածներ-52,
3. մոջահեդներ՝ 522 (հինգ հարյուր քսաներկու) մարդ»:

160 զ/մ հրամանատար փ/գ Ռ. Մամեդով
160 զ/մ –ի շտաբի պետի պաշտոնակատար կապիտան Է. Կուլիև

Փաստաթուղթ 4

Քաղվածք 160 զ/մ հրամանատարի № 129 հրամանից մոջահեդ-վարձկանների մասին հիշատակմամբ

05/09/1993թ.

«Գերան» ուսումնական կենտրոն

««1. ... 05.09.1993թ-ից Գյանջա քաղաքի 230 զ/մ զինվորական հոսպիտալ մեկնած համարել 27 (քսանյոթ) մոջահեդների՝ ստացիոնար բուժման: Հիմքը՝ գնդի բուժառայության պետի զեկուցագիրը:

«2. Մթերային ապահովման մեջ գտնվում է 703 (յոթ հարյուր երեք) մարդ, որոնցից՝

1. 160 զ/մ՝ սպաներ – 27, վառատարներ – 3, սերժանտներ – 6, զինվորներ – 38, գործուղվածներ – 54,

2. տանկային գումարտակ՝ սպաներ – 16, վառատարներ – 14, սերժանտներ – 15, զինվորներ – 88, գործուղվածներ – 5,
3. մոջահեդներ՝ 437 (չորս հարյուր երեսունյոթ) մարդ»:

160 զ/մ հրամանատար փ/գ Ռ. Մամեդով
160 զ/մ –ի շտաբի պետի պաշտոնակատար
կապիտան Ռ. Ալիև

Փաստաթուղթ 5

**Քաղվածք 160 զ/մ հրամանատարի № 132 հրամանից
մոջահեդ-վարձկանների մասին հիշատակմամբ**

08/09/1993թ.

«Գերան» ուսումնական կենտրոն

««2. ...19 (տասնինը) մոջահեդների Գյանջա քաղաքի 230 զ/մ զինվորական հոսպիտալից համարել վերադարձած և հաշվառել մթերային ապահովման մեջ: Հիմքը՝ գնդի բուժժառայության պետի զեկուցագիրը:

«3. ...1993թ. սեպտեմբերի 8-ից Գյանջա քաղաքի 230 զ/մ զինվորական հոսպիտալ մեկնած համարել 3 (երեք) մոջահեդների: Հանել մթերային ապահովումից: Հիմքը՝ գնդի բուժժառայության պետի զեկուցագիրը:

«4. Մթերային ապահովման մեջ գտնվում է 691 (վեց հարյուր իննսուսմեկ) մարդ, որոնցից՝

1. 160 զ/մ՝ սպաներ – 25, վառատարներ – 3, սերժանտներ – 6, զինվորներ – 31, գործուղվածներ – 53,
2. տանկային գումարտակ՝ սպաներ – 17, վառատարներ – 15, սերժանտներ – 15, զինվորներ – 80, գործուղվածներ – 3,
3. մոջահեդներ՝ 453 (չորս հարյուր հիսուներեք) մարդ»:

160 զ/մ հրամանատար փ/գ Ռ. Մամեդով
160 զ/մ –ի շտաբի պետի պաշտոնակատար
կապիտան Ռ. Ալիև

Փաստաթուղթ 6
**Քաղվածք Ադրբեջանական Հանրապետության
պաշտպանության նախարարության հրամանից**

№ 1/1 – 1787

առ 19 օգոստոսի, 1993թ. ք. Բաքու

Ադրբեջանական Հանրապետության

զինվորական կոմիսարին /ք. Բաքու

160 գորամասի հրամանատարին/ **Գերան**

200 գորամասի հրամանատարին/ք. Գյանջա

«1. Պահեստից գորակոչել *պարսկերենի իմացությամբ* 50 (հիսուն) զինապարտ *թարգմանիչների* և մինչև 19.08.1993թ. ուղարկել նրանց 160 գորամասի «Գերան» ուսումնական կենտրոնի հրամանատարի տրամադրության տակ»:

Ադրբեջանական Հանրապետության

զինված ուժերի գլխավոր շտաբի

պետի տեղակալի պաշտոնակատար

գեղապետ Ի. Ասլանով

Ճիշտ է՝ Ադրբեջանական Հանրապետության

զինված ուժերի գլխավոր շտաբի

գորահավաքի-կազմակերպչական

վարչության պետ գեղապետ Ի. Կուլամով

Փաստաթուղթ 7

**Քաղվածք 160 զ/մ հրամանատարի № 237 հայտից
աֆղան մոջահեդներին սննդամթերքով ապահովելու մասին**

1993թ., սեպտեմբեր

200 գորամասի քիկունքի պետին

«Հատուկ գորակազմի գորաշարժն ապահովելու համար խնդրում են Ձեզ տրամադրել ներքոնշյալ պարենը չոր մթերաբաժնով՝ առձեռն տալու համար՝ Վերոհիշյալ պարենը տրամադրել 460 (չորս հարյուր վաթսուն) մարդ՝ երկու օրվա համար»:

160 զ/մ հրամանատար

գեղապետ-լեյտենանտ Դ. Լյաթիֆով

160 զ/մ քիկունքի գծով հրամանատարի տեղակալ Տ. Բաբան

Փաստաթուղթ 8

Ադրբեջանական ռազմագերի 1968թ. ծնված
Յախյան Աֆին Միրյուսիվ օղլու հարցաքննության
արձանագրությունից քաղվածք վարձկան-մոջահեղների ու
Թուրքիայից և Ուկրաինայից զենքի մատակարարման մասին

28/04/1994թ.

Յախիեր ծնվել և բնակվում էր Ուջարի շրջանի Մելիքբալլի
գյուղում: 1992թ-ից Ադրբեջանի ազգային բանակում է: Ավար-
տել է Տալիհի ռազմաքաղաքական շինարարական ռազմա-
կան բարձրագույն ուսումնարանը: Եղել է 2-րդ ՏԳ-ի 708-րդ
բրիգադայի քաղաքական-դաստիարակչական մասով հրամա-
նատարի տեղակալ: Ունի ավագ լեյտենանտի կոչում:

«...1992թ. մայիսի 2-ից մինչև 22.02.1993թ. եղել էմ Լենքորա-
նում և Գյուզդեկում: 22.02.93-ին բարձեցին երեք տանկերի
հետ և ասացին մեկնում եք Ադրամի ճակատ: Այսպես ընկա
708 զ/մ:

...Մենք Բաքվից ստացանք 3 T-72, ասացին, որ բերել են
Ուկրաինայից... 1993թ. հուլիսի 3-ին Գյանջայից և շրջանից
բերեցին 50 մարդ Ս. Գուսեյնովի անունից, բայց նրանք բոլորը
փախան:

Մոջահեդների մասին գիտեն հետևյալը՝ ունեն իրենց հա-
մագգեստը և Բաքվից: Տեխնիկան T-72 և T-55 է (տանկեր):
Զինված են ՐՊԴ և ՈՒԿ: Ստացել են *թուրքական* ավտոմատ-
ներ...708 բրիգադի շտաբը գտնվում է Ջանգեշաուր (Ջանգի-
շալմ) գյուղի մշակույթի տանը ... ճակատի շտաբը այժմ Ադ-
ջաբեդի շրջկոմի շենքում է... Մոջահեդները գտնվում են Էրզի
գյուղում (քանո): 500 մարդ, որպես առանձին գումարտակ, են-
թարկվում են միայն ճակատի հրամանատարին»:

Փաստաթուղթ 9

Ադրբեջանական ռազմագերի 1967 թ. ծնված
Ասլանով Սողոմոնի Ազերի հարցաքննության
արձանագրությունից քաղվածք վարձկան-մոջահեղների ու
Թուրքիայից և Ուկրաինայից զենքի մատակարարման մասին

18/01/1994թ.

Ծննդավայրը ք. Բաքու, 8-րդ ՄՀԳ-ի հրամանատար: Կա-
պիտանի կոչում ունի: Ավարտել է Տաշքենդի Բարձրագույն
համալորային հրամանատարական ուսումնարանը, 1988թ.:
Մինչ այդ՝ 1982-1984թթ. սովորել է Կալինինի ռազմական ու-
սումնարանում:

«...1994թ. հունվարի 5-ից, երբ ես ժամանեցի 702 բրիգադ,
ինձ հայտնեցին, որ անձնական գործը գտնվում է այստեղ և
սա լինելու է իմ մշտական ծառայության վայրը (702 բրիգադը
տեղակայված էր Ֆիզուլու շրջանում, Դաշբուրում)... 12-13
յուլս գիշերը մեր զորքերի նահանջից հետո Ֆիզուլու շրջանի գ.
Աշադի Արդուտահմանլիից և գ. Շուքրուրբեյլիից, ժամանեց ևս
4 գումարտակ և 2 *աֆղանական գումարտակ, որոնցից 2 աֆ-
ղանական գումարտակները տեղակայվեցին 2 ՄՀԳ-ից թի-
կունքում... Աֆղանական գումարտակներում մոտավորապես
300-350-ական մարդ կար...*

T-55 տանկերը թվով 62 հատ գնել էինք Ուկրաինայից 3-4
ամիս առաջ: Հրաձգային որոշ զենք գնել էինք *Տուլայում*
1993թ. սեպտեմբերից... «Գրադ» կայանքի համար արկերը
գնվում են *Տուլայի զինագործարանից*: Մոտ 20 հատ ԵՄՊ-2
գնվել է Նիկոլակ քաղաքից սկսած 1993թ. հոկտեմբերից:
1993թ. հոկտեմբերից Թուրքիայից գնվում են ռադիոկայաններ
(տարբեր):

Փաստաթուղթ 10

Ադրբեջանական ռազմագերի 1973 թ. ծնված

Ջեբրահիլով Իսմաիլ Սայադ օղլու հարցաքննության արձանագրությունից քաղվածք վարձկան-աֆղանցիների Թուրքիայից հրահանգիչների մասին հիշատակումներով

Ծնվել և բնակվում է Ջալալաբադ ավանում: 1994թ. գորակոչվել է Ադրբեջանի ազգային բանակ և ուղարկվել է Ջալալաբադի շրջանի Պրիշիբ ավանի ուսումնական կենտրոն: Ընդգրկվել է ուսումնական գնդի պարեկային վաշտի կազմի մեջ:

«...Ուսումնական գունդ հրահանգիչները ուղարկվում են Բաքվից: Սպաների հետ խոսակցություններից գիտեմ, որ «Նասուսնի» ուսումնական կենտրոնում աշխատում են *Թուրքիայից եկած հրահանգիչները*, որոնք վարժեցնում են սպաներին»:

Ուսումնական կենտրոնում Ջեբրահիլովը ծառայել է մինչև 1995թ. նոյեմբերը: 1995թ. նոյեմբերին, նրան, 35 զինվորների հետ միասին, ուղարկել են Բեյլագան 212 կորպուս՝ գեներալ Այդամիրովի ենթակայության տակ, որտեղ Այդամիրովը հայտարարել է, որ «քանի դեռ ընտրությունները չեն անցկացվել, չեմ կարող ձեզ գորացրել», որից հետո նրանց ուղարկել են 181 բրիգադ, որտեղ բրիգադի հրամանատար մայոր Շիխալիևը զինվորներին չընդունեց, քանի որ նրանք ենթակա էին զորացրման: Երեք օրից խումբը բաժանեցին և Ջեբրահիլովին ուղարկեցին 702 բրիգադ, որտեղ.

«...զինվորների և սպաների ավելի քան 50%-ը ոգելից խմիչքներ և թմրամիջոցներ էր օգտագործում, հատկապես 22.00-ից հետո ման էին գալիս հարբած և ծխած... Ականադաշտերը գտնվում էին պահակակետերից 20 մետրի հեռավորության վրա, դրված են յուրաքանչյուր երեք մետրը մեկ՝ երեք շարքով, խառը՝ հակատանկային և հակահետևակային... *Թուրքիան* օգնություն է ուղարկում, մթերք և դեղամիջոցներ... 1994թ. հունվարին Ջալալիբադում, ուսումնական կենտրոնում գտնվում էին Աֆղանստանից եկած վարձկաններ, որոնք

իրենց սանձարձակ էին պահում, շուկայում գնդակահարեցի մի մարդու այն պատճառով, որ ծառայել է Աֆղանստանում և կռվել է իրենց դեմ: *Մոջահեդները մոտ 200 հոգի էին*: Բնակչության պահանջով աֆղանցիներին ետ ուղարկեցին»:

Դասալքության պատճառը ընտանիքում ծանր վիճակն էր: 28.11.1995թ. երեք պաշտոնակից անձանց հետ որոշել են ինքնական թողնել զ/մ դիրքերը:

Հավելված III

Ժամանակագրություն

1813թ.

Կնքվեց Գյուլիստանի պայմանագիրը, համաձայն որի Ղարաբաղը Պարսկաստանից անցավ Ռուսական կայսրությանը:

1826թ.

Թուրքմենչայի պայմանագրի կնքումը, համաձայն որի ողջ Արևելյան Հայաստանը (այդ թվում նաև Ղարաբաղը) Պարսկաստանից անցավ Ռուսական կայսրությանը:

1828թ.

Հայկական մարզի ստեղծում՝ Ռուսական կայսրության կազմում:

1840թ.

Հայկական մարզը բաժանվում է երկու գավառի՝ Երևանի և Նախիջևանի:

1867թ.

Ռուսական իշխանությունների կողմից իրականացվեց Անդրկովկասի նոր վարչատարածքային բաժանում 5 նահանգների: Ղարաբաղը մտավ Ելիզավետպոլյան նահանգի մեջ, որտեղ բնակչության մեծ մասը կազմում էին հայերը, իսկ Նախիջևանը՝ Երևանի նահանգի կազմի մեջ:

1917թ. հոկտեմբեր-նոյեմբեր

Հոկտեմբերյան հեղափոխության և Ռուսական կայսրության վերջնական փլուզման արդյունքում իշխանությունը Բաքվի նահանգում անցավ ընտրված Բաքվի կոմունայի ձեռքը:

1918թ. ապրիլի 25

Ստեղծվում է Բաքվի Խորհուրդը:

1918 թ. հունիս

Լեռնային Ղարաբաղի Լիազոր ներկայացուցիչների առաջին համագումարը Լեռնային Ղարաբաղը հայտարարեց Հայաստանի Հանրապետության անբաժանելի մաս:

1918 թ. սեպտեմբեր

Թուրքական զորքերը գրավեցին Բաքուն, տապալեցին օրինական ընտրված իշխանություններին և իշխանությունը հանձնեցին կովկասյան թաթարների ղեկավարներին՝ «Մուսավաթ» կուսակցության ներկայացուցիչներին:

1920թ. ապրիլ

11-րդ կարմիր բանակը տապալեց մուսաֆաթական կառավարությանը Բաքվում և հաստատեց խորհրդային կարգեր Ադրբեջանում:

1920թ. նոյեմբեր

Հայաստանի խորհրդայնացման սկիզբը և Ադրբեջանի կողմից բոլոր վիճահարույց տարածքների ճանաչում՝ որպես Խորհրդային Հայաստանի անբաժանելի մասեր:

1921թ. հունիսի 2

Ընդունվեց Հայկական ԽՍՀ Ժողկոմխորհի Հռչակագիրը, որով Լեռնային Ղարաբաղը հայտարարվում է Խորհրդային Ադրբեջանի անբաժանելի մաս:

1921թ. հունիսի 3

ՌԿԿ (բ) ԿԿ Կովբյուրոն որոշում ընդունեց Լեռնային Ղարաբաղը Հայկական ԽՍՀ կազմում ընդգրկելու մասին:

1921թ. հուլիսի 4

ՌԿԿ (բ) ԿԿ Կովբյուրոն Բաքվի պահանջով կրկին քննարկեց Լեռնային Ղարաբաղի մասին հարցը և որոշում ընդունեց այն քողնելու Խորհրդային Հայաստանի կազմում:

1921թ. հուլիսի 5

Ի. Ստալինի ճնշման տակ Կովբյուրոն վերանայեց իր նախկին որոշումը և որոշում է կայացնում Լեռնային Ղարաբաղը փոխանցել Ադրբեջանական ԽՍՀ-ին՝ այնտեղ ընդարձակ իրավունքներով Ինքնավար Լեռնային Ղարաբաղի Մարզ կազմավորելու (ԻԼՂՄ) սպանումով:

1923թ. հուլիս

Չստանալով Կովբյուրոյի որոշման կապակցությամբ ղարաբաղցիների համաձայնությունը՝ Ադրբեջանական ԽՍՀ-ն դեկրետով որոշում է ԻԼՂՄ-ը, սակայն, ի խախտումն իր վերադաս կուսակցական մարմնի՝ ՌԿԿ(բ) Կովբյուրոյի 1921թ. հուլիսի որոշման ինքնավար մարզ է ստեղծվում Լեռնային Ղարաբաղի միայն մի հատվածում, իսկ նրա նշանակալից մասը հայտնվում է ինքնավարության սահմաններից դուրս: Եվ արդյունքում, Ադրբեջանական ԽՍՀ տարածքի խորքում ԻԼՂՄ-ը դարձավ արհեստական անկլավ:

1926թ.

Նախիջևանի մարզի հայ փախստականներին մերժում են վերադառնալ հայրենի օջախ:

Մեկնաբանություն. Ադրբ.ԿԳԿ որոշման մեջ հակառակ փաստերի նշվում էր. «...հաշվի առնելով Նախիջևանի ԻԽՍՀ սակավահողությունը», թեև Նախիջևանում բնակչության մեկ շնչի հաշվով բաժին էր ընկնում ավելի շատ հողատարածք, քան Անդրկովկասի այլ շրջաններում: Երկար տարիներ հայկական բնակավայրերը, որոնք դատարկվել էին բուրջական ներխուժման շրջանում, մնում էին անմարդաբնակ: Նախիջևանում մնացած հայերը այստեղից փտարկեցին հետագայում:

1927թ.

Գետաբեկի շրջանի (Հյուսիսային Արցախ) հայ բնակչությանը տասը խոշոր բնակավայրեր փոխանցվեցին Շամխորի շրջանին:

Մեկնաբանություն. Այս և նմանօրինակ վարչական վերափոխումները մեկ նպատակ էին հետապնդում. բոլլ չտալ, որպեսզի հայերը կազմեն մեծամասնություն որևէ շրջանում, հատկապես, եթե այդ շրջանը սահմանակցում էր Հայկական ԽՍՀ-ին:

1930-ական թվականներ

Անդրկովկասի թուրքերը, որոնք 1926թ-ի Համամիութենական Մարդահամարի ժամանակ հայտնի էին «կովկասյան թաթարներ» էթնոնիմով, ընդունում են նոր՝ «ադրբեջանցիներ» էթնոնիմը:

1936թ.

Ընդունվում է «ԽՍՀՄ ստալինյան Մահմանադրությունը»: Ինքնավար Լեռնային Ղարաբաղի Մարզը վերանվանվում է Լեռնային-Ղարաբաղի Ինքնավար Մարզ: ԽՍՀՄ ազգային-պետական կարգում որպես խորհրդային ազգային պետականության ձև պահպանվեց ինքնավար մարզի սահմանադրական կարգավիճակը:

Մեկնաբանություն. Մարզի առաջին՝ Ինքնավար Լեռնային Ղարաբաղի Մարզ անվանումը արտացոլում էր Ադրբեջանական ԽՍՀ «սահմաններում բողոքված» Լեռնային Ղարաբաղի ողջ տարածքում մարզի կազմավորման սկզբնական նպատակային ուղղվածությունը:

1966թ.

ԽՄԿԿ ԿԿ քարտուղարության կողմից քննարկվում է Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ վերամիավորելու հարցը: ԼՂԻՄ-ի կուսակցության մարզկոմը քննարկում է շրջաբերականը, որն այդ կապակցությամբ ուղարկվել էր ԽՄԿԿ ԿԿ քարտուղարության կողմից:

Մեկնաբանություն. 1965թ. ղարաբաղի մի խումբ հայեր դիմեցին ԽՄԿԿ ԿԿ-ին Լեռնային-Ղարաբաղյան Ինքնավար Մարզի տնտեսական և մշակութային զարգացման թերությունների մասին նամակով և պահանջեցին Լեռնային Ղարաբաղի վերամիավորում ՀԽՍՀ

կամ ՌԽՖՍՀ հետ: Խնդրանքի տակ զետեղված էին 45 հազար ղարաբաղցիների ստորագրություններ: 1966թ. Հայկական ԽՍՀ ԿԿ ԿԿ-ն դիմեց ԽՄԿԿ ԿԿ-ին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու հարցով: Նույն թվականին ԽՄԿԿ ԿԿ քարտուղարությունը հանձնարարեց ՀԽՍՀ և Ադրբ. ԽՍՀ ԿԿ ԿԿ-ին համատեղ պատրաստել Լեռնային Ղարաբաղի մասին հարցը: Կազմավորվեցին հանրապետական հանձնաժողովներ ՀԽՍՀ ԿԿ ԿԿ-ի առաջին քարտուղար Ա.Քոչինյանի և Ադրբ. ԽՍՀ առաջին քարտուղար Վ.Ախունդովի ղեկավարությամբ:

1967թ. հուլիս

Լեռնային Ղարաբաղում հուզումներ սկսվեցին Բերդաշեն գյուղից հայ տղայի սպանության կապակցությամբ, որն իրականացրել էր հարևան գյուղի դպրոցի ադրբեջանցի տնօրենը:

Մեկնաբանություն. ԼՂԻՄ-ի Մարտունու շրջանի Կուրոպատկինո գյուղի դպրոցի տնօրեն Մամեդովը և նրա երկու բարեկամները կազմակերպեցին 8-ամյա հայ տղայի՝ Նելսոն Մովսիսյանի առանձնահատուկ դաժանությամբ սպանությունը (զոհի այքերը հանել էին և գլխի մեջ մեխեր խփել): 1967 թվականի ամռանը Ստեփանակերտի Մ.Գուրկու անվան դրամատիկական թատրոնի շենքի առջև տեղի ունեցավ բաց ցուցադրական դատավարություն: Հետաքննության ընթացքում և դատի ժամանակ պարզվեց, որ Ա.Մամեդովը հանդիսանում է մուսաֆաթիստների ավազակախմբի պարագլխի որդին, որը 1920-ական թվականներին գնդակահարվել էր: Ա.Մամեդովի խոսքերով. «հայրը նրան ավանդել էր իր յուրաքանչյուր որդուն սպանել տասական հայի»:

1977թ նոյեմբերի 23

ԼՂԻՄ-ի հարցի քննարկումը ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահության նիստում ԽՍՀՄ նոր Մահմանադրության համաժողովրդական քննարկման արդյունքները ընդհանրացնելու կապակցությամբ:

Մեկնաբանություն. ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահությունը արձանագրեց հետևյալը. «Մի շարք պատմական հանգամանքների արդյունքում մի քանի տասնյակ տարիներ առաջ Լեռնային Ղարաբաղը արհեստականորեն միակցվել է Ադրբեջանին: Ընդ որում, հաշվի չեն առնվել մարզի պատմական անցյալը, նրա ազգա-

յին կազմը, ժողովրդի կամքը և տնտեսական շահերը: Տասնամյակներ են անցել և Ղարաբաղի հարցը շարունակում է արժարժիել և անհանգստություն առաջացնել... հարկավոր է միավորել Լեռնային Ղարաբաղը (հայերեն՝ Արցախ) Հայկական ԽՍՀ-ին: Այդ ժամանակ ամեն ինչ կընկնի իր օրինական տեղը»:

1986թ. հուլիսի 16

Ընդունվում է Այրբեջանական ԽՍՀ «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի մասին» օրենքը:

Մեկնաբանություն. *Ինչպես Այրբեջանական ԽՍՀ Սահմանադրությունը, այնպես էլ Այրբեջանական ԽՍՀ «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի մասին» օրենքը պետք է համապատասխանեին (չհակասեին) ԽՍՀՄ Սահմանադրությանը: Եվ միտքենական հանրասպետության. և մարզի կարգավիճակը որոշվում էր ԽՍՀՄ Սահմանադրությամբ, համաձայն որի ինչպես Խորհրդային հանրապետության, այնպես էլ ինքնավար մարզի տարածքային ամբողջականությունը իրավաբանորեն երաշխավորվում էին հավասարազոր կերպով: ԼՂԻՄ-ի մասին օրենքի երրորդ հոդվածը ասում է. «... ինքնավար մարզի տարածքը չի կարող փոփոխվել առանց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Ժողովրդական պատգամավորների Խորհրդի համաձայնության»:*

1987թ.

Հուզումներ բարձրացան Հյուսիսային Արցախում՝ Չարդախլու գյուղում, գյուղի հողահանդերի մի մասը հարևան աղբեջանական գյուղին փոխանցելու մասին Բաքվից եկած հրահանգի կապակցությամբ:

Մեկնաբանություն. *Խորհրդային տարիներին հայերից հողերը խլվում էին ամենատարբեր պատրվակներով: 30-ական թվականներին Հաղորթի շրջանի Հողեր հայկական գյուղը փոխանցվեց Ֆիզուլու շրջանին՝ Հաղորթի շրջկենտրոնից հեռու գտնվելու հանգամանքով պայմանավորելով: ԼՂԻՄ-ի Մարտունու շրջանի Գյուլաբլի գյուղը փոխանցեցին Աղդամի շրջանին այն պատճառով, որ գյուղի բնակչությունը «վատ է հասկանում հայերենը»: Ասկերանի տարածքում գտնվող Անտառային կոչվող բնակավայրը առանձնացված էր որպես առանձին բնակավայր՝ Մեջալի աղբեջանական անվանումով և այլն: Ի դեպ, Կրասնոսելսկի շրջանի հայկական Արծվաշեն գյուղը դարձավ անկալի այն բանից հետո, երբ նրանից խլեցին իր հողահանդերի մի մասը: Իսկ Հայկական ԽՍՀ-ում հայտնվեցին աղբեջանական անկալներ՝ դրանք Այրբեջանական ԽՍՀ-ին փո-*

խանցելու արդյունքում: Հետևողական բնույթ կրող հողերի այսպիսի «կտրելու քաղաքականություն» հետևանքով Հայկական ԽՍՀ տարածքը, որը 1927թ-ին կազմում էր 30247.6 կմ² 1988թ-ին փոքրացավ մինչև 29742.5 կմ²՝ կրճատվելով 505.1 կմ²-ով: Չարդախլուցիների անրկայացված այդ պահանջը հայկական հողերի «լուռ զավթման» հերթական գործողություն էր՝ բայց արդեն Այրբեջանական ԽՍՀ ներսում:

1988թ. փետրվարի 20

Ընդունվեց ԼՂԻՄ-ի Ժողովրդական Պատգամավորների Խորհրդի արտահերթ նստաշրջանի որոշումը «Միջնորդություն Այրբեջանական ԽՍՀ և Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդներին ԼՂԻՄ-ը Այրբեջանական ԽՍՀ-ի կազմից հայկական ԽՍՀ-ի կազմ փոխանցելու մասին»:

1988թ. փետրվարի 21

Ընդունվեց ԽՄԿԿ ԿԿ «Լեռնային Ղարաբաղում իրադարձությունների մասին» որոշումը, որտեղ ԼՂԻՄ-ի Ժողովրդական Պատգամավորների Խորհրդի արտահերթ նստաշրջանի որոշումը որակվեց որպես «սզգայնական տարրերի կողմից իրահրված գործողություն»:

1988թ. փետրվարի 22

Մարզի մայրաքաղաքում «կարգ հաստատելու համար» Աղդամից ամբոխը, որը հիմնականում կազմված էր քրեական տարրերից, «արշավ» կազմակերպեց դեպի Ստեփանակերտ:

Մեկնաբանություն. *Ստեփանակերտի ճանապարհին՝ Ասկերանի շրջկենտրոնի մոտ, ամբոխը կանգնեցվեց զինվորականների և շրջկենտրոնի բնակիչների կողմից: Բախումներ՝ որպես այդպիսիք չստացվեցին և, թվում էր, թե սաղրանքը չհաջողվեց: Սակայն վերջում պարզվեց, որ երկու երիտասարդ աղբեջանացիներ սպանվել են: Նույն օրը հայտնի դարձավ, որ նրանցից, առնվազն մեկին սպանել էր աղբեջանցի միլիցիոները:*

1988թ. փետրվարի 26

Ասկերանի մոտ տեղի ունեցած իրադարձությունների կապակցությամբ աղբեջանական և հայկական հե-

ռուսաստեանայիններով ելույթ ունեցավ ԽՍՀՄ Գերագույն դատախազի տեղակալ Կատուսեր:

Մեկնաբանություն. Այս ելույթը դարձավ Կենտրոնի առաջին սաղարանը դարաբաղցիների նկատմամբ: Կատուսեր ոչ միայն չհայտնեց, որ սպանությունը կատարվել է աղբբեջանցի միլիցիոների կողմից, այլև դիտավորյալ իր ելույթը կազմակերպել էր այնպես, որպեսզի տախտորություն ստեղծվի, որ սպանությունը իրականացրել են հայերը:

1988թ. փետրվարի 28-29

Աղբբեջանական ԽՍՀ Մումգայիթ քաղաքում տեղի ունեցավ հայերի ցեղասպանությունը, որը ողջ Աղբբեջանով մեկ սկիզբ դրեց հակահայկական զանգվածային ահաբեկչությանն ու ջարդերին:

Մեկնաբանություն. ԽՍՀՄ նախագահ Մ.Գորբաչովը որոշ ժամանակ անց հայտարարեց, որ զորքերն ընդամենը երկու ժամ էին ուշացել (չնայած մոտ էին գնալուն): Սակայն իրականությունն այն է, որ նույնիսկ քաղաք մտնելուց հետո նրանք ոչինչ չձեռնարկեցին և դարձան իրականացվող վանդախցիների հանդիսատեսները:

1988թ. մարտի 1

Ստեփանակերտում ստեղծվեց «Կոունկ» հասարակական-քաղաքական կազմակերպությունը Արկաղի Մանուչարովի գլխավորությամբ, որը տեղի շինանյութերի կոմբինատի տնօրենն էր: Կազմակերպության նպատակն էր դեկավարել Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ազգային-ազատագրական շարժումը և ապահովել Աղբբ. ԽՍՀ հայության իրավունքների պաշտպանությունը:

1988թ. մարտի 17

Տեղի ունեցավ ԽՍՀԿ Լեռնային Ղարաբաղի մարզային կոմիտեի լիազույնար նիստը, որը հավանության արժանացրեց ԼՂԻՄ-ի Ժողովրդական պատգամավորների Խորհրդի նստաշրջանի ընդունած որոշումը՝ մարզը Հայկական ԽՍՀ կազմ փոխանցելու մասին:

1988թ. մարտի 24

Ընդունվեց ԽՍՀԿ ԿԿ և ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի «1988-1995թթ-ին Աղբբ. ԽՍՀ Լեռնային Ղարաբաղի

Ինքնավար Մարզի սոցիալ-տնտեսական զարգացման արագացման միջոցառումների մասին» որոշումը, որում նախատեսվում են միջոցառումներ՝ ուղղված Աղբբ. ԽՍՀ բոլոր հայկական շրջանների սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացմանը, ներառյալ՝ մայրաքաղաք Բաքուն: Կենտրոնը հասկացնել է տալիս, որ այն դիտարկում է Այրբ. ԽՍՀ-ն որպես երկու ժողովուրդների, երկու հիմնական համայնքների հանրապետություն:

1988թ. հուլիսի 12

Ընդունվում է ԼՂՀ Ժողովրդական պատգամավորների Խորհրդի XX գումարման ութերորդ նստաշրջանի որոշումը «Աղբբեջանական ԽՍՀ կազմից Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի դուրս գալու հուշակման մասին» որոշումը:

Մեկնաբանություն. Ժողովրդական պատգամավորների մարզային Խորհրդի Նստաշրջանի փետրվարի 20-ի որոշումը պարունակում էր միայն խնդրանք ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ կազմի մեջ ընդգրկելու վերաբերյալ: Սակայն սումգայիթյան ցեղասպանությունը և բռնությունների զանգվածային գործողությունների ալիքը ջարդերի և սպանությունների ձևով ողջ Աղբբեջանական ԽՍՀ-ով և համապատասխանաբար, Աղբբեջանական ԽՍՀ հայ ժողովրդի սահմանադրական և քաղաքացիական իրավունքների զանգվածային խախտումները հիմք դարձան ԼՂԻՄ-ի Աղբբեջանական ԽՍՀ կազմից դուրս գալու մասին որոշում ընդունելու: ԼՂԻՄ-ը ընդունեց այդ որոշումը որպես ԽՍՀՄ ազգային-պետական կարգի սուրյեկտ, որի նկատմամբ ճանաչված էր ինքնորոշման իրավունքը: Որոշման մեջ խոսք չէր գնում Հայկական ԽՍՀ-ի հետ վերամիավորվելու մասին:

1988թ. հուլիսի 13

Աղբբեջանական ԽՍՀ Գերագույն Խորհրդի նախագահությունը որոշում ընդունեց «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Ժողովրդական պատգամավորների Խորհրդի պատգամավորների՝ մարզը Աղբբեջանական ԽՍՀ-ից Հայկական ԽՍՀ կազմ փոխանցելու միջոցառության մասին»:

Մեկնաբանություն. Որոշումը գնահատել է այս խնդրանքը որպես անընդունելի, քանի որ «որս իրականացուսր կհակասեր հանրապետության սպրբեջանցի և հայ ազգայնակյության շահերին...»: Փաստաբույրը ընդունված էր Աղբբեջանական ԽՍՀ-ն որպես արտաազգային (իմտերնացիոնալ), երկու հիմնական համայնքների՝ մահմեդականների և հայերի հանրապետություն (ճիշտ է, վաթսուն տարի անց, այն քանից հետո, երբ քազմարիվ բնիկ ժողովուրդներ այստեղ ծուլվեցին կամ բշվեցին յորօրինակ ազգային ընդհատակ, «մահմեդականներ և հայեր» քառակապակցության փոխարեն առաջին անգամ հայտնվում է նոր դարձվածք՝ «սպրբեջանցիներ և հայեր») ներկայացնող փաստաբղրերի ոգով: Տարեգրության առումով դա Բարվի կողմից վերջին խոստովանությունն էր այն մասին, որ Աղբբեջանական ԽՍՀ պետականության կրողներ են հանդիսանում հանրապետության երկու հիմնական համայնքները՝ աղբբեջանցիները և հայերը: Հաջորդ օրն արդեն Բարուն «ուղղեց սխալը»: Աղբբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի որոշման մեջ արդեն խոսվում է ոչ թե հանրապետության աղբբեջանական և հայ ժողովուրդների մասին, այլ մարզի հայ և աղբբեջանական ժողովուրդների մասին: Չեակերպումը ոչ միայն խեղադրեց հակամարտության աշխարհագրությունը, այլև՝ էությունը, Աղբբեջանի հայ ժողովուրդը (Լեոնային Ղարաբաղի սահմաններից դուրս ապրող հայ բնակյությունը)՝ հակամարտության գլխավոր գոնը, քացառվում է հակամարտության կերպարից:

1988թ. հուլիսի 15

Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը ընդունում է «Աղբբեջանական ԽՍՀ Լեոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Ժողովրդական պատգամավորների մարզային Խորհրդի 1988թ. փետրվարի 20-ի Արտահերթ նստաշրջանի «Աղբբեջանական ԽՍՀ և Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդների առջև Աղբբեջանական ԽՍՀ կազմից Հայաստանի կազմ Լեոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի փոխանցման միջնորդության մասին» որոշում: ՀԽՍՀ ԳԽ «տվեց իր համաձայնությունը Լեոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Հայկական ԽՍՀ կազմի մեջ մտնելու համար»:

Մեկնաբանություն. Որոշումը չի հակասում ԽՍՀՄ սահմանադրությանը, քանի որ այդ ակտով Հայկական ԽՍՀ-ն ընդամենը համա-

ձայնություն տվեց ԼՂԻՄ-ի վերամիավորմանը ՀԽՍՀ-ին: Որոշումը տեղ էր բողոնում հարցի քաղաքական լուծման որոնումների համար:

1988թ. հուլիսի 18

Լեոնային Ղարաբաղի հարցը քննարկվեց ԽՍՀՄ ԳԽ Նախագահության նիստում: Ընդունվեց որոշում, որտեղ նշվում է, որ ԽՍՀՄ ԳԽ-ի Նախագահությունը «ամհնար է համարում Աղբբ. ԽՍՀ և ՀԽՍՀ սահմանների և սահմանադրական հիմքի վրա հաստատված ազգային-տարածքային բաժանման փոփոխությունը: Ընդունելով այսպիսի որոշում, ԽՍՀՄ գերագույն խորհուրդը ելնում է ԽՍՀՄ Սահմանադրության (հոդված 78) դրույթից, համապատասխան որի միութենական հանրապետության տարածքը չի կարող փոփոխվել առանց իր համաձայնության»:

Մեկնաբանություն. Կենտրոնի համար անընդունելի էր ոչ թե բուն սահմանների և հաստատված ազգային-տարածքային կարգի փոփոխությունը (որոշ առումներով այդ սահմանները միացյալ խորհրդային պետության սահմաններում հանդիսանում էին սոսկ վարչատարածքային սահմաններ), այլ այն փաստը, որ սահմանների այդպիսի փոփոխությանը այն պետք է գնար ժողովրդի կամբով: Դրանից առաջ Մոսկվան իր նախաձեռնությամբ տասնյակ անգամներ փոփոխել էր միութենական հանրապետությունների սահմանները՝ անտեսելով Սահմանադրությունը: Մասնավորապես, Աղբբ. ԽՍՀ օգտին քազմիցս փոփոխվել են ՀԽՍՀ սահմանները: Ընդ որում, Հայաստանի դեպքում հարցը լուծվում էր առանց որևէ արձանագրությունների և համաձայնությունների: Հիսք կարող էր ծառայել Մոսկվայում տպագրված փոփոխված սահմաններով քարտեզը (օրինակ, ինչպես Արժվաշենի դեպքում):

1988թ. հուլիսի 27

Մոսկվայի ներկայացուցիչ Ա.Վոլսկու նախաձեռնությամբ Ստեփանակերտ ժամանեցին Հայաստանի և Աղբբեջանի կոմկուսների ԿԿ-ի առաջին քարտուղարները: Այդ գործողությունը որևէ արդյունք չտվեց:

1988թ. սեպտեմբերի 21

ԼՂԻՄ-ում Մոսկվայի կողմից մտցվեց արտակարգ իրավիճակի ռեժիմ, շնայած մարզի հայ ազգաբնակչությունը և Ղարաբաղյան շարժման ղեկավարությունը խստորեն պահպանում էին իրենց կողմից հարցի քաղաքական, խաղաղ կարգավորման կուրսը:

1988թ. նոյեմբերի 22

Ետ են մղվում Կիրովաբադի (Գյանջա) հայկական քաղամասերի վրա աղբբեջանցիների ամբոխի հարձակումները:

1988թ. նոյեմբերի 23

Խորհրդային բանակի ստորաբաժանումներ են մտցվում Աղբբ. ԽՍՀ-ի, իր մեծությամբ երկրորդ քաղաքը՝ Կիրովաբադ (Գյանջա):

1989թ. հունվարի 12

12 ԽՍՀՄ Գ.Խ Նախագահությունը ընդունում է ԼՂԻՄ-ում կառավարման հատուկ ձևի հաստատման և Ա. Վոլսկու գլխավորությամբ Հատուկ կառավարման կոմիտեի (ՀԿԿ) կազմավորման մասին Հրամանագիր: Հրամանագրով կասեցվում էր ԼՂԻՄ-ի Ժողովրդական պատգամավորների խորհրդի և ԽՍԿԿ Լեոնային Ղարաբաղի մարզկոմի գործունեությունը:

Մեկնաբանություն. ԽՍՀՄ Սահմանադրական վերահսկողության կոմիտեն 1991թ. նոյեմբերի 28-ի իր որոշմամբ ճանաչեց Ժողովրդական պատգամավորների XX գումարման մարզային խորհրդի գործունեության դադարեցման մասով Հատուկ կառավարում մտցնելու մասին Հրամանագրի հակասահմանադրական բնույթը: Հատուկ կառավարում մտցնելու մասին Հրամանագիրը նշանակում էր ԼՂԻՄ-ի փաստացի դուրսբերում Աղբբեջանական ԽՍՀ անմիջական ենթակայությունից:

Կառավարման հատուկ ձևը մտցնելը համահունչ էր ԼՂԻՄ-ի Ժողովրդական պատգամավորների Խորհրդի ութերորդ նստաշրջանի՝ Աղբբեջանական ԽՍՀ կազմից մարզի դուրս գալու մասին որոշման հետ: Մարզը դրվեց Կենտրոնի անմիջական ենթակայության տակ և այդ կարգավիճակը ժամանակագրական առումով Լեոնային Ղա-

րաբաղի վերջին կարգավիճակն էր խորհրդային ժամանակաշրջանում:

1989թ. հունվարի 13

ԽՍՀՄ Մինիստրների խորհուրդը որոշում ընդունեց «Լեոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում Կառավարման հատուկ ձև մտցնելու հետ կապված միջոցառումների մասին»: Առաջին կետով ԽՍՀՄ ՄԽ-ը պարտավորեցրեց առանձին տողով (Աղբբ. ԽՍՀ-ից անջատ) ներկայացնել ԼՂՀ սոցիալ-տնտեսական զարգացման ցուցանիշները: Շուտով ԽՍՀՄ անմիջական ենթակայության տակ անցավ ԼՂԻՄ-ի ՆԳՎ, ԽՍՀՄ Վիճակագրության Պետկոմիտեի հրամանով կազմավորվեց Լեոնային Ղարաբաղի տարածքային խմբագրական արտադրական բաժանմունքը:

1989թ. մայիսի 6

Ընդունվեց ԽՍՀՄ ՄԽ-ի՝ ԼՂԻՄ-ի արդյունաբերական ձեռնարկությունների և կազմակերպությունների վերաներակայությունը (Աղբբ. ԽՍՀ ենթակայությունից դուրս գալը) քույլատրող Որոշումը:

1989թ. հուլիսի 13

Շուշիում աղբբեջանցիները ավերեցին ԽՍՀՄ կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյանի և նշանավոր պետական գործիչ Հովհաննես Թևոյաճյի՝ Խուշարձանները:

1989թ. հուլիսի 19

ԱՄՆ Սենատի Արտաքին գործերի հարցերով կոմիտեն որոշում ընդունեց «Խորհրդային Հայաստանի ժողովրդի ցանկության համաձայն Լեոնային Ղարաբաղի շուրջ վեճի խաղաղ կարգավորման հարցում ԱՄՆ աջակցության մասին»: Նրանում, մասնավորապես, ասվում է. «Կոչ անել Նախագահ Գորբաչովին Լեոնային Ղարաբաղի ներկայացուցիչների, ինչպես նաև ժողովրդավարական շարժման ներկայացուցիչների (ներառյալ ձերբակալությունից վերջերս ազատված «Ղարաբաղ» կոմիտեի անդամները) հետ քննարկել Հայաստանի հետ վերամիավորման պահանջը...

Խորհրդային Միության հետ երկկողմանի բանակցություններում կոչ անել, որպեսզի հայերի նկատմամբ իրականացրած բռնությունների դեպքերի հետաքննությունները իրականացվեն ամենաբարձր ստյաններում և որպեսզի բացահայտվեն և պատժվեն սպանությունների և արնահեղության համար պատասխանատուները»:

1989թ. հուլիսի 26

Ժողովրդական պատգամավորների Շահումյանի շրջանային (գյուղական) Խորհրդի արտահերթ նստաշրջանը որոշում ընդունեց **ԼՂԽՄ-ի** կազմի մեջ շրջանը ընդգրկելու միջնորդության մասին:

1989թ. օգոստոսի 7

Ժնևում ՄԱԿ-ի Մարդու իրավունքների ենթահանձնաժողովի նիստը առաջարկեց **ԽՍՀՄ** կառավարությանը **ԼՂԽՄ-ում** հանրաքվե անցկացնել «մարզի բնակչության մեծամասնության կամքը պարզելու նպատակով»:

1989թ. օգոստոսի 16

Ստեփանակերաում տեղի ունեցավ **ԼՂԽՄ-ի** լիազոր ներկայացուցիչների Առաջին համագումարը, որը «մարզում իրավիճակի կայունացման համար, մինչև **ԼՂԽՄ-ի** ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի և մարզային կուսակցական կոմիտեի ֆունկցիաները վերականգնելը, ընտրում է Ազգային Խորհուրդ և ժողովրդի անունից նրան շնորհում է մարզի կյանքի բոլոր ոլորտները կառավարելու իրավասություններով համագումարների միջև ընկած հատվածում»:
Համագումարը ընտրեց **ԼՂԽՄ-ի** Ազգային Խորհուրդ և որոշեց՝ որպես պետական իշխանության խորհրդանիշ ընդունել **ԽՍՀՄ** Պետական դրոշը:

1989թ. մայիս-սեպտեմբեր

Ադրբեջանական **ԽՍՀ** կողմից **ԼՂԽՄ-ի** և Հայաստանի շրջափակման սկիզբը:

1989թ. սեպտեմբերի 23

Բարվում ընդունվեց «Ինքնիշխանության մասին օրենքը», համաձայն որի **ԽՍՀՄ** օրենքները Ադրբ. **ԽՍՀ-ում** կարող են գործել միայն դրանք Ադրբ. **ԽՍՀ** ԳԽ-ի կողմից հաստատվելուց հետո: Օրենքը իրավունք «զննեռեց» Ադրբ. **ԽՍՀ** դուրս գալ **ԽՍՀՄ** կազմից և մտնել այլ պետությունների հետ միությունների մեջ:

Մեկնաբանություն. Հակասության մեջ չմտնելով միջազգային իրավունքի հետ. «Ինքնիշխանության մասին օրենք» կարող էին ընդունել բոլոր խորհրդային պետությունները՝ բացառությամբ Ադրբ. **ԽՍՀ**, քանի որ նրա սահմանների մեջ ներգրավված տարածքների մի մասի նկատմամբ գոյություն ունեին միջազգային պայմանագրեր և համաձայնագրեր, որոնք սահմանափակում էին Ադրբ. **ԽՍՀ** ինքնիշխանությունը, մասնավորապես. Նախիջևանում:

1989թ. հոկտեմբերի 10

Կրեմլը սադրանք կազմակերպեց Ստեփանակերտում: Սվերդլովսկի իրշեջ-տեխնիկական ուսումնարանի սաներով ավտոմեքենաների շարասյունը, հիմնական մայրուղին թողնելով, «անցավ» Ստեփանակերտով, կրակ բացելով տների և անցորդների վրա: Զաղաքի բնակիչներից վեցը վիրավորվեցին: Մեկ բնակիչ մահացավ հիվանդանոցում:

1989թ. նոյեմբերի 3

Ազգամիջյան բախումների էպիկենտրոն՝ **ԼՂԽՄ** են բերվում թուրք-մեսխեթցիներ՝ վերաբնակեցնելու նպատակով:

1989թ. նոյեմբեր 19

ԱՄՆ Սենատը Լեռնային Ղարաբաղի հարցով որոշում կայացրեց. «Հաշվի առնելով այն, – ասվում է Որոշման մեջ, – որ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում բնակվող 80% հայ մեծամասնությունը, մտահոգություն է արտահայտում՝ հաշվի առնելով, որ Խորհրդային կառավարությունը 1988թ. փետրվարի 28-29 Ադրբեջանի Սումգայիթ քաղաքում հայերի սպանությունը բնութագրեց որպես ջարդեր, հաշվի առնելով, որ Խոլսիրդային Միության ժողովուրդը և կառավարությունը դիմել

են դրական միջոցի՝ ստեղծել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Հատուկ կառավարման ժամանակավոր Կոմիտե, հաշվի առնելով, որ Կոմիտեն արդյունավետ չեղավ... Խորհրդային Միության հետ երկկողմ քննարկումների ժամանակ աջակցել Լեռնային Ղարաբաղի շուրջ ստեղծված հակամարտության արդարացի կարգավորմանը, որն իրապես կարտացոլեր այդ մարզի ժողովրդի հայացքները»:

1989թ. նոյեմբերի 21

Լեռնային Ղարաբաղի Ազգային Խորհուրդը շնորհակալական հեռագիր է հասցեագրում ԱՄՆ Սենատին Ղարաբաղյան շարժման արդար բնույթի ընկալման և Լեռնային Ղարաբաղի ժողովրդի արդար գործին աջակցության համար:

1989թ. նոյեմբերի 29

ԽՍՀՄ ԳԽ որոշում է ընդունում «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում իրավիճակի նորմալացման միջոցառումների մասին»:

Մեկնաբանություն. *Խնդրի քննարկման ընթացքում բոլորը հանդես էին գալիս հատուկ կառավարման կոմիտեի լիազորությունները ընդարձակելու օգտին: Սակայն երկրի ղեկավարությունը քվեարկության դրեց այն որոշումը, որը նախատեսում էր կառավարման հատուկ ձևի լուծարում: Որոշումը նախատեսում էր հավասարության սկզբունքով աղբյուրները հարաբարական Կազմկոմիտեի ստեղծում խորհրդային մարզային մարմինների գործունեությունը վերականգնելու համար: Սակայն մինչև ԽՍՀՄ փլուզումը դա չարվեց և Կենտրոնին ուղիղ ենթայությանը Հատուկ կառավարման ձևը հանդիսացավ Լեռնային Ղարաբաղի պետաիրավական վերջին կարգավիճակը խորհրդային պետաիրավական համակարգի համատեքստում: Որոշումն ընդունեց ՀԽՍՀ-ից և ԼՂԻՄ-ից ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների բացակայությանը, որոնք ի նշան բողոքի լքել էին ԽՍՀՄ ԳԽ-ի նիստը:*

1989թ. նոյեմբեր

Վերջին հայերը լքեցի Կիրովաբադը (Գյանջան):

1989թ. դեկտեմբերի 1

Ընդունվեց ՀԽՍՀ ԳԽ և ԼՂԻՄ-ի Ազգային Խորհրդի համատեղ որոշումը «ՀԽՍՀ և Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի վերամիավորման մասին»:

Մեկնաբանություն. *Համատեղ որոշումը միակողմանի ակտ չէր՝ ընդունված միայն ՀԽՍՀ կողմից: Այն, այդ պահին, արտահայտում էր մասն Հայաստանի հետ վերամիավորվել Լեռնային Ղարաբաղի ժողովրդի կամքը:*

1989թ. նոյեմբերի 4

Աղբյ. ԽՍՀ ԳԽ-ի Նախագահությունը ԽՍՀՄ ԳԽ հոկտեմբերի 28 Որոշման հիմնական (3, 4, 6, 7) կետերի գործողությունը դադերացնող որոշում է կայացնում:

1989թ. դեկտեմբերի 20

Աղբյեջանցիները հրդեհեցին ճարտարապետական մարզարիա՝ Ղազանչեցոց եկեղեցին Շուշի քաղաքում:

1990թ. հունվարի 12

ԽՍՀՄ ԳԽ Նախագահությունը որոշում է ընդունում «Աղբյ. ԽՍՀ 1989թ. դեկտեմբերի 4-ի որոշման հակասահմանադրականության մասին»:

1990թ. հունվարի 12

Բաքվի հեռուստատեսությանը հանդես եկավ Աղբյեջանի ԿԿ-ի առաջին քարտուղար Վեգիբովը կոչ անելով դիմել կարուկ գործողությունների ընդդեմ հայ ազգաբնակչության: Հենց այս ելույթի ժամանակ էլ հնչեցվեց «Կենտրոնը մեր ձեռքերում է» արտահայտությունը:

1990թ. հունվար 13-15

Տեղի ունեցան հայերի ջարդերը Բաքվում:

Մեկնաբանություն. *Ջարդերի ժամանակ խորհրդային զորքերը դուրս չեկան գորանոցներից և չլքեցին Բինա օդակայանը, որտեղ նրանք արագ տեղափոխվել էին նախապես: Բաքվի և հայերի խիստ բնակեցման այլ վայրերի ջարդերից հետո Կրեմլի հռետորությունից բացառվեց «հակամարտություն Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջ» արտահայտությունը: Դրա տեղը զբաղեցնում է «հակամարտություն Հայկական ԽՍՀ և Աղբյեջանական ԽՍՀ միջև» արտահայտությունը: Հենց Արյունոտ հունվարի Բաքվի իրադարձություն-*

ները պարզեցին Կրեմլի նախնական տրամադրվածությունը փոխակերպելու Լեոնային Ղարաբաղի և Ադրբեջանի միջև հակամարտությունը՝ ՀԽՍՀ և Ադրբ. ԽՍՀ միջև հակամարտության:

1990թ. հունվարի 15

Բաքվի ջարդերի օրերին Լեոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում և հարակից որոշ շրջաններում հայտարարվում է արտակարգ իրավիճակ (ընդ որում, Բաքվում արտակարգ իրավիճակ չի մտցվում): Արգելվում են ցույցերն ու հավաքները: Արտակարգ իրավիճակի մասին հրամանագիրը նախատեսում է քաղաքացիներից, իսկ անհրաժեշտության դեպքում նաև ձեռնարկություններից և կազմակերպություններից հրազենի և սառը զենքի բռնագրավում: Ձեռքի բռնագրավումը ազգաբնակչությունից իրականացվում էր ընտրողաբար և կրում էր միակողմանի բնույթ: Ձիմաթափվեց հայ ազգաբնակչությունը:

1990թ. հունվարի 15

ՀԽՍՀ ԳԱ Նախագահությունը դիմում է ողջ աշխարհի գիտնականներին՝ կոչ անելով ձայն քայծրացնել Ադրբ. ԽՍՀ հայ ազգաբնակչության բարբարոսական ոչնչացման դեմ: Դիմումին արձանգանքեցին ԱՄՆ, Ֆրանսիայի, Շվեդիայի, Ավստրիայի, Բելգիայի և այլ պետությունների գիտնականները:

1990թ. հունվարի 16

Ադրբեջանցիները Բաքվում այրեցին հայկական եկեղեցին: Ողջ հանրապետությունում դա միակ գործող հայկական եկեղեցին էր: Մնացած բոլորը խորհրդային տարիներին փակվեցին:

1990թ. հունվարի 20

Բաքվի հայերի համընդհանուր էթնիկ զտումներից հետո Բաքու մտան խորհրդային զորքերը:

1990թ. փետրվարի 12

ՀԽՍՀ ԳԽ որոշում ընդունեց «1921թ. հուլիսի 5-ի ՌԿԿ(բ) ԿԿ Կովկասյան բյուրոյի որոշումը անօրինական ճանաչելու մասին»:

1990թ. ապրիլի 3

Ընդունվեց ԽՍՀՄ օրենքը «ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության ելքի հետ կապված հարցերի լուծման կարգի մասին»:

Մեկնաբանություն. Օրենքը ինքնավար մարզերին և միութենական հանրապետությունների կոմսակտ բնակվող ժողովուրդներին ԽՍՀՄ-ից միութենական հանրապետության դուրս գալու դեպքում իրավունք էր տրամադրում ինքնուրույն որոշելու իրենց պետաիրավական կարգավիճակի հարցերը:

1990թ մայիսի 20

ԼՂԻՄ-ի 12-ից՝ 11 ընտրական տեղամասերում անցկացվեցին ԼՂԻՄ-ից ՀԽՍՀ ԳԽ պատգամավորների ընտրություններ:

1990թ. սեպտեմբերի 10

ՀԽՍՀ ԳԽ կազմավորեց Արցախի հարցերով Հատուկ հանձնաժողով:

1990թ. աշուն

Կրեմլն ու Բաքուն նախապատրաստում են համատեղ լայնածավալ ռազմական օպերացիա Լեոնային Ղարաբաղի դեմ: Ադրբեջանական հանրապետական ՕՍՕՆ-ի թվաքանակը (Միլիցիայի Հատուկ նշանակության ջոկատներ) աճում է ավելի քան 5000 մարդով (այն չպետք է գերազանցի 300 թիվը): ԽՍՀՄ ՆԳ նախարարի հրամանով Ադրբեջանակում տեղակայված ԽՍՀՄ ՆԳՆ զորքերը դրվեցին Ադրբ. ԽՍՀ ղեկավարության ենթակայության ներքո:

1990թ. դեկտեմբերի 24-24

Ադրբ. ԽՍՀ-ում տեղակայված խորհրդային զորքերի ստորաբաժանումները ավերեցին Մարտակերտի շրջանի Քաջավան գյուղը:

1991թ. ապրիլի 30

Սկսվեց «Օղակ» («Кольцо») օպերացիան: Խորհրդային բանակի ստորաբաժանումները և ադրբեջանական ՕՍՕՆԸ սկսեցին Մարտունաշենի, Գետաշենի (Խան-

լարի շրջան), Բերդաձորի և ԼՂՄ-ի Հաղործի շրջանի բնակավայրերի մեծ մասի բռնի տեղահանումը:
Մեկնաբանություն. «Օղակ» օպերացիայի սկզբին Աղբբ. ԽՍՀ տեղակայված խորհրդային 4-րդ բանակի գործասերը Մոսկվան տվեց Աղբբ. ԽՍՀ ղեկավարության ենթակայության տակ: «Օղակ» օպերացիայում Շահումյանի շրջանի ուղղությամբ մասնակցում էր 4-րդ բանակի 23-րդ դիվիզիան:

1991թ. հուլիսի 16

Մեծ Բրիտանիայի Լորդերի Պալատի փոխխոսնակ բարոնուհի Քերոլայն Քոքսն առաջին անգամ այցելեց Լեոնային Ղարաբաղ: Բացահայտելով իր համար Ղարաբաղի մասին ճշմարտությունը, նա դարձավ Լեոնային Ղարաբաղի ժողովրդի իրավունքների պաշտպանը միջազգային ասպարեզում: Բարոնուհին պաշտոնական զեկույց պատրաստեց հակամարտության հարցով, որով 1997թ. հուլիսի 1-ին հանդես եկավ Մեծ Բրիտանիայի Լորդերի Պալատի պառլամենտական քննարկումներում: Չեկույցի տեքստը հիմք դարձավ հատուկ հետազոտության համար (համահեղինակությամբ՝ պատմաբան և քաղաքագետ, Միջազգային քրիստոնեական համագործակցություն իրավապաշտպան կազմակերպության նախագահի օգնական Ջոն Այնթերգի), որի արդյունքները հրատարակվեցին «Էթնիկ գտումները շարունակվում են. պատերազմը Լեոնային Ղարաբաղում» (ռուսերեն թարգմանությունը լույս է տեսել 1998թ. Երևանում) գրքում: Քերոլայն Քոքսը տասնյակ անգամներ այցելել է Լեոնային Ղարաբաղ, Ստեփանակերտի բնակիչների հետ միասին հրետակոծություններից թաքնվել է նկուղներում և թաքստոցներում, եղել է Լեոնային Ղարաբաղի բնակչությանը մարդասիրական օգնություն տրամադրելու գլխավոր կազմակերպիչներից:

1991թ. օգոստոսի 18

Մոսկվայում պետական հեղաշրջման փորձ կատարվեց: ԱԻՊԿ-ի պուտչը:

1991թ. օգոստոսի 30

Աղբբեջանն ընդունեց «Պետական անկախության վերականգնման մասին» հռչակագիրը:

Մեկնաբանություն. Հռչակագիրը հռչակեց ոչ մեկի կողմից դե-յուրե յճանաչված՝ 1918-1920թթ. մուսավաթական Աղբբեջանական Դեմոկրատական Հանրապետության պետականության վերականգնումը:

1991թ. սեպտեմբերի 2

ԼՂՄ-ի Ժողովրդական պատգամավորների Խորհրդի և Շահումյանի (գյուղական) շրջանի ժողովրդական պատգամավորների Խորհրդի ու բոլոր մակարդակների խորհուրդների ժողովրդական պատգամավորների համատեղ նիստն ընդունեց «Լեոնային Ղարաբաղի Հանրապետության (ԼՂՀ) հռչակման մասին» հռչակագիրը:

Մեկնաբանություն. Հռչակագիրը որպես իրավական հիմք նշում էր ԽՍՀՄ 1990թ. ապրիլի 3-ի «ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության ելքի հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» օրենքը, որը ինքնավար մարզերի և կոմպակտ բնակվող ազգային խմբերի համար ԽՍՀՄ փլուզման դեպքում ամրագրեց իրենց պետաիրավական կարգավիճակի հարցը ինքնուրույն լուծելու իրավունքը:

1991թ. սեպտեմբերի 21

Հայաստանում անցկացվեց անկախության հանրաքվե: **Մեկնաբանություն.** Հանրաքվեն անցկացվեց Նախկին ՀԽՍՀ սահմաններում: Մույնով կարելի է արձանագրել, որ Հայաստանի քաղաքական ղեկավարությունը ետ կանգնեց Լեոնային Ղարաբաղի և Հայաստանի 1989թ. ղեկտեմբերի 1-ի համատեղ որոշման դրույթների իրականացումից:

1991թ. սեպտեմբերի 20-23

Ռուսաստանը և Ղազախստանը միջնորդական առաքելություններ են իրականացնում: Բ. Ելցինը և Ն. Նազարբաևը ժամանում են Ստեփանակերտ, Բաքու և Երևան:

1991թ. սեպտեմբերի 23

Ընդունվում է Ժելեզնիպոլսկի կոմյունիկեն («Համատեղ կոմյունիկե Ռուսաստանյան Դաշնության Նախագահ Բ.Ելցինի և Ղազախստանի Նախագահ Ն.Նազարբաևի միջնորդական առաքելության արդյունքների մասին »):

1991թ. սեպտեմբերի 25

Ստեփանակերտն առաջին անգամ ենթարկվում է հրետանային զնդակոծության ադրբեջանական ռազմական միավորումների համար հենակետերի վերածված ադրբեջանական մոտակա գյուղերից: Ստեփանակերտի զնդակոծումները կանոնավոր բնույթ էին կրում և ծայրաստիճան իմտենսիվ էին մինչև Շուշիի ազատագրումը մայիսին:

1991թ. հոկտեմբերի 16

Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցան նախագահական ընտրություններ: Հայաստանի Հանրապետության առաջին նախագահ ընտրվեց Լևոն Տեր-Պետրոսյանը: Ընտրությունները անց էին կացվում նախկին ՀԽՍՀ սահմաններում:

1991թ. հոկտեմբերի 18

Ընդունվեց «Ադրբեջանական Հանրապետության պետական անկախության մասին» Սահմանադրական ակտը:

Մեկնաբանություն. Դիտարկելով Ադրբեջանի խորհրդայնացումը (1920թ. ապրիլ) որպես բռնակցում Խորհրդային Ռուսաստանի կողմից, Սահմանադրական ակտը հաստատեց Ադրբեջանական Հանրապետության հրաժարումը Ադրբեջանական ԽՍՀ իրավահաջորդությունից: Նմանօրինակ հրաժարումը նախատեսում էր այն սահմանների նշումը, որոնց նկատմամբ հավակնություն ունի Ադրբեջանական Հանրապետությունը, քանի որ մուսաֆաթական Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետությունը չունի ճանաչված սահմաններ: Մակայն Սահմանադրական ակտը սահմանափակվեց միայն իրավաբանական իմաստից զուրկ ձևակերպմամբ, նշելով, որ Բաքուն հավակնում է «պատմականորեն ձևավորված սահմաններին»:

րին»: Ներկայիս ադրբեջանական Հանրապետությունը չի հայտարարել իր լեգիտիմ սահմանները (այդպիսիք այն չունի առ այսօր): Ըստ էության, այդ սահմանները վերագրվում են նրան որսից՝ «միջազգային հանրության կողմից»: Ադրբեջանական ԽՍՀ իրավահաջորդությունից հրաժարվելը նշանակում էր, որ Բաքուն կորցնում է իր բոլոր իրավաբանական հարաբերությունները այն տարածքների հետ, որոնք 1921 թվականին առ այսօր գործող պայմանագրերի և համաձայնագրերի հիման վրա ու տարբեր պայմաններով ընդգրկվել էին Ադրբեջանական ԽՍՀ սահմաններում: Դա նշանակում էր, որ ԼՂՀ հռչակվել էր Ադրբեջանական Հանրապետությանը չպատկանող տարածքներում:

1991թ. նոյեմբերի 23

Բարձրում հրապարակվեց ԼՂԽՄ-ը լուծարելու մասին օրենքը:

Մեկնաբանություն. Խորհրդային պետական իրավունքի համատեքստում ԼՂԽՄ-ի կարգավիճակի մասին հարցը ոչ մի անգամ չի դիտարկվել որպես Ադրբեջանական ԽՍՀ ներքին հարց: ԼՂԽՄ-ի հարցը առավել ևս չէր կարող լինել Ադրբեջանական ԽՍՀ իրավահաջորդությունից հրաժարված և Լեռնային Ղարաբաղում, ինչպես նաև Նախիջևանում պայմանագրերով և համաձայնագրերով կանխապայմանավորված իր բոլոր իրավունքները կորցրած Ադրբեջանական Հանրապետության ներքին գործը: Առավել ևս, որ ԼՂԽՄ-ը, որպես այդպիսին, արդեն գոյություն չունի: Նրա փոխարեն և նրա հիմքի վրա արդեն հռչակվել էր ԼՂՀ-ն:

1991թ. նոյեմբերի 27

ԽՍՀՄ Պետխորհուրդը որոշում է ընդունում Ադրբեջանական Հանրապետության 23-ը նոյեմբերի Հրամանագրի հակասահմանադրական բնույթի մասին:

1991թ. դեկտեմբերի 10

Անկախ դիտորդների ներկայությամբ տեղի ունեցավ ԼՂՀ անկախության հանրաքվեն:

1991թ. դեկտեմբերի 8-11

Բելովեժսկայա Պուշչայում (թափուսում) երեք միութենական հանրապետությունները՝ Ռուսաստանը, Ուկրաինան և Բելուռուսիան պետությունների նոր համա-

գործակցության՝ ԱՊՀ (Անկախ Պետությունների Համագործակցություն) հիմքերը դրեցին:

1991թ. դեկտեմբերի 12

ՌԴ պառլամենտը որոշում է կայացնում ուժը կորցրած ճանաչել ԽՍՀՄ կազմավորման մասին 1922թ. դեկտեմբերի 21-ի պայմանագիրը:

1991թ. դեկտեմբերի 15

Ադրբեջանում տեղի ունեցավ անկախության մասին հանրաքվե:

1991թ. դեկտեմբերի 21

Ալմա-Աթայում բոլոր նախկին խորհրդային հանրապետությունները՝ բացառությամբ սերժալթյան հանրապետությունների և Վրաստանի, հաստատեցին ԱՊՀ կազմավորումը:

1991թ. դեկտեմբերի 25

Մ.Գորբաչովը դադարեցրեց իր գործունեությունը ԽՍՀՄ նախագահի պաշտոնում:

1991թ. դեկտեմբերի 28

Տեղի ունեցան անկախ ԼՂՀ առաջին պառլամենտի ընտրությունները:

1991թ. դեկտեմբերի 30

ԱՊՀ պետությունների ղեկավարները բանակցային գործընթացը վերականգնելու կոչով դիմեցին Ադրբեջանին և Հայաստանին:

1992թ. հունվարի 6

Ընդունվեց ԼՂՀ պառլամենտի ԼՂՀ պետական անկախության մասին հռչակագիրը:

1992թ. հունվարի 16

Ստեփանակերտում տեղակայված 336-րդ մոտոմեխանիզացված զնդի սպայական կազմը հրաժարվում է ենթարկվել Ադրբեջանին ԼՂՀ-ի դեմ պատերազմում:

1992թ. հունվարի 25-26

Ադրբեջանական բանակի կանոնավոր ստորաբաժանումները պաշտպանության նախարար՝ Թ.Մեհդիևի ղեկավարությամբ գրոհում են Քարին Տակ գյուղը:

Մեկնաբանություն. Դա ԱՀ պետական անկախության հռչակումից հետո Քարվի առաջին խոշոր օպերացիան էր ԼՂՀ-ի դեմ: Երկու օրվա ընթացքում աշխարհագրականները գլխովին ջախջախեցին Շուշիից գրոհող ադրբեջանական ստորաբաժանումները: Դա երիտասարդ ԼՂՀ առաջին խոշոր ռազմական հաղթանակն էր:

1992թ. հունվարի 30

ԱՊՀ երկրները ընդունվեցին ԵԱՀԽ:

1992թ. հունվարի 31

ԵԱՀԽ-ի արտաքին գործերի նախարարների խորհրդի Պրագայի նիստը Հայաստանը և Ադրբեջանը ԵԱՀԽ ընդունելուց հետո, որոշեց այս կազմակերպության զեկուցող գործուղել դարաբաղյան հակամարտության տարածաշրջան:

1992թ. փետրվարի 10-11

Ազատագրվեց Մալիբեյլի գյուղը, որտեղից Ստեփանակերտը մշտապես ենթարկվում էր հրետանակոծման:

1992թ. փետրվարի 19

ԼՂՀ Գերագույն խորհուրդը դիմում է ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին և ՄԱԿ-ի ԱԽ անդամ մշտական-պետությունների ղեկավարներին՝ կոչ անելով միջոցներ ձեռնարկել ԼՂՀ-ի դեմ Ադրբեջանի ռազմական ագրեսիան կանխելու և հանրապետության խաղաղ բնակավայրերի հրետանահրթիռային գնդակոծությունները դադարեցնելու համար:

1992թ. փետրվարի 23

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն խորհրդի նախագահությունը որոշում ընդունեց «ԼՂՀ զինված միավարումների իրավական կարգավիճակի մասին»: Անջատ ջոկատները միավորվեցին ԼՂՀ միացյալ Ինքնապաշտպանության բանակի մեջ: Ինքնապաշտպանության բանակի շտաբի ղեկավար նշանակվեց Արկադի Տեր-Թադևոսյանը:

25-26 փետրվարի

Ազատագրվեց ադրբեջանական բանակի հիմնական հենակետերից մեկը հանդիսացող Խոջալուն:

Մեկնաբանություն. *ԼՂՀ Ինքնապաշտպանության բանակը պատրաստվող օպերացիայի մասին նախապես տեղեկացրեց ադրբեջանական իշխանություններին և միջանցք թույլեց խաղաղ բնակչության էվակուացման համար: Մակայն, միջանցքի վերջում, արդեն Ադրբեջանի ժողովրդական ճակատի կողմից վերահսկվող տարածքի վրա. Խոջալուն լքած խաղաղ բնակիչներին դիմավորեցին կրակի տարափով: Առ այսօր Բաքվի քարոզչությունը խաղաղ բնակիչների ոչնչացման համար մեղադրում է դարաբաղցիներին: Բայց ուղբերգությունից որոշ ժամանակ անց Ադրբեջանի նախագահ Մութալիբովը մամուլում պատահածի համար մեղադրեց Ադրբեջանի ժողովրդական ճակատին (ԱԺԾ), որը կազմակերպել էր այդ կոտորածը. որպեսզի պաշտոնաձև աներ նախագահին և գար իշխանության: Բոլոր հաջորդած իրադարձությունները և անկախ վկաները հաստատեցին սույն փաստը:*

1992թ. փետրվարի 28

ԵԱՀԽ-ի Ավագ պաշտոնատար անձանց կոմիտեի (ԱՊԱԿ) յոթերորդ նիստը խնդրում է Ռուսաստանին և Ղազախստանին շարունակել միջնորդական ջանքերը և կոչ է անում Բաքվին դադարեցնել Լեռնային Ղարաբաղի շրջափակումը:

1992թ. մարտի 13

ԵԱՀԽ-ի ԱՊԱԿ-ի ութերորդ նիստը որոշում է ընդունում Լեռնային Ղարաբաղի հարցով զումարել ԵԱՀԽ-ի Խորհրդի արտակարգ նիստ:

1992թ. մարտի 16

Իրանի միջնորդության շրջանակներում ընդունվում է հակամարտության գոտում մեկ շաբաթով կրակի դադարեցման եռակողմ կոմյունիկե (Ադրբեջան, Հայաստան, Իրան):

1992թ. մարտի 20

Խաղաղար առաքելությամբ Ստեփանակերտ ժամանեցին ԱՄՆ պետքարտուղար Մայրուս Վենսը և ԵԱՀԽ-ի փագոր պատասխանատու Յանոշ Կուրիչը (Հունգարիա): Մեյրուս Վենսի առաքելությունը նախաձեռնվել էր ՄԱԿ-ի ԱԽ-ի որոշմամբ:

1992թ. մարտի 21

Դեպի ԼՂՀ մարդասիրական միջանցք բացելու նպատակով Ստեփանակերտ ժամանեց Ֆրանսիայի սոցիալական և մարդասիրական օգնության հարցերով նախարար Բեռնար Կուշները:

1992թ. մարտի 24

Հելսինկիում ԵԱՀԽ-ի խորհրդակցությունը որոշում կայացրեց Լեռնային Ղարաբաղի հարցով կոնֆերանս զումարել Մինսկում: ԵԱՀԽ-ը հիմնում է Մինսկի խմբի համանախագահների ինստիտուտը:

Մեկնաբանություն. *Ղարաբաղյան հակամարտության հիմնական գոեը՝ նախկին Ադրբ. ԽՍՀ հայ ժողովուրդը. հայ դիվանագիտության անփորձության պատճառով դուրս է մնում բանակցային գործընթացից: ԵԱՀԽ-ի այդ փաստաթղթի նկատմամբ հայ դիվանագիտության ոչ բննադատական վերաբերմունքը կանխադրեց Մինսկի գործընթացի ընթացքը և հատկապես խնդրի իրավական հիմքերի անտեսումն ու հարցի քաղաքականացումը:*

1992թ. մարտի 26

ՄԱԿ-ի ԱԽ սահմանեց դարաբաղյան հակամարտության կարգավորման մեջ իր մասնակցության ձևը: Դա աջակցությունն է ԵԱՀԽ-ի խաղաղարար ջանքերին: ՄԱԿ-ը, այսպիսով, ձեռնպահ է մնում կարգավորման գործընթացում անմիջական մասնակցությունից:

1992թ. մարտի 26

ԼՂՀ Նախարարների խորհուրդը որոշում է կայացնում Ինքնապաշտպանության կոմիտե ստեղծելու մասին: ԼՂՀ ՆԽ առընթեր Ինքնապաշտպանության կոմիտեի նախագահ է նշանակվում Սերժ Սարգսյանը:

1992թ. ապրիլի 1

Ստեփանակերտում տեղի են ունենում բանակցություններ ԵԱՀԽ-ի գործող նախագահ, Չեխոսլովակիայի արտաքին գործերի նախարար Ի. Դինսբրիլի բանակցությունները ԼՂՀ ղեկավարության հետ:

1992թ. ապրիլի 1

Խաղաղարար առաքելությանը Ստեփանակերտ ժամանեց Իրանի արտաքին գործերի նախագահ Մ. Վանզին:

1992թ. ապրիլի 3

ԼՂՀ ԳԽ որոշմամբ ստեղծվում է ԼՂՀ Պաշտպանության խորհուրդը ԳԽ նախագահ Արթուր Սկրտչյանի ղլխավորությամբ:

1992թ. ապրիլի 7

Մարիո Ռաֆայելին (Իտալիա) նշանակվում է Լեռնային Ղարաբաղի հարցով ԵԱՀԽ-ի Մինսկի կոնֆերանսի նախագահ:

1992թ. ապրիլի 10

Ադրբեջանական բանակը գրավեց Մարտակերտի շրջանի Մարաղա գյուղը և գյուղի բնակչության կոտորած իրականացրեց:

1992թ. ապրիլի 13

Ստեփանակերտ է այցելում Ռուսաստանյան Դաշնության արտաքին գործերի նախարար Ա. Կոզիրևը:

1992թ. ապրիլի 20

Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանում բացվում է ԼՂՀ ներկայացուցչությունը:

1992թ. ապրիլի 30

Հայաստանը դադարեցրեց Նախիջևանին էլեկտրաէներգիայի մատակարարումը: Մայիսի 2-ին էլեկտրաէներգիայի մատակարարումը վերականգնվեց:

Մեկնաբանություն. Լեռնային Ղարաբաղը 1991թ. հունվարի 1-ից գտնվում էր համընդհանուր շրջափակման մեջ, սակայն ողջ այդ ժամանակ Հայաստանը էլեկտրաէներգիա էր մատակարարում Նախիջևանին:

1992թ. մայիսի 1

ԱՊԱԿ 10-րդ նիստը որոշում ընդունեց Մինսկի կոնֆերանսի գործառույթների կանոնների և կրակի դադարեցմանը հետևելու առաքելության հիմնադրման վերաբերյալ:

1992թ. մայիսի 5

Ռուսաստանը հայտարարեց դարաբաղյան կարգավորման հարցով ՌԴ միջնորդական առաքելության ստեղծման և բանակցային գործընթացը ՌԴ հովանու տակ վերցնելու պատրաստակամության մասին:

1992թ. մայիսի 8-9

ԼՂՀ Ինքնապաշտպանության բանակը հակահարձակման ընթացքում ազատագրում է Լեռնային Ղարաբաղի պատմական մայրաքաղաքը՝ Շուշին:

1992թ. մայիսի 18

Ազատագրվեց Լաչինը և բացվեց լաչինյան մարդասիրական միջանցքը:

Մեկնաբանություն. Համաձայն ՌԿԿ(Բ) Կոլլեյտրոյի 1921թ. հուլիսի 5-ի որոշման, ողջ Լեռնային Ղարաբաղը, ներառյալ Լաչինը, Քելբաջարը, Շահումյանը, Խանլարը և այլն, պետք է մտնեին ԼՂԻՄ-ի կազմի մեջ:

1992թ. մայիսի 18-19

ԱՊԱԿ-ի 11-րդ նիստը որոշում ընդունեց Լեռնային Ղարաբաղի հարցով Մինսկի կոնֆերանսի մասնակից պետությունների արտակարգ նախապատրաստական հանդիպում անցկացնելու մասին:

1992թ. հունիսի 1

Ղարաբաղցիները հրաժարվում են մասնակցել ԵԱՀԽ-ի Հռոմում տեղի ունեցած խորհրդակցությանը, որտեղ նրանք հրավիրված էին «Ղարաբաղի հայկական համայնքի» կարգավիճակով:

1992թ. հունիսի 2-4

ԼՂՀ ԳԽ նստաշրջանը հաստատում է ԼՂՀ պետական դրոշը և նշանակում է Գեորգի Պետրոսյանին ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար:

1992թ. հունիսի 1-6

Տեղի ունեցավ Լեռնային Ղարաբաղի հարցով մասնակից-պետությունների նախապատրաստական արտակարգ հանդիպումը Հռոմում (ապագա «Մինսկի խումբ»):

1992թ. հունիսի 12

Լայնածավալ հարձակման արդյունքում ադրբեջանական բանակին հաջողվում է զավթել Շահումյանի շրջանը, ԼՂՀ Մարտակերտի և Ասկերանի շրջանների մի մասը:

1992թ. հունիսի 12-18

Ռեզոլուցիայի արդյունքում ադրբեջանական բանակը անցավ հարձակման: Ադրբեջանում տեղակայված 4-րդ բանակի (արդեն ոչ խորհրդային, այլ Ռուսաստանյան Դաշնության ենթակայության տակ անցած) 23-րդ մոտոհրաձգային դիվիզիան անմիջականորեն մասնակցում է ադրբեջանական հարձակմանը: Լեռնային Ղարաբաղի կենտրոնական շրջաններից 40 հազար փախստականներ շարժվում են դեպի Ստեփանակերտ և Երևան:

1992թ. հուլիսի 5

ԼՂՀ ներկայացուցիչները քննարկում են ԵԱՀԽ-ի խորհրդակցությունը ի նշան բողոքի այն բանի համար, որ ԵԱՀԽ-ը չդատապարտեց ադրբեջանական ագրեսիան և չստիճանեց բանակցային գործընթացում ԼՂՀ կարգավիճակը:

1992թ. հուլիսի 8

ՀՀ ԳԽ լարված քննարկումների արդյունքում որոշում ընդունեց. «Անընդունելի համարել ցանկացած միջազգային... փաստաթուղթ, որում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը կնշվի Ադրբեջանի կազմում»:

1992թ. հուլիսի 26

ՌԴ հատուկ հանձնարարություններով դեսպան Վ.Կազիմիրովը Ստեփանակերտում ԼՂՀ ղեկավարությանը ներկայացրեց «Ռեզոլուցիայի գործողությունների դադարեցման միջոցառումների մոտավոր ժամնակացույցը»:

1992թ. հուլիսի 31

ԵԱՀԽ-ի խորհրդակցությանը մասնակելու համար Հռոմ ժամանեց ԼՂՀ պատվիրակությունը «Լեռնային Ղարաբաղի ընտանիքի ներկայացուցիչների» կարգավի-

ճակով Մինսկի խմբի հանդիպման IV ռաունդին մասնակցելու համար:

1992թ. օգոստոսի 11

ԱՄՆ ներկայացուցիչների Պալատը ընդունեց 907 Որոշումը («Ազատությանն աջակցության ակտ»), որը դատապարտում էր Ադրբեջանի ագրեսիան Լեռնային Ղարաբաղում և արգելում էր ԱՄՆ-ի վարչակազմին օգնություն ցուցաբերել Ադրբեջանին:

1992թ. օգոստոսի 13

ԼՂՀ ԳԽ-ը հայտարարեց 18-45 տարեկան տղամարդկանց համընդհանուր զորահավաք և հռչակեց ռազմական իրավիճակ հանրապետության ողջ տարածքում:

1992թ. օգոստոսի 15

ԼՂՀ ԳԽ կազմավորեց ԼՂՀ Պաշտպանության պետական կոմիտե (ՊՊԿ): ՊՊԿ մախազահ նշանակվեց Ռ.Քոչարյանը:

1992թ. օգոստոսի 24-26

ԵԱՀԽ-ի Մինսկի կոնֆերանսի նախագահ Մ. Ռաֆայելյանը այցելու է Բաքու, Երևան և Ստեփանակերտ:

1992թ. սեպտեմբերի 7

Բաքու է ժամանում Մեծ Բրիտանիայի նախկին վարսետ Մարգարեթ Թեթչերը որպես «Բրիթիշ փեթրոլեում» ընկերության ներկայացուցիչ: «Նավթային դիվանագիտության սկիզբը»:

1992թ. սեպտեմբերի 15

Ռուսաստանի սեպարատ նախաձեռնությունների համատեքստում Մոսկվայում տեղի ունեցավ Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչների զադումի հանդիպումը:

1992թ. սեպտեմբերի 19

Մոչխում, «Կովկաս» պահակային մավակի վրա, Ռուսաստանի պաշտպանության նախարար Պավել Գրաչովի նախաձեռնությամբ անդրկովկասյան հանրապետությունների պաշտպանության նախարարները հա-

մածայնագիր ստորագրեցին, որը, մասնավորապես, նախատեսում էր կրակի դադարեցում Լեռնային Ղարաբաղում:

1992թ. սեպտեմբերի 25

Մոսկվայում ստորագրվեց արձանագրություն Մոչիի համամայնագրի կատարման մեխանիզմի ռազմատեխնիկական արձանագրությունը:

1992թ. նոյեմբերի 17

Հաստատվեց ԼՂՀ զինանշանն ու օրհներգը:

1992թ. դեկտեմբերի 6

Ադրբեջանական բանակը լայնածավալ հարձակում սկսեց Ասկերանի ուղղությամբ:

1992թ. դեկտեմբերի 4-15

Ամերիկայի Հայկական ազգային կոմիտեի հրավերով ԱՄՆ-ում գտնվող ԼՂՀ Ազգային Ժողովի նախագահի պարտականությունները կատարող Գ. Պետրոսյանին ընդունեցին ԱՄՆ Պետդեպարտամենտի և Սենատի ներկայացուցիչները:

1992թ. դեկտեմբերի 11-14

Մինսկի խմբի նիստի ժամանակ ադրբեջանական կողմը Թուրքիայի աջակցությամբ խափանեց 1993թ. հունվարի 10-ից ռազմական գործողությունների դադարեցման մասին և ԵԱՀԽ-ի 1993թ. մարտի 9-ին Մինսկի կոնֆերանսի բացման մասին որոշման ընդունումը:

1993թ. հունվարի 5-8

Եռակողմ նախաձեռնությամբ հանդես են գալիս Ռուսաստանը, ԱՄՆ-ը և Թուրքիան: Առաջարկվում է հարցի քննարկման նոր ձևաչափ՝ «5+1 ձևաչափ՝ Ռուսաստան, ԱՄՆ, Թուրքիա, Հայաստան և Ադրբեջան գումարած Լեռնային Ղարաբաղ»: ԼՂՀ-ն մերժում է անթաքույց հօգուտ Ադրբեջանական Հանրապետության հանդես եկող Թուրքիայի միջնորդությունը:

1993թ. հունվարի 21

Եվրախորհուրդը որոշում է ընդունում, որտեղ ընդգծվում է «Ադրբեջանից բռնի տեղահանված» ավելի

քան 300 հազար հայերի ողբերգական վիճակը, աջակցություն են գտնում ԵԱՀԽ-ի ջանքերը, դատապարտվում է Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի «Ադրբեջանի կողմից դաժան շրջափակումը», որը «հանդիսանում է միջազգային իրավունքի խախտում» և դիրքորոշում է արտահայտվում այն մասին, որ «Ադրբեջանի կողմից լիակատար շրջափակումը և դրա արդյունքում առաջացած տնտեսական ճգնաժամը նպատակ ունեն Հայաստանին ներքաշելու զինված հակամարտության մեջ»:

1993թ. հունվարի 26 ✓

ԼՂՀ-ն միացավ 1949թ. ԺՆԿի Կոնվենցիաներին և դրանց 1977թ. Լրացուցիչ արձանագրություններին:

1993թ. հունվարի 28 ✓

Եվրախորհուրդը որոշում ընդունեց, որը Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի շրջափակումը որակում էր որպես մարդու իրավունքների կոպիտ խախտում:

1993թ. փետրվարի 22 - մարտի 1

Հոռմում Մինսկի խմբի նիստը հավանություն է տալիս Դիտորդների առաջավոր խմբի մանդատի նախագծին: Ռուսաստանը առաջարկում է ստեղծել Մինսկի խմբի Համատեղ Համակարգող Հանձնաժողով (ՀՀՀ):

1993թ. մարտի 1

ԺՆԿում «5+1» ձևաչափով քննարկվում է կարգավորման մոսկովյան օրացույցը:

1993թ. մարտի 31 - ապրիլի 6

ԺՆԿում Ադրբեջանը խափանում է «5+1» ձևաչափի բանակցությունները՝ միակողմանիորեն հրաժարվելով դրանցում հետագա մասնակցությունից:

1993թ. ապրիլի 8

Ռուսաստանյան Դաշնության նախագահը նոր նախաձեռնությամբ է հանդես գալիս հակամարտության կարգավորման ուղղությամբ՝ այն շարադրելով Հայաստանի և Ադրբեջանի նախագահներին հասցեագրված ուղերձներում:

1993թ. մարտի 9-16

Ռուսաստանի նախաձեռնությամբ Մուսկվայում տեղի ունեցան Լեռնային Ղարաբաղի, Ադրբեջանի և Հայաստանի ներկայացուցիչների գաղտնի հանդիպումներ:

1993թ. ապրիլի 21

Թուրքիայի նախագահ Օզալի հուղարկավորության ժամանակ տեղի ունեցավ Հայաստանի Նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի հանդիպումը Ադրբեջանի Նախագահ Ա.Էյչիբեյի հետ: Պայմանավորվածություն է ձեռք բերվում կարգավորման «փաթաթային սկզբունքի» վերաբերյալ:

1993թ. ապրիլի 29-30

Մուսկվայում, Ռուսաստանի նախագահի նախաձեռնությամբ ՌԴ-ի, ԱՄՆ-ի և Թուրքիայի կողմից մշակվեց 60 օրով ռազմական գործողությունների դադարեցման մասին «Անհետաձգելի միջոցառումների ժամանակացույցը»:

1993թ. ապրիլի 30

Ընդունվեց ՄԱԿ-ի ԱԽ-ի 822 Որոշումը, որտեղ, չնայած նշվում է, որ Քելբաջարը գրավել է «տեղական հայկական ուժերի կողմից», այնուհանդերձ պահանջվում է անհապաղ դուրս բերել ԼՂՀ զորքերը Քելբաջարից:

Սեկնաբանություն. *Ըստ էության ՄԱԿ-ի ԱԽ-ը ի չիք դարձրեց Հայաստանի և Ադրբեջանի նախագահների միջև ձեռք բերված համաձայնությունը խնդրի փաթեթային լուծման կապակցությամբ և Բաքվին տրամադրեց նոր ռազմական գործողությունների:*

1993թ. մայիսի 7-9

Հերթական անգամ Ստեփանակերտ այցելեց ռուսական միջնորդական առաքելությունը:

1993թ. մայիսի 4-15

Ադրբեջանական բանակի գնդապետ Սուրեթ Հուսեյնովի ապստամբությունը Գյանջայում ավարտվեց Ադրբեջանում պետական հեղաշրջմամբ: Ադրբեջանի Հան-

րապետության Միլի մեջլիսի նախագահ ընտրվեց Հ. Ալիևը:

✓ 1993թ. հունիսի 3-4

Ի կատարումն ՄԱԿ-ի ԱԽ-ի 822 Որոշման՝ Հոռմում տեղի ունեցավ Միմսկի խմբի «իմնյակի» հանդիպում (Գերմանիա, ԱՄՆ, Բուլղարիա, Ֆրանսիա, Ռուսաստան, Իտալիա, Շվեդիա, Չեխոսլովակիա, Թուրքիա): Ի կատարումն ՄԱԿ-ի ԱԽ-ի 822 Որոշման՝ ընդունվեց «Անհետաձգելի միջոցառումների ժամանակացանկը»:

1993թ. հունիսի 11

ԼՂՀ-ն պատասխան է տալիս ԵԱՀԽ-ի նախաձեռնությանը, որում արտահայտվում է ԼՂՀ ժողովրդի «հերթական անգամ խաբվելու» մտավախությունը և, ներքին քաղաքական ճգնաժամը վկայակոչելով, առաջարկվում է հետաձգել «Ժամանակացանկի» կատարումը:

1993թ. հունիսի 14

Հայաստանի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը հանդես եկավ հայտարարությամբ՝ ԵԱՀԽ-ի նախաձեռնության կապակցությամբ ԼՂՀ բացասական պատասխանի առիթով:

1993թ. հունիսի 14

Ստեփանակերտ է ժամանում Լևոն Տեր-Պետրոսյանը: Տեղի է ունենում ԼՂՀ ԳԽ նախագահության և ԼՂՀ ՊՊԿ համատեղ նիստը: ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գ. Պետրոսյանը հրաժարական է տալիս: ԼՂՀ ԳԽ նախագահի լիազորությունները դրվում են Կ. Բաբուրյանի վրա:

1993թ. հունիսի 17

ՌԴ միջնորդությամբ Ադրբեջանը և ԼՂՀ-ն պայմանավորվածություն ձեռք բերեցին Ստեփանակերտ և Ադդամ քաղաքների գնդակոծության փոխադարձաբար դադարեցման մասին:

1993թ. հունիսի 13-23

Ազատագրվեցին Աղդամի, Ջեբրաիլի, Ֆիզուլու շրջանների որոշ մասեր:

1993թ. հունիսի 29

ՄԱԿ-ի ԱԽ-ն ընդունեց 853 Որոշումը:

1993թ. հուլիսի 23

Կազմավորվեց ԼՂՀ Արտաքին գործերի նախարարությունը: Արտաքին գործերի նախարար նշանակվեց ԼՂՀ Պաշտպանության պետական կոմիտեի նախագահի քաղաքական հարցերով խորհրդական Արկատի Ղուկասյանը:

1993թ. հուլիսի 27-օգոստոսի 8

Հոռոմում Միմսկի խումբը լրիվ կազմով ընդունում է «Ժկատարումն ՄԱԿ-ի ԱԽ-ի 822 և 853 Որոշումների անհետաձգելի միջոցառումների ժամանակացույցը»:

1993թ. օգոստոսի 17

Հ. Ալիևը նամակով դիմում է ուղարկում ԼՂՀ ԳԽ նախագահին՝ երկկողմանի բանակցություններ սկսելու առաջարկով: Համանման նամակներ են ստացվում նաև Ադրբեջանի պաշտպանության նախարար Ս.Աբիևից և փոխվարչապետ Ռ. Գուլիևից:

1993թ. օգոստոսի 20

Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Ա.Կոզիրևը Մոսկվայում ընդունում է ՊՊԿ-ի նախագահ Ռ. Քոչարյանին:

1993թ. օգոստոսի 22-31

Ազատագրվում են Ղուբաթլուի, Ջեբրաիլի և Ֆիզուլու շրջանները:

1993թ. օգոստոսի 24-28

Բաքու, Երևան և Ստեփանակերտ հերթական այցելությունն է կատարում ռուսական միջնորդական առաքելությունը:

1993թ. օգոստոսի 31

Լեմքորանի թալիշների ապստամբությունը ճնշելուց անմիջապես հետո Ադրբեջանի ԱԳՆ-ն հայտարարում է, որ Ադրբեջանը պայմանավորվելու ոչինչ չունի Լեռնային Ղարաբաղի «անջատողականների և ահաբեկիչների հետ»:

1993թ. սեպտեմբերի 12-13

Մոսկվայում, ռուսական կողմի միջնորդությամբ, բանակցություններ տեղի ունեցան Ադրբեջանական Հանրապետության և ԼՂՀ-ի միջև՝ կողմերի ղեկավարների ներկայացուցիչների մակարդակով: ԱՀ-ն ներկայացնում էր Խորհրդարանի նախագահի տեղակալ Ա.Ջալիլովը, ԼՂՀ-ն՝ ԱԳՆ ղեկավար Ա. Ղուկասյանը: Ստորագրվեց համատեղ կոմյունիկե, պայմանավորվածություն ձեռք բերվեց մինչև 1993թ. հոկտեմբերի 5-ը երկարաձգել կրակի դադարեցման ժամկետը: Միաժամանակ, պայմանավորվածություն ձեռք բերվեց ԱՀ և ԼՂՀ բարձրագույն ղեկավարների հանդիպման մասին:

1993թ. սեպտեմբերի 24

Ադրբեջանական Հանրապետությունը անդամակցում է ԱՊՀ-ին:

1993թ. սեպտեմբերի 25

Մոսկվայում, ՌԴ արտաքին գործերի նախարար Ա.Կոզիրևի մոտ տեղի է ունենում Հայաստանի, Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի ղեկավարների հանդիպումը: Նույն օրը կայացավ նաև Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի պատվիրակությունների երկկողմ հանդիպումը:

1993թ. սեպտեմբերի 25

Ադրբեջանի շրջանում, զինված ուժերի շփման գծում, տեղի ունեցավ ԼՂՀ և ԱՀ կառավարությունների ղեկավարների տեղակալների հանդիպումը:

1993թ. հոկտեմբերի 3

Հ. Ալիևը դառնում է Ադրբեջանական Հանրապետության նախագահ:

1993թ. հոկտեմբերի 9-11

Մոսկվայում տեղի է ունենում Միմսկի խմբի նիստը «Անհետաձգելի միջոցառումների ժամանակացույցը» վերամշակելու նպատակով: Միմսկի խումբը ճանաչում է Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը՝ որպես հավանարտության կողմ:

1993թ. նոյեմբերի 2

Նախագահ Հ. Ալիևը դիմեց ժողովրդին՝ «Միավորվելու և վերջ տալու հայերին» կոչով:

1993թ. նոյեմբերի 12

ՄԱԿ-ի ԱԽ-ն ընդունեց 884 Ռոշումը՝ «ադրբեջանական գրավյալ տարածքներից» հայկական զորքերի դուրս բերման պահանջով:

1993թ. դեկտեմբերի 15

Ադրբեջանական Հանրապետությունը նոր լայնածավալ հարձակում ձեռնարկեց ԼՂՀ-ի դեմ:

1994թ. հունվարի 10

Ադրբեջանական բանակը կատաղի հարձակումներ էր կատարում ճակատի ողջ գծի երկայնքով:

1994թ. հունվարի 20

Մոսկվայում Ռուսաստանի, Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտաքին գործոց նախարարությունների ղեկավարները՝ Ա.Կոզիրևը, Վ.Փափազյանը և Ա.Ղուկասյանը քննարկեցին դարաբաղյան կարգավորման հարցով համաձայնագրի ռուսական նախագիծը:

1994թ. հունվարի 27

Մոսկվան սկսած 1994թ. փետրվարի 1-ից, երեք շաբաթով կրակի դադարեցման նոր ժամանակացույցի առաջարկ կատարեց:

1994թ. փետրվարի 4

Վիեննայում տեղի ունեցավ ԵԱՀԽ-ի Մինսկի խմբի նիստը Յան Էլիասոնի (Շվեդիա) մասնակցությամբ, որը փոխարինել էր Մարիո Ռաֆաելլիին Մինսկի կոնֆերանսի նախագահի պաշտոնում:

1994թ. փետրվարի 18

Բաքվի կողմից սկսած ճմեռային ռազմական կամայանիան ավարտվում է պարտությամբ: ԼՂՀ Պաշտպանության բանակը ամբողջովին մաքրեց Զելրաջարի շրջանը և վերստին զբաղեցրեց նախկին դիրքերը:

1994թ. փետրվարի 18

Մոսկվայում, Ռուսաստանի միջնորդությամբ, կողմերը պայմանավորվում են զինադադարի մասին, որը, սակայն, խախտվում է Ադրբեջանի կողմից մարտի 11-ին:

1994թ. մարտի 29

ԼՂՀ ԳԽ Նախահագուրթունը որոշում է ընդունում ԼՂՀ և Հայաստանի Հանրապետության խորհրդարանների համագործակցության մասին:

1994թ. ապրիլի 14-15

Պրագայում, Մինսկի խմբի հովանու ներքո վարվող բանակցությունների ժամանակ, հակամարտող կողմերը հավանություն են տալիս իրենց միջև վստահության ամրապնդման միջոցառումներին:

1994թ. մայիսի 4-5

Ղրղզստանի մայրաքաղաք Բիշքեքում ԱՊՀ միջխորհրդարանական Ասամբլեայի, Ղրղզական Հանրապետության խորհրդարանի և Ռուսաստանի ԱԳՆ նախածեղնությամբ բանակցություններ տեղի ունեցան հակամարտող կողմերի՝ Ադրբեջանական Հանրապետության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև: Մայիսի 5-ին ընդունվեց «Բիշքեքի արձանագրությունը»: Ադրբեջանը արձանագրությանը միացավ մայիսի 8-ին:

Մեկնաբանություն. *Ադրբեջանը համաձայնեց զինադադարին ռազմական վերջնական պարտության փոխանցի առջև կանգնած լինելու պատճառով՝ հույս ունենալով, որ իրեն կհաջողվի «բանակցությունների սեղանի շուրջ» տիրանալ Ղարաբաղին «նավթային դիվանագիտության» և Թուրքիայի միջոցով:*

1994թ. մայիսի 16-17

Լեռնային Ղարաբաղի, Ադրբեջանի և Հայաստանի պաշտպանության նախարարները, Ռուսաստանի պաշտպանության նախարարության և ԱԳՆ միջնորդությամբ, քննարկեցին «1994թ. փետրվարի 18-ի Արձանագրության կատարման կարգի մասին պայմանավորվածություն» անվանումը կրող փաստաթուղթը:

Ռուսաստանը, Լեոնային Ղարաբաղը և Հայաստանը ստորագրեցին փաստաթուղթը: Աղբրեջանի պաշտպանության նախարարը հետաձգեց «Պայմանավորվածության» ստորագրումը:

1994թ. հուլիսի 7

Մինսկի խմբի նիստի ժամանակ ԼՂՀ պատվիրակությունը մերժեց հակամարտության գոտում թուրքական զորքերի մասնակցությամբ միջազգային խաղաղապահ ուժերի տեղադրման առաջարկը:

1994թ. հուլիսի 14-22

Գերմանիայի Դաշնային Հանրապետության ԱԳՆ-ի հրավերով ԼՂՀ ԱԳ նախարար Արկաղի Դուկասյանը այցելում է Գերմանիա:

1994թ. հուլիսի 22-28

ԼՂՀ ԱԳՆ ղեկավարը այցելում է Ֆրանսիա: Ֆրանսիայի արտաքին քաղաքական գերատեսչությունում, ինչպես նաև Մինսկի խմբում Ֆրանսիայի ներկայացուցիչ տիկին Դյուբայի հետ քննարկվում են հակամարտության կարգավորման հարցերը:

1994թ. օգոստոսի 5-13

Մոսկվայում, հակամարտող կողմերի միջև քաղաքական համաձայնության մասին ռուսական նախագծի շուրջ տեղի են ունենում բանակցություններ ԱՊՀ գործադիր քարտուղարի և ԵՄԱԽ-ի Մինսկի խմբի նախագահության մասնակցությամբ: Ռուսական նախագծի քննարկումը Մոսկվայում տեղի ունեցավ սեպտեմբերի 1-7-ը, իսկ սեպտեմբերի 8-9-ը քաղաքական համաձայնության ռուսական նախագիծը քննարկման առարկա դարձավ Մոսկվայում Հայաստանի և Աղբրեջանի նախագահների ու ԼՂՀ ՊՊԿ-ի նախագահի միջև տեղի ունեցած հանդիպման ժամանակ: Հակամարտող կողմերի լիազոր ներկայացուցիչները շարունակեցին բանակցություններն այս թեմայով նաև նոյեմբերի 11-14-ը:

1994թ. սեպտեմբերի 14-16

ԵՄԱԽ-ի ԱՊԱԿ-ը Պրազայում որոշում ընդունեց Լեոնային Ղարաբաղի հակամարտության շրջանում խաղաղության պահպանման ԵՄԱԽ-ի բազմազգ ուժերի ստեղծման հնարավորությունը ուսումնասիրելու մասին:

1994թ. նոյեմբերի 4

ԼՂՀ ՊՊԿ-ի նախագահ Ռոբերտ Զոչարյանը Երևանում հանդիպում է ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղար Բուտրոս Ղալիի հետ:

1994թ. դեկտեմբերի 5-6

ԵՄԱԽ-ի Բուդապեշտի գազաթափողովը որոշում է ընդունում համախմբել ԵՄԱԽ-ի միջնորդական ջանքերը: ԵՄԱԽ-ը վերակազմավորվում է ԵԱՀԿ-ի: Ստեղծվում է ԵԱՀԿ-ի Բարձր մակարդակի պլանավորման խումբը (ԲՄՊԽ):

1994թ. դեկտեմբերի 22

ԼՂՀ խորհրդարանի հաստատմամբ ներդրվում է նախագահության ինստիտուտը: ԼՂՀ առաջին նախագահ ընտրվեց Ռոբերտ Զոչարյանը:

1995թ. փետրվարի 10-11

Մինսկի խմբի հովանու ներքո Մոսկվայում տեղի ունեցան եռակողմ բանակցություններ ղարաբաղյան հակամարտության կարգավորման շուրջ:

1995թ. մարտի 5-6

Մինսկի խմբի ԱՄՆ հատուկ ներկայացուցիչ Ջոն Փրեսելն այցելեց Ստեփանակերտ: Ջոն Փրեսելը կրկին այցելեց Ստեփանակերտ նույն տարվա օգոստոսի 28-ին:

1995թ. ապրիլի 11

Ռուսաստանի Պետդումայում տեղի ունեցան դարաբաղյան հակամարտության գոտում իրավիճակի մասին լսումներ՝ ԼՂՀ նախագահի և արտաքին գործերի

նախարարի մասնակցությամբ: Լսումների ժամանակ ելույթ ունեցավ Արկադի Դուկասյանը:

1995թ. ապրիլի 30

Տեղի ունեցան ԼՂՀ ԱԺ վաղաժամկետ ընտրություններ:

1995թ. մայիսի 9

Ստեփանակերտի «Վերածննդի» հրապարակում տեղի ունեցավ ԼՂՀ զինված ուժերի առաջին շքերքը՝ նվիրված Լեռնային Ղարաբաղի պատմական մայրաքաղաք Շուշիի ազատագրման 3-րդ տարեդարձին:

1995թ. մայիսի 15

Մոսկվայում տեղի ունեցան եռակողմ (Լեռնային Ղարաբաղ, Ադրբեջան, Հայաստան) բանակցություններ Մինսկի խմբի հովանու ներքո:

1995թ. հունիսի 15-21

Հելսինկիում տեղի ունեցան եռակողմ (Լեռնային Ղարաբաղ, Ադրբեջան, Հայաստան) բանակցություններ Մինսկի խմբի հովանու ներքո:

1995թ. հուլիսի 14-15

Ստեփանակերտ այցելեցին Մինսկի խմբի Ֆինլանդիայի և Ռուսաստանի կողմից համանախագահներ Հ.Թալվիթիեն և Վ. Լոզինսկին:

1995թ. հուլիսի 24-27

Բաղենում (Ավստրիա)տեղի ունեցան եռակողմ (Լեռնային Ղարաբաղ, Ադրբեջան, Հայաստան) բանակցություններ Մինսկի խմբի հովանու ներքո:

1995թ. սեպտեմբերի 4-12

Մոսկվայում տեղի ունեցան եռակողմ (Լեռնային Ղարաբաղ, Ադրբեջան, Հայաստան) բանակցություններ Մինսկի խմբի հովանու ներքո:

1995թ. հոկտեմբերի 9-17

Ֆինլանդիայում տեղի ունեցան եռակողմ (Լեռնային Ղարաբաղ, Ադրբեջան, Հայաստան) բանակցություններ Մինսկի խմբի հովանու ներքո:

1995թ. նոյեմբերի 6-11

Մոսկվայում տեղի ունեցան եռակողմ (Լեռնային Ղարաբաղ, Ադրբեջան, Հայաստան) բանակցություններ Մինսկի խմբի հովանու ներքո:

1995թ. նոյեմբերի 22-դեկտեմբերի 2

Բոննում տեղի ունեցան եռակողմ (Լեռնային Ղարաբաղ, Ադրբեջան, Հայաստան) բանակցություններ Մինսկի խմբի հովանու ներքո:

1996թ. հունվարի 9-15

Մոսկվայում տեղի ունեցան եռակողմ (Լեռնային Ղարաբաղ, Ադրբեջան, Հայաստան) բանակցություններ Մինսկի խմբի հովանու ներքո:

1996թ. հունվարի 26

ԱՄՆ այցելեցին ԼՂՀ նախագահ Ռ. Քոչարյանը և արտաքին գործերի նախարար Ա. Դուկասյանը: ՄԱԿ-ում տեղի ունեցավ ԼՂՀ նախագահի մամլո ասուլիսը:

1996թ. փետրվարի 21

Ստեփանակերտ է այցելում Մինսկի խմբի ԱՄՆ ներկայացուցիչ Ջ. Փրեստլը:

1996թ. մարտի 17

Ստեփանակերտ է այցելում Մինսկի խմբի ռուսաստանցի համանախագահ Վ. Կազիմիրովը:

1996թ. մարտի 25-30

Մոսկվայում տեղի ունեցան եռակողմ (Լեռնային Ղարաբաղ, Ադրբեջան, Հայաստան) բանակցություններ Մինսկի խմբի հովանու ներքո:

1996թ. մայիսի 8-9

Ստեփանակերտ է այցելում Ռուսաստանի ԱԳ նախարար Ե.Պրիմակովը՝ ռազմագերիներին և պատանդներին «բոլորին՝ բոլորի դիմաց» սկզբունքով ազատ արձակելու առաջարկով:

1996թ. մայիսի 20-29

ԼՂՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը և արտաքին գործոթի նախարար Արկաղի Դուկասյանը այցելեցին Բրազիլիա, Ուրուգվայ և Արգենտինա:

1996թ. հունիսի 14-18

Մոսկվայում տեղի ունեցան եռակողմ (Լեռնային Ղարաբաղ, Ադրբեջան, Հայաստան) բանակցություններ Մինսկի խմբի հովանու ներքո:

1996թ. հոկտեմբերի 4

Մինսկի խմբի առաքելությունը այցելեց Ստեփանակերտ:

1996թ. հոկտեմբերի 18-22

Հելսինկիում տեղի ունեցան եռակողմ (Լեռնային Ղարաբաղ, Ադրբեջան, Հայաստան) բանակցություններ Մինսկի խմբի հովանու ներքո: Բանակցությունները շարունակվեցին Մոսկվայում հոկտեմբերի 28-30-ը:

1996թ. նոյեմբերի 24

ԼՂՀ-ում տեղի ունեցան նախագահական ընտրություններ: ԼՂՀ նախագահ ընտրվեց Ռոբերտ Քոչարյանը:

Մեկնաբանություն. Դրանից անմիջապես հետո տեղի ունեցած արտահերթ ընտրությունները անցկացվեցին այն կապակցությամբ, որ Ռոբերտ Քոչարյանին առաջարկվեց զրադեցնել Հայաստանի Հանրապետության վարչապետի պաշտոնը: Առաջարկությունը ընդունվեց:

1996թ. դեկտեմբերի 3

Տեղի ունեցավ ԵԱՀԿ Լիսաբոնի գազաթափողովը: Սահմանվում է ԵԱՀԿ Մինսկի խմբի երեք համանախագահների ինստիտուտը՝ Ռուսաստան, ԱՄՆ, Ֆրանսիա:

1996թ. դեկտեմբերի 27

Ստեփանակերտ է այցելում Մինսկի խմբի ռուսաստանցի համանախագահ Յ. Յուկալովը, որը այդ պաշտոնում փոխարինել էր Վ.Կազիմիրովին:

1997թ. մարտի 20

Ռոբերտ Քոչարյանը նշանակվեց Հայաստանի Հանրապետության վարչապետ:

1997թ. ապրիլի 1-4

Հելսինկիում տեղի ունեցան եռակողմ (Լեռնային Ղարաբաղ, Ադրբեջան, Հայաստան) բանակցություններ Մինսկի խմբի համանախագահների հովանու ներքո: Բանակցությունների շարունակությունը տեղի ունեցավ Մոսկվայում հոկտեմբերի 28-30-ը:

Մեկնաբանություն. Դա վերջին հանդիպումն էր եռակողմ ժաշափով: Այնուհետև հետևեցին Հայաստանի և Ադրբեջանի նախագահների երկկողմանի հանդիպումները: ԼՂՀ ղեկավարությունը բազմիցս հանդես է եկել հայտարարություններով, որ այդ հանդիպումները դիտարկում է որպես միայն նախապատրաստական միջոցառումներ հակամարտության ճանաչված երեք կողմերի միջև եռակողմ բանակցությունների վերականգնման համար:

1997թ. մայիսի 31

ԵԱՀԿ Մինսկի խմբի առաքելությունը Ստեփանակերտում ԼՂՀ ղեկավարությանն առաջարկում է հակամարտության կարգավորման ծրագիր, որն անընդունելի եղավ ԼՂՀ-ի համար և մերժվեց նրա ղեկավարության կողմից: Ադրբեջանն ու Հայաստանը չէին առարկում Մինսկի խմբի առաջարկության դեմ:

1997 թ. հուլիս

Մինսկի խմբի համանախագահները առաջարկում են հակամարտության փուլային կարգավորման ծրագիրը:

1997 թ. սեպտեմբերի 1

Տեղի ունեցան ԼՂՀ արտահերթ նախագահական ընտրությունները: ԼՂՀ նախագահ ընտրվեց Արկաղի Դուկասյանը:

Մեկնաբանություն. Արտահերթ ընտրությունները նշանակվել էին այն կապակցությամբ, որ Ռոբերտ Քոչարյանը համաձայնություն էր տվել ՀՀ Նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի առաջարկին՝ զրադեցնելու ՀՀ վարչապետի պաշտոնը:

1997 թ. սեպտեմբերի 22



ԵԱՀԿ առաքելությունը Ստեփանակերտում առաջարկում է հակամարտության փուլային կարգավորման նոր առաջարկ, որը չի ընդունվում:

1997 թ. դեկտեմբերի 1

Հայաստանի Նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը հանրապետական մամուլում հանդես է գալիս «Պատերազմ կամ խաղաղություն. մտորելու պահն է» հոդվածով:

Մեկնաբանություն. *Դա հետխորհրդային Հայաստանի առաջին մախագահի հայացքների առաջին հանգամանակից շարադրանքն էր: Հոդվածը շուտով հանգեցրեց Լ.Տեր-Պետրոսյանի հրաժարականին:*

1998թ. փետրվարի 3

Հայաստանի Հանրապետության Նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը հրաժարական տվեց:

1998թ. մարտի 22

ԼՂՀ Ազգային Ժողովը որոշում կայացրեց Օսմանյան Թուրքիայում 1915-1923թթ. հայերի Ցողասպանությունը դատապարտելու մասին:

1998թ. մարտի 30

Արտահերթ մախագահական ընտրությունների ժամանակ Ռոբերտ Քոչարյանն ընտրվեց Հայաստանի Հանրապետության Նախագահ:

1998թ. մայիսի 9

Լեռնային Ղարաբաղի պատմական մայրաքաղաք Շուշիում ԼՂՀ և Հայաստանի արտաքին գործերի նախարարությունների միջև համագործակցության մասին արձանագրություն ստորագրվեց:

1998թ. մայիսի 14

Մինսկի խմբի համանախագահները Ստեփանակերտում ԼՂՀ ղեկավարության հետ բանակցություններ ունեցան:

1998թ. սեպտեմբերի 7

Ստեփանակերտ այցելեցին Մինսկի խմբի համանախագահները:

1998թ. սեպտեմբերի 27-դեկտեմբերի 20

Տեղի ունեցան ԼՂՀ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները:

1998թ. նոյեմբերի 11

Համանախագահները առաջարկում են հարցի փաթեթային լուծման հիմքի կարգավորման նոր տարրերակ և «ընդհանուր պետության» գաղափարի վրա հիմնված: Կարգավորման նախագիծը մերժվում է Բաքվի կողմից:



Մեկնաբանություն. *«Ընդհանուր պետության» գաղափարը՝ ձևակերպված որպես հայերի և աղբյուրների «միասնական պետական միություն», իր ժամանակին որված էր բազմազգ Աղբյ. ԽՍՀ կազմավորման հիմքում: Ըստ էության, ԵԱՀԿ Մինսկի խումբը վերադառնում է Խորհրդային Աղբյուրների Հանրապետության ստեղծման գաղափարին, Աղբյուրների հայ ժողովուրդը արտաքսվեց իր հողերից և, երբ մարզի էքսիկ քարտեզից անհետացան շատ ժողովուրդներ՝ այդ հողի իրական տերերը:*

1999թ. փետրվարի 27-մարտի 15

ԼՂՀ պատվիրակությունը՝ նախագահ Ա. Ղուկասյանի ղեկավարությամբ այցելեց ԱՄՆ:

1999թ. մարտի 11

Եվրախորհրդարանը որոշում ընդունեց Լեռնային Ղարաբաղի մասով, որը հաստատում էր ԽՍՀՄ տրոհման ժամանակ ԼՂՀ կազմավորման օրինականությունը:

1999թ. նոյեմբերի 18-19

Տեղի ունեցավ ԵԱՀԿ ստամբուլյան գագաթաժողովը: Ամփոփիչ փաստաթղթերում դարաբաղյան հակամարտության կարգավորման հարցով բացակայում են Աղբյուրների Հանրապետության տարածքային ամբողջականության մասին վկայակոչումները:

1999թ. դեկտեմբերի 12-13

Մինսկի խմբի համանախագահները այցելեցին Ստեփանակերտ:

- 2000թ. մարտի 22
Մահափորձ տեղի ունեցավ ԼՂՀ նախագահ Ա. Դուկասյանի նկատմամբ:
- 2000թ. մայիսի 15-22
Տեղի ունեցավ ԼՂՀ արտգործնախարար Ն. Մելքունյանի այցելությունը Ֆրանսիա և ԱՄՆ:
- 2000թ. հունիսի 18
Տեղի ունեցան ԼՂՀ Ազգային Ժողովի ընտրությունները:
- 2000թ. հուլիսի 5
ԼՂՀ Ազգային Ժողովի նախագահ ընտրվեց Օլեգ Եսայանը:
- 2000թ. դեկտեմբերի 10
Տեղի ունեցավ Մինսկի խմբի համանախագահների այցելությունը Ստեփանակերտ:
- 2001թ. փետրվարի 27
ԵԱՀԿ գործող նախագահ Միրչե Ջոանեն (Ռումինիա) Երևանում հանդիպում ունեցավ ԼՂՀ Նախագահ Ա. Դուկասյանի հետ:
- 2001թ. մարտի 4-5
Ֆրանսիան նախաձեռնություն է ցուցաբերում դարաբաղյան հակամարտության կարգավորման մասով: Փարիզում տեղի է ունենում Հայաստանի և Ադրբեջանի նախագահների հանդիպումը:
- 2001թ. ապրիլի 3-6
Քի ՈՒԵսթում (ԱՄՆ, Ֆլորիդայի նահանգ) կազմակերպվեց Հայաստանի և Ադրբեջանի նախագահներ Ռ. Քոչարյանի և Հ. Ալիևի հանդիպումը:
- 2001թ. մայիսի 10-17
ԼՂՀ նախագահ Ա. Դուկասյանը աշխատանքային այցով գտնվում է Ֆրանսիայում:
- 2001թ. մայիսի 19
Ստեփանակերտ այցելեցին Մինսկի խմբի համանախագահներ Քերրի Քավանոն (ԱՄՆ), Նիկոլայ Գրիբ-

- կովը (Ռուսաստան) և Ֆիլիպ դը Սյուրմենը (Ֆրանսիա):
- 2001թ. հուլիսի 10-11
Մինսկի խմբի համանախագահները և Ռուսաստանի արտաքին գործերի նախարարի տեղակալ Վ.Տրուբնիկովը այցելում են Ստեփանակերտ:
- 2001թ. սեպտեմբերի 5
Տեղի ունեցան ԼՂՀ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները:
- 2001թ. դեկտեմբերի 8
Մինսկի խմբի համանախագահները և Ռուսաստանի արտաքին գործերի նախարարի տեղակալ Վ.Տրուբնիկովը այցելում են Ստեփանակերտ:
- 2002 թ. մարտ
ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները այցելում են Բաքու և Երևան:
- 2002 թ. մարտի 5
Երևանում տեղի ունեցավ ԼՂՀ Ա.Դուկասյանի և ԵԱՀԿ գործող նախագահ, Պորտուգալիայի արտաքին գործերի նախարար Ժայմե դա Գամայի հանդիպումը:
- 2002 թ. մարտի 10
ԼՂՀ Նախագահ Ա.Դուկասյանը Ստեփանակերտում ընդունեց ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Ն.Գրիբկովին (Ռուսաստան), Ֆ.Սյուրմենին (Ֆրանսիա) և Ռ.Պերինային (ԱՄՆ), ինչպես նաև Ռուսաստանի արտաքին գործերի նախարարի տեղակալ Վ. Տրուբնիկովին:
- 2002 թ. մայիս-օգոստոս
ԵԱՀԿ Մինսկի խմբի միջնորդությամբ քննարկումների համար Պրագայում հանդիպում են Հայաստանի և Ադրբեջանի արտաքին գործերի նախարարների տեղակալները:

2002 թ. օգոստոսի 11

ԼՂՀ-ում տեղի են ունենում նախագահական ընտրություններ: Երկրորդ անգամ ԼՂՀ նախագահ է ընտրվում Արկաղի Դուկասյանը:

2002 թ. սեպտեմբեր

Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Վ.Գուլիևը հանդես է գալիս ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի քննադատությամբ՝ Հայաստանի կողմից ՄԱԿ-ի 1993 թվականի որոշման կատարումն ապահովելու անկարողության համար:

2003 թ. հունվարի 8

Ադրբեջանական հետախուզական-դիվերսիոն խումբը, անցնելով Ադրամի շրջանում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ու Ադրբեջանի զինված ուժերի շփման գիծը և խախտելով ԼՂՀ պաշտոնական սահմանագիծը, փորձեց խորանալ դեպի Լեռնային Ղարաբաղի սարածք:

2003 թ. փետրվարի 26

ԼՂՀ պաշտպանության սահմանները, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Ադրբեջանի զինված ուժերի շփման գծի հարավային ուղղությամբ ադրբեջանական հետախուզական-դիվերսիոն 5 հոգանոց խումբը փորձ արեց խորանալու ԼՂՀ Պաշտպանության թիկունքը:

Մեկնաբանություն. Նշված միջադեպերից հետո ԼՂՀ Պաշտպանության նախարարության մամլո ծառայությունը հանդես եկավ հայտարարությամբ, որում ուշադրություն դարձրեց այն փաստի վրա, որ վերջին ժամանակներս ԼՂՀ զինված ուժերի թիկունքում դիվերսիոն գործողություններ կատարելու ադրբեջանական կողմի փորձերը հաճախակի են դարձել, ինտենսիվացել է սնայպերական պատերազմը: Ադրբեջանական կողմի նշված գործողությունները ԼՂՀ պաշտպանության նախարարությունը գնահատում է որպես կրակի դադարեցման կոպտագույն խախտում՝ լի ադրբեջանադարաբաղյան հակամարտության գոտում իրավիճակի ապակայունացման վտանգով և զգուշացրել է, որ ցանկացած մմանօրինակ փորձ վճռականորեն կկասեցվեն:

2003 թ. մայիս

Ադրբեջանական Հանրապետության արտաքին գործերի նախարար Վ. Գուլիևը նամակով դիմեց ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին և ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նախագահին, որում դժգոհություն էր արտահայտվում ՄԱԿ-ի ԱԽ-ի՝ դարաբաղյան հարցում ունեցած դիրքորոշման կապակցությամբ: Մասնավորապես, ԱՀ ԱԳ նախարարը կոչ էր անում ստիպել հայկական կողմին անվերապահորեն կատարել Լեռնային Ղարաբաղի հարցով ՄԱԿ-ի ԱԽ-ի Որոշումը:

Մեկնաբանություն. Մամուլի համար իր մեկնաբանության մեջ ԼՂՀ արտգործնախարար Ա. Դուլյանը կարծիք հայտնեց, որ, ամենայն հավանականությամբ, Ադրբեջանի ԱԳ-ն ոչ այնքան ուշադիր են ծանոթացել ՄԱԿ-ի ԱԽ-ի համապատասխան որոշումների հետ: Ա. Դուլյանը նշեց, որ նշված որոշումները պարունակում են մի ամբողջ շարք պահանջներ նախևառաջ ուղղված Ադրբեջանին, որը դրանք այդպես էլ չկատարեց. «Չնայած ՄԱԿ-ի ԱԳ-ի որոշումների, միջազգային մի շարք կառույցների և առանձին երկրների կոչերի, ադրբեջանական կողմը արդեն ահա 15 տարի շարունակում է Լեռնային Ղարաբաղի տրանսպորտային, տնտեսական և էներգետիկ շրջափակումը, չի դադարեցնում նրա նկատմամբ քնամական գործողությունները, որոնք արտահայտվում են Ադրբեջանում հակահայկական և ռազմամուլ հիստերիայի թեժացմամբ»:

2003 թ. հունիսի 18

Փարիզում ԼՂՀ արտգործնախարար Ա.Դուլյանը հանդիպեց ԵԱՀԿ Մինսկի խմբի ֆրանսիացի համանախագահ Ա.Ժակյոլենի հետ:

2003 թ. հուլիսի 8

Հայաստանի և Ադրբեջանի պաշտպանության նախարարներ Ս.Սարգսյանը և Ս.Աբիևը հայ-ադրբեջանական սահմանի մոտ հանդիպումից հետո պայմանավորվում են մեղմացնել երկու կողմերի բանակների միջև առկա լարվածությունը:

2003 թ. սեպտեմբերի 3

Մտեփանակերտում ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը և ԼՂՀ վարչապետ Անուշավան Դանիելյանը

երկու կառավարությունների համագործակցության մասին արձանագրություն ստորագրեցին: Արձանագրության, որն ընդգրկում է տնտեսության փաստացի բոլոր ոլորտները, ստորագրմանը նախորդել էր Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի կառավարությունների ղեկավարների հանդիպումը ԼՂՀ Նախագահ Արկաղի Ղուկասյանի հետ, որի ժամանակ մանրամասն քննարկվել են երկու հայկական պետությունների համագործակցության հարցերը: Համաձայն փաստաթղթի՝ նախատեսվում է Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի տնտեսական հարաբերությունների և ինտեգրման խորացում, ԼՂՀ տնտեսական աճի և սոցիալ-տնտեսական զարգացման խթանում, երկու հանրապետությունների կրթական և մշակութային ոլորտների միասնականության ապահովում, այլ արդիական խնդիրների լուծում: Անդրամիկ Մարգարյանը և Անուշավան Դանիելյանը հայտարարեցին իրենց պատրաստակամությունը շարունակելու այն միջոցառումների իրականացումը, որոնք նախատեսված էին 2000թ. սեպտեմբերին և 2001թ. օգոստոսին ստորագրված Հայաստանի և ԼՂՀ կառավարությունների համագործակցության ծրագրերով:

2003 թ. սեպտեմբերի 9

ԼՂՀ Նախագահ Արկաղի Ղուկասյանը ընդունեց ԵԱՀԿ Ռուսաստանյան Դաշնության կողմից Մինսկի խմբի համանախագահ Յուրի Մերզլյակովին, որը ժամանել էր Ստեփանակերտ կարճաժամկետ ճանաչողական այցով:

2003 թ. հոկտեմբերի 20

ԼՂՀ Նախագահ Արկաղի Ղուկասյանը Հայաստանի մայրաքաղաքում հանդիպում ունեցավ Հարավային Կովկասում Եվրամիության հատուկ ներկայացուցիչ Հ. Թավիթիեի և նրա գլխավորած պատվիրակության անդամների հետ:

2003 թ. հոկտեմբերի 21

ԼՂՀ Նախագահ Արկաղի Ղուկասյանը Երևանում հանդիպեց ԵԱՀԿ գործող նախագահ, Նիդեռլանդների արտաքին գործերի նախարար Յասայ դե Խուպ Սխեֆերի հետ:

2003 թ. նոյեմբերի 12

ԼՂՀ Նախագահ Արկաղի Ղուկասյանը Երևանում, որ նա ժամանել էր ԱՄՆ և Ֆրանսիա իր կատարած այցից հետո, հանդիպում ունեցավ Հարավային Կովկասի հարցերով Եվրախորհրդի զեկուցող Պեռ Գարտոնի հետ:

2003 թ. դեկտեմբերի 7

Տարածաշրջանային այցելության շրջանակներում Ստեփանակերտ ժամանեց Լեռնային Ղարաբաղի հարցերով ԵԱՀԿ Մինսկի խմբի պատվիրակությունը՝ համանախագահներ Յու. Մերզլյակով (Ռուսաստան), Ռ.Պերինա (ԱՄՆ), Ա.Ժակոլեն (Ֆրանսիա) կազմով: Նույն օրը տեղի ունեցավ միջազգային միջնորդների հանդիպումը ԼՂՀ Նախագահ Ա. Ղուկասյանի հետ:

Սեկնաբանություն. Հանդիպման ընթացքում համանախագահները նշեցին, որ իրենց կարծիքով նոր հնարավորություն է ստեղծվել դարաբաղյան կարգավորման հարցով բանակցությունների վերականգնման համար, հայտնելով, սակայն, որ որևէ նոր առաջարկություններ իրենց հետ չեն բերել: Այդ իսկ պատճառով, իրենց այցելության հիմնական նպատակը, համանախագահների խոսքով, կայանում է նրանում, որպեսզի կրկին ուշադիր լսեն կողմերի կարծիքները բանակցային գործընթացի հեռանկարների վերաբերյալ: Այդ կապակցությամբ ԼՂՀ Նախագահ Արկաղի Ղուկասյանը հեթրական անգամ հայտարարեց, որ ցանկալի արդյունքը խնդրահարույց է քվում առանց Լեռնային Ղարաբաղը բանակցություններում ներգրավելու: Ընդ որում, նա ընդգծեց, որ Լեռնային Ղարաբաղը պատրաստ է քննարկել բոլոր հարցերը և առանց որևէ նախնական պայմանների: «Մեզ համար բանակցությունները ինքնանպատակ չեն, այլ վերջնական կարգավորմանը հասնելու միջոց, ինչում Լեռնային Ղարաբաղը կենսականորեն շահագրգռված է», – ասել է Արկաղի Ղուկասյանը: «Շատ կարևոր է», – շարունակեց նա, – «որպեսզի վերջ տրվի քարոզչական պատերազմին, որը չի նպաստում հակամար-

տող կողմերի միջև փառահորթյան կամորջներ կառուցելուն»: Համա-
նախագահները իրենց երախտագիտությունը հայտնեցին Լեռնային
Ղարաբաղի մախագահին Լեռնային Ղարաբաղի դիրքորոշումը իր
կողմից հստակ և պարզ ներկայացնելու, ինչպես նաև կարգավոր-
ման անհնարարի հարցերով փոխադարձաբար ընդունելի հանգու-
յալուծումների որոնումները շարունակելու դարաբաղյան կողմի
պատրաստակամության համար: Բանակցությունների վերականգն-
ման դեպքում Լեռնային Ղարաբաղի հենարավոր մասնակցության
մասին խոսելիս բուռնաստիճան համանախագահ Յու. Արզրյա-
կովն ասաց, որ. «համանախագահները հաստատում են, որ Լեռնա-
յին Ղարաբաղը հանդիսանում է հակամարտության կողմը և որ դա
անմիտակ է»: Այս կազմակերպումը նա ընդգծեց, որ տվյալ փաստը
կասկած չի հարուցում, քանի որ Լեռնային Ղարաբաղի ներկայա-
ցուցչի ստորագրությունը դրված է կրակի գաղարկեցման մասին հա-
մաձայնագրի տակ:

2004 թ. հունվար

Փարիզում ԱՀ Նախագահ Էլիան Ալլևը հայտարար-
ում է այն մասին, որ Ադրբեջանը երբևէ չի ճանաչի
Ղարաբաղի անկախությունը կամ նրա միավորումը
Հայաստանի հետ:

2004 թ. փետրվար

Հունգարիայում, ՆԱՏՕ-ի ուսումնական դասընթացնե-
րի ժամանակ ադրբեջանական սպան կացնով սպա-
նում է քննած հայ սպա՝ լեյտենանտ Գուրգեն Մարգար-
յանին:

2004 թ. փետրվարի 23

Լեռնային Ղարաբաղի հարցով Եվրոպայի Խորհրդի
Պաշտամենտական Ասամբլեայի հատուկ գեկուցող
Թերրի Դեխը մեկօրյա ճամաչողական այցով ժամա-
նեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն: Շու-
շիում Թերրի Դեխը հանդիպեց Ադրբեջանից հայ
փախստականների հետ:

Մեկնաբանություն. Եվրոպայի Խորհրդի Պաշտամենտական
Ասամբլեայի հատուկ գեկուցողը ընդգծեց, որ նրա համար շատ
կարևոր էր այցելել Լեռնային Ղարաբաղ, հանդիպել մարդկանց
հետ և ծանոթանալ նրանց խնդիրներին: «Մարդիկ ինձ համար տա-
րածքներից կարևոր են»,– ընդգծեց Թերրի Դեխը: Եվրոպայի

Խորհրդի Պաշտամենտական Ասամբլեայի հատուկ գեկուցողը խոս-
տացավ կատարել փախստականների խնդրանքը և Ադրբեջան իր
կատարելիք այցելության ժամանակ այցելել Շահումյանի շրջան և
Գետաշեն, որտեղից արտաքսվել էր ողջ հայ ազգաբնակչությունը:
Նույն օրը Թերրի Դեխին ընդունեց ԼՂՀ Նախագահ Ա. Ղուկասյա-
նը: Նա ընդգծեց, որ Լեռնային Ղարաբաղը, լինելով հակամարտու-
թյան լիիրավ կողմ, այնուհանդերձ, չի ներկայացված եվրոպական
աստիճաններում և հնարավորություն չունի պաշտպանելու իր շահերը,
ինչի արդյունքում Եվրոպայում շատերը դառնում են ադրբեջանա-
կան քարոզչության պատանդները: Ինչպես նշեց Արկայի Ղուկաս-
յանը, Եվրոպայի Խորհրդի Պաշտամենտական Ասամբլեայի հատուկ
գեկուցողի հանդիպումը Ղարաբաղում ապրող Ադրբեջանից հայ
փախստականների հետ, բույլ կտա ցրելու քարոզչական առասպելն
այն մասին, որ գոյություն ունի միայն ադրբեջանցի փախստական-
ների խնդիր: «Լստահություն հայտնելով, որ խնդրի մասին անկողմ-
նակալ գեկուցյր հնարավորություն կտա կառուցելու օբյեկտիվ
պատկերը: Նախագահը հայտնեց վերոհիշյալ փաստաթղթի պատ-
րաստման շրջանակներում հետաքրքրություն ներկայացնող բոլոր
հարցերով կառուցողական երկխոսության համար դարաբաղյան
կողմի պատրաստակամությունը: Թ. Դեխը լրացուցիկի հետ համ-
դիպման ժամանակ հայտարարեց, որ նրան շատ է մտախոյան
փախստականների չրոմված հարցը, ինչը բացառաբար է անդրա-
դառնում տարածաշրջանի բոլոր ժողովուրդների վրա: «Դժբախտու-
թյան կրկնությունից խուսափելու համար հարկավոր է մեծ ուշադ-
րություն դարձնել փախստականների խնդրի վրա, որն իրենից դա-
րաբաղյան հակամարտության բաղկացուցիչ մասն է կազմում»,–
ասաց է Եվրոպայի Խորհրդի Պաշտամենտական Ասամբլեայի հա-
տուկ գեկուցողը:

2004 թ. մարտի 17

ՀՀ-ում ԼՂՀ մշտական ներկայացուցչությունում ԼՂՀ
Նախագահ Արկայի Ղուկասյանը հանդիպում ունե-
ցավ ԵԱՀԿ գործող նախագահ, Բուլղարիայի արտա-
քին գործերի նախարար Ստոյանոն Պասախի և իր ղեկա-
վարած պատվիրակության հետ:

Մեկնաբանություն. Հանդիպման ընթացքում ԼՂՀ Նախագահը
ընդգծեց բանակցային գործընթացում Լեռնային Ղարաբաղի մաս-
նակցության անհրաժեշտությունը: Նա կոչ արեց ԵԱՀԿ գործող նա-

խազահին պայմաններ ստեղծել Լեոնային Ղարաբաղի և Ադրբեջանի միջև ուղիղ երկխոսության համար: ԼՂՀ Նախագահն ընդգծեց, որ ղարաբաղյան կողմը պատրաստ է առանց նախապայմանների բանակցություններ վարել Ադրբեջանի հետ և իր կառուցողական ներդրումն ունենալ խաղաղ գործընթացում: ԼՂՀ Նախագահը հատուկ կարևորեց միջազգային հանրության կողմից ղարաբաղյան հակամարտությանը իրավական գնահատական տալու անհրաժեշտությանը: Նրա խոսքերով, բացի քաղաքական երկխոսությունից Ադրբեջանի հետ, Լեոնային Ղարաբաղը պատրաստ է լուրջ քննարկումների իրավական հարթության վրա: «Ես վստահ եմ, որ իրավական փաթեթը կօգնի գտնելու ղարաբաղյան հակամարտության քաղաքական լուծումը»,- հայտարարեց Արկադի Ղուկասյանը: Իր կողմից պարոն Պասսին նշեց հակամարտության կողմերի միջև բանակցային երկխոսության արագ վերականգնման կարևորությունը, ընդգծելով, որ որպես ԵԱՀԿ գործող նախագահ նա իր բոլոր ջանքերը կներդնի այդ ուղղությամբ: ԼՂՀ ղեկավարը նաև կոչ արեց միջազգային հանրությանը դատապարտել Ադրբեջանի ապակառուցողական դիրքորոշումը: «Լեոնային Ղարաբաղի հետ ուժի դիրքերից կամ շանտաժի լեզվով խոսելն անիմաստ է», - հայտարարեց ԼՂՀ Նախագահը: Նա նշեց նաև, որ հաշվի առնելով Բաքվի նմանօրինակ դիրքորոշումը, չի կարելի ակնկալել հակամարտության արագ կարգավորում:

2004 թ. ապրիլի 16

Ադրբեջանի արտաքին գործերի նոր նախարար Է. Մամեդյարովը Պրագայում հանդիպում է իր հայաստանցի գործընկերոջ՝ Վ. Օսկանյանի հետ կանոնավոր հանդիպումների նոր փուլի շրջանակներում՝ հայտնի «Փարիզյան գործընթաց» անվան տակ:

2004 թ. ապրիլի 20

Ադրբեջանի Միլլի մեջլիսի (խորհրդարանի) խոսնակ Մուրթուզ Ալեսբերովը հայտարարեց ՅՈՒՆԵՍԿՕ-ին և այլ միջազգային կազմակերպություններին «գրավյալ տարածքներում պատմական և մշակութային հուշարձանների», մասնավորապես, Լեոնային Ղարաբաղում Շուշիի ամրոցի պարիսպի ավերածությունների վերաբերյալ տեղեկացնելու անհրաժեշտության մասին:

Մեկնաբանություն. Մ. Ալեսբերովի ասածները մեկնաբանել է ԼՂՀ կրթության, մշակույթի և սպորտի նախարար Արմեն Մարգարյանը. «Ադրբեջանի խոսնակի հայտարարությունը այն մասին, որ Շուշի քաղաքի ամրոցի պարիսպները և այլ հուշարձանները ավերվում են հայերի կողմից, ես կանվանեի անհաջող քարոզչական քայլ: Շուշիում մեր պետության պաշտպանության տակ է գտնվում այդ թվում նաև մուսուլմանական մշակույթի հուշարձան հանդիսացող 19-րդ դարի պարսկական մզկիթը և, հայտարարությունն այն մասին, որ հայերը քանդում են Լեոնային Ղարաբաղի հնագույն մայրաքաղաքի հայկական ամրոցի պարիսպները, միանգամայն չի տեղավորվում առողջ տրամաբանության շրջանակներում: Ամենայն հավանականությամբ, նմանօրինակ ապատեղեկատվության խթան է հանդիսացել ապրիլի 18-ին Ստեփանակերտում բացված Հյուսիսային Արցախի (Ղարաբաղի), որն այսօր գտնվում է Ադրբեջանի վերահսկողության տակ, հայկական պատմամշակութային հուշարձանների լուսանկարչական ցուցահանդեսը: Յուցահանդեսը վկայում էր այն մասին, որ Ղարաբաղի տարածքում ադրբեջանական կողմը վերջին տարիների ընթացքում ոչնչացրել է շուրջ 200 հայկական եկեղեցիներ և վանքեր, ավելի քան 120 գերեզմանատներ, 2500 խաչքարեր և հայկական մշակույթի այլ հուշարձաններ, ինչն միանգամայն ակնհայտ ցույց է տալիս պաշտոնական Բաքվի հակահայկական քաղաքականությունը: Հյուսիսային Արցախի հայկական պատմամշակութային հուշարձանները գտնվում են լիակատար ոչնչացման վտանգի տակ և այս խնդրին պետք է հրավիրել լայն հասարակայնության, այդ թվում նաև միջազգային հանրության ուշադրությունը: Կարծում եմ, որ ադրբեջանական խոսնակի հայտարարությունը նպատակ ունի շեղելու միջազգային հանրության ուշադրությունը այդ հրեշավոր փնճակագրությունից և չեզոքացնելու Բաքվի նկատմամբ հնարավոր քննադատությունը: Ինչ վերաբերում է Մ.Ալեսբերովի այն հայտարարությանը, թե անհրաժեշտ է հրավիրել ՅՈՒՆԵՍԿՕ-ի և միջազգային այլ կազմակերպությունների ուշադրությունը, ապա ես պետք է նշեմ, որ Լեոնային Ղարաբաղն ինքն է կենսականորեն շահագրգռված միջազգային հանձնաժողովի կողմից իրավիճակի գնահատման մեջ: Ի տարբերություն Ադրբեջանի ԼՂՀ իշխանությունները չեն իրականացնում հուշարձանների ոչնչացման քաղաքականություն, և ես հույս ունեմ, որ տարածաշրջանում անկախ միջազգային փորձագետների կողմից իրավիճա-

կի ուսումնասիրությունը թույլ կտա որոշելու, թե ով է իրականում բարբարոսաբար ունչացնում պատմության և մշակույթի հուշարձանները»:

2004 թ. մայիսի 31

ԼՂՀ արտգործնախարար Ա.Ղուլյանը ընդունեց դա-րաբաղյան հակամարտության գոտում անհայտ կո-րածների որոնման, պատանդների և գերիների ազատ-ման հարցերով Միջազգային աշխատանքային խմբի (ՄԱԽ) համանախագահներ Բերնհարդ Կլազենին և Սվետլանա Գաննուշկինային, ինչպես նաև համակար-գողներ Կարինե Մինասյանին (Հայաստան), Ավագ Հասանովին (Ալբերջան) և Ալբերտ Ոսկանյանին (Լեռնային Ղարաբաղ):

Մեկնաբանություն. ՄԱԽ-ի ներկայացուցիչները կողմ արտահայտ-վեցին մարդասիրական հարցերը քաղաքականացնելու անթույլատ-րելիությանը: Նրանք գտնում էին, որ քաղաքականացումը բարդաց-նում է աշխատանքը: Մ.Գաննուշկինան և Բ.Կլազեն ավստոսանքով խոստովանեցին, որ Ռազմագերի և անհայտ կորածների հարցերով Ադրբեջանի պետական կոմիտեն ավելի շատ զբաղված է քարոզչա-կան, քան որոնողական աշխատանքով: Նրանք միաժամանակ նշե-ցին ՄԱԽ-ի գործունեության շարունակման, նրանում հակամար-տության կողմերի հասարակայնության և մամուլի ներգրավման կարևորությունը, քանի որ, իրենց կարծիքով, դա հնարավորություն կտա նրանց միջև հաստատելու վստահապատ փոխհարաբերու-թյուններ և գտնել առկա խնդիրների լուծումներ:

2004 թ. հունիսի 4

Կարճատև ճանաչողական այցով Լեռնային Ղարա-բաղի Հանրապետություն ժամանեց ԵԱՀԿ Խորհրդա-րանական Ասամբլեայի Լեռնային Ղարաբաղի հար-ցով հատուկ ներկայացուցիչ Գորան Լեննարկերը:

2004 թ. հունիսի 29

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն ժամանեց Եվրոպական Միության Հարավային Կովկասի հարցե-րով հատուկ ներկայացուցիչ Հ. Թավլիթին:

Մեկնաբանություն. Հ. Թավլիթին գոհունակությամբ նշեց Լեռ-նային Ղարաբաղի կենսագործունեության շատ ուղորտներում նկա-տելի առաջընթացը իր առաջին այցելության ժամանակից ի վեր, երբ նա տարածաշրջան այցելեց 1995-1996 թվականներին ԵԱՀԿ Մինսկի Կոնֆերանսի համանախագահի կարգավիճակով: «Շնոր-հիվ ձեր ջանքերի, դուք հասել եք նկատելի փոփոխությունների կյանքի շատ բնագավառներում: Դա համապատասխանում է Եվրամիության և հակամարտության կողմերի շահերին, քանի որ վկայում է կայունության մասին տարածաշրջանում»,-հայտարարեց ԵՄ հատուկ ներկայացուցիչը: ԼՂՀ կատարած այցելության շրջա-նակներում Հ.Թավլիթին հանդիպեց նաև հանրապետության ոչ կա-ռավարական կազմաներուկայությունների և Շուշիում ու Լաչինում բնակվող Ադրբեջանից հայ փախստականների հետ:

2004 թ. հուլիս

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները այցելեցին տարածաշրջան:

2004 թ. հուլիսի 13

Ստեփանակերտում տեղի ունեցավ ԼՂՀ Նախագահ Արկադի Ղուկասյանի և ԵԱՀԿ Մինսկի խմբի համա-նախագահների հանդիպումը:

Մեկնաբանություն. Այցելության ավարտին ուսաստանյան համա-նախագահ Յու. Մերգլյակովը հայտարարեց. «Կողմերը չպետք է պասիվորեն սպասեն, թե երբ միջոնորդները մի այնպիսի բան հնա-րեն, որն իրենց կբավարարի: Նրանք պետք է իրենք սրայմանավոր-վեն: Խնդրի լուծումը պետք է կողմերը գտնեն, և ոչ թե այն պետք է նրանց պարտադրվի դրսից: Իսկ կարգավորման հնարավոր տարբե-րակները կարելի է հաշվել մեկ ձեռքի մատների վրա, և դրանք բոլո-րը այս կամ այն չափով արդեն դիտարկվել և քննարկվել են»: Յու. Մերգլյակովը նաև նշեց, որ «Համաձայն ԵԱՀԿ որոշումների, Լեռնային Ղարաբաղը հակամարտության կողմ է և ունի որոշակի դերակատարություն դրա կարգավորման և խնդրի լուծման որոնման գործընթացում: Կրակի դադարեցման համաձայնագրի տակ դրված է նաև Լեռնային Ղարաբաղի ներկայացուցչի ստորագրությունը, իսկ դա նշանակում է, որ Լեռնային Ղարաբաղը որպես հակամար-տության կողմերից մեկը, կմասնակցի բանակցություններին»:

2004 թ. օգոստոսի 8

Լեոնային Ղարաբաղի Հանրապետությունում տեղի ունեցան տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունները:

2004 թ. սեպտեմբեր

Ադրբեջանում կասեցվում են նախապես ծրագրված ՆԱՏՕ-ի զորավարժություններն այն բանից հետո, երբ Ադրբեջանը մերժեց մուտքի արտոնագրեր տալ հայ զինծառայողներին:

2004 թ. սեպտեմբերի 15

Նախագահներ Ի.Ալիևը, Ռ.Քոչարյանը և Վ.Պուտինը հանդիպեցին Աստանայում (Ղազախստան):

2004 թ. սեպտեմբերի 23

Երևանում ԼՂՀ Նախագահ Ա.Ղուկասյանը հանդիպեց ԵԱՀԿ գործող նախագահի հատուկ ներկայացուցիչ Ֆ.Դիմիտրովի հետ:

2005 թ. հունվարի 25

Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական Վեհաժողովի (ԵԽՎ) լիազումար նիստում Լեոնային Ղարաբաղի հարցով ընդունվեց որոշում: Նրանում հիշատակվում է, որ 2001թվականին Հայաստանը և Ադրբեջանը ԵԽ ընդունվելիս իրենց վրա պարտավորություններ են վերցրել կիրառել միայն խաղաղ միջոցներ հակամարտությունը կարգավորելու համար: Որոշումը կոչ է անում երկու երկրների կառավարություններին «զերծ մնալ միմյանց նկատմամբ ռազմական ուժի կիրառումից և զինված գործողությունների իրականացումից»: ԵԽՎ-ն հայտարարեց իր մտադրության մասին այսուհետև նաև կանոնավոր հիմքի վրա հետևելու հակամարտության կարգավորման ընթացքին և որոշեց վերադառնալ տվյալ թեմային 2006թ. հունվարի նստաշրջանում:

2005 թ. հունվարի 25

ԼՂՀ Նախագահ Ա.Ղուկասյանը «Ռեզոլում» ԼԳ-ին տված հարցազրույցում հայտարարեց. «... Ղարաբաղյան կողմը արհեստականորեն մեկուսացվել է կարգա-

վորման բանակցություններից... Հայաստանի և Ադրբեջանի արտաքին գործերի նախարարների մշտական հանդիպումները, անշուշտ, կարևոր են, սակայն, դրանք ի վիճակի չեն փոխարինելու լիարժեք բանակցային գործընթացին՝ նրանում Լեոնային Ղարաբաղի իրավահավասար մասնակցությամբ: Պետք չէ մոռանալ, որ Լեոնային Ղարաբաղի խնդիրը բարձրացվել է Լեոնային Ղարաբաղի ժողովրդի կողմից և այն վերաբերում է Լեոնային Ղարաբաղի կարգավիճակին: Մնացածը Ադրբեջանի կողմից մեզ պարտադրված պատերազմի հետևանքներն են...»:

2005 թ. հունվարի 29

Երևան ժամանեց ԵԱՀԿ և Լեոնային Ղարաբաղի հարցով Մինսկի խմբի համանախագահների 10 փորձագետներից կազմված խումբը: Լեոնային Ղարաբաղի կողմից վերահսկվող 7 շրջանների մոնիթորինգ իրականացնելու համար ձևավորված խումբը ղեկավարում էր Գերմանիայի ԱԳՆ-ի ԵԱՀԿ վարչության ղեկավար Էմիլի Մաուգարետ Հաբերը:

Մեկնաբանություն. *Առաքելություն ստեղծելու մասին պայմանավորվածությունը ձեռք է բերվել այն բանից հետո, երբ Ադրբեջանը հրաժարվեց ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայում «Ադրբեջանի գրավյալ տարածքներում իրավիճակի մասին» որոշման նախագծի հետագա առաջադրումից:*

2005թ. հունվարի 30

ԼՂՀ Արտաքին գործերի նախարար Արման Մելիքյանը ընդունեց Լեոնային Ղարաբաղ ժամանած ԵԱՀԿ պատվիրակությանը:

Մեկնաբանություն. *Ողջունելով պատվիրակության անդամներին, Արման Մելիքյանը նշեց Առաքելության այցելության կապակցությամբ ԼՂՀ իշխանությունների շահագրգռվածության մասին: Ներկայացնելով հանրապետության ղեկավարության դիրքորոշումը ԼՂՀ վերահսկողության տակ գտնվող տարածքների հարցով, նախարարն ընդգծեց, որ Լեոնային Ղարաբաղի անվտանգության գոտում իրական իրավիճակի ուսումնասիրությունը հնարավորություն*

կտա միջազգային հանրությանը օրյեկտիվ պատկերացում կազմել այն վիճակի մասին, որում հայտնվել են փախստականները և բռնի տեղահանվածները:

2005թ. փետրվարի 6

ԼՂՀ վերահսկողության տակ գտնվող յոթ շրջանների մոնիթորինգի հարցով ԵԱՀԿ առաքելությունը ավարտեց իր աշխատանքը: ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Յու. Մերգյակովը (Ռուսաստան) և Բ. Ֆասյեն (Ֆրանսիա), ինչպես նաև ԵԱՀԿ գործող նախագահին անձնական ներկայացուցիչ Ա. Կասպերչիկը Ստեփանակերտի մշակույթի պալատում հանդիպեցին ժամանակին Ադրբ. ԽՍՀ և ԱՀ-ից արտաքսված փախստականների հետ:

Մեկնաբանություն. *ԼՂՀ-ում բնակություն հաստատած փախստականները առաջին անգամ հնարավորություն ստացան արտահայտելու իրենց պահանջները դարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում ներգրավված միջազգային հանրության ներկայացուցիչներին. «...Ադրբեջանում հայերը բողել են ավելի քան 92 հազար տներ՝ գույքի հետ միասին: Ադրբեջանական փախստականներին միջազգային կազմակերպությունները արդեն տրամադրել են 530 մլն դոլարի օգնություն. իսկ ԼՂՀ-ում բնակություն հաստատած Ադրբեջանից փախստականներին, փառտացի, ոչ մի աջակցություն չի ցուցաբերվում»:*

2005 թ. փետրվարի 21

ԼՂՀ ժողովրդի ինքնորոշման համար ազգային-ազատագրական պայքարի նոր փուլի 17-րդ տարեդարձի կապակցությամբ ԼՂՀ Ազգային ժողովը հանդես եկավ հայտարարությամբ, որում կրկին հաստատեց Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ազատ ժողովրդավարական պետություն կառուցելու վճռականությունը: Արտահայտելով ԼՂՀ իշխանությունների հակվածությունը ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում հակամարտության խաղաղ կարգավորմանը, խորհրդարանը ԱՀ իշխանություններին կոչ արեց «հրաժարվել հա-

կադրման անհեռատես քաղաքականությունից և ուղղորդել ջանքերը տարածաշրջանում խաղաղության և կայունության, վստահության և հանդուրժողականության մթնոլորտի հաստատմանը»:

2005թ. մարտի 10

ԼՂՀ Պաշտպանության նախարարությունը հաղորդագրություն տարածեց, որտեղ նշվում էր, որ մարտի 9-ին ԼՂՀ և ԱՀ շփման գծի հյուսիսարևելյան հատվածում, ԼՂՀ Մարտակերտի շրջանի Սեյաուլան բնակավայրի մոտ, ադրբեջանական ստորաբաժանումները հրաձիգ զենքի կիրառմամբ փորձել են մոտեցնել իրենց դիրքերը ԼՂՀ Պաշտպանության բանակի առաջափնի գծին:

2005թ. մարտի 17

ԵԱՀԿ փաստահավաք խումբը ԵԱՀԿ Մշտական խորհրդին ներկայացրեց «Ադրբեջանի գրավյալ տարածքներում իրավիճակի մասին» զեկույցը: Ինչպես պարզվեց, զեկույցն իր ամբողջական տարբերակով չէր կարող դուրս գալ Մշտական խորհրդի շրջանակներից և հրապարակման ենթակա չէ: Սակայն, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ելույթը Մշտական խորհրդի նիստում, նրանց հայտարարությունը և եզրակացությունները ուղղված էին հասարակական լայն շրջանակների համար:

Մեկնաբանություն. *ԵԱՀԿ Մշտական հանձնաժողովում ներկայացված իրենց հայտարարության մեջ՝ Մինսկի խմբի համանախագահները նշեցին. «Ուսումնասիրված տարածքների վրա առաքելությունը հայտնաբերեց վերաբնակեցման փաստեր: Այն չհաստատեց, որ բնակեցման տվյալ փաստերը Հայաստանի կառավարության նպատակային քաղաքականության արդյունք են: Մինևույն ժամանակ փաստեր ստացվեցին այն մասին, որ Լեռնային Ղարաբաղի իշխանությունները այս կամ այն չափով աջակցություն են ցուցաբերել որոշ շրջանների վերաբնակիչներին: Համանախագահները չեն որոշել, թե ինչ աստիճանի համագործակցություն կա այս հարցում Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի իշխանությունների միջև: Առա-*

քելության ամենակզբից, Լեոնային Ղարաբաղի իշխանությունները հայտարարեցին, որ նրանք իսկապես նպաստում են Լաչինի վերաբնակեցմանը:» Իրենց հայտարարության մեջ համանախագահները նշեցին, որ բացի Լաչինի շրջանից, այլ շրջաններում վերաբնակիչները ապրում են ծայրահեղ աղքատության և մեկուսացված վիճակում: Վերաբնակիչների վիճակը, համանախագահների կարծիքով, համեմատելի է փախստականների վիճակի հետ և այս հարցը պետք է դիտարկվի մարդասիրական տեսանկյունից:

2005թ. մարտի 24

ԼՂՀ ԱԳՆ-ն հանդես եկավ հայտարարությամբ. «Վիեննայում, մարտի 17-ին ԵԱՀԿ Մշտական խորհրդի նիստի ժամանակ ներկայացվել է ԵԱՀԿ Մինսկի խմբի Փաստահավաք առաքելության հաշվետվությունը, իսկ Մինսկի խմբի համանախագահները տվեցին իրենց առաջարկությունները կողմերին և միջազգային հանրությանը... Մտացված պաշտոնական փաստաթղթերի և նյութերի հիման վրա ԼՂՀ ԱԳՆ-ն փաստում է ԵԱՀԿ Մինսկի խմբի Փաստահավաք առաքելության հաշվետվության բարձր օբյեկտիվությունը: Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ Առաքելության աշխատանքը ընդգրկել է միայն այն տարածքները, որոնք զինադադարի հաստատումից հետո գտնվում են ԼՂՀ վերահսկողության տակ և այդ իսկ պատճառով չի արտացոլում մարդասիրական աղետի ամբողջական պատկերը, որը տեղի է ունեցել Ադրբեջանի կողմից սանձազերծած պատերազմի արդյունքում, երբ շուրջ 500 հազար հմյեր դարձան փախստականներ՝ կորցնելով իրենց գույքը, հայրենիքը և հավատը դեպի ապագան: ԼՂՀ իշխանությունները ճանաչում են իրենց պատասխանատվությունը այդ մարդկանց ճակատագրի համար և գործադրելու են բոլոր ջանքերը նրանց կյանքն այսօր բարեկարգելու և հետագայում նրանց իրավունքները վերականգնելու և կորցրածը փոխհատուցելու համար՝ փոխադարձության հիմքերով, թե միակողմանի կարգով»:

2005թ. մարտի 30

ԼՂՀ Նախագահ Ա. Ղուկասյանը Հայաստանում ԼՂՀ Մշտական ներկայացուցչությունում հանդիպեց ԵԱՀԿ գործող նախագահ Դ. Ռուպելի հետ:

Մեկնաբանություն. Երևանում, մամլո ասուլիսի ժամանակ Դ. Ռուպելը հայտարարեց. «Ղարաբաղյան հակամարտությունը իր բոլոր պարամետրերով բացառիկ է և ԵԱՀԿ կողմից չի դասվում ետխորհրդային տարածքում առկա ստեղծված այլ հակամարտությունների հետ նույն շարքում»: ԵԱՀԿ գործող նախագահը նշեց նաև, որ. «Պետք է վերջ դրվի թշնամական արտահայտություններին և կողմերը պետք է զբաղվեն փտահության մթնոլորտ կերտելով»:

2005թ. ապրիլի 11

Հայաստանի Նախագահ Ռ. Քոչարյանը հաստատեց Երևանի փոխադարձ զիջումների հիման վրա դարաբաղյան հակամարտությունը խաղաղ կարգավորելու պատրաստականությունը: Երևանի պետական համալսարանի ուսանողների և պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ հանդիպման ընթացքում Ռ. Քոչարյանը նշեց, որ «Ղարաբաղյան հակամարտությունը կարող է կարգավորվել փոխադարձ զիջումների հիման վրա: Դրան այլընտրանք կարող է լինել միայն կողմերից մեկի կապիտուլյացիան, իսկ կողմերը չեն պատրաստվում անձնատուր լինել»:

2005թ. ապրիլի 15

Հայաստանի արտաքին գործերի նախարար Վ.Օսկանյանը Լոնդոնում հանդիպեց ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հետ: Լոնդոնում կայացավ նաև համանախագահների հանդիպումը Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Է.Մամեդյարովի հետ: Բանակցությունների նպատակն էր նախապատրաստել մայիսին Հայաստանի և Ադրբեջանի նախագահների հնարավոր հանդիպումը:

2005թ. ապրիլի 21

Երևանում «Ծայրագույն հանցագործություններ, ծայրահեղ մարտահրավերներ: Տեղասպանությունը և

մարդու իրավունքները» միջազգային ֆորումին մասնակցելու կապակցությամբ Երևանում գտնվող ԼՂՀ Նախագահ Ա. Ղուկասյանը հայտարարեց. «Իմ բանաձևն այսպիսին է. եթե Ադրբեջանը դեմ է բանակցություններին ԼՂՀ մասնակցությանը, նշանակում է նա շահագրգռված չէ, որ հակամարտությունը կարգավորվի»:

2005թ. ապրիլի 27

Ֆրանկֆուրտում (Գերմանիա) տեղի ունեցավ Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Է.Մամեդյարովի հերթական հանդիպումը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հետ: Հանդիպումն անցնում էր «Պրագայի գործընթացի» շրջանակներում:

2005թ. մայիսի 3

Եվրոպայի Խորհրդի գլխավոր քարտուղար Թերրի Դեկսը նշեց, որ եթե դարաբաղյան հակամարտության որևէ կողմ սկսի ռազմական գործողություններ, ապա ԵԽ-ն կոչտ միջոցների կոչմի. «Կողմերից որևէ մեկի կողմից զինադադարի խախտման դեպքում ԵԽ-ի Նախարարների կոմիտեն կոչտ միջոցներ կկիրառի՝ չսպասելով ԵԽ Խորհրդարանական վեհաժողովի որոշմանը»:

2005թ. մայիսի 15

Վարչավայում կայացավ Հայաստանի և Ադրբեջանի Նախագահներ՝ Ռ. Քոչարյանի և Ի. Ալիևի հանդիպումը:

2005թ. մայիսի 16

Հայաստանի նախագահ Ռ.Քոչարյանը, ելույթ ունենալով Եվրոպայի Խորհրդի երրորդ համաժողովում Վարչավայում, հայտարարեց, որ տեսնում է դարաբաղյան հակամարտության կարգավորման հեռանկարը եվրոպական արժեքները հարգելու համատեքստում. «Հայաստանում հավատում են բաց սահմաններով, առանց շրջափակումների, առանց բռնությունների, առանց փախստականների Եվրոպային: Այն Եվրոպային, որտեղ հարգում են մարդու իրավունքները և ժողովուրդների ազատ ընտրության իրավունքը, որտեղ

ներկան կառուցվում է անցյալի օրյեկտիվ գնահատման հիման վրա: Այս համատեքստում ենք մենք տեսնում դարաբաղյան հակամարտության կարգավորումը, իսկ ավելի կոնկրետ՝ դե-ֆակտո կայացած Լեռնային Ղարաբաղի Հանրապետության եվրոպական ինտեգրման գործընթացներում ներգրավման ձևաչափի որոնման մեջ»:

2005թ. մայիսի 18

Հայաստանի ԱԳՆ մամուլ քարտուղար Հ. Գասպարյանը հերքեց ԱՀ արտգործնախարար Է. Մամեդյարովի հայտարարությունն այն մասին, որ իբրև թե Հայաստանը պատրաստակամություն է ցուցաբերել «վերադարձնելու Ադրբեջանին» հայկական կողմի վերահսկողության տակ գտնվող ԼՂՀ սահմանակից յոթը շրջանները: «Դա բացարձակ չի համապատասխանում իրականությանը»,– հայտարարեց Հ. Գասպարյանը:

2005թ. մայիսի 19

Մինսկի խմբի համանախագահները շատ դրական են գնահատում Հայաստանի և Ադրբեջանի նախագահների ուղիղ բանակցությունների հերթական ռաունդը, որը տեղի ունեցավ Վարչավայում մայիսի 15-ին, հայտարարեց ռուսական համանախագահ Յու. Մերզյակովը. «Մեր կարծիքով, հանդիպումը քաղաքական լիցք հաղորդեց հետագա բանակցություններին: Դա շատ կարևոր է: Բանակցությունները կշարունակվեն այն ուղղությամբ, որը որոշել են նախագահներն իրենց քննարկման արդյունքում: Այնպես որ կաշխատենք խփել այս նշանակետին և հույս ունենք, որ դա մեզ մոտ կստացվի»:

2005 թ. մայիսի 20

Եվրոպայի Խորհրդի գլխավոր քարտուղար Թ. Դեկսը «ինքը մոլորության մեջ է և ակամայից մոլորության մեջ է գցում հանրությանը»,– հայտարարեց ԼՂՀ ար-

տաքին գործերի նախարար Արման Մելիքյանը, մեկնաբանելով ԵԽ գլխավոր քարտուղարի մայիսի 17-ին արված հայտարարությունն այն մասին, որ «Լեռնային Ղարաբաղը հանդիսանում է Ադրբեջանի անբաժանելի մասը»: Նախարարը հայտարարեց. «... օգտակար կլինի հիշեցնել, որ Լեռնային Ղարաբաղը երբեք չի հանդիսացել անկախ Ադրբեջանի անբաժանելի մասը և, համապատասխանաբար, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը չի հանդիսանում նրա անբաժանելի մասը: Ժամանակին, Լեռնային Ղարաբաղը գտնվել է միացյալ խորհրդային պետության կազմում և ԽՍՀՄ փլուզման ընթացքում հռչակել է իր անկախությունը՝ խստորեն հետևելով միջազգային նորմերին»:

2005թ. հունիսի 7

ԱՀ արտաքին գործերի նախարար Է.Մամեդյարովը հայտարարեց, որ Երևանը և Բաքուն բանակցություններ են վարում Հայաստանը Լեռնային Ղարաբաղի (Լաչին) և Ադրբեջանը Նախիջևանի հետ կապող ճանապարհների շուրջ:

2005թ. հունիսի 8

Վիեննայում տեղի ունեցավ Հայաստանի արտաքին գործերի նախարար Վ.Օսկանյանի հանդիպումը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հետ:

2005թ. հունիսի 17

Փարիզում տեղի ունեցավ Հայաստանի և Ադրբեջանի արտաքին գործերի նախարարների հերթական հանդիպումը: «Պրագայի գործընթացի» շրջանակներում անցկացվող հանդիպմանը մասնակցում էին նաև ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները:

2005թ. հունիսի 19

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում տեղի ունեցան Ազգային Ժողովի ընտրությունները՝ թվով

չորրորդը 1991թ. սեպտեմբերի 2-ին ԼՂՀ անկախության հռչակումից հետո:

Մեկնաբանություն. *Միջազգային դիտորդները արձանագրեցին, որ ԼՂՀ-ում խորհրդարանական ընտրությունները ընդհանուր առմամբ վերցրած անցել են համեմատաբար ազատ մթնոլորտում և համապատասխանում էին բոլոր եվրոպական և միջազգային ժողովրդավարական ստանդարտներին:*

2005թ. հունիսի 20

ՀՀ արտաքին գործերի նախարար Վ.Օսկանյանը հայտարարեց, որ հունիսի 17-ին Հայաստանի և Ադրբեջանի արտաքին գործերի նախարարների Փարիզում տեղի ունեցած հանդիպման ժամանակ չհաջողվեց հասնել վերջնական համաձայնության դարաբաղյան կարգավորման բանակցությունների օրակարգի որևէ հարցի շուրջ: Մասնավորապես, դա վերաբերում է այն հարցին, որի կապակցությամբ երկու երկրների նախագահները գրանցել էին առաջընթաց Վարչավայի հանդիպման ժամանակ:

2005թ. հունիսի 24

«Ներկայումս դարաբաղյան հակամարտության կողմերի դիքերը ավելի մոտ են, քան մեկ տարի առաջ, այնուհանդերձ, պնդել թե համաձայնությունը տեսանելի է՝ չի կարելի», – ասաց ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Ս. Մաննը:

2005 թ. հունիսի 30

«Ադրբեջանի և Հայաստանի միջև բանակցությունները ընթանում են դրական ուղղությամբ», հայտարարեց ԱՀ նախագահ Ի. Ալիևը Բաքվում՝ Թուրքիայի վարչապետ Ռ.Էրդողանի հետ համատեղ մամուլի ասուլիսի ժամանակ: «Թուրքիան միշտ օգնել և օգնում է Ադրբեջանին Լեռնային Ղարաբաղի հարցում: Մեր մոտեցումներն այդ հարցում նույնական են», – հայտարարել է Ռ. Էրդողանը:

2005թ. հուլիսի 1-5

Վաշինգտոնում կայացավ ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի 14-րդ նստաշրջանը, որտեղ քննարկվեց ԵԱՀԿ ԽՎ նախագահի Լեոնային Ղարաբաղի հակամարտության հարցով հատուկ ներկայացուցիչ, շվեդ պատգամավոր Գորան Լենմարկերի զեկույցը:

Սեկնաբանություն. Նստաշրջանում իր ելույթի մեջ Գ. Լենմարկերը ընդգծեց, որ կողմերը պետք է ակտիվացնեն բանակցությունները: Նշվեց նաև, որ «ղարաբաղյան հակամարտությունը ստեղծված չէ. ամեն տարի մեծ թվով մարդիկ են զոհվում կողմերի շփման գծում» և «հակամարտության խաղաղ լուծման այլընտրանք չկա. փաստացի գոյություն ունի հակամարտությունը լուծելու և երկու կողմերի անձնական, տնտեսական, սոցիալական խնդիրներին վերջակետ դնելու սուր անհրաժեշտություն»:

2005թ. հուլիսի 12

Երկօրյա այցով Բաքու ժամանեցին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները: Հաջորդ օրը, համանախագահների համատեղ մամլո ասուլիսի ժամանակ ԱՄՆ ներկայացուցիչ Ս. Մանը հայտարարեց, որ «ղարաբաղյան հակամարտությունը կկարգավորվի կամ մոտակա ամիսներին կամ էլ հաջորդ հարյուր տարում»:

2005թ. հուլիսի 13

Ստեփանակերտում ԼՂՀ Նախագահ Ա. Ղուկասյանը հանդիպեց ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հետ: Ա. Ղուկասյանի հետ հանդիպումից հետո ռուսաստանյան համանախագահ Յու. Մերզլյակովը հայտարարեց. «Կողմերը դեռևս շատ հեռու են դարաբաղյան հակամարտության կարգավորման հարցում համաձայնության հասնելուց»:

2005թ. հուլիսի 15

Ստեփանակերտում ԼՂՀ Նախագահ Ա. Ղուկասյանը մամլո ասուլիսում հայտարարեց, որ «եթե Ադրբեջանի քաղաքական դեկավարությունը չի ցանկանում տեսնել

Լեոնային Ղարաբաղին որպես հակամարտության կողմ, ապա դա նշանակում է, որ այն չի ցանկանում խնդիր կարգավորում»: Ա. Ղուկասյանը նշեց, որ Լեոնային Ղարաբաղի՝ որպես հակամարտության կողմ, կարգավիճակը ամրագրված է ԵԱՀԿ Բուդապեշտի զագաթաժողովի փաստաթղթերում և վաղուց արդեն ճանաչված է ինչպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների, այնպես էլ Ադրբեջանի կողմից: ԼՂՀ Նախագահը կրկին ընդգծեց առանց Լեոնային Ղարաբաղի մասնակցության հակամարտության լուծման անհնարիությունը:

2005 թ. հուլիսի 19

ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի քարտուղարությունը հրապարակեց դարաբաղյան հարցով հատուկ ներկայացուցիչ Գ. Լենմարկերի զեկույցի տեքստը:

2005թ. հուլիսի 19

ԱՀ Նախագահ Ի. Ալիևը, ելույթ ունենալով երկրի սոցիալ-տնտեսական զարգացման արդյունքներին նվիրված խորդակցությունում, հայտարարեց, որ երբեք թույլ չի տա ոչ Լեոնային Ղարաբաղի անկախությունը, ոչ էլ նրա միավորումը Հայաստանին. «Մեր դիրքորոշումն անփոփոխ է. երբեք՝ ոչ այսօր, ոչ վաղը, ոչ 10 տարի, ոչ 100 տարի հետո Լեոնային Ղարաբաղի Ադրբեջանից անջատվելու հարցը չի կարող քննարկման առարկա հանդիսանալ»:

2005թ. օգոստոսի 1

ԼՂՀ արտաքին գործերի նախարարությունը հանդես եկավ հայտարարությամբ. «Ադրբեջանական հասարակության մեջ ձևավորվում է համամարդկային արժեքների ընկալումը և այլընտրանքային միջոցների և նպատակների դիտարկումը խոչընդոտող մթնոլորտ: Կասկածից վեր է, որ միայն Լեոնային Ղարաբաղի և Ադրբեջանական Հանրապետության միջև արդյունավետ հաղորդակցության միջոցով հնարավոր կլինի դարաբաղյան հակամարտության փոխշահավետ և

արդար կարգավորման որոնումը: Այդ կապակցությամբ, անհրաժեշտ է կրկին ընդգծել, որ դարաբաղյան հակամարտության ցանկացած կարգավորում, որի ներկայիս փուլը սկսվեց մարդասիրական աղետով Սումգայիթում և Բաքվում հայերի զանգվածային սպանություններով, ինչպես նաև հետագա էթնիկ զտումներով, Ադրբ. ԽՍՀ շուրջ 500 հազար հայ ազգի նախկին քաղաքացիների բռնի տեղահանմամբ և արտաքսմամբ, պետք է առաջին հերթին ենթադրի արդարության վերականգնում և այդ մարդկանց կրած բարոյական և նյութական վնասների փոխհատուցում, այդ թվում նաև նրանց՝ Հայրենիք վերագտնելու իրավունքը: Ադրբեջանի ղեկավարության վրա է ընկնում ռազմական գործողություններ ծավալելու լիակատար պատասխանատվությունը, այդ թվում նաև այդ գործողությունների արդյունքում տուժած բոլոր փախստականների և ներքին տեղաշարժի ենթարկված բոլոր անձանց, անկախ նրանց ազգությունից կամ ներկա քաղաքացիությունից, նյութական փոխհատուցման հարցում: Մարդասիրական աղետով սկսված դարաբաղյան հակամարտությունը հենց մարդասիրական չափման մեջ էլ պետք է կարգավորվի՝ համաձայն միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների և նպատակների»:

2005թ. օգոստոսի 2

Վաշինգտոնում ԱՀ ԱԳ նախարար Է. Մամեդյարովը հանդիպեց ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ Ս. Մաննի հետ:

2005թ. օգոստոսի 4

ԵԱՀԿ առաքելությունը ԼՂՀ Մարտունու շրջանի հարավ-արևելքում իրականացրեց ԼՂՀ և ԱՀ զինված ուժերի շփման գծի պլանային մոնիթորինգ: Կրակի դադարեցման ռեժիմի խախտումներ չարձանագրվեցին:

2005թ. օգոստոսի 23

Մոսկվայում, դարաբաղյան հակամարտության կարգավորման, այսպես կոչված, «Պրագայի գործընթացի» շրջանակներում ՀՀ և ԱՀ ԱԳՆ ղեկավարները անցկացրեցին բանակցությունների ոչ պաշտոնական ռաունդ:

2005թ. օգոստոսի 27

Կազանում տեղի ունեցավ Հայաստանի և Ադրբեջանի Նախագահների հանդիպումը:

2005թ. օգոստոսի 29

ՀՀ արտաքին գործերի նախարար Վ.Օսկանյանը հայտարարեց, որ Հայաստանի և Ադրբեջանի Նախագահների միջև Կազանում տեղի ունեցած բանակցությունների ընթացքում ոչ մի առաջընթաց չի գրանցվել:

2005թ. սեպտեմբերի 2

«Ես առիթ չեմ տվել մտածելու, որ դարաբաղյան կարգավորման հարցում մեր դիրքորոշումը ենթարկվել է փոփոխության»,– Ստեփանակերտում հայտարարեց Հայաստանի Նախագահ Ռ. Քոչարյանը, որը Լեռնային Ղարաբաղ էր ժամանել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության հռչակման 14-րդ տարեդարձի հանդիսությունների կապակցությամբ: Ռ. Քոչարյանն ընդգծեց, որ «Մենք մնում ենք միևնույն դիրքերում և նախորդ 14 տարիները ցույց տվեցին ԼՂՀ կենսունակությունը, որը ի գորու է ունենալ անկախ պետականություն»:

2005թ. սեպտեմբերի 5

Երևանում տեղի ունեցավ ԼՂՀ Նախագահ Ա. Ղուկասյանի հանդիպումը ԵԱՀԿ գործող նախագահ, Սյովենիայի արտաքին գործերի նախարար Դ. Ռուպելի հետ:

Մեկնաբանություն. Դ. Ռուպելի հետ ունեցած հանդիպման ավարտից հետո Ա. Ղուկասյանը հայտարարեց. «Մենք համարում ենք, որ Լեռնային Ղարաբաղի մասնակցությունը բանակցային գործընթացն ավելի արդյունավետ կդարձնի: Երբ մենք խոսում ենք բանակցություններում Լեռնային Ղարաբաղի մասնակցության մասին,

մարդկանց մոտ սխալ պատկերացում է ստեղծվում, թե դա մեզ է պետք: Դա պետք է բանակցային գործընթացին: Դա պետք է նույն Աղյրեջանին»:

2005թ. սեպտեմբերի 12

ՄԱԿ-ում Աղյրեջանի մշտական ներկայացուցիչ Յ. Ալիևը հայտնեց ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի նոր՝ 60-րդ նստաշրջանի օրակարգում «Աղյրեջանական Հանրապետության գրավյալ տարածքներում առկա իրավիճակի մասին» կետը ընդգրկելու մասին:

2005թ. սեպտեմբերի 14

Հայաստանի ԱԳՆ մամլո խոսնակ Հ.Գասպարյանը հայտարարեց. «Հայաստանի դիրքորոշումը չի փոխվել՝ Հայաստանը դուրս կգա դարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացից, եթե Աղյրեջանը նոր փորձեր ձեռնարկի ՄԱԿ-ում բարձրացնելու «Աղյրեջանական Հանրապետության գրավյալ տարածքներում առկա իրավիճակի մասին» հարցը և Բաքուն ստիպված կլինի շարունակել բանակցությունները Ստեփանակերտի հետ»:

2005թ. սեպտեմբերի 18

Հանդես գալով ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 60-րդ նստաշրջանում, Հայաստանի արտաքին գործերի նախարար Վ.Օսկանյանը նշեց, որ «Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը պայքարել և նվաճել է իր ինքնորոշման իրավունքը: Այդ նպատակին հասնելու համար Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը դիմակայել է այդ ընտրությունը չընկալող և բռնությամբ այն բիրտ ու կոպիտ կերպով ճնշել փորձող իշխանության քաղաքական և ռազմական ագրեսիան»:

2005թ. հոկտեմբերի 10

Ճգնաժամների կանխարգելման միջազգային խումբը (ICG) հրապարակեց դարաբաղյան հակամարտության պատճառների ուսումնասիրության, ԵԱՀԿ միջնորդությամբ իրականացրած բանակցությունների գործընթացի վերլուծության արդյունքների վրա հիմն-

ված դարաբաղյան հակամարտությանը նվիրված իր նոր զեկույցը:

Մեկնաբանություն. Ճգնաժամների կանխարգելման միջազգային խմբի մամուլի համար հաղորդագրության մեջ ասվում է, որ առաջարկվող կարգավորման փաթեթի հիմնական տարրերը ընդգրկում են. 1) Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հիմնական հարցը բողմեյ բաց՝ ավելի ուշ լուծելու համար, 2) Լեռնային Ղարաբաղի Հայաստանի կողմից աջակցվող ուժերի դուրս բերում Աղյրեջանի գրավյալ շրջաններից, 3) Աղյրեջանի հրաժարումը ուժի կիրառումից՝ Լեռնային Ղարաբաղը վերադարձնելու նպատակով, 4) միջազգային խաղաղապահ ուժերի տեղակայում, 5) տեղաշարժի ենթարկված անձանց վերադարձ, 6) առևտրային կապերի և հաղորդակցության վերականգնում:

2005թ. հոկտեմբերի 20

Եվրոպայի և Եվրասիայի հարցերով ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Դ.Ֆրիդը Բաքվում հայտարարեց, որ «ԱՄՆ-ը լիովին բացառում է դարաբաղյան հակամարտության լուծման ռազմական ճանապարհը»:

2005թ. հոկտեմբերի 26

ԼՂՀ Նախագահ Ա.Ղուկասյանը հանդես եկավ հայտարարությամբ, որտեղ, մասնավորապես, նշվում էր, որ «Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցը դա միայն և միայն Լեռնային Ղարաբաղի խնդիրն է»: Նշվեց նաև, որ «դա վերաբերում է և այն հայերին, որոնք արտաքսվել են Աղյրեջանից և այսօր բնակվում են Լեռնային Ղարաբաղում և այն աղյրեջանցիներին, որոնք լքել են Լեռնային Ղարաբաղը և այսօր ապրում են Աղյրեջանի տարածքում: Դրանք մեր հարցերն են: Ես կարծում եմ, որ և Հայաստանը, և միջազգային հանրությունը ստիպված գնացին բանակցությունների՝ հաշվի առնելով Աղյրեջանի ոչ կառուցողական դիրքորոշումը»:

2005թ. նոյեմբերի 23

Լյուբլյանայում տեղի ունեցան Հայաստանի Հանրապետության Նախագահ Ռ. Քոչարյանի և Սլովենիայի

արտաքին գործերի նախարար, ԵԱՀԿ գործող նախագահ Դ. Ռուպեյի հանդիպումը:

2005թ. նոյեմբերի 24

Հայաստանի Նախագահ Ռ. Քոչարյանը հայտարարեց, որ «Եթե բանակցությունները սպառեն իրենց՝ չտալով որևէ արդյունք, ապա ես չեմ բացառում Երևանի կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ճանաչելու կամ ԼՂՀ-ն Հայաստանին միավորվելու հնարավորությունը»:

2005թ. նոյեմբերի 25

ԵԱՀԿ-ում Բելգիայի Թագավորության հատուկ ներկայացուցիչ՝ սենատոր Պ.Շևալյեի գլխավորած պատվիրակության ընդունելության ժամանակ ԼՂՀ արտգործնախարար Արման Մելիքյանը հակիրճ ներկայացրեց հակամարտության պատմությունը, պատերազմի պատճառները և դրա հետևանքները, ԼՂՀ իշխանությունների դիրքորոշումը: Ա. Մելիքյանը նշեց, որ կարևոր է ուշադրություն դարձնել այնպիսի հարցերի վրա, ինչպիսին են Ադրբեջանի կողմից էթնիկ զտումների կազմակերպումը, 500 հազար հայ փախստականների վիճակը, որոնք փախստական դարձան Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի դեմ սանձազերծած պատերազմի արդյունքում: ԼՂՀ ԱԳՆ ղեկավարը ընդգծեց, որ փախստականները իրավունք ունեն բնակության վայր ընտրել նախկին Ադրբ. ԽՍՀ տարածքում և ԼՂՀ իշխանությունները պատրաստ են պաշտպանելու նրանց իրավունքները, ապահովելու անվտանգ կենսագործունեություն և նախադրյալներ նրանց հետագա զարգացման համար այն տարածքներում, որոնք այսօր գտնվում են ԼՂՀ իշխանությունների վերահսկողության տակ»: Ձրույցի ընթացքում ընդգծվեց եվրոպական կառույցների և ԼՂՀ միջև չմիջնորդավորված հարաբերություններ հաստատելու անհրաժեշտության մասին: Տվյալ համատեքստում ԼՂՀ ԱԳՆ ղեկավարը հանդես եկավ Հարավային

ԼՂՀ ԱԳՆ ղեկավարը հանդես եկավ Հարավային Կովկասում ԵՆ հատուկ ներկայացուցիչ Հ. Թավլիքիեյի մանդատը ընդլայնելու և դրանում Լեռնային Ղարաբաղը նույնպես ընդգրկելու առաջարկությամբ:

2005թ. դեկտեմբերի 4

Լյուբյանայում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները հանդիպում ունեցան Հայաստանի և Ադրբեջանի արտաքին գործերի նախարարների հետ:

Մեկնաբանություն. Դեկտեմբերի 9-ին ռուսաստանցի համանախագահ Յու. Մերզլյակովը հայտարարեց, որ համանախագահները Հայաստանի և Ադրբեջանի արտաքին գործերի նախարարներին ներկայացրել են դարաբաղյան հակամարտության լուծման նոր առաջարկություններ: Չմանրամասնելով ներկայացված առաջարկությունները, Յու. Մերզլյակովը նշեց, որ առանց դրանց տարրերը կյանքի կոչելու, անհնար կլինի առաջընթաց գրանցել հակամարտության կարգավորման գործընթացում:

2005թ. դեկտեմբերի 13

Երևանում տեղի ունեցավ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հանդիպումը ԼՂՀ Նախագահ Ա. Դուկասյանի հետ:

2005 թ. դեկտեմբերի 14

Հայաստանի Նախագահ Ռ. Քոչարյանը Երևանում ընդունեց ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներին:

2005թ. դեկտեմբերի 15

Երևանում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների համատեղ մամլո-ասուլիսի ժամանակ Յու. Մերզլյակովը հայտարարեց, որ կգա այն ժամանակը, երբ Լեռնային Ղարաբաղի մասնակցությունը ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացում կդադանա անխուսափելի. «Որ փուլում դա կլինի՝ կախված է ոչ թե համանախագահներից, այլ առաջին հերթին՝ կողմերից»: Իր հերթին, ամերիկյան համանախագահ Ս. Մանը կողմերի միջև տարվող բանակցությունները բնութագրեց որպես կոշտ:

2005 թ. դեկտեմբերի 16

Ղարաբաղյան հակամարտության գոտում ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Ա. Կասպեռյիկը նշեց, որ «Ընթացիկ տարում աճել է երկու կողմերից սպանվածների և վիրավորների քանակը»: Բարձրում տեղի ունեցան ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հանդիպումները Ադրբեջանի նախագահի և արտաքին գործերի նախարարի հետ:

2005 թ. դեկտեմբերի 19

«Ադրբեջանահայություն. Կորսված հայրենիք. Համարժեք փոխհատուցում» թեմայով կազմակերպված կոնֆերանսի ժամանակ ԼՂԳ Արտաքին գործերի նախարար Արման Մելիքյանը նշեց, որ «ԼՂՀ իշխանությունները պատրաստ են հանդես գալ միջնորդի դերում վերականգնելու համար Ադրբեջանից հայ փախստականների ոտնահարված իրավունքները՝ բարոյական և նյութական, վերականգնելու համար»:

2006 թ. փետրվարի 10-11

Ֆրանսիայի Նախագահի հրավերով Փարիզում Մինսկի խմբի համանախագահների մասնակցությամբ Հայաստանի և Ադրբեջանի Նախագահների միջև կայացած հանդիպումն անարդյունք ավարտվեց:

2006 թ. մայիսի 21

Չերնոգորիայում տեղի ունեցավ հանրաքվե, որի արդյունքում քվեարկողների 55 տոկոսից քիչ ավելին կողմ արտահայտվեց երկրի անկախությանը: Մերթիան ճանաչեց հանրաքվեի արդյունքները: Միջազգային հանրությունը, ի դեմս տարբեր եվրոպական պաշտոնյաների, ողջունեց այսպիսի ելքը և ստացավ նախադեպ, որը հնարավորություն էր տալիս չճանաչելու շահագրգիռ կողմերի կողմից չճանաչված հանրաքվեի արդյունքները: Դա ուղղակիորեն առնչվում է ԼՂՀ շահերին՝ դրանք դնելով հարվածի տակ:

2006 թ. հունիսի 4-5

Բուխարեստում հանդիպեցին Հայաստանի և Ադրբեջանի Նախագահներ Ռոբերտ Բոչարյանը և Իլհամ Ալիևը: Բանակցությունները տևել են ավելի քան 4 ժամ: Հանդիպումն ավարտվեց անարդյունք:

ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ3

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ9

ԳԼՈՒԽ I.

ԷԹՆԻԿ ՉՏՈՒՄՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ
ԻՐԱՎԱՀԱՁՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԱԴՐԲԵՋԱՆԻ
ՉԻՆԱՆՈՑՈՒՄ.....11

ԳԼՈՒԽ II.

«ԱԳՐԵՍԻԱ» ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ,
ԱԳՐԵՍԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ
ՉԱՓՈՒՄՆԵՐԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ
(ՆԱԽԿԻՆ ԱԴՐԲ. ԽՍՀ ԵՎ ՆԵՐԿԱՅԻՄ
ԱՀ ՕՐԻՆԱԿՈՎ).....27

ԳԼՈՒԽ III.

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ-ԻՐԱՎԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴՈՒ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ, ՀԻՄՆԱՐԱՐ
ԱԶՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԳԱՍԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ՆՈՐՄԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ47

3.1 Մարդու իրավունքների խախտումներից
տուժած մարդկանց պատճառած վնասի
փոխհատուցման միջազգային պրակտիկան58

3.2 Նախկին Ադրբեջանական ԽՍՀ-ից վտարված
հայ բնակչության գույքային իրավունքների
պաշտպանությունը62

ԳԼՈՒԽ IV.

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ
ՂԱՐԱԲԱԳՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ
ՌԱԶՄԱԿԱՆ ԵՎ ՌԱԶՄԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ԷՍԿԱԼԱՑԻԱՅԻ ՀԱՄԱՐ94

4.1 Ադրբեջանի կողմից սպառազինության և
ռազմական տեխնիկայի անվերահսկելի
բռնազավթումը 1990-1992թթ.....95

4.2 Հակամարտության ռազմատեխնիկական
էսկալացիան և Լեռնային Ղարաբաղի խաղաղ
բնակչության նկատմամբ Ադրբեջանի կողմից
զենքի նոր տեսակների ոչ խտրական կիրառումը .106

ԳԼՈՒԽ V.

ԿՈՄԲԱՏԱՆՏՆԵՐԻ, ՎԱՐՉԿԱՆՆԵՐԻ,
ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ և ՆՏԱ-Ի ԿԱՐԳԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ՀԱՐԱԲԵՐԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ ՂԱՐԱԲԱԳՅԱՆ
ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ118

ԳԼՈՒԽ VI.

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ
ՌԱԶՄԱԿԱՆԱՑՈՒՄԸ՝ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՂԱՐԱԲԱԳՅԱՆ
ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԽԱՂԱՂ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ
ԱՊԱԿԱՅՈՒՆԱՑՆՈՂ ԳՈՐԾՈՆ130

6.1 Ադրբեջանի կողմից ՄՌՏ-ի աճող զնումները.....131

6.2. Ադրբեջանի կողմից ռազմական ծախսերի և
ստացվող օտարերկրյա ռազմական օգնության
ծավալի շարունակական աճի դինամիկան139

6.3 Սպառազինությունների և ռազմական
գործունեության վերահսկողության միջազգային
ոեժիմների խախտումը Ադրբեջանի կողմից150

ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ԺՈՂՈՎՐԴԻ
ՆԿԱՏՄԱՍԲ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱԳՐԵՄԻԱՅԻ
ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ.....155

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ.....172

ՀԻՄՆԱԿԱՆ ՀԵՏԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....173

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....176

Հավելված 1. Մարդու սոցիալ-տնտեսական
իրավունքների պաշտպանության միջազգային-
իրավական նորմերը.....176

Հավելված II. Ղարաբաղյան պատերազմում
վարձկանների մասնակցության մասին վկայող
փաստաթղթերը.....196

Հավելված III. Ժամանակագրություն.....207

Տիգրանուհի Ռուհինյանը ծնվել է Իրանում, 1934 թվականին: Նա, Մաթևոս Դավիդյանի և Աղավնի Մելիքյանի ընտանիքում, չորս զավակներից ամենակրտսերն էր:

1954 թվականին Տիգրանուհին ամուսնացել է դոկտոր Ջոն Ռուհինյանի հետ: Նրանք ունեցան երկու զավակ՝ Էդմոնդին և Կատիային: Թեև Իրանում Տիգրանուհին աջակցել է մանկական հիվանդանոցին՝ հոգալով երեխաների շատ կարիքներ: 1971 թվականին Տիգրանուհու ընտանիքը տեղափոխվել է ԱՄՆ: Հետևելով իր ծնողների օրինակին, որոնք ողջ կյանքի ընթացքում աջակցում էին իրենց երիտասարդ հայրենակիցներին, Տիգրանուհին, ահա, ավելի քան 30 տարի, անդամակցում է Լոս Անջելեսի Հայ Օգնության Միությանը: Առաջին անգամ, 1992 թվականին Մայր Հայաստան այցելելուց հետո, որոշել է անել հնարավոր ամենը՝ Հայրենիքին աջակցելու համար: Տիգրանուհին իր զավակներից խոստում է վերցրել, որ նրանք նույնպես կշարունակեն իրենց ընտանիքի այս ավանդույթը: Տիգրանուհու հոփանու տակ են գտնվում Արցախի մանկապարտեզներից, ինչպես նաև Երևանի դպրոցներից մեկը: Նրա աջակցությամբ հրատարակվել են ուսումնական նյութեր համալսարանի համար, իսկ երկու համալսարանական՝ ստանում են կրթաթոշակ: Տիգրանուհի Ռուհինյանը աջակցել է նաև «Ղարաբաղյան հակամարտություն. Փախստականներ, տարածքներ, անվտանգություն» գրքի հրատարակմանը:

ԱՄՆ-ում նա հոփանավորում և աջակցում է Հայ Առաքելական Եկեղեցու Արևմտյան Թեմին, ինչպես նաև Ամերիկայի Sheepfold հիմնադրամին, որը, մասնավորապես, զբաղվում է կանանց հիմնախնդիրներով:

Էդմոնդ Ռուիինյանը, դոկտոր Ջոն Ռուիինյանի և Տիգրանուհի Ռուիինյանի (Դավիդյանի) երկու զավակներից ավագն է: Նա ծնվել է 1956 թվականին Թեհրանում: Այստեղ նա սովորել է Քրիստոնեական դպրոցում և հաճախել Արարատ սրաութական կազմակերպությանը: 1971 թվականին նա ծնողների հետ տեղափոխվել է Կալիֆոռնիա, ԱՄՆ: Բարձրագույն դպրոցում սովորելու տարիներին անդամակցել է Հայկական Երիտասարդական Դաշնությանը, ստացել է հայկական կրթություն և մոտիկից ծանոթացել հայկական մշակույթի հետ: 1981 թվականին Էդմոնդ Ռուիինյանն ավարտել է Լոնգ Բիչ Համալսարանը: Ստանալով «Բիզնես-ֆինանսներ» ոլորտի բակալավրի աստիճան, նա հիմնադրել է Mortgage ընկերությունը, որը ղեկավարում է առ այսօր: Հետևելով իր ծնողների օրինակին, Էդմոնդ Ռուիինյանը հովանավորում և աջակցում է հայկական կազմակերպություններին: Էդմոնդ Ռուիինյանը աջակցել է նաև «Ղարաբաղյան հակամարտություն. Փախստականներ, տարածքներ, անվտանգություն» գրքի հրատարակմանը:

Նա հանդիսանում է Մուրթ Խաչ Հայկական Եկեղեցու Եկեղեցական խորհրդի անդամ և օգնում է հայ երիտասարդության մի շարք խնդիրների լուծման գործընթացին: Նա մեկենասությամբ է զբաղվում ԱՄՆ-ում, Լիբանանում և ԼՂՀ-ում: Էդմոնդ Ռուիինյանն ամուսնացած է: Կնոջ՝ Մարինա Բեքարյանի հետ նա ծանոթացել է Լիբանանում: Նրանք ունեն երկու զավակ՝ Սևակ Ջոնը և Շանթ Նարեկը:

ԱՂԱՋԱՆՅԱՆ Մ., ԱՍԱՏՐՅԱՆ Է., ՄԻՆԱՍՅԱՆ Ս.

ԱԳՐԲԵՋԱՆՆ ԸՆԴԴԵՄՂԱՐԱԲԱՂԻ ԺՈՂՈՎՐԴԻ.
ԱԳՐԵՄԻԱՅԻ ԻՐԱՎԱԶԱՂԱԶԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ
ԵՎ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԻ ՎՐԱ

Խմբագիր՝ Ա. Վ. Մելիքյան
Տեխ. խմբագիր՝ Մ. Է. Ճանճապանյան
Սրբագրիչ՝ Մ. Գ. Ստեփանյան

Նախատեսված չէ վաճառքի համար

Պատվեր՝ 30: Տպաքանակ՝ 300:

«Նաիրի» հրատարակչություն ՓԲԸ
Երևան-9, Տերյան 91